

ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

---

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
№ 1 (43)

ԵՐԵՎԱՆ - 2019

---

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ  
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

*Խմբագրական խորհուրդ՝*

**Ռ. Կ. Միրզախանյան (նախագահ),**

Մ. Գ. Գիլավյան (**գլխավոր խմբագիր**),

Ա. Ա. Ավագյան, Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Լ. Մ. Խաչատրյան, Վ. Լ. Կատվալյան,

Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան, Ա. Ա. Մակարյան,

Է.Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Մ. Ադամյան (Մեծ Բրիտանիա), Հ. Նալբանդյան (ԱՄՆ), Ա. Սեփեթճյան (Բելրուս)

Լ. Ս. Ալեքսանյան (**տեխնիկական խմբագիր**)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (1570027790960100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)

Էլեկտրոնային փոստ՝ **hayagitakanhandes@gmail.com**

Կայքէջ՝ **http://hayagitakan-handes.mylibstudio.com/** (հետագայում՝

մասնակի փոփոխությամբ կլինի **www.hayagitakan-handes.com**)

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական  
հետազոտությունների  
լաբորատորիայի վարիչ, [lingvola151@gmail.com](mailto:lingvola151@gmail.com)

**ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ**

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ մայրենիի և նրա դասավանդման  
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկ. գիտ. թեկնածու,  
[mirumyan1951@mail.ru](mailto:mirumyan1951@mail.ru)

**ՀՈՒՓՄԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների  
լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող,  
[hripsimehtorosyan@yahoo.com](mailto:hripsimehtorosyan@yahoo.com)

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ  
ՊԱՏՃԵԼՈՒՄՆԵՐ ՌՈՒՄԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**Բանալի բառեր.** պատճենում, փոխառություն, տերմինահամակարգ,  
տերմինային համարժեք, բառակազմական իմաստաբանություն,  
բառակազմական կաղապար:

**Ключевые слова:** калька, заимствованные слова, терминологическая  
система, термин-аналог, словообразовательная семантика,  
словообразовательная модель.

**Key words:** calque, borrowing, terminological system, term-analogue,  
word-building semantics, word-formation pattern.

Ընդհանրապես լեզուների բառային կազմում որոշակի դեր ու կշիռ  
ունեն եզրույթները, որոնք տարբեր գիտակարգերի և գիտաճյուղերի  
ճշգրտված հասկացություններ են արտահայտում: Ցանկացած լեզվի  
տերմինահամակարգում առանձնակի նշանակություն ունեն  
լեզվաբանական եզրույթները (ԼԲԵ), որոնք վերաբերում են լեզվի  
մակարդակների կառուցվածքային միավորներին, լեզվաբանության  
տարբեր բաժինների ու գիտակարգերի հասկացություններին և այլն:

Այդ համատեքստում հայերենի ԼԲԵ-ները քննության են ենթարկվել տարբեր ասպեկտներով, ինչպես՝ ծագումնաբանական<sup>1</sup>, համակարգային - կառուցվածքային<sup>2</sup>, գործառնության<sup>3</sup> և այլն:

Հայերենի ԼԲԵ-ների ծագումնաբանական դաշտում կարելի է առանձնացնել երեք շերտ՝ ա) եզրույթներ, որոնք դեռևս դասական հայերենում սովորական բառամիավորներ են և տերմինացել են հունարենի համաբանությամբ, բ) տերմիններ, որոնք տարբեր լեզուներից կատարված իմաստային պատճենումներ են, գ) տերմիններ, որոնք օտար լեզուներից կատարված փոխառություններ են:

Երկրորդ և երրորդ շերտերի մեջ մտնող ԼԲԵ-ները հիմնականում եվրոպական լեզուներից կատարված պատճենումներ կամ փոխառություններ են, որոնց ակունքները հասնում են ընդհուպ 5-րդ դարի կեսերը՝ հունաբան դպրոցի գործունեության ժամանակները:

Հունաբան դպրոցից հետո հայերենի ԼԲԵ-ների համակարգը շարունակ համալրվում է նորանոր պատճենումներով, որ պայմանավորված է լեզվի քերականական համակարգի զարգացման և նրա մշակման գործոններով: Այդ գործընթացը շարունակվում է Հին և Միջնադարյան Հայաստանի քերականական աշխատություններում<sup>4</sup>:

Լեզվի պատմության հետագա դարերում ԼԲԵ-ները հարստանում են ժամանակակից եվրոպական լեզուներից՝ անգլերենից, գերմաներենից և ֆրանսերենից կատարված պատճենումներով կամ փոխառություններով: Ընդ որում՝ այդ կարգի պատճենումներն ու փոխառությունները կատարվել են ոչ այնքան անմիջականորեն փոխատու լեզուներից, որքան այլ լեզուների՝ մասնավորապես ռուսերենի միջանկյալ օղակով:

---

<sup>1</sup> Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971:

<sup>2</sup> Ղազանչյան Լ.Հ., Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն (Լեզվի և ոճի հարցեր, 4, Ե., 1977, էջ 200-335): Хачатрян Л., Мирумян М., Структура макросистемы лингвистических терминов, Международная научнопрактическая конференция "Глобализация науки: проблемы и перспективы", 22 Мая 2017, г. Краснодар.

<sup>3</sup> Хачатрян Л., Мирумян М., Вопросы полифункциональности лингвистических терминов,

*European Journal of Humanities and Social Sciences, "East West" Association for Advanced Studies and Higher Education GmbH. Vienna, N 3, 2017, էջ 23-27.*

<sup>4</sup> Տե՛ս Գ.Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները Հին և Միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:

Ըստ այդմ, եվրոպական լեզուներից հայերենին անցած ԼԲԵ-ների քննությունը մենք կատարելու ենք օտար լեզուներից ռուսերենին անցած եզրույթների դիտարկման համատեքստում՝ ելնելով այն բանից, որ այդ կարգի եզրույթները նախ՝ անցել են ռուսերենին, ապա վերջինիս միջոցով՝ նաև հայերենին: Նկատենք, որ ռուսերենն ու հայերենը տարբեր կերպ են արձագանքել լեզվաբանական եզրույթներին, որ պայմանավորված է այդ լեզուների քերականական կառուցվածքով, ինչպես նաև օտար բառերը «յուրացնելու» ներուճակությամբ:

Եվրոպական լեզուներից ռուսերենին անցած ԼԲԵ-ները հիմնականում փոխառություններ են, որոնց մի մասը մասնակիորեն ենթարկվել է ռուսերենի բառակազմական օրինաչափություններին. այս մարզում գործուն են ռուսերենի – *ночь*,

-изм վերջածանցները: Հմնտ. *relevant* – релевантность, *persuasive* – персуазивность, *marquer* – маркированность, *behavior* – бихевиоризм, *macaronisme* – макаронизм(ы), *malappris* – малапропизм և այլն:

Եվրոպական լեզուներից կատարված պատճենումների ու փոխադրումների բառակազմական իմաստաբանության և բառակազմական կաղապարների քննությունն ի հայտ է բերում որոշակի օրինաչափություններ, որոնք պայմանավորված են մի կողմից՝ փոխատու լեզուների յուրահատկություններով, մյուս կողմից՝ ռուսերենի և հայերենի՝ եզրույթներ կերտելու լեզվական հնարավորություններով: Նկատենք նաև, որ եվրոպական լեզուները միանշանակ ազդեցություն չեն ունեցել փոխառու լեզուների ԼԲԵ-ների համալրման գործում. հարցը չի վերաբերում եզրույթների քանակային կազմին, այլ պատճենման եղանակներին:

Այսպես, երբ համակարգում ենք եվրոպական լեզուներից հայերենին անցած տերմինային պատճենումներն ու փոխառությունները, պարզվում է, որ գործ ունենք երեք կարգի իրողության հետ.

ա) եզրույթներ, որոնք պատճենվել են օտար լեզուներից,

բ) եզրույթներ, որոնք փոխառություն են,

գ) եզրույթներ, որոնք միաժամանակ բավարարում են առաջին և երկրորդ կետերին:

Այս դիտանկյունից մոտենալով խնդրո առարկային՝ նկատում ենք, որ տարբեր լեզուներից կատարված պատճենումները տարբեր կարգի օրինաչափություններ են ի հայտ բերում: Օրինակ, գերմաներենից անցած եզրույթները հիմնականում պատճենումներ են, անգլերենից անցածները փոխառություններ են, ֆրանսերենից անցածները և՛ պատճենումներ են, և՛ փոխառություններ:

Հարցի քննությունից պարզվում է նաև, որ անգլերենից և ֆրանսերենից անցած բազմաթիվ եզրույթներ հայերենում չունեն իրենց

համարժեքները և մեզանում գործածություն չեն ստացել, մինչդեռ դրանք կենսունակ գործածություն ունեն ռուսերենում:

Երբ հարցը դիտարկում ենք ռուսերենի լեզվաբանական տերմինահամակարգում, պարզվում է, որ ռուսերենում եվրոպական լեզուների ԼԲԵ-ները ոչ թե պատճենվել, այլ ուղղակի անցել են փոխառու լեզվին:

Դիտարկենք եվրոպական լեզուներից կատարված պատճենումների և փոխառությունների դրսևորումները ռուսերենում և հայերենում:

Ա. Եզրույթներ, որոնք ռուսերենին և հայերենին անցել են գերմաներենից, ֆրանսերենից, հազվադեպ՝ անգլերենից: Դրանք հիմնականում պահպանվել են ռուսերենում, մինչդեռ հայերենում դրանց մի մասը *պատճենվել է*:

*ա) Գերմաներենից անցած և պատճենված եզրույթներ՝*

абзац – (absatz) - պարբերություն

аблаут – (ablaut) - ձայնավորի փոփոխություն. ձայնդարձ

адрессант – (adressant) - խոսքի հեղինակ

адрессат – (adressat) – հասցեատեր

гештальд – (gestalt) – ձև, հնար, ֆիգուր

штампы – (stampfe) – խոսքային կաղապար, կարծրատիպ. կնիք:

*բ) Ֆրանսերենից անցած և պատճենված եզրույթներ՝*

ассонанс – (assonance) - համահնչունություն

гротеск - (grotesque) – գեղարվեստական հնար՝ հիմնված որոշ երևույթների չափազանցման կամ նվազեցման վրա

директив – (directive) – խոսքային գործունեություն, որ հուշում է այս կամ այն գործողության ավարտը

дублеты – (double) – միևնույն լեզվական միավորի արտահայտման կրկնակի միջոցներ. տարբերակներ

каламбур – (calembour) - բառախաղ

калька, калькирование - (calque) - պատճենում, նմանակում

клише - (cliche՝) - խոսքային կաղապար

контраст - (contrast) – հակադրություն

пуризм – (purism) – մաքրամոլություն

реплика – (replique) - կարճ պատասխան՝ մեկնաբանություն

репрезентатив – (representative) – ցուցադրում, ցուցադրական

репрезентация – (representation) – ներկայացում, ցուցադրում

реприза – (reprise) – ոճական հնար՝ նախորդ տողի բանալի բառի կրկնության միջոցով

эмотивность – (emotion) – հուզականություն

ЭКВИВОКАЦИЯ, ЭКВИВОК – (equivoque) – արտահայտության երկիմաստություն, որ առաջանում է բազմիմաստ բառերի տարբեր իմաստների գործածության հետևանքով: Վերոբերյալ բոլոր ԼԲԵ-ները ռուսերենում գրեթե նույնությամբ գործածվում են, մինչդեռ դրանց միայն մի մասն է պատճենվել հայերենում:

զ) Անզլերենից պատճենված եզրույթները խիստ սակավ են հայերենում. հանդիպում է *когнитивная лингвистика* – (cognitive – ճանաչողական). *Ճանաչողական լեզվաբանություն* բաղադրյալ եզրույթը:

Բ) *Եվրոպական լեզուներից կատարված տերմինային փոխառություններ.*

Որոշ դեպքերում եվրոպական լեզուների լեզվաբանական եզրույթները չեն

պատճենվել. կատարվել է փոխառություն՝ հնչյունական մասնակի փոփոխություններով: Դրանք առավել տարածված են ռուսերենում, հայերենում հազվադեպ հանդիպում են պատճենված եզրույթներ: Այս ոլորտում կենսունակ են անզլերենից և ֆրանսերենից կատարված փոխառությունները:

ա) *Անզլերենից կատարված փոխառություններ.*

*гендерная лингвистика* – (gender – սեռ) - գենդերային լեզվաբանություն

*коллигация* – (colligation) – բազմիմաստություն՝ պայմանավորված բառերի ձևաբանա- շարահյուսական կապակցելիությամբ և քերականական հատկանիշներով

*коллокация* – (collocation) - լեզվակիրների կողմից առավել հաճախ գործածական բառերի կապակցություն

*персуазивность* – (persuasive) –խոսողի գնահատականը ասույթի բովանդակության օբյեկտիվության վերաբերյալ

*релевантность* – (relevant) – լեզվական միավորների տարբերակման հատկանիշ

*рефрейминг* – (reframe) – արտահայտության իմաստի փոփոխություն՝ նոր համատեքստ ստեղծելու նպատակով

Բ) *Ֆրանսերենից կատարված փոխառություններ.*

*жаргон* – (jargon) - պայմանական խոսվածք

*галлицизм* – (gallicisme) – ֆրանսերենից փոխառված բառ կամ բառակապակցություն

*каданс* – (cadence) – նախադասության վերջում ինտոնացիայի իջեցում, հանգի՝ շեշտի թուլացում

нарратология – (narratology) - գիտակարգ, որի ուսումնասիրության առարկաներն են պատմողականության տեսությունը, խոսույթը և բնագրի կազմավորման միջոցները

парантез(а) - (paranthese) – նախադասության ներդրյալ բառ կամ կապակցություն՝ հեղինակի մտքի շեղումը ցույց տալու նպատակով

парцелляция - (parcellar) – պարբերության փոքր մասերի բաժանում՝ մասնատում

констатив - (constater) – հաստատական բնույթի արտահայտություն:

Եվրոպական լեզուներից կատարված տերմինային պատճենումները որոշ դեպքերում *երկակի մեկնաբանություն ունեն* հայերենում գործում են դրանց թե՛ պատճենված և թե՛ փոխառված սարբերակները:

Այսպիսին են՝ անգլերեն сленг – (slang) լեզվի սոցիալական տարատեսակ, тест - (test) ստուգում, փորձություն. ֆрейм - (frame) շրջանակ, գերմաներեն обертон – (oberton) - ենթաձայն, ֆրանսերեն apro – (argo) - պայմանական լեզու, ծածկալեզու և այլն:

Վերոբերյալ եզրույթները ռուսերենում պահպանել են մայր լեզվի գրության և արտասանության յուրահատկությունները. դրանք դիտվում են փոխառություններ:

Գ) Հայերենի և եվրոպական լեզուների լեզվաբանական տերմինահամակարգերի

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զգալի թվով եվրոպական եզրույթների հասկացական նշանակությունները հայերենում չեն պատճենվել և, բնականաբար, մեզանում գործածություն չեն ստացել. այդ եզրույթները համալրել են *ռուսերենի* լեզվաբանական տերմինահամակարգը: Դրանք հիմնականում անցել են անգլերենից և ֆրանսերենից:

ա) Անգլերենից են անցել՝

бихевиоризм - (behavior) – լեզվական վարքագիծ, վարքականոն (լեզվաբանության մեջ՝ լեզվի էության և գործածության վերաբերյալ հայացքների և տեսակետների համակարգ)

хэндаут - (handout) - հոդվածի կամ զեկուցման համառոտ շարադրանք. ամփոփում

глайд - (glide) – հնչյունի արտաբերություն՝ բաղաձայնից ձայնավորի անցման հատվածում

кеннинг - (kenning) - փոխաբերություն, այլաբանություն

бленд - (blend) – դիպվածային բառ՝ արտահայտության իմաստը սաստկացնելու նպատակով

гендерлект - (gender) –կանանց և տղամարդկանց լեզվական ստարբերակներ՝ միևնույն լեզվի շրջանակներում

слоган - (slogan) – կարճ կարգախոս՝ հայտարարության նպատակով

слэш - (slash) - թեք գիծ՝ բնագրի հատվածներն անդամատելու նպատակով

смайл - (smile) – պատկերագրություն՝ մարդու ծիծաղկոտ կամ տխուր դեմքով

спич – (speech) – կարճ՝ համառոտ խոսք

тванг - (twang (nasal)) - ռնզային արտասանություն:

բ) Ֆրանսերենից են անցել՝

макаронизмы - (macaronisme) – օտար բառ կամ արտահայտություն՝ ուրիշ լեզվում

малапропизм - (malappris) – լեզվակիրների թերիմացության հետևանքով թույլ տված սխալ (ոճ կամ արտահայտություն)

маркированность - (marquer) – լեզվական միավորի բացահայտ լեզվական նշանակություն

сатисфактив - (satisfaction) – խոսքային գործունեություն՝ հիմնավորված սահմանական եղանակի նշանակության ավարտով

филиация - (filiation) – լեզվական երևույթների զարգացում հետևողական կապերի համատեքստում՝ անմիջականորեն պայմանավորված նախորդ կապերով

эксплозия - (esplosif) – պայթական (հպական) հնչյունների արտաբերություն

экспозитив – (expose) – խոսքային գործունեություն, որ համառոտ շարադրում է ընթացիկ արտաքին քաղաքականության հարցերը:

Չպատճենված եզրույթները վերաբերում են ոճաբանությանն ու խոսքին, և այդ առումով հայերենի տերմինահամակարգում զգալի բաց է նկատվում: Եզրույթները պայմանական անվանումներ են, ուստի կարելի է կա՛մ ստեղծել դրանց համարժեք տերմինային անվանումները, կա՛մ «հայացնել» ռուսերեն եզրույթները՝ լեզվական տվյալ հասկացություններն արտահայտելու համար:

Այսպիսով, անգլերենից, ֆրանսերենից և գերմաներենից հայերենին անցած լեզվաբանական եզրույթներն ի հայտ են բերում հետևյալ բնորոշ գծերը.

ա) պատճենվել են օտար լեզուներից,

բ) փոխառություններ են (պատճենված կամ թարգմանված չեն),

գ) միաժամանակ բավարարում են առաջին և երկրորդ կետերին,

դ) գործածական են միայն ռուսերենում:

Ռուսերենին անցած ԼԲԵ-ները, ինչպես նշել ենք, հիմնականում փոխառություններ են:

Եվրոպական լեզուներից ռուսերենին և հայերենին անցած ԼԲԵ-ները կենսունակ գործածություն ունեն, դրանք արտահայտում են լեզվաբանական տարբեր ոլորտների (բաժինների) գիտական ճշգրտված հասկացություններ և բավարարում են լեզվաբանական գիտության տարբեր բաժինների հասկացությունների իմաստներն արտահայտելուն: Եզրույթների պատճենման և փոխներթափանցման գործընթացը կրում է շարունակական բնույթ, որի հետևանքով համալրվում ու հարստանում է թե՛ ռուսերենի և թե՛ հայերենի ԼԲԵ-ների տերմինահամակարգը՝ նոր հասկացություններն արտահայտելով նորաստեղծ եզրույթներով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Գիտական գրականություն

1. Մուրադյան Ա., Հունաբան դպրոցը և նրա դերը հայերենի քերականական

տերմինաբանության ստեղծման գործում, Ե., 1971:

2. Ղազանյան Լ.Հ., Հայերենի լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն (Լեզվի և ոճի հարցեր, N 4, Ե., 1977, էջ 200-335):

3. Գ.Ջահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները Հին և Միջնադարյան Հայաստանում, Ե., 1954:

4. Хачатрян Л., Мирумян М., Структура макросистемы лингвистических терминов, Международная научнопрактическая конференция "Глобализация науки: проблемы и перспективы", 22 Мая 2017, г. Краснодар.

5. Хачатрян Л., Мирумян М., Вопросы полифункциональности лингвистических терминов, *European Journal of Humanities and Social Sciences, "East West" Association for Advanced Studies and Higher Education GmbH. Vienna, N 3, 2017, էջ 23-27.*

#### Բ. Բառարաններ

1. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Ե., 1975.

2. Ахманова О., Словарь лингвистических терминов, М., 1966.

3. Богатырева И., Волошина О., Словарь школьных лингвистических терминов, М., 2012.

4. Лингвистический энциклопедический словарь, М., 1990.

5. Матвеева Т.В., Полный словарь лингвистических терминов, Ростов-на-Дону, 2010.

6.Старичёнок В., Большой лингвистический словарь, Ростов-на-Дону, 2008.

**Լ. ԽԱԶԱՏՐՅԱՆ, Մ. ՄԻՐՈՒՄՅԱՆ, Հ. ԹՈՐՈՍՅԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ  
ՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ  
ԱՍՓՈՓՈՒՄ**

Հայերեն լեզվաբանական եզրույթները համալրվել են եվրոպական լեզուներից կատարված պատճենումներով ու փոխառություններով: Հայերենին անցած օտար տերմիններն ի հայտ են բերում հետևյալ բնորոշ գծերը.

- ա) պատճենվել են օտար լեզուներից,
- բ) փոխառություն են (պատճենված կամ թարգմանված չեն),
- գ) միաժամանակ բավարարում են առաջին և երկրորդ կետերին:

Այս դիտանկյունից մոտենալով խնդրո առարկային՝ նկատում ենք, որ տարբեր լեզուներից կատարված պատճենումները տարբեր կարգի օրինաչափություններ են ի հայտ բերում. գերմաներենից անցած տերմինները հիմնականում պատճենումներ են, անգլերենից անցածները փոխառություններ են, ֆրանսերենից անցածները և՛ պատճենումներ են, և՛ փոխառություններ:

Հարցի քննությունից պարզվում է նաև, որ անգլերենից և ֆրանսերենից անցած բազմաթիվ տերմիններ հայերենում չունեն իրենց համարժեքները և մեզանում գործածություն չեն ստացել, մինչդեռ դրանք կենսունակ գործածություն ունեն ռուսերենում:

**Л. ХАЧАТРЯН, М. МИРУМЯН, Р. ТОРОСЯН**

**КАЛЬКИ ЛИНГВИСТИЧЕСКИХ ТЕРМИНОВ ЕВРОПЕЙСКИХ  
ЯЗЫКОВ В РУССКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ  
РЕЗЮМЕ**

Лингвистические термины армянского языка обогащены кальками и заимствованиями из европейских языков. Иностранные лингвистические термины армянского языка выявляют следующие закономерности:

- а) кальки из иностранных языков,
- б) заимствования (не калькированы и не переведены),
- г) одновременно соответствуют первому и второму пунктам.

С данной точки зрения, исследуемые кальки из иностранных языков имеют разные закономерности: немецкие термины являются кальками,

английские термины – заимствованиями, французские термины – и кальки, и заимствования.

В ходе исследования выясняется, что большая часть английских и французских терминов не имеют аналогов в армянском языке, хотя они активно употребляются в русском языке.

L. KHACHTRYAN, M. MIRUMYAN,  
H. TOROSYAN

**THE CALQUES OF LINGUISTIC TERMS OF EUROPEAN LANGUAGES  
IN RUSSIAN AND ARMENIAN**

**SUMMARY**

The linguistic terms of Armenian have supplemented with calques and borrowings (transfers) from European languages. Foreign linguistic terms entered Armenian have the following peculiarities:

- a) they are copied from foreign languages,
- b) they are borrowings (they are not copied or translated),
- c) they match with the mentioned two points.

From this point of view, the calques from different languages show different regularities: the terms entered from German are calques, the terms earned from English are borrowings, French terms are both calques and borrowings.

The study of subject shows that many terms which are taken from French and English do not have their analogues in Armenian, while they have active usage in Russian.

*Խմբագրություն է ուղարկվել 11.03.19*

*Հանձնարարվել է գրախոսության 21.03.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
բանասիրական ֆակուլտետի դեկան,  
բ.գ.թ., դոցենտ  
[ash.galstyan@mail.ru](mailto:ash.galstyan@mail.ru)

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ  
ԽՄԲԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԻ**

**Բանալի բառեր.** գեղարվեստական վավերագրություն, բառապաշար, բառային շղթաներ, բառակաղապար, վերջնաբաղադրիչ, իմաստային միջուկ:

**Ключевые слова:** художественная документалистика, словарный запас, словесные цепочки, словесные штампы, составляющие окончания частицы, смысловое ядро.

**Key words:** artistic documentary literature, vocabulary, verbal chains, verbal clichés, word terminal particles, semantic nucleus.

Հուշագիրները գեղարվեստավավերագրական երկերի պատկերները կերտում են տարբեր բառամիավորների միջոցով, որոնք գործածության առումով հետաքրքրական իրողություններ են վեր հանում: Ընդհանրապես բառաքննական դիտարկումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը (Եֆիմով, Ֆինկել, Մելքոնյան, Եզեկյան և ուրիշներ): Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «բառապաշարը ոճական սկզբունքներով խմբավորելիս նախ և առաջ անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր բառի ոճաբանական բնութագիրը, նրա ոճական կիրառությունը, այլ կերպ ասած՝ նրա հուզաարտահայտչական երանգավորումը, կիրառական հաճախականությունը»<sup>1</sup>:

Հայտնի է, որ գեղարվեստական վավերագրության բնագրերը նախևառաջ ներկայացնում են ռեալ իրականությունը: Այս առումով Ռ. Յակոբսոնը, վերլուծելով տեքստի (արձակի) լեզվական կառուցվածքը,

---

<sup>1</sup> Լ. Եզեկյան, *Ընդհանուր ստեղծագործությունների լեզուն և ոճը* (ըստ պատմավեպերի նյութերի), Ե., 1975, էջ 136:

առանձնացնում է երկու առանցք՝ այսպես կոչված հորիզոնական և ուղղահայաց: Հորիզոնական առանցքում բառը տեղադրվում է համասեռ կամ միմյանց հետ իրավիճակով կապված հասկացությունների շղթայում՝ ինչպես՝ ջուր, ծով, լողալ, նավ, նավահանգիստ, տախտակամած և այլն: Այս դեպքում թվարկվող միավորները համախմբվում են միննույն իրավիճակային դաշտում: Ուղղահայաց առանցքի դեպքում բառը ներառվում է նույնանման միավորների լեզվատիրույթում՝ ինչպես՝ երկիր, մարդ, քաղաք, փողոց, տուն և այլն<sup>2</sup>:

Բառային մերձիմաստ շղթաներ գործում են նաև արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվատիրույթում: Հայտնի է, որ Պ. Պռոշյանը խոր ակնածանք ուներ կրոնի նկատմամբ: «Հուշիկներում» շատ են կրոնական ըմբռումները: Գեղարվեստավավերագրական լեզվում առանձին խումբ են կազմում կրոնական-պաշտամունքային անվանում հանդիսացող բառամիավորները: Հին հայերենից սկսած՝ *կրոն* բառից կազմվել են տարբեր բարդություններ, այսպես՝ *սրբակրոն* «սուրբ, մաքուր կրոն ունեցող, սրբակյաց» - «Ավելացրո՛ւ հայր Մարտիրոսի *սրբակրոն* բնավորությանն... ազգի մանուկներին ցույց տված գործում» (ՊՊԵԺ, 52), *կուսակրոն* «ոչ ամուսնացյալ հոգևորական» - «Եթե մեր բոլոր *կուսակրոնները* հայր Մարտիրոսի առաքինազգաց վարքի ու բարքի տեր լինեին...» (ՊՊԵԺ, 51):

Այդպիսի բառամիավորներ ասկա են նաև այլ աղբյուրներում: *Կրոնասեր* բառը քաղել ենք Ղ. Աղայանի հուշագրության լեզվից. «Նա բազմաթիվ հայկաբան և *կրոնասեր* քահանաներ տվավ Գուգարաց աշխարհին» (ՂԱԵԺ, 308): *Կրոնափոխ*-ը գործածված է Բաֆֆու ուղեգրության լեզվում. «Մար-Շիմոնը հայտնում էր... ասորիների՝ զանազան երկրներում *կրոնափոխ* լինելու մասին» (ԲԵԺ, 115): *Կրոնուսույց* բառը գործածված է ինչպես Բաֆֆու ուղեգրություններում, այնպես էլ Ե. Շահազիզի հուշերում. օրինակներ համապատասխան աղբյուրներից. «Օրիորդաց դպրոցում ես գտնվեցա *կրոնուսույց* տեր հոր դասի ժամանակ» (ԲԵԺ, 217), «Դամբանականը Նազարյանցը խոսեց Մոսկվայի Ս. Խաչ եկեղեցում, իր վաղեմի բարեկամ և *կրոնուսույց* Տեր Հարություն Քյուրքչյանի դագաղի վրա» (ԵՇՀԵՎԴ, 18): Հ. Աճառյանի «Հուշեր Կովիտասի մասին» դիմանկարում գործածված է *մաքրակրոն* բառամիավորը՝ «մաքուր վարք ունեցող, մաքրակյաց» իմաստով. «*Մաքրակրոն* էր ան և մեծ հայրենասեր մը» (ԿՇՀԵՎՎ, 21):

<sup>2</sup> . . . . . ( . . . . . ), . . . . . 1987, . . . . . 99-132.

Կրոնակեղեցական այլ բառամիավորներ՝ *վարդապետ* «հայ եկեղեցու կրոնական պաշտոնյա» - «Ամենալուրջ խոսակցության մեջ Կոմիտաս *վարդապետը* հանկարծ մի կատակ կամ թեթև զվարճախոսություն էր խառնում» (ԿԺՀ, 28), *վարդապետանայ* «վարդապետի աստիճան ստանալ»-«Սրբազան տեղակալի առաջարկությունը ես միանգամայն մերժեցի, *վարդապետանայու* խոսք չտվի» (ՊՊԵԺ, 67), *վանահայր* «վանքի առաջնորդ, որին ենթարկվում են վանականները» - «Նա այնտեղ և՛ միաբան էր, և՛ *վանահոր* տեղակալ» (ՊՊԵԺ, 52), *սարկավագ* «քահանայից կրտսեր եկեղեցական պաշտոնյա»- «Ճեմարանի 6-րդ դասարանի աշակերտ էր և վանքում հայտնի էր որպես «ձայնեղ երգիչ» Սողոմոն *սարկավագ* (ԿԺՀ, 33), մոնթ<sup>3</sup> «վանական դպրոցի պատանի աշակերտ» - «-Չո՛ռ, ա՛յ այժ, ի՛նչ ես լալիս, մորթելու են տանում, հո՛ կարդալու չեն տանում,-ասել է գյուղական թշվառ *մոնթը*» (ՊՊԵԺ, 159), *շաթիր*. արաբերեն բառ է, որ հայերենին է անցել թուրքերենից և նշանակում է «կաթողիկոսի անձնապահապետ, որ պաշտոնական և հանդիսավոր երթի ժամանակ գնում է նրա առջևից՝ ձեռքին գավազան բռնած» - «Երբ *շաթիրն* ինձ յուր հետևը գցած գնում էր դեպի կաթողիկոսի ննջարանը, դահլիճում ես կանգնած տեսա տեր Մանվելին և երկու ուրիշ քահանաների» (ՊՊԵԺ, 64), *ժամկոչ* «եկեղեցու սպասավոր, որի գլխավոր պարտականությունն է զանգեր տալը»-«Նրան հետևող ծառան՝ ժամկոչի կամ սարկավագի նման մի մարդ, նրա ոտքերի տակ փռեց մի գորգ» (ՎՓՀՀ, 1, 176), *եպիսկոպոսական պնակե*<sup>4</sup> «զարդարուն պատվանշան՝ Աստվածածնի պատկերով, որ եպիսկոպոսը շրթայով կրում է կրծքին»-«Վեհապետյանը հագնում էր թավիշներ ու մետաքսեղեն, զարդարվում էր յուր շքեղաշուք շքանշաններով, *եպիսկոպոսական պնակեով* ու վարդապետական ականակոտ խաչով» (ՊՊԵԺ, 105), *ուրար*. հունական փոխառություն է. «երկար ժապավենաձև կտոր, որ սարկավագները կրում են ձախ ուսի վրա եկեղեցում սպասավորություն կատարելու ժամանակ», *փորուրար* «քահանայի ծիսական զգեստի մաս» - «Այնտեղ էր և զինվորական ավագ քահանան՝

<sup>3</sup> *Տե՛ս Հայոց լեզվի նոր բառարան, Բ հատոր* (աշխատասիրեց Ա. Տեր Խաչատուրեան), Պէրյոթ, 1992, էջ 86: Ըստ Սո. Մալխասյանցի «Չայերեն բացատրական բառարանի»՝ *մոնթ*-ը առաջացել է *մանչ* բառից, որ արևմտահայերենում նշանակում է *արու գավակ* կամ *փոքրահասակ ծառա*. *Մանչ*-ը գործածված է Ավ. Բսահակյանի «Ղևոնդ Ալիշան» հուշագրության մեջ. «-Ապրես, գիտուն *մանչ* ես. այո՛, ան Պետերբուրգեն այցի էր եկած վանքը ու ինձի սամովար մը նվեր բերած էր» (ԱԻԵԺ, 709):

<sup>4</sup> Հունարեն «պանակիա» անունից է, որ վերաբերում է Աստվածածնին և նշանակում է ամենաօրհնյալ:

*փորձարարը կրծքին»* (ՊՊԵԾ, 109), *փիլոն*. նախագրային շրջանից հունարենից հայերենին անցած փոխառություն է. «երկար անթև հագուստ, որը քահանան կրոնական ծիսակատարությունների ժամանակ գցում է ուսերին» - «Տերտերների *փիլոնն* առնելը սովորական երևույթ է եղել Ս. աղայի օրով» (ՊՊԵԾ, 81), *ֆարաջա/փարաջա*<sup>5</sup> «հոգևորականի լայն թևերով երկար վերնազգեստ»-«Շատ ստիպեց կաթողիկոսը Բերոյանցին չհանել *ֆարաջեն*» (ՊՊԵԾ, 86), *մոմատուն* (բառարաններում վկայված չէ) «... Սարոյի հետ բարձրացա *մոմատան* սենյակն ու մոտեցա մի կրակոտ քահանայի» (ՊՊԵԾ, 62), «*Յայսմաուրք»* -կրոնական գիրք, որ բովանդակում է սրբերի և նահատակների վարքերը՝ նրանց տոների հաջորդականությամբ: *Ճաշու գիրք կամ «Ճաշոց»* - «ծիսական մատյան, որ պարունակում է պատարագի և ժամերգության ընթացքում կարդացվող առաքելական ընթերցումներն ու ավետարանները, որոնք դասավորված են Տոնացույցի կարգով» - «Քարոզ ասելու և *Ճաշու գիրքը* կարդալու գործում ես առաջինն էի» (ՊՊԵԾ, 114), *հոգեչույս* «հոգին լույս դարձած, լուսահոգի (գործածվում է առավելապես հանգուցյալ բարձրաստիճան հոգևորականների մասին)»-«Այդ *հոգեչույս* ուսումնասեր Գևորգ կաթողիկոսի օծման օրն էր» (ՊՊԵԾ, 261): Բաֆֆին գործածում է *ավագ շաբթի շաբաթվա* օրը. «Ճգնավորը միայն *ավագ շաբթի* օրը իր սարից դեպի վար կգա» (ԲԵԾ, 286):

Գեղարվեստական վավերագրության լեզվում գործածական են նաև սրբավայրերի, կրոնական տոների անվանումներ: Այսպես՝ «Հավթռունք» անունով ուխտը կատարվել է Զատիկի կամ կրոնական այլ տոների ժամանակ: Այս դեպքում թոշուններին ոչ թե մորթելով էին սրբերին նվիրաբերում, այլ բաց էին թողնում ազատ բնության մեջ, որպեսզի «թոչեն, երթան, ապրեն ու բազմանան, զարդարեն մեր կանաչ, ծաղկուն հանդերը, ձորերն ու գետափերը» (ՄՂԱ, 47):

XIX դարի ինքնակենսագրական երկերի, ուղեգրությունների հերոսների խոսքում հաճախ են հնչում հարգանքի, նվիրվածության, բարեմաղթանքի արտահայտություններ, որոնք իրենց կառուցվածքում կրոնական տարրեր են պարունակում:

«-*Սջիղ մատաղ*, դե հենց ես էլ դրա համար չէի մնում, -պատասխանեց Մանուշար բեգը» (ՊՊԵԾ, 85): «-Է՛հ, տերտեր ջան, *ծառա լինես սուրբ աջիդ*, -քահանայի խոսքը կտրեց ծերերից մեկը» (ԲԵԾ, 48): «-Ապրիք, ապրիք,

<sup>5</sup> Թուրքերենից անցած փոխառություն է, որ առաջին իմաստով նշանակում է կանացի երկար վերարկու, պարեգոտ. տե՛ս u ferace, Թրքերեն-հայերեն առձեռն բառարան, Իսթանպուլ, 1981, էջ 138:

աստված ավելի շնորհք տա» (ԲԵԺ, 120): «Աստված բարաքայթ տա» (ԲԵԺ, 157): «-Աստված ողորմի՛ հոգուն,- ասացի ու նույն գիշերը մտա Մինաս եպիսկոպոսի բուրջը» (ԲԵԺ, 175): «Մինչ ես զբաղված էի արձանագրության արտագրությամբ, ինձ մոտ լավեցավ մի ձայն. «Աստված պահապան՛ն»: Ողջունելու ձևիցը հասկացա, որ հանդիպողը վարդապետ էր» (ԲԵԺ, 19): «Աստված է վկա, մեզ ասացին, որ ձեզանից փող էլ չի պահանջվի» (ԲԵԺ, 231):

Հուշային դիմանկարներում աչքի են զարնում տվյալ ոլորտը և այդտեղ գործող ու աշխատող անհատին ներկայացնող բառաշերտեր, որոնք ըստ էության հարստացնում են հուշագրության լեզուն: Օրինակ՝ եկեղեցական առաջնորդներին ներկայացնող հուշերում մեծապես գործածվում են՝

ա. վանքերի, եկեղեցիների, տաճարների, ուսումնական հաստատությունների անուններ՝ *Ս. Գեղարդ վանք, Խոր Վիրապի վանք, Մեյդանի Ս. Գևորգ եկեղեցի, Անթրիլիասի Մայրավանք, Հաճկատարի վանք, Սուրբ Շողակաթ եկեղեցի, Էջմիածնի Մայր տաճար, Միածնաեջ տաճար, Վատիկան. Ս. Պետրոսի տաճար, Փարիզի Աստվածամոր տաճար, Բիքֆայայի դպրեվանք, Սուրբ Հռիփսիմե գիմնազիա* և այլն:

բ. Եկեղեցական զգեստների անուններ՝ *Ժամաշապիկ, թասակ, վեղար, կնգուղ, սքեմ, պարեգոտ* (կապա), *փարաջա, սև գլխարկ* (թասակ), *եկեղեցական վերարկու, դրվագագարդ գավազան, հայրապետական քող:*

գ. Նվիրական առարկաների անուններ. որպես պատվո նշան՝ քահանայական կարգ ունեցողներին շնորհված իրեր՝ *լանջախաչ, պանակե, եպիսկոպոսական մատանի, ձեռաց խաչ:*

դ. Կրոնական գրքերի անվանումներ՝ *Սուրբ Գիրք, Աստվածաշունչ, Ավետարան, Նոր Կտակարան, Յայսմաւուրք, «Վեհամօր Աւետարան», Ճաշու գիրք* կամ «Ճաշոց», *Մաշտոց, Ժամագիրք* և այլն:

ե. Կրոնապետերի կացարան-նստավայրերի անվանումներ տեղի իմաստ արտահայտող *-արան* վերջածանցով՝ *կաթողիկոսարան, վեհարան, պատրիարքարան, առաջնորդարան*, նաև *եպիսկոպոսանիստ:*

Ճարտարապետական կառույցի ընկալումը երևան է հանում համապատասխան բառափնջի (բառային շղթայի) գործածությունը՝ *տաճար, եկեղեցի, վանք, ժամատուն, աղոթասրահ, մատուռ, խորան, սյուն, սյունաշար* և այլն:

Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Ալ. Մպենդիարյանին նվիրված հուշերում գործածության մեծ հաճախականություն ունեն երաժշտական գործիքների անունները՝ *հորոյ, ֆագոտ, տամբուրին, բաս-կլարնետ, դասի, դիոլ, գալարափող, դաշնամուր, ջութակ, թավջութակ, ալտ* և այլն (տե՛ս ՀՄՍ):

Կ. Ջարյանի «Սպանիա» ուղեգրության «Սարդանա» (խմբային պար է) ենթագլխում ներկայացված են երաժշտական գործիքների անուններ՝ տրոմբոն, երգեհոն, շեփոր, սրինգ, զուռնա և այլն: Հեղինակը հետաքրքրական բնորոշում է տալիս զուռնային՝ *տասնապատկված ձայնով արչոր* (ԿՁՄ,92): Հուշերում գործածական են *երաժշտական այլ տերմիններ՝ պար, վալս, օպերետ, մելոդրամա, բարիտոն* և այլն:

Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին նվիրված հուշերում գործածվում են *նազմական ոլորտի* բառամիավորներ՝ *արկ, ական, ականապատել, ականանետ, ռուբ, ավիառուբ, ավտոմատ, փամփուշտ, փամփշտատուփ* (մագազին), *ինքնաձիգ, հրետանի, տանկ, տանկիստ, հրասայլ, հրանոթ, թնդանոթ, գնդացիք, զինվոր, սպա, գեներալ, նոնականետ, խրամատ, վաշտ, զրահաբաճկոն, զրահամեքենա, զորագունդ, զորամիավորում, զումարտակ, մարտ, մարտադաշտ, հրամանատար, զորահրամանատար, զորավար, զորաշարժել, ազատամարտիկ, դիրքեր, դիպուկահար, նշանառու* (նավոդյիկ), *գնդակոծել, ոմբակոծել, զրահահար* (բրաներոյնի), *զրահատանկային* և այլն:

*Աշխարհագրական* տարբեր գիտաբառեր և բառազուգորդումներ են գործածված «Տիտան» էսսեում՝ *երկնային մեխանիկա, երկնային մարմին աշխարհագրական լայնություն և երկարություն, կոորդինատ, Արեգակ, հասարակած, հորիզոն* (ԳԳԽԽ, 159-160) և այլն:

Հուշագրության լեզվում (հատկապես հուշ-դիմանկարներում) հաճախ են դիտարկվում *մարդու կյանքի շրջափուլերը՝ մանկություն, պատանեկություն, երիտասարդություն, ծերություն* և այլն: Ս. Կապուտիկյանին նվիրված հուշերում այդ անունները հաճախակի կիրառություն ունեն. «Սիրելի՛ Հասմիկ Կանայանին, որ իրենով իմ մեջ նորոգում է մանկության և երիտասարդության թանկագին հիշատակները» (ՍԿՄՇԵՎԽ, 181): «Իմ պատանության ու երիտասարդության ու... նաև ծերության հավատարիմ ընկերուհուն՝ սիրելի Հասմիկին» (ՍԿՄՇԵՎԽ, 181):

Կառուցվաքձային առումով հուշագրության լեզվում նկատելի է բառակաղապարների բազմերանգություն: Դ. Դեմիրճյանի «Հուշեր և խոհեր հայ դրամատուրգիայի և թատրոնի մասին», Վ. Վաղարշյանի «Ընկերներս, բարեկամներս և ես», Վ. Փափագյանի «Հետադարձ հայացք» և Գ. Ջանիբեկյանի «Թատրոնի հետ» հուշագրություններում արդարացված է *թատրոն, արվեստ, հանդես, բեմ, դեր, խաղ, փորձ* միավորներով բառաձևերի գործածությունը՝ *թատերախաղ, թատերախումբ, թատերագիր, թատերգություն, թատերասեր, թատերաշրջան, թատերարվեստ, բարձրարվեստ, թատերախոս, թատերախոսություն, թատերասրահ, թատերաբեմ, թատերապես, թատերանկարիչ, պետթատրոն, արվեստասեր,*

արվեստագետ, արվեստակից, գեղարվեստ, բարձրարվեստ, հանդիսատես, հանդիսական, հանդիսասրահ, բեմադրություն, բեմահարթակ, բեմահարդար, բեմարվեստ, բեմավիճակ, բեմադրական, բեմադրակերպ, նախաբեմ, բեմականորեն, խաղացանկ, խաղընկեր, խաղընկերուհի, խաղընկերություն, խաղառձ, խաղակից, խաղակերպ, խաղարվեստ, դերացանկ, դերաբաշխում, դերակատար, մնջախաղ, դերախաղ, հյուրախաղ, դիմախաղ, փորձասենյակ, փորձասրահ և այլն:

Թատրոնախաղ կազմությունն առկա է Վ. Վաղարշյանի հիշողությունների գրքում. «Մանկական այդ թատրոնախաղը տեղի է ունեցել 1901 կամ 1902 թվականներին» (ՎՎԸԲԵՎԵ, 10):

Առատ են նկար բաղադրիչով բառամիավորներ՝ *ինքնանկար, դիմանկար, ինքնադիմանկար, գրչանկար, գծանկար, մատիտանկար, ձեպանկար, բնանկար* և այլն: *Նկարակալ* բառաձևը գործածված է Հ. Պողոսյանի «Վարպետը» հուշագրության մեջ (ԱԻԺՀ, 147), *լուսանկար*-ը՝ Ավ. Իսահակյանի, Վ. Հարությունյանի հուշերում (ԱԻԵԺ, 709), (ՎՀԱԸ, 1, 28), Վ. Փարսադանյանի «Հուշեր Կոմիտասի մասին» դիմանկարի մեջ (ԿԺՀ, 42), *դաշտանկար*-ը՝ Կ. Ջարյանի «Միացյալ Նահանգներ» ուղեգրության մեջ (ԿԶՄՆ, 263), *գեղանկար*-ը և *ուրվանկար*-ը՝ «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» գրքում (ԹԺՀ, 566), *մանրանկար*-ը և *խտանկար*-ը՝ Ստ. Ջորյանի հուշերում (ՍԶՀԳ, 296), *զարդանկար*-ը՝ Գ. Ջանիբեկյանի հուշերում (ԳԶԻԱ, 145), *որմնանկար*-ը՝ Վ. Հարությունյանի ուղեգրության մեջ (ՎՀԱԸ, Ա, 53):

*Հուշագրության լեզվում գործածական են պետ, տուն, հանդես, նավ վերջնաբաղադրիչներով բառակաղապարներ:*

*Պետ վերջնաբաղադրիչով բառեր (գործածական են ինքնակենսագրական բնագրերում). բժշկապետ, եպիսկոպոսապետ, վարժապետ, գրադարանապետ, հանդերձապետ, քարվանապետ, գավառապետ, գանձապետ, վարդապետ, տպարանապետ, զորապետ, սպարապետ, տասնապետ, հիսնապետ, հարյուրապետ, հազարապետ, հայրապետ, նահապետ, նահանգապետ, խմբապետ, կայարանապետ, կրոնապետ, մայրապետ, բանտապետ, դահձապետ, դպրապետ, սեղանապետ, սենեկապետ, ոստիկանապետ, քաղաքապետ և այլն:*

*Տուն վերջնաբաղադրիչով բառեր (գործածական են ինքնակենսագրական բնագրերում). ժամատուն, հրատարակչատուն, գրքատուն, գանձատուն, մառանատուն, զանգակատուն, սեղանատուն, դիվանատուն, վարչատուն, ախոռատուն, հարսանքատուն, սրճատուն, մենատուն, տապանատուն, առանձնատուն, գինետուն, դեղատուն, որբատուն, նկարչատուն, պարետատուն, ազգատուն, տոհմատուն, բերդատուն, գլխատուն, ավանդատուն, այրտուն, գետնատուն, քարատուն*

և այլն:

Հանդես վերջնաբաղադրիչով բառեր (գործածական են հուշ-դիմանկարներում). Կոմիտասին նվիրված հուշերում հանդես արմատով առկա են երգահանդես, նվագահանդես, սգահանդես կազմությունները, Ավ. Իսահակյանին նվիրված հուշերում՝ տոնահանդես, Ավ. Ահարոնյանի հուշագրության մեջ՝ զօրահանդես, Վ. Իսահակյանի «Հայրս» երկում՝ դիմանկահանդես, պատկերահանդես, պարահանդես, ցուցահանդես, հաղթահանդես բառամիավորները: Պատվահանդես կազմությունը գործածված է Ս. Ջորյանի հուշերում (ԹԺՀ, 122):

Նավ վերջնաբաղադրիչով բառեր<sup>6</sup>(գործածական են ուղեգրություններում). թիանավ, առագաստանավ, շոգենավ, սուզանավ, հաճանավ, ռազմանավ, զբոսանավ, ջերմանավ, ցրկանավ, փոխադրանավ, օդանավ և այլն:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերոբերյալ բառախմբերից մի քանիսը կարելի է վերախմբավորել ավելի նեղ բառիմաստային փնջերի մեջ, սակայն կարծում ենք, որ եղածն էլ ամբողջական պատկերացում է տալիս գեղարվեստական վավերագրության քննվող բնագրերի բառապաշարային շերտերի վերաբերյալ:

Բերված բառաշղթաները գեղարվեստական վավերագրության լեզվական համապատկերն են ներկայացնում՝ ներառելով ոչ միայն բառամիավորների բառակազմական կաղապարները, այլև նրանց իմաստային միջուկը:

### ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԻԵԺ-Ավ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977:

ԱԻԺՀ-Ավետիք Իսահակյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2006:

Գ.Գևիս-Գ.Գուրգադյան, Խոհեր... խոհեր... : Էսսեներ, Երևան, 2007:

ԳԶԻԱ, II-Գ.Զանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք երկրորդ, Թատրոնի հետ, Երևան, 1980:

---

<sup>6</sup> Հուշագրության լեզվում զգալի ակտիվություն են ցուցաբերում նավ սկզբնաբաղադրիչով բառաձևերը, այսպես՝ նավակ, նավաստի, նավավար, նավատեր, նավապետ, նավարկել, նավատորմ, նավատորմիդ, նավախուց, նավախցիկ, նավակայան, նավահանգիստ, նավամատուց, նավասենյակ, նավագնացություն, նավաբեկություն, նավարկություն, նավեզր, նավակայք, նավառաջք:

ԵՇՀԵՎԴ-Ե.Շահագիզ, Հիշողություններ և դիմաստվերներ, Երևան, 1980:

ԹԺՀ-Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1969:

ԿԶՄ-Կ.Զարյան, Երկրներ և աստվածներ: Սպանիա, Երևան, 1999:

ԿԶՄՆ-Կ.Զարյան, Միացյալ Նահանգներ (Երկրներ և Աստվածներ), Երևան, 2002:

ԿԺՀ- Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում, Երևան, 2009:

ՀՄՄ-Հուշեր, կազմ.՝ Մ. Օթարյան, Տ. Սարգսյան, նվիրվում է Ա.

Սպենդիարյանի ծննդյան 140-ամյակին, Երևան, 2012:

ՂԱԵԺ-Ղ.Աղայան, Երկերի ժողովածու, չորրորդ հատոր, Երևան, 1963:

ՄՂԱ-Մ.Ղուկասյան, Անվերնագիր... 1915, Երևան, 2011:

ՊՊԵԺ-Պ.Պռոշյան, Երկերի ժողովածու, հատոր յոթերորդ, Երևան, 1964:

ՍԶՀԳ-Ստ. Զորյան, Հուշերի գիրք, Երևան, 1991:

ՍԿՄՀԵՎԵ-Սիլվա Կապուտիկյանը մեր հուշերում և խոհերում, Երևան, 2008:

ՄԽՀՀԵՎԱՀ-Մ. Խանգաղյան, Հորս հետ և առանց հորս

(ինքնակենսագրական վիպակ), Երևան, 1986:

ՎՀԱԸ I-Վ.Հարությունյան, Աշխարհի ճամփաներով, Երևան, 2000:

ՎՎԸԲԵՎԵ-Վ.Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Երևան, 1959:

ՎՓՀՀ, 1-Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, գիրք 1, Երևան, 1979:

ԲԵԺ-Բաֆֆի, Երկեր ժողովածու, հատոր իններորդ,

Ուղեգրություններ, պատմական երկեր, Երևան, 1987:

## Ա. ԳԱԼՍՅԱՆ

### ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ

### ԽՄԲԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հուշագիրները գեղարվեստավերագրական երկերի պատկերները կերտում են տարբեր բառամիավորների միջոցով, որոնք գործածության առումով հետաքրքրական իրողություններ են վեր հանում: Ընդհանրապես բառաքննական դիտարկումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը:

Հուշագրության լեզվատիրություն գործում են բառային մերձիմաստ շղթաներ, որոնք ներկայացնում են ժանրի լեզվական համապատկերը:

Կառուցվաքծային առումով հուշագրության լեզվում նկատելի է բառակաղապարների բազմերանգություն: Աշխույժ գործածություն ունեն *տուն, պէտ, հանդէս, նավ* և այլ վերջնաբաղադրիչներով կազմություններ:

A. ГАЛСТЯН

**СЛОВЕСНЫЕ ГРУППЫ ТЕКСТОВ ХУДОЖЕСТВЕННОЙ  
ДОКУМЕНТАЛИСТИКИ ПО СФЕРАМ ИСПОЛЬЗОВАНИЯ  
РЕЗЮМЕ**

Мемуаристы создают картины художественно-документальных произведений посредством словесных единиц, которые с точки зрения использования выявляют интересные реалии. Как правило, слово-аналитические наблюдения отводят важное место классификации разных смысловых и стилистических групп словарного запаса.

В языковой сфере действуют словесные цепочки со схожим смыслом для представления языкового контекста жанра.

В структуральном смысле в языке мемуаров заметна многокрасочность словосочетаний. Активно используются образования со составляющими окончания частицами *տուն, պէտ, հանդէս, նավ* и т.д.

A. GALSTYAN

**B. VERBAL GROUPS IN THE TEXTS OF ARTISTIC DOCUMENTARY  
LITERATURE ACCORDING TO THE SPHERES OF USAGE  
SUMMARY**

The authors of memoirs create pictures of artistic documentary works through verbal units which reveal interesting realities from the viewpoint of their usage. As a rule, words analytic observations assign an important place to the classification of diverse semantic and stylistic groups of the vocabulary.

Verbal chains with analogous sense function in the linguistic sphere in order to present the verbal context of the genre.

In the structural aspect one can notice in the memoirs' language the multicolor character of expressions. Authors actively use composite words with terminal particles տուն, պէտ, հանդէս, նսսվ and so on..

*Խմբագրություն է ուղարկվել 08.04.19*  
*Հանձնարարվել է գրախոսության 15.04..19*  
*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան հայ հին և միջնադարյան  
գրականության ամբիոնի դոցենտ,  
մանկավարժական գիտությունների թեկնածու,  
[rdolukhnyan@mail.ru](mailto:rdolukhnyan@mail.ru)

**ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ**

*Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը, նոր երգերով, նոր խոսքով,  
Ի՛մ նոր հայրենիք,  
Հրգոր հայրենիք...  
Հովհ.Թումանյան*

**Բանալի բառեր.** Հովհ. Թումանյան, հայրենասիրական, բանաստեղծություն, Արևմտահայաստան, ցեղասպանություն, վիշտ, տագնապ, լավատեսություն, հանճարեղ:

**Ключевые слова:** Ованес Туманян, патриотический, поэзия, Западная Армения, геноцид, горе, паника, оптимизм, гениальный.

**Key words:** Hovhannes Tumanian, patriotic poetry, Western Armenia, Genocide, grief, panic, optimism, genial.

Հովհ.Թումանյանը հայրենասիրական բանաստեղծություններ է գրել 1890 թվականից մինչև 1920-ը՝ այսինքն ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը ծնվել է իր ժողովրդի անցած պատմական ուղու քաջատեղյակությունից:

«Այդ ի՛նչ սրտամաշ տխրություն է քեզ պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ» սկսվածքով բանաստեղծությունը պարունակում է հեղինակի խոր վիշտն ու ցասումը իր հայրենիքը թշվառության մատնած ուժերի դեմ.

Մինչև ե՛րբ պիտի մարդիկ կատաղի  
Արցունքովն հայի կերածը թրջեն...  
Մի թե դեռևս անսիրտ հագարը  
Այն ավերակաց վերա պիտ իշխե,  
Անարգե, պղծե մեր սուրբ տաճարը,

Անարժաններին շնորհներ բաշխե...<sup>1</sup>

Նույն թվականին է գրված «Պանդուխտն երգեց օտար երկրում» սկզբնատողով բանաստեղծությունը, որը հիշեցնում է XV դարի բանաստեղծ Մկրտիչ Նաղաշի պանդխտության երգերը. գրողը ողբում է հայ պանդխտի համար.

**Հովհ. Թումանյան**

Պանդուխտն երգեց օտար երկրում  
Եվ սրտաբեկ հոգոց քաշեց,  
Երբ որ տխուր յուր երգերում  
Անցած ուրախ օրերն հիշեց:  
Մարմնով տկար, հոգով տխուր  
Շուրջը նայեց մեկը չըկար,  
Որ տար գեթ մի բաժակ ցուրտ ջուր, -  
Ողբաց պանդուխտն անմխիթար:<sup>2</sup>

**Մկրտիչ Նաղաշ**

Բայց դարիպի կեանքն է լալի, ողբերգական,  
Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ գնտան.  
Յորժամ լինի օտար երկիր թափառական,  
Ղարիպն օտար ոչ ճանաչեն, ոչ գիտենան:  
Անդ ոչ եղբայր, ոչ սիրելի, ոչ ազգական,  
Ոչ գտանե՛ գոք կարևոր ասպնջական...<sup>3</sup>

Նույն թվականին է գրված «Հիշողություն հայրենիքից» բանաստեղծությունը, որը մանկության տխուր վերհուշ է: Թեման հայ գեղջուկի ու գեղջկուհու ծանր վիճակն է.

Ահա թշվառ հայ գեղջկուհին,  
Դեմքը վշտոտ ու նիհար.  
Պատառոտած մի շոր հագին,  
Չարչարվում է անդադար:<sup>4</sup>

Հովհաննես Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը մանրակրկիտ ուսումնասիրած Արամ Ինճիկյանն այս բանաստեղծության վերաբերյալ ունի հետևյալ նկատումը.«Այսպիսով, մանկությունը բանաստեղծի հոգում կուտակել է նաև տխուր, ճնշող պատկերներ ու սպավորություններ, որոնք պիտի իմաստավորվեին և գեղարվեստորեն

---

<sup>1</sup> Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ. 1, Երևան, 2018, էջ 54:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 56:

<sup>3</sup> Մկրտիչ Նաղաշ, Աշխատասիրությամբ Էդ.Խոնդկարյանի, Երևան, 1965, էջ 169:

<sup>4</sup> Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ. 1, էջ 71:

մարմնավորվեին հետագայում: Դեռ պատանի ընկնելով քաղաք և խորթ միջավայրում վերհիշելով «տուրք մանկությունը», նա պիտի տեսներ շքեղ բնության և նրա մեջ ապրող ու տառապող ժողովրդի ցնցող հակապատկերը»:<sup>5</sup>

Արևմտահայաստանի ճակատագիրը ողջ կյանքում տառապեցրել է բանաստեղծին: Բացի իրավական գրկանքներից՝ թուրքերը հայերի գլխին միշտ կախել են ֆիզիկական գոյությանը սպառնացող դամոկլյան սուրբ: Ահա թե ինչ է գրում Թումանյանը. «...կարծեք արդարացնում է Գլադստոնի<sup>6</sup> կարծիքը, թե էն սև օրվանից ինչ հայտնվեց էդ ժողովուրդը, հայտնվեց ինչպես մարդկության թշնամի: Որ կողմից հայտնվեց, իր ետևից թողեց արյան լայն հետք, և ուր մտավ նրա իշխանությունը, ամեն տեղից չքացավ քաղաքակրթությունը, անհետացավ միանգամից: Ամեն տեղ մտցրեց կոպիտ ուժի իշխանությունը և երբեք չհասկացավ ու չունեցավ օրենքի վրա հիմնված կառավարություն: Վերջապես, մի դրություն, որ կարծեք ուզում է հաստատել էդ ժողովրդի զարհուրելի ասածի ճշմարտությունը, թե՛ որտեղ թուրքի ձիու ոտը կոխեց, էնտեղ էլ խոտ չպիտի բուսնի»:<sup>7</sup>

«Տարոնի գարունը», «Տարոնի առավոտը» բանաստեղծությունների վերնագրերի տակ Թումանյանը գրել է. «Հատված պոեմայից»: Այդ երկու գործերում պատկերված է հայերի հալածական վիճակը քրդերի ձեռքին: Հայտնի է պատմական փաստ, որը հաստատում է նաև ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը. «Մինչև Աբդուլ Համիդ Երկրորդի թագավորելը՝ հայերը զգալի դեր ունեին Օսմանյան կայսրության մեջ, սակայն հետո հայ բուրժուազիան հեռացվեց իր գրաված բոլոր պաշտոններից: Կատարվեց առավել դաժանը. հայերի կալվածքները հանձնվեցին քրդերի առաջնորդներին, որը և հայերին մղեց 1891-ի ապստամբությանը: Դրան հետևեցին Համիդյան առաջին ջարդերը: Նոր ապստամբություններ բռնկվեցին Էրզրումում՝ 1892-ին և Մասունում՝ 1894-

---

<sup>5</sup> Ա.Ինձիկյան, Հովհաննես Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմությունը 1869-1899, Երևան, 1969, էջ 75:

<sup>6</sup> Գլադստոն Ուիլյամ (1809-1898) – անգլիացի քաղաքական գործիչ, գրող, Մեծ Բրիտանիայի վարչապետ 1868-1874, 1880-1885, 1886, 1892-94-ին: Լիբերալ կուսակցության առաջնորդ՝ 1868-ից: Գլադստոնին է պատկանում «Օտառայել Հայաստանին՝ նշանակում է ծառայել քաղաքակրթությանը» թևավոր արտահայտությունը: Սակայն նրա հայամետ քաղաքականության հիմքում Թուրքիայի վրա դիվանագիտական ճնշումների գործադրումով զիջումների կորզումն է: (տե՛ս «Հանրագիտական բառարան 2 հատորով, հ. 1, Երևան, 2016, էջ 475):

<sup>7</sup> Հովհ.Թումանյան, Մտքեր, Երևան, 2011, էջ 459:

ին. 1895-1896թթ. Տեղի ունեցան հայերի արյունալի նոր ջարդեր, և սպանվեց 300.000 անմեղ հայ»:<sup>8</sup>

Հայերը, այսօրինակ գազանություններից ու զրկանքներից հետո վերցնում են գաղթականի ցուպը և հեռանում պապենական հողերից.

Գարուն եկավ, սարերն ելավ.

Ազատ քյուրդը հաղթական,

Գարունն եկավ, յուր ցուպն առավ

Հայ գյուղացին գաղթական:<sup>9</sup>

«Տարունի առավոտը» բանաստեղծության մեջ պատկերված է Մշո դաշտը, հայերի պահապան սուրբ Կարապետ վանքը, քաղվոր կանանց նվիրյալ աշխատանքը դաշտում, որն ընդհատվում է ձի նստած քուրդ ավազակի հարձակումից. նա ճանկում է ուշագնաց հայ օրհորդին ու սրընթաց հեռանում.

Եվ սլացավ ինչպես բազեն

Խոյանում է ամպերից,

Ա՛հ, խեղճ կանայք, էլ ու՛ր վազեն,

Ի՞նչ է գալիս ձեռքներից...<sup>10</sup>

Արևմտահայերի դաժան տառապանքների մասին է պատմում «Գիշեր» բանաստեղծությունը, որում հիշատակվում է արևմտահայերի սիրելի սարերից Սիփանը: Վերջինիս լուռ վկայությամբ գիշերը դառնում է հայերին տառապեցնելու ամենահարմար ժամանակը.

Կույս աղջիկն է լըլկանքի մեջ,

Ալևորը խոր բանտում...

Էն կտրիճն է հայրենատենչ

Խիզախ հոգին ավանդում...

Եվ կյանքն այնտեղ ծանր ու խավար

Մի գիշեր է ահավոր...

Եվ ո՛վ գիտե, որի՞ համար

Կլուսանա բարի օր:<sup>11</sup>

Աշուղ Ջիվանին իր երգերում հաճախ է հիշել նախնյաց փառքը՝ դրանով ոգեշնչելով նոր եկող սերնդի հայերին.

Ա՛խ Հայաստան, Հայաստան,

Մնացի՛ր անդատաստան,

---

<sup>8</sup> Ա. Դոլուխանյան, Ֆրեդերիկ Մակլերը հայագետ, Երևան, 2011, էջ 18:

<sup>9</sup> Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ. 1, էջ 84:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 86:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 88:

Այոց օթևան դառար,  
Ու ր է քո Արամ, Տիգրան:<sup>12</sup>

Թումանյանը «Սիրելի Ջիվան, ընկերդ իմ հոգու» սկզբնատողով բանաստեղծության մեջ խորապես գնահատում է մեծ աշուղի երգերի հայրենասիրական ոգին, որը նրան տոգորում է հայրենասիրական հպարտությամբ.

Երբ հայրենիքն է քո երգում խոսում,  
Կամ նրա վիատ որդին արտասվում,  
Ջարթնում է իմ մեջ խոր վիրավորված  
Հպարտությունը իմ հզոր նախնայաց...<sup>13</sup>

Իսկական հայրենասերն օտարության մեջ շարունակ հիշում է հայրենիքի բնությունը, երգերը, հարազատներին: Նա տխրության և ինջույքի ժամանակ հայրենիքի կարոտն առնում է հայրենի երգերը երգելով: Այդ մասին է պատմում պոետի «Օտարության մեջ» թախծաշաղախ բանաստեղծությունը:<sup>14</sup>

Խիստ սրտահույզ բանաստեղծություն է «Հայ ուխտավորին» վերնագրվածը: Այն նվիրված է Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան հայրիկին: Աշխարհի բոլոր հայերը երկար դարեր ի վեր էջմիածնի Մայր տաճարը համարել են բոլոր հայերի գլխավոր ուխտատեղին: Բանաստեղծը փոքրիկ պատմական ակնարկ է անում էջմիածնի տաճարի վերաբերյալ: Այնտեղ է Գրիգոր Լուսավորիչը տեսել Հիսուսին, այնտեղ են գահակալել Ներսես Մեծն ու Սահակ Պարթևը, էջմիածնի տաճարից է երևում երկնահաս Մասիսը, որի կատարին Նոյի տապանը դադար առավ: Թումանյանը Խրիմյան հայրիկին համեմատում է Լիբանանի կաղնու և արծվի հետ.

Էնտեղ արթուն կանգնել է նա  
Լուսավորչի շիրմի վրբա,  
Բազուկն հպարտ հենել կողքին,  
Կանգնել է մեծ ու ահագին,  
Ու արծրվի աչքերն հընոց,  
Սևեռել է կողմերն Հայոց,  
Կողմերն Հայոց ու շատ հեռուն,  
Դիտե ցրված իր ձագերուն...

---

<sup>12</sup> Աշուղ Ջիվանի, Անհայտ երգեր, Աշխատասիրությամբ Թովմաս Պողոսյանի, Երևան, 2009, էջ 116:

<sup>13</sup> Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ.1, էջ 132:

<sup>14</sup> Նոյն տեղում, էջ 134:

Ա՛հ, ուխտավոր, աստված սիրես,  
Եվ ի՛մ կողմե աջն համբուրես:<sup>15</sup>

Ինչպես բոլոր առաջադեմ գրողները, այնպես էլ Թումանյանն իրավացի պահանջներ է ներկայացնում հայ հոգևորականներին: Դրանք պահանջներ են, որոնք սահմանել է Սահակ Պարթևը իր «Կանոնքում», դրանք խստապահանջ ձևով ներկայացնում է Ներսես Շնորհալին, դրանք արդիական են բոլոր ժամանակների համար: Թումանյանը փաստում է, թե տերտերները խախտում են հոգևորականի համար սահմանված բոլոր կանոնները.

Մեր տերտերը ազահ, տըզետ,  
Մատաղահաս մի աղջկա  
Պսակել է մի ծերի հետ:<sup>16</sup>

Հեզևորականների խոցելի վարքագիծն ամենուր է՝ բոլոր այն վայրերում, ուր հայն է ապրում.

Այսպես անվերջ ու անխտիր  
Ուր որ գնաս, մի կարճ խոսքով,  
Շուշի, Ղզլար, Բաթում, Իզդիր,  
Կարս, Երևան, Ղազախ, Մոսկով,  
Գորի, Գանձակ, Փիր, Ասխաբադ,  
Բաքու, Նուխի, Թիֆլիս, Թելավ,  
Ամեն տեղ էլ տերտերը վատ,  
Ազգի գլխին դարձել է ցավ...<sup>17</sup>

1902-ին են գրվել Թումանյանի հայրենասիրական քնարի լավագույն դրսևորումները՝ «Հայոց վիշտը», «Մեր ուխտը», «Հայոց լեռներում»: Համիդյան ջարդերից հետո բանաստեղծի տազնապը հայ ազգի ապագայի՝ հատկապես Արևմտյան Հայաստանի խնդրում ահագնանում է.

Ոչ հատակն է գտնում անվերջ  
Ու ոչ հասնում երկնքին...  
Հայոց վշտի մեծ ծովի մեջ  
Տառապում է իմ հոգին:<sup>18</sup>

«Մեր ուխտը», «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում» հանճարեղ բանաստեղծության նախանվագներն են: «Հայոց լեռներում» բանաստեղծության հինգ տներում պատկերված է հայ ժողովրդի

---

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 156-157:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 187:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 188:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 218:

պատմական դժվար ընթացքը: Բանաստեղծը շեշտում է, որ այդ դժվարագնա ճանապարհին հայերը ստեղծել են ծով գանձեր, ունեցել են առաջնակարգ քաղաքակրթություն.

Տանում ենք հրնուց մեր գանձերն անգին,  
Մեր գանձերը ծով,  
Ինչ որ դարերով  
Երկնել է, ծրնել մեր խորունկ հոգին  
Հայոց լեռներում,  
Բարձրը լեռներում:<sup>19</sup>

Հայի պատմական բախտը օրհասական են դարձրել շեկ անապատից եկած քոչվոր ցեղերը, որոնք հեղել են ազնիվ հայերի արյունը:

Չորրորդ տան մեջ առկա է արտագաղթի երևույթի իրողությունը, որի հետևանքն է Հայաստանը սուգի լեռների վերածվելը:

Բանաստեղծությունն ավարտվում է պայծառ առավոտի, ազգային ճակատագրի շտկումով ու ազգային վերածննդի հեռանկարով.

Ու մեր աչքերը նայում են կարոտ  
Հեռու աստղերին,  
Երկրնքի ծերին,  
Թե երբ կըբացվի պայծառ առավոտ  
Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում:<sup>20</sup>

«Ավերակում» բանաստեղծությունն ըստ երևույթին նվիրված է Անի քաղաքի ավերակներին: Բանաստեղծության ծանոթագրության մեջ այդ մասին ոչինչ չի ասվում, սակայն բանաստեղծության բովանդակությունը հուշում է, որ խոսքն Անիի մասին է: Քաղաքի ավերակներում կան մեծ պալատներ, ճոխ զարդարված սրահ, հայերի ազատանին ոգևորված հանդեսի է նստել, հնչում են ուրախության ձայներ.

Ու թնդում են մեծ սրահում  
Երգ ու նվագ ներդաշնակ...<sup>21</sup>

Թումանյանի այս բանաստեղծությունը հիշեցնում է XI դարի մատենագիր Արիստակես Լաստիվերցու պատմության Ողբ-նախերգանքը.

Հառնեցին անդուլ նոր պատերազմներ.  
Արևելքից սուր, արևմուտքից մահ,  
Հյուսիսից սպանդ և հարավից հուր.

---

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 224-225:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 268:

Ուրախությունը երկրից վերացավ,  
Ամենուր լռեց ձայնը քնարի,  
Լռեց թմբուկի բոմբյունը զվարթ,  
Բարձրացան ողբի աղաղակները:<sup>22</sup>

1910-ին Թումանյանը գրում է Հովհաննես Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՛լ էս, ասա՛» բանաստեղծության «PARODIA»-ն: Հովհ. Հովհաննիսյանն իր վերոհիշյալ ռոմանտիկ բանաստեղծությունը գրել է 1880-ին: Նա նկարագրում է Հայաստանի երազային գյուղը, այն գյուղը, որ կարող էր լինել: Ամենուր կանաչ այգիներ են, որպես գոհար հասունանում է խաղողը, դաշտերն ու մարգագետինները զարդարված են շուշաններով ու մեխակներով, գյուղի կողքից հոսում է խաղաղ վտակը, պատկերված է չքնաղ հայուհին՝ «դեմքով հրեշտակ, հասակը փարթամ»:<sup>23</sup>

Ռեալիստ Թումանյանը, ի հակադրություն Հովհաննիսյանի, պատկերում է հայ գյուղի թշվառությունը.

Տեսե՛լ էս արդյոք այն բլուրները,  
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,  
Ուր թալանում են մերոնք ու այլերը,  
Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:<sup>24</sup>

Թումանյանի պատկերած գյուղը կորած է աղբակույտերի մեջ, գյուղում շարունակ ներքին կոիվներ են և գյուղացուն կեղեքում են քոխվեն ու տերտեր: Իսկ հարավի դուստր հայուհին խոսելու իրավունք չունի ու կորած է կեղտի մեջ: Թումանյանը քննադատում է բարձրաստիճան հոգևորականին՝ եպիսկոպոսին, որի ձեռքին փայլում է թանկարժեք մատանին: Խիստ քննադատվում է նաև հայ մամուլը.

Եվ դու տեսե՛լ էս նորա գազեթը,  
Որ ազատ միտք է վաճառում հային.  
Զգո՛ւյ՜ջ բարեկամ, չվիճես հետը,  
Թե չէ՝ կըմատնի քեզ պոլիցային...<sup>25</sup>

Հայրենասիրական խոհերից տազնապած Թումանյանի հոգին երևում է նորից «Խորհրդածություն հայկական հարցի վրա» բանաստեղծության մեջ: Նա ամոթանքի խոսք է ուղղում մարդուն ու ժամանակին, որոնք

---

<sup>22</sup> Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Թարգմանությունը Վ.Ա.Գևորգյանի, Երևան, 1971, էջ 2:

<sup>23</sup> Հովհ. Հովհաննիսյան, Երկեր, Միհաստոբյակ, Երևան, 1959, էջ 18-19:

<sup>24</sup> Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ.1, էջ 270:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 271:

անտարբեր են հայի ճակատագրի նկատմամբ: Բանաստեղծը համոզված է, որ գալու է հատուցման պահը, ու դա լինելու է վերուստ.

Եվ դարձ կա նրբան, որ վառեց խարույկ  
Խըլեց ուրիշից կյանք, պատիվ ու գույք:<sup>26</sup>

1914-ին «Վերջին տազնապը» բանաստեղծության մեջ տեսնում ենք Թումանյանի այն մեծ հույսը, որ նա կապում էր Ռուսաստանի կողմից Արևմտահայաստանի ազատագրության հետ.

Ու ամպերում, բարձր ուսից Մասիսի  
Սլանում է մեծ արծիվը հյուսիսի  
Շիտակ դեպի բարձունքները հայկական  
Իր հետևից հայի բախտն ու ապագան:<sup>27</sup>

Խոր հուսախաբության ու հոգեկան խռովքի դրսևորումն է բանաստեղծի հայրենասիրական քնարի մեկ այլ գլուխգործոց «Հայրենիքիս հետ» իմաստուն բանաստեղծությունը: Նրանում տեսնում ենք բանաստեղծի երազանքը. աշխարհի բոլոր ազգերն պետք է ապրեն հաշտ, խաղաղ ու երջանիկ.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
Հազա ր-հազա ր լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժպիտ իր շողերը պիտի ժրպտան առաջին...<sup>28</sup>

Այս բանաստեղծության մեկնության մեջ գրականագետ Վաչե Պարտիզունին նկատել է. «Երգելով իր հայրենիքը, Թումանյանը, սակայն, ազգային բացառիկություն չի քարոզել, նրան խորթ են եղել օտարատյացությունը, ազգային սնապարծ ու ռեակցիոն ռոմանտիզմը: Նա ժողովուրդների խաղաղ դրացիության ու եղբայրության սկզբունքային պաշտպանն է, ջատագովը. նա հայ ժողովրդին համարել է «եղբայրության ու սիրո...կարոտ ժողովուրդ»:<sup>29</sup>

Հայերի Մեծ եղեռնը ցնցել է Հովհաննես Թումանյանին և ոչ միայն նրան, այլև մեծ հայի ընտանիքի բոլոր անդամներին: Նրա որդին՝ Արտավազդ Թումանյանը, կամավորների հետ մեկնել է Արևմտահայաստան ու նահատակվել:

1915-ի նոյեմբերին է տպագրվել «Հոգեհանգիստ» սրտակեղեք բանաստեղծությունը: Այն նվիրված է երիտթուրքերի կազմակերպած

---

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 281:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 287:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 289:

<sup>29</sup> Վ.Չ. Պարտիզունի, Գրականության ուժն ու հմայքը, Երևան, 1963, էջ 137:

հայերի ցեղասպանության մեկ և կես միլիոն զոհերին, որոնց դիակները ցրված էին ողջ Մեծ Հայքում ու նրան հարող տարածքներում.

Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,

Մինչև Հելլեսպոնոս, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...

-Հանգե՛ք, իմ որբեր... իզուր են հուզմունք, իզուր և անշահ...

Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...<sup>30</sup>

1919-ին Թիֆլիսում մեծ հանդիսավորությամբ նշվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Փետրվարի 20-ին մի շարք ռուս գրողներ Թիֆլիսի բազմազգ մտավորականների խմբի հետ այցելել է Թումանյանին և նրան հանձնել շնորհավորական ուղերձ, որի մեջ ասվում է. «Ваш праздник является не только народным праздником Вашей многострадальной родины, но и днём великой радости для всех поэтов, чествующих в лице Вас высокого жреца вселенского слова... И сколько раз в эти тревожные годы Ваш голос звучал как совесть человечества! Великого гуманиста мощного сердцем пророка, приветствуем мы Вас сегодня и славим».<sup>31</sup>

Հիրավի, ճշգրիտ բնութագրականներ մեծ բանաստեղծի հոբելյանի առթիվ,-Թումանյանը տիեզերական խոսքի քուրմն էր ու աստվածաշուրթ մտքերով դարձել էր համայն մարդկության խիղճը:

## Ռ. Դուլիսանյան

### Հովհ. Թումանյանի հայրենասիրական բանաստեղծությունները

#### Ժամանակի հոլովություն

#### Ամփոփում

Հովհ.Թումանյանը հայրենասիրական բանաստեղծություններ է գրել 1890 թվականից մինչև 1920-ը՝ այսինքն ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: Հայրենիքի նկատմամբ ունեցած սերը ծնվել է իր ժողովրդի անցած պատմական ուղու քաջատեղյակությունից:

Հայերի Մեծ եղեռնը ցնցել է Հովհաննես Թումանյանին և ոչ միայն նրան, այլև մեծ հայի ընտանիքի բոլոր անդամներին: Նրա որդին՝ Արտավազդ Թումանյանը, կամավորների հետ մեկնել է Արևմտահայաստան ու նահատակվել:

1915-ի նոյեմբերին է տպագրվել «Հոգեհանգիստ» սրտակեղեք բանաստեղծությունը: Այն նվիրված է երիտթուրքերի կազմակերպած

<sup>30</sup> Հովհ.Թումանյան, ԵԼԺ, հ. 1, էջ 299:

<sup>31</sup>

, 2011, . 17.

« »

« »,

հայերի ցեղասպանության մեկ և կես միլիոն զոհերին, որոնց դիակները ցրված էին ողջ Մեծ Հայքում ու նրան հարող տարածքներում:

1919-ին Թիֆլիսում մեծ հանդիսավորությամբ նշվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Փետրվարի 20-ին մի շարք ռուս գրողներ Թիֆլիսի բազմազգ մտավորականների խմբի հետ այցելել է Թումանյանին և նրան հանձնել շնորհավորական ուղերձ, որի մեջ ասվում է. «Ваш праздник является не только народным праздником Вашей многострадальной родины, но и днём великой радости для всех поэтов, чествующих в лице Вас высокого жреца вселенского слова... И сколько раз в эти тревожные годы Ваш голос звучал как совесть человечества! Великого гуманиста мощного сердцем пророка, приветствуем мы Вас сегодня и славим».

Հիրավի, ճշգրիտ բնութագրականներ մեծ բանաստեղծի հոբելյանի առթիվ,-Թումանյանը տիեզերական խոսքի քուրմն էր ու աստվածաշուրթ մտքերով դարձել էր համայն մարդկության խիղճը:

**Р. Долухаян**

Кандидат педагогических наук, доцент

### **Патриотические стихи Ованеса Туманяна в круговороте времени**

#### **Резюме**

Ованес Туманян писал патриотические стихи с 1890 года до 1920 г., то есть в течение всей творческой жизни. Его любовь к Родине зародилась от великой осведомленности об историческом пути, пройденном его народом.

Геноцид армян потряс Ованеса Туманяна и не только его, а также всех членов семьи великого армянина. Его сын Артавазд Туманян вместе с добровольцами отправился в Западную Армению и там погиб.

В ноябре 1915 г. было опубликовано душераздирающее стихотворение «Реквием». Оно было посвящено полуторамиллионам жертв организованного младотурками Геноцида армян, трупами которых была усыпана вся Великая Армения и близлежащие территории.

В 1919 г. в Тифлисе торжественно отметили 50-летие со дня рождения Туманяна. 20 февраля ряд русских писателей вместе с многонациональной группой интеллигенции Тифлиса нанесли визит Туманяну и вручили ему поздравительный адрес, в котором говорилось: «Ваш праздник является не только народным праздником Вашей многострадальной Родины, но и днём великой радости для всех поэтов, чествующих в лице Вас высокого жреца вселенского слова... И сколько раз в эти тревожные годы Ваш голос звучал как совесть человечества! Великого гуманиста, мощного сердцем пророка, приветствуем мы Вас сегодня и славим».

Воистину, это была правдивая характеристика по случаю юбилея великого поэта – Туманян был жрецом вселенского слова и своими божественными мыслями стал совестью всего человечества.

**R. Dolukhanyan**

Ph.D. in Pedagogical Sciences,  
Assistant professor

### **Patriotic Poems of Hovhannes Tumanian in the Whirlpool of Time**

#### **Summary**

Hovhannes Tumanian wrote patriotic poems from 1890 to 1920, that is, throughout his entire creative life. His love for his Motherland originated from the great awareness of the historical path covered by his people.

The Armenian Genocide shocked Hovhannes Tumanian and not only him, but also all the family members of this great Armenian. His son Artavazd Tumanian went to Western Armenia together with volunteers and was martyred there.

In November 1915, the heartbreaking poem *Requiem* was published. It was devoted to the Armenian Genocide organized by Young Turks, the corpses of one and a half million victims of which covered the whole of Great Armenia and nearby territories.

In 1919, the 50<sup>th</sup> birth anniversary of Tumanian was solemnly celebrated in Tiflis. On February 20, a number of Russian writers, together with a multinational group of Tiflis intellectuals, paid a visit to Tumanian and handed him a congratulatory message which said: “Your birthday is not only the national feast of your long-suffering Motherland, but also a day of great joy for all poets who honor in your person the high priest of the universal word... And how many times in these alarming years your voice sounded like the conscience of humanity! We greet you today and glorify a great humanist, a prophet with powerful heart”.

This was indeed a true characteristic on the occasion of the anniversary of the great poet: Tumanian was the priest of the universal word and his divine thought became the conscience of all mankind.

***Խմբագրություն է ուղարկվել 07.03.19***

***Հանձնարարվել է գրախոսության 11.03.19***

***Տպագրության է հանձնարարվել 29.04.19***

**ՄԻՐՎԱՐԴ ԱՄՐՅԱՆ**

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ «Մանկավարժական համալսարան»  
պաշտոնաթերթի խմբագիր,  
բանասիրական գիտությունների թեկնածու  
[asryansilva@gmail.com](mailto:asryansilva@gmail.com)

**ԱՆՑՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆՈՒՄ  
(ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ԾԻՐԱՆԻ ԾԱՌԵՐԻ ՏԱԿ» ՎԵՊԸ)**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** նոր պատմաշրջան, անկախություն, բարոյական և հոգևոր կորուստներ, քաղաքացիական հասարակություն, արժեհամակարգ, ողբերգական պատմություն, երկրի նորոյրա տերեր, անցյալ և ներկա, ապագայի տեսլական:

**Ключевые слова и выражения:** новый период в истории, независимость, моральные и духовные утраты, гражданское общество, система ценностей, трагическая история, новые хозяева страны, прошлое и настоящее, видение будущего.

**Key words and expressions:** new era, independence, moral and spiritual losses, civil society, value system, tragic story, country's new owners, past and present, vision of future.

Հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր կտրուկ շրջադարձ իր դրական կամ բացասական հետքերն է թողնում բոլոր բնագավառներում, որը փաստորեն նոր պատմաշրջանի սկիզբ է հանդիսանում և «անխուսափելիորեն նորոգում է գրական ժանրերը՝ փոփոխելով ոչ միայն ճակատը, այլև հատակագիծը<sup>1</sup>»:

«Նոր պատմաշրջանի» սկիզբը խիստ ոգևորիչ էր և հուսադրող. ժողովրդական մասսաների մտասնեռումներում սոցիալական կեցության բարելավման, հայ դատի արդարացի լուծման, Արցախի, հետագայում նաև Նախիջևանի՝ Ադրբեջանին բռնակցումից ազատագրման, պատմական արդարության վերականգնման, աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների հետևանքով անընդհատ «փոփոխվող քարտեզի վրա մեր տեղն ու ձայնը ունենալու» (Ժ. Քալանթարյան), Եղեռնի միջազգային ճանաչման հարցերն էին:

---

<sup>1</sup> Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., «Հայաստան» հրտ., 1976, էջ 320:

Համաժողովրդական ոգևորության հուժկու ալիքը ոտքի էր հանել հասարակության բոլոր խավերին, Ազատության հրապարակը դարձել էր սրբատեղի, որտեղ թևածում էր անձնական տարածայնությունները մոռանալու, ազգովի միավորվելու, բռնցքվելու ոգին:

Պատմության փորձը, սակայն, ցույց է տալիս, որ շատ հաճախ հեղաշրջումներից հետո ոգևորության մակընթացությանը հաջորդում է հուսախաբության տեղատվությունը, և մակընթացության ալիքների վրա իշխանության եկածները մոռանում են իրենց խոստումները, բարեկեցիկ, լուսավոր, ազատ ու անկախ ապագայի վերաբերյալ իրենց կարգախոսները:

«Նոր պատմաշրջանը» բոլոր հանրապետություններում սկսվեց սեփականաշնորհումներով ու ազդեցության ոլորտների տեղաբաշխումներով, որոնք ուղեկցվում էին սահմոկեցուցիչ դեպքերով, հասարակության աննախադեպ շերտավորումներով: Լայն թափ ստացավ շքեղ առանձնատների, ամառանոցների շինարարությունը: Ամենուրեք սնկի պես բազմացող կուսակցություններն ընտրությունից ընտրություն ամբոխի վերածված մասսաներին ներկայացնում էին առաջընթացի, բարեկեցիկ ապագայի՝ մեկը մյուսից գայթակղիչ ու իդեալական ծրագրեր, որոնք օճառի պղպջակների պես պայթում էին ընտրություններից հետո: Բարեխղճորեն կյանքի էին կոչվում միայն սեփականաշնորհման ծրագրերը. մասնավորեցվում էին ոչ միայն գործարանները, հանքավայրերը, բարեբեր՝ հողատարածքներն ու անտառաշերտերը, այլև մշակութային օջախները՝ կինոթատրոնների, համերգասրահների, գրադարանների շենքերը, որոնք կարճ ժամանակամիջոցում վերափոխվում էին ռեստորանների ու խորովածանոցների, խաղատների, զվարճանքի ու անառակության որջերի:

Սեփականաշնորհվում էին նաև իշխանական կերակրատաշտին մոտ գտնվող պաշտոնները՝ նախարարական պորտֆելները, դեպուտատական մանդատները, շահութաբեր բոլոր պաշտոնները, թևածում էր «մեր դեմ խաղ չկա» կարգախոսը, որը անպատժելիության, անձեռնամխելիության վտանգավոր մթնոլորտ էր ստեղծում:

Առավել զավեշտալի էր կուսակցությունից կուսակցություն առնետավազքը, որը քողարկվում էր նվիրվածության ու հավատարմության կեղծ երդումներով. երեկվա կոմունիստները համալրում էին նորաստեղծ կուսակցությունների շարքերը ու կոկորդ պատռելով քննադատում նախկին տոտալիտար համակարգի արատները, երեկվա աթեիստները, որոնք քարը քարի վրա չէին թողնում «քրիստոնեական դոգմատիկ տեսությունները» քննադատելիս, դառնում էին երդվյալ հավատացյալներ, շատերը, որոնք քամելեռնի հատկանիշներով էին օժտված, հանկարծ դառնում էին նվիրյալ նժդեհականներ:

Այս ամենի հետևանքով կյանքի ռիթմերը հետզհետե փոխվում էին, իսկ ժողովրդի կենսամակարդակը՝ անշեղորեն իջնում. հարուստներն ավելի էին հարստանում, իսկ մեծամասնությունը օրվա հաց վաստակելու ճանապարհներ էր որոնում, և բոլորովին էլ զարմանալի չէր, որ մարդկանց գնահատելու հիմնական չափանիշը դարձավ «չինովնիկի չինն ու կուպեցի արշինը» (Ա. Բակունց):

Երկար ճանապարհ էր պետք անցնել՝ «հասկանալու համար, որ անցնում են բարի ու միամիտ ժամանակները, և մարդկությունը բարոյական կորուստներ է ունենում, իսկ երբ փորձում է վերականգնել, պարզվում է, որ բարոյական ու հոգևոր կորուստներն անդառնալի են»<sup>2</sup>:

Այս պարագայում է, որ գրողները պարտավոր են լինել անարդարությունների դեմ պայքարողների առաջին շարքերում և իրենց հիմնական խնդիրը դարձնել «ձեռքը ժամանակի զարկերակին» պահելը, քաղաքացիական հասարակության ստեղծման, մթնոլորտի առողջացման, ամբոխի վերածված ժողովրդին ուղղորդման, կարծրացած մտածողության թարմացման գործընթացներին մասնակցելը:

Անտարակույս է, որ դա ժամանակի ընթացքում իշխանություններին ու կուսակցություններին կպարտադրեր ըմբռնելու, որ իրենց հիմնական խնդիրը պետք է լինի միայն ու միայն ժողովրդին ծառայելը, ներքին ու արտաքին քաղաքականության խելացի կազմակերպման ճանապարհով նրա սոցիալական վիճակի բարելավումն ու միջազգային հարթակներում երկրի հարգի բարձրացումը:

Համաժողովրդական աննախադեպ ոգևորության, հույսերի ու հուսախաբությունների, մարդկային ճակատագրերի խեղման, արտագաղթի բուն պատճառների և նման խնդիրներին 1960-ականների սերնդի գրողներից առաջիններից մեկն անդրադարձավ Ռ. Հովսեփյանը:

2006 թվականին լույս տեսավ նրա «Ծիրանի ծառերի տակ» վեպը, որտեղ գեղարվեստական ու հրապարակախոսական կրքոտ լիցքերի համադրմամբ հեղինակը ստեղծում է վեպի իր յուրահատուկ մոդելը, ներկայացնում «ժամանակի ներքին ֆունկցիայի» վերաբերյալ իր պատկերացումները, նրա համապատկերն ամբողջացնելու իր մեթոդներն ու եղանակները:

Տիպաբանական աղերսակցություններ կարելի է տեսնել Ե. Չարենցի «Երկիր Նաիրի», Ա. Բակունցի «Կյորես» և Ռ. Հովսեփյանի «Ծիրանի ծառերի տակ» ստեղծագործությունների միջև: Ե. Չարենցը «ժամանակագրում-

---

<sup>2</sup> Քալանթարյան Ժ., Անդրադարձներ, Եր., «Զանգակ-97» հրտ., 2002, էջ 20:

տարեգրում է» 1913-1920 թթ. Կարսում, Ա. Բակունցը՝ նույն ժամանակահատվածում Կյորեսում (Գորիսում), Ռ. Հովսեփյանը՝ անկախության առաջին տարիներին հիմնականում Երևանում կատարված դեպքերն ու իրադարձությունները՝ իրենց «աշխարհայացքի լույսի տակ բացահայտելով դրանց «պատմական նշանակությունը» (Ս. Աղաբաբյան):

Ընդհանուր շատ գծեր կարելի է առանձնացնել Եղիշե Չարենցի Մագուփի Համոյի, Գեներալ Ալոշի, Հուսիկ Վարդապետի, Ա. Բակունցի քաղաքագլուխ Մատվեյ Մատվեյիչի, Թեփոսծ Երեմի, Սմբատի կատու Սողոմոնի և Ռ. Հովսեփյանի Պարոն Փեսայի, Լոլլողի, Շերեփուկի, Բանտապետի և այլ կերպարների միջև, որոնք «Լույս» նավթային ընկերության գրասենյակում, Գորիսի քաղաքապետարանում, Բաղրամյան 26-ում և ԱՄ խորհրադավոր սենյակներում «ազգային կյանքի ծրագրեր» էին կազմում, ճակատագրական հարցեր լուծում: Նշված երեք ստեղծագործություններում էլ վարպետորեն համադրվում են զավեշտականն ու ողբերգականը, սատիրան ու մեղմ հումորը, ժողովրդի ներկայացուցիչները՝ Ավետիք, Աթա ապեր, Ղաթրիհի Աղալո, հակադրվում «մագուփի համոյական» տարատեսակներին: Նշված երեք ստեղծագործություններում էլ նույն կամ նման մտահոգություններն էին հայրենիքի հեռավոր ու մոտ անցյալը ապագայի տեսլականում:

Ռ. Հովսեփյանի վեպը սկսվում է «Հրագդանի կիրճի պոնկին բազմած Սուրբ Սարգիս եկեղեցու» պատկերով:

Այս և վեպի մի շարք այլ մասսայական տեսարանների միջոցով Ռ. Հովսեփյանն առաջացնում է «որոշակի տարածական պատկերացումներ, ներկայացնում այն միջավայրը, ուր գործում են կերպարները»: Հեղինակը դրանք ներկայացնում է՝ կապված ստեղծագործության հիմնական խնդիրների հետ: Եթե եկեղեցու բակում, հարակից տարածքներում հիմնականում մուրացկաններ ու անօթևան երեխաներ են, ապա Ազատության հրապարակում, նախագահական նստավայրի դիմաց հիմնականում հագած-կապած ցուցարարներ են, որոնք գրգռում էին ամբոխին: Այս ամենը Ռ. Հովսեփյանը ներկայացնում է որպես իրար հաջորդող իրողությունների շղթա:

Քաղաքի համապատկերը, ցույցերի տեսարաններն այնքան մռայլ ու ցնցող էին, որ նույնիսկ Ավետիքի Հրեշտակ ձին է «խալկոտում քաղաքի հեքից» ու փորձում է Ավետիքին հասկացնել, որ սա «իր աշխարհը չէ», որ իր տեղը արձակ դաշտերն են, ուր զամբիկները խենթանում են հովատակների վրնջոցից, և իր վարգը թռիչք էր, սլացք:

Հրեշտակ ձիու խորհրդանշական կերպարը առանցքայիններից մեկն է վեպում, և այդ կերպարի միջոցով է նաև Ռ. Հովսեփյանը պատումի ընթացքը տանում դեպի հանգուցալուծում: Հրեշտակ ձին «ծուլորեն լողում է

հուշերի ծովում» և մտածում, որ քառսի մեջ հայտնված այս քաղաքում՝ «ամեն քայլափոխի շարժումն ընդհատող խաչմերուկներով այս հոծ» միջավայրում, «չորսբոլորը միաժամանակ տեսնող

նապաստակի աչք է պետք ու սանձը ժամանակին ձգող հմուտ ձեռք»<sup>3</sup> (4): Նույն կերպ է մտածում նաև Ավետիքը, ում համոզմունքով այս քառսային վիճակը «սանձը ժամանակին ձգող հմուտ ձեռքի» բացակայության արդյունք է:

Խորհրդանշական այս պատկերներից հետո Ռ. Հովսեփյանը պատումի ընթացքն ուղղում է դեպի «քաղաքիս խորքերը», ուր կրքեր են եռում, մարդիկ դեպի Ազատության հրապարակն են շտապում, այնտեղից՝ իշխանական պալատ՝ ներկայացնելու իրենց վերջնագրերը «մոսկովյան դրածո ճաղատին»: Այդ օրերին «նորընծա վեհափառի ծրագրերն էին հնչում Մայր աթոռի գավիթում. «Թե՛ նոր եկեղեցիներ պիտի կառուցի, թե՛ հները նորոգի, թե՛ ճեմարան պիտի բացի և թե՛ քաղաքակիրթ պայքար մղի մորմոնների ու արևմտյան քամիների թևով Հայաստան ներխուժած հազար ու մի աղանդի դեմ: Սրանք չե՛ որ անխնա խժռում են ճշմարիտ հավատի՝ առանց այն էլ փսկած, ազագուն հասկերը»<sup>3</sup> իսկ Ազատության հրապարակն ուղղակի պայթում էր ավելի հնչեղ խոստումներից (4):

Ռ. Հովսեփյանի վեպի կերպարների մեծամասնությունը շարժման առաջին օրերից հասարակությանը ծանոթ անձնավորություններ են, որոնց հեղինակը ներկայացնում է նրանց բնութագրող խորհրդանշական անվանումներով՝ Շերեփուկ, պարոն փեսա, Լողլող, Սորոսբավոր, ներքին գործոց նախարար, բանտապետ, Ենոք, Գոռ, Կարմիր խաչի ներկայացուցիչներ, Ենոքի մունջ և այլն:

Կոնկրետ գործողություններով հանդես եկող իրական մարդկանց, սակայն, Ռ. Հովսեփյանը ներկայացնում է որպես գրական կերպարներ՝ ցույց տալով, որ նրանց բարոյահոգեբանական, ինչու չէ, նաև կենսաբանական նկարագիրը սոցիալ-քաղաքական միջավայրի արդյունք է: Նրանք մարմնավորում են անկախության առաջին տարիներից սկսված ու շարունակվող իրավիճակի աղավաղված համապատկերը:

Վեպի հիմնական գաղափարն այն է, որ քառսային այս վիճակը «մեկ օրում ու մեկ դիպվածով չէ, որ սկսվեց. դրա հիմքերը դեռևս դրվեցին ԽՍՀՄ-ի փլուզմամբ ու անկախության նվաճման գործընթացներին զուգընթաց», և այժմ արդեն ակնառու է, որ անկումն սկսվեց հոգևոր-

---

<sup>3</sup> Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, «ԱՌՏ», 2006, էջ 4: Այսուհետև տեքստում կնշվի միայն էջը:

մշակութային դաշտից, և այն, ինչ բարձրաձայնում է Ռ. Հովսեփյանն իր վեպում, տասնամյակ հետո է արժանանում արձագանքների:

«Գրական թերթին» 2009 և 2013 թվականներին տված հարցազրույցներում Ռ. Հովսեփյանն այսպես է ներկայացնում վեպը գրելու շարժառիթներն ու իր խնդիրները. «Ծիրանի ծառերի տակ» վեպում ես փորձել եմ կապակցել հեռավոր ու մոտ անցյալն ու ապագան<sup>4</sup>, որովհետև «ինձ ամենաշատը հուզում է մեր քաղաքացիական հասարակության կառուցման խնդիրը: Այլևս հույս չեմ կապում իշխանությունների ու կուսակցությունների հետ: Իմ ցանկությունը պայմանավորված է քաղաքացիական հասարակության կայացմամբ, ինչն էլ կարող է պարտադրել իշխանություններին ու կուսակցություններին վերանայելու մեր ապրելակերպը: Քաղաքացիական հասարակության զարգացումը պիտի թարմացնի վաղուց ի վեր սեփականաշնորհված իշխանությունը և կուսակցություններին, թարմություն է պետք. գաղափարական ճահիճը պետք է վերացվի<sup>5</sup>»:

Իսկ այդ ճահիճն առաջացել է, որովհետև «մեր հեռավոր ու մոտ պատմությունը դեռևս չի ձևակերպվել որպես ձեռնարկ կամ դասագիրք», մեր մեջ դեռևս «իսկական, ճշմարիտ, անընդմեջ ու շարունակական պատմության ծարավ է մնացել»: Այդ ծարավը հագեցնելու համար պետք է գիտակցել, որ «մարդը արդյունք է անցյալի ու ներկայի մի զարմանահրաշխառնություն: Ներկայի մեջ այնքան անցյալ կա, որքան անցյալի մեջ ներկա: Դրանք հազարավոր թելերով կապված են միմյանց: Կապված չլինեին, խախտվելու էր նորին մեծության շարունակականությունը, և ամեն մի նոր սերունդ նոր թվարկություն էր սահմանելու:

Ժողովրդի ոգևորության ալիքների վրա ասպարեզ են եկել «գործիչներ», ովքեր խախտում են պատմության միասնականությունն ու «նոր տոմար» են սահմանում, նոր արժեկարգեր ստեղծում, և նրանց համար բացարձակապես փույթ չէ, որ աստիճանաբար կորցնում են իրենց հենման կետը՝ Հայաստանը:

«Ծիրանի ծառերի տակ» վեպում «Ժամանակային ցուցիչները շատ են, բայց կա հենման կետը՝ Հայաստան երկիրը՝ արտաքուստ ու ներքուստ, և կա հայ մարդը՝ իր անցյալով ու ներկայով<sup>6</sup>»:

Այդ հենման կետն էին կորցրել նոր տոմարի առաքյալները, և նրանց ջանքերով էր ժամանակը դուրս ընկել առաջընթացի իր բնականոն հունից,

---

<sup>4</sup> «Գրական թերթ», 2009, 20 դեկտեմբերի:

<sup>5</sup> «Գրական թերթ», 2013, 4 փետրվարի:

<sup>6</sup> Նույն տեղում:

նրանց ջանքերով էր քաղաքը փոխել իր դիմագիծը: Նրանց նմանների պատճառով «պղտորվեց մեր տակառի լուծույթը», ու անցյալ-ներկա-ապագա ուղեծիրում խախտվեց ժամանակի նորմալ ընթացքը:

Աքսորականի որդի Ավետիքի հիշողությունների միջոցով է Ռ. Հովսեփյանը ներկայացնում իր մոտեցումները ժամանակի տարբեր հոսքերին, իրողություններին, որոնք փոխում են մարդու կյանքի ընթացքը՝ դարձնելով նրան դժբախտ կամ երջանիկ, Քրիստոս կամ Հուդա:

Վեպն առաջին հերթին հետաքրքիր է ֆաբուլա-սյուժե հարաբերակցության տեսակետից. քսորականի որդի Ավետիքը իր Հրեշտակ ձևով երկու պարկ սալորաչիր է տանում՝ վաճառելու, հետո խնամիներին հանդիպելու, գյուղից բերած ծիրանի կոճղը փայտագործ վարպետ Վարոսին հանձնելու ու տուն վերադառնալու առօրեական մտադրությամբ: Ֆաբուլայի այս նեղ սահմաններում են ծավալվում վիպական գործողությունները՝ բացահայտելով մի քանի սերունդների կենսապատումի ժամանակագրությունը՝ տեր-Ստեփանոս, նրա որդի Ավետիք, Ավետիքի որդի Գոռ, Պլնչոտ, որին պատահաբար շուկայում հանդիպում է Ավետիքը:

Վեպը կառուցվածքային առումով «եթե որպես ֆաբուլա ապագային միտված ժամանակագրություն է, ապա որպես սյուժե՝ նախորդած ժամանակների արձագանք-կրկնություն է, որովհետև նշված հինգ սերնդին էլ բաժին է ընկել կենսակերպի անտրոհելի բաղկացուցիչ դառնությունը<sup>7</sup>»:

Անցյալի գուգահեռի վրա հայ ժողովրդի պատմության նորագույն շրջանի՝ անկախության դեպքերի ու իրադարձությունների ընթացքը Ռ. Հովսեփյանը ներկայացնում է Ավետիքի ու նրա ընտանիքի կենսապատումի օրինակով՝ նրա կերպարում բացահայտելով հասարակության ճակատագիրը, խորագնին քննության ենթարկելով այդ ճակատագրի խեղման պատճառները:

Տառապանքի, ցավի ու մահվան քառուղիներով է անցել Ավետիքը և հիմա, թերթելով հիշողությունների էջերը, անցնում է իր կյանքի բոլոր գուգահեռներով, ու նրա մտասևեռումներում միշտ Մ. Մարյանի «Ծիրանի ծառերի տակ» կտավն է, որ «մանկության համ ու հոտ էր արտաշնչում, արթնացնում վաղուց մոռացված կամ աննշան թվացող մանրամասներ, դեպքեր, բառեր, հնչյուններ, որ հիմա նշանակալից էին դառնում ու անբացատրելիորեն կարևոր: Նկարից լուսարձակ էր ճառագում անցած ողջ կյանքի վրա և տարօրինակ ու հաճելի շփոթ առաջացնում ներկայի ու անցյալի, ժամանակների ու տարածությունների միջև. թվում էր, անցյալից,

---

<sup>7</sup> Նույն տեղում:

սկզբից եւ այսօրվան նայում և ոչ թե այսօրից անցյալը վերհիշում: Ավելի շատ կանխատեսում, մարգարեություն էր ապրում, քան վերհուշ, անդրադարձ» (42):

Կտավի մի անհաջող վերատպություն Ավետիքը պոկել էր ուսանողական հանրակացարանի պատից ու իր հետ Թուրքմենիա տարել: Զարմացել էին անապատում նրա հետ ջուր ու նավթ որոնող երկրաբանները, որ «նորավարտ շրջանավարտը, այն էլ կովկասյան տաքարյուն ցեղերից, մերկ գեղեցկուհի պատկերող նկարի փոխարեն նման խզբզանք է կախել կացարանի պատից» (37):

Մեծ նկարչի կտավը հեղինակի համար անցյալն ու ներկան համադրելու, լայն առումով ժողովրդի ու հայրենիքի մասին խորհելու յուրահատուկ միջոց է, Ավետիքը այդ գուգահեռներում ակամայից հայտնված տառապյալ մի անհատ, որ երբեմն «տարածություններն ու ժամանակներն իրար խառնելով, մտնում էր նկարի մեջ, դառնում նկարի մասը, գույնը, երանգը... Կտավի համապատկերում Ավետիքի աչքերի առջև հանդիպադրվում են անցյալն ու ներկան, անցյալը՝ կտավի անկրկնելի գույներով ու երանգներով, ներկան՝ պարոն փեսայի, Լոդլոդի, ներքին գործերի ու պաշտպանության և այլ նախարարների, ամենատարբեր մակարդակի պաշտոնյաների, նրանց հավատարիմների ու նվիրյալների և բազմաթիվ այլոց կերպարանքով, որոնք աղավաղում ու աղճատում են նկարի գույները: Անցյալը՝ փայտագործ վարպետ Վարոսի, ով մեծ նկարչի արձանի մոտ ծիրանի փայտից պատրաստած սեղանիկի վրա զանազան իրեր է վաճառում, նարդու, շախմատի քարեր, զանազան զարդաքանդակներ, համրիչներ, որոնց հատիկները միայն «խեր» են բերում, որովհետև վարպետ Վարոսի բարի ձեռքերով են պատրաստվել, ներկան՝ շուկայում առևտուր անող, կամկածելի, անորոշ անցյալով Շերեփուկի, ում համար ամեն ինչ վաճառքի ենթակա ապրանք է, իսկ ծիրանենու կոճղը՝ միայն վրան միս ջարդելու հարմարանք:

Ամեն ինչ «ծախու» է ոչ միայն Շերեփուկի, այլև Լոդլոդի, Մորուքավորի, նրանց պես ջրի երես ելած բոլոր նրանց համար, ովքեր մարդկանց գնահատում են դրամապանակի հաստությամբ ու թիկնապահների քանակով:

Մ. Սարյանի «Օիրանի ծառերի տակ» կտավի նմանողությամբ ստեղծած Ավետիքի աշխարհում ժամանակն ուրիշ ընթացք ունի, տարածությունը՝ ուրիշ չափումներ, պատմության դասագրքերն ու ձեռնարկները՝ ուրիշ բովանդակություն, և միայն պատմության ուսուցիչը չէր դրանց ընթերցողը: Այդ դասագրքերում ու ձեռնարկներում «ընդամենը սև ու ձերմակ գույներով, առասպելներով ու առասպելական հերոսներով ու դավաճաններով, արկածախնդրությամբ ու պարտություններով, կորստով,

ցավով, լեփ-լեցուն աշխարհ չէր այդ պատմություն կոչվածը»<sup>8</sup>: Դրանցով արդեն ընթերցողները հագեցնում էին «խկական, ճշմարիտ, անընդմեջ ու շարունակական պատմության» իրենց ծարավը:

Պապի, հոր և Ավետիքի կենսագրությունների միջոցով Ռ. Հովսեփյանը ներկայացնում է երկրի կեդարյա պատմության ողբերգական էջերը: Ավետիքի հորն ընտանիքի հետ աքսորել են Սիբիր: Հետո, «երբ մենք աքսորից վերադարձանք, ու մեզ հողակտոր տվեցին անապատում, ոչ խմելու ջուր կար, ոչ ոռոգելու... Դույլերով ջուր էինք տուն հասցնում, ջրում թե մեզ, թե բոստանը: Հետո մեր բակում թալինցի Եթիմը ջրհոր փորեց: Հայրս ջրհորի ջրով մեր բաժին անապատը այգի դարձրեց» (17), ծիրանենիներ տնկեց:

Ժամանակի գնացքի հետևից վազելը, արագ, անհեթեթ այդ վագքը, որ ցավոք թոխչ չէր ծնում», հիշողությունները քաշում են դեպի անցյալ, ու Ավետիքը մտածում է, որ...»Մեղա-մեղա, բայց մեր պահանջատիրությունը թուրքից ոչ այնքան կորուսյալ երկրի վերադարձը պիտի լիներ, որքան առաջընթացից ահա այսքան ետ մնալու գինը...» (20):

Ավետիքի ծիրանագույն մոլորակի բնակիչներն ամեն ինչի մեջ մեղավոր են համարում նաև իրենց. ահա փայտագործ վարպետ Վարոսը, ում համար, ինչպես Ավետիքի, այլ արժեհամակարգեր գոյություն ունեն: Նա չի գողանում, չի թալանում, չի խաբում, բայց իրեն մեղավոր է համարում, որ խավար է ու ցուրտ, որ այգիներ են հատվում, ծիրանենիներ են սողցվում, իսկ ինքը մեծ նկարչի՝ «Ծիրանի ծառերի տակ» անգուգական, անգին կտավի հեղինակի արձանի հարևանությամբ նրա զարմացած հայացքի ներքո, ծիրանենու փայտից պատրաստած առարկաներ է վաճառում՝ խեղճացած, մեղավոր հայացքը հառած մարմարակերտ արձանին, որի քարացած շուրթերը կարծես շշնջում են. «Երբ սիրտն ու ուղեղը հաշտ չեն, ավելի լավ է մեռնես»:

Ավետիքի, Վարոսի կերպարների, Սարյանի արձանի մոտակայքում «առևտուր» անողների կողքին Ռ. Հովսեփյանը ներկայացնում է խնամուն, ով «ոչ կառչած էր հին հասարակարգին, ոչ ոտք էր դնում նորի շեմից ներս, ոչ էլ, որ ավելի դժվար է տրվում, մագլցում էր չեզոքության այն բլուրը, որի կատարից դուրսին էր թքել թե աջ, թե ձախ (94), ոչ էլ սպասում էր «համամիութենական մի հեղափոխության, որ պիտի գա հեղեղի պես ու քշի տանի նորահայտ այս փլուզողներին, թալանյիներին, այս թերուսներին, այս չտեսներին, այս լրտեսներին և առաջին հերթին, իհարկե, այն խլեզներին,

---

<sup>8</sup> Տե՛ս Ս. Պողոսյանի հարցազրույցը Ռ. Հովսեփյանի հետ, «Գրական թերթ», 2009, 25 դեկտեմբերի:

ովքեր հեշտությամբ փոխում են իրենց փողկապները» (94): Նա իրեն հեռու է պահում «գաղափարախոսություններից, աղավաղող, վարկաբեկող կուսակցություններից» ու իր մտապատկերներում գծում է «թույլ և ուժեղ անհատներից կազմված մի հասարակարգ» ու եզրակացնում, որ թույլի և ուժեղի «պայքարում շատ հաճախ հաղթում է թույլը, որը վտանգավոր, օ՛, շատ վտանգավոր է», թույն է արտաշնչում, հարվածում է թիկունքից ու երբեք «ձեռնամարտի չի մտնում»:

Այս կերպարի միջոցով է Ռ. Հովսեփյանն անդրադառնում մարդու և բնության միջև բնականոն կապերի խզման, բնությունից մարդու հեռացման խիստ արդիական ու մտահոգիչ պրոբլեմին, որը երկրի նոր տերերի աջակցությամբ օրեցօր ավելի լայն մասշտաբներ է ձեռք բերում:

Իսկ ո՞վ է վերականգնելու այդ խաթարված կապերը, ո՞վ է բացահայտելու հասարակության մեջ քաղցկեղի պես բուն դրած թույլին, և ինչո՞ւ է խնամին՝ այդ կրթված, զարգացած մարդը, համակերպվել իր վիճակի հետ և ոչ հին է, ոչ նոր, ոչ էլ չեզոք:

Ավետիքի համոզմամբ հենց խնամու պես մարդիկ պետք է ախտորոշեն ու գտնեն հասարակության օրգանիզմում բուն դրած քաղցկեղը. «Մի օր մտքովդ անցե՛լ է նավակ նստես ու բաց ծով դուրս գաս, մտածելով, որ միննույնն է, մահը կա, ուրեմն ի՞նչ տարբերություն, թե որտեղ է նա քեզ ճանկելու» (97),-ասում է Ավետիքը, ում համար հասարակությունն ամբողջական օրգանիզմ է և, հասարակության բոլոր ուժերի գորահավաքով պետք է ոչնչացնես սեփական քաղցկեղը և ոչ թե կրակոցով և կամ դանակով» (99):

Ավետիքի, Վարոսի, նրանց նմանների հակապատկերն են երկրի «նորօրյա տերերը»: Գրողի սուր քննադատության սլաքի տակ հայտնված իշխանավորները՝ հեղափոխության առաջնորդները, որ ժամանակ առ ժամանակ մաքրում-նոսրացնում են իրենց զինակիցների շարքերը, ներկայացված են որպես մեր պատմության առաջընթացն ու զարգացումը ետ մղող, կասեցնող «պատմական» դեմքեր, որոնք հայոց հայրենասեր թագավորների ու իշխանավորների հետ ընդհանուր որևէ կապ չունեն: Մակայն նրանք խոսում են ժողովրդի լայն զանգվածների անունից, զբաղվում ամբոխավարությամբ, քծնում իրար, դավաճանում, թալանում երկիրը: Սա մեծ ցավ է դեպքերի ընթացքին հետևող Ավետիքի համար: Անթույլատրելի, այլասերված մեթոդներով են հեղափոխության «ընտրյալները» բարձրանում ատելության սանդուղքով՝ այդ ճանապարհին չխնայելով անգամ իրենց զինակիցներին:

Ռ. Հովսեփյանի հայացքը որսում է բոլորին, մանրագնին քննում նրանց կենսագրության արմատներն ու հոգիների սնանկությունը: Նրանց գեները իշխանությունն է՝ իրենց ամբողջը, որի ներսում դավեր են նյութում

ինչպես իրար, այնպես էլ հասարակության տարբեր շերտերի մարդկանց դեմ:

Ժամանակների մեջ ետ ու առաջ անելով՝ գրողը փորձում է հասկանալ՝ ինչի՞ է ընդունակ մարդ արարածը, ինչու՞ նա հեռացավ բնությունից, ինչի՞ համար են սպանություններն ու թալանը, ո՞ւմ է ձեռնտու երկրի բնական ընթացքը շեղելը, ազահության մոլուցքի, այս անվերջ մրցապայքարի ելքը ո՞րն է... Գեղարվեստական հետաքրքիր պատումի մեջ անվերջ հարցեր ու հարցադրումներ են հնչում՝ երբեմն մնալով անպատասխան: Պետության ու պետականության հիմքերը խարխլող նախկին ճառասացների ու այսօրվա թալանչիների և հասարակության մեջ սեպի պես խրված պատը օրեցօր ամրանում է՝ հուսահատության գիրկը նետելով նույն այդ հասարակության անդամներին, ովքեր դեռ երեկ հավատում ու վստահում էին անկախության գաղափարին, երկրի լուսավոր ու բարեկեցիկ ապագային, իսկ այսօր չնչին կոպեկներով վաճառում են իրենց գրապահարաններում նույնքան անհուսալի ննջող դասականներին: Պատմությունը կրկնվում է, թե՛ այն հարմարեցնում են ժամանակին: Անցյալի պատմության դասերը չսերտած՝ գալիս է նոր դասեր քաղելու ժամանակը: Իսկ ժամանակը չի սպասում, վազում է՝ իր ետևից քարշ տալով հնարամիտներին, ճարպիկներին ու գողերին: Հետո նույն այդ ժամանակը յուրաքանչյուրին իր տեղը կդնի, սակայն անդառնալի կորուստները ետ չվերադարձնելու գնով:

Վեպում որպես հիշեցում և զգուշացում է հնչում հետևյալ միտքը. «Մոռացումը կրկնություն է ծնում կամ կրկնության նախապայման»: Դրան հետևում է. «Հիշողությունից բուժում չկա, հերս: Հիշողությունը բուժած մարդը հիշողություն չունեցողն է: Իսկ հիշողություն չունեցողն արդեն մարդ չէ... Ոչ էլ ազգն է ազգ... Տգեղ ենք, կոնատ ենք, ընկնավոր ենք, թունավոր ենք, կովարար ենք, մեծամիտ ենք, թե վախկոտ էս ենք: Աշխարհի ստեղծածն ենք» (200):

«Երկրի նորոյա տերերին» Ռ. Հովսեփյանը ներկայացնում է որպես քաջնազարականության մերօրյա ներկայացուցիչներ՝ նրանց բնութագրելով ինչպես գործունեության տարբեր ոլորտներում, «յուրայինների, համախոհների, այլախոհների» հետ ունեցած հարաբերություններում, այնպես էլ նրանց մտածողության, հոգեկերտվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունների, խեղումների, հաշմվածության սոցիալ-քաղաքական ու բարոյահոգեբանական արմատների բացահայտումներով:

«Երկրի նորոյա տերերի» ճանապարհն այնքան էլ երկար չէր՝ Ազատության հրապարակից մինչև իշխանական պալատ. այդ ճանապարհը նրանք «անցան վազքով՝ ընթացքում հասցնելով թերթել Մաքիավելու այն աշխատությունները, որ նվիրված էին զարգացած քաղաքացիական

առաքինությունների բացակայության պայմաններում ուժեղ պետություն ստեղծելու խնդրին և, որպես բնաբան իրենց հետագա գործունեության, ընտրել էին «Քաղաքական նպատակների իրագործման համար թույլատրելի են բոլոր միջոցները» հանրահայտ իմաստությունը» (105):

Բոլոր հեղափոխություններն էլ, ի վերջո, մտնում են իրենց «զավակներին խժռելու փուլ», և հեղափոխության «մարտիկները» «կամ փախչում են երկրից կամ մահանում սրտի կաթվածից»: Ավելի ճարպիկները փախչում են, և այդ փախչողներին Ռ. Հովսեփյանը վարպետորեն է ներկայացնում Ավետիքի պարոն փեսայի կերպարով: Պարոն փեսան, ինչպես նաև վեպի կերպարներից շատերը (Շերեփուկ, Լողլող, նախարարներ և այլն), օժտված էին ոչ միայն քամելեռնի հատկանիշներով, այլև ունեին ստոր ու արգահատելի վարքագիծ:

Վեպի կերպարներից շատերը, որոնք ներկայացնում են երկրի «նորոքյա տերերին», խարիզմատիկ անձնավորություններ են, «ինքնահավան ու ինքնավստահ», և համոզված են, որ հասարակությանը հուզող բոլոր խնդիրները հնարավոր է լուծել միայն ճակատային գրոհով՝ իշխանության միջնաբերդը գրավելով:

Սակայն երկար ժամանակ չպահանջվեց համոզվելու համար, որ «ճակատային գրոհով» իշխանական միջնաբերդը գրաված այդ «հեղափոխական բարեփոխիչները» ընդունակ չեն երկարատև քրտնաջան աշխատանքի և լուծելու այն բոլոր բարդ խնդիրները, որ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների համապատկերում կանգնեցին երկրի առջև:

«Հեղափոխության ռահվիրաների», նրանց տարբեր տրամաչափի համախոհների ու համակիրների կերպարները Ռ. Հովսեփյանը կերտում է՝ օգտագործելով հումորի, երգիծանքի, սաստիքայի ու սարկազմի տարբեր ձևեր ու եղանակներ: Նրանք վեպում հանդես են գալիս մերթ ծիծաղաշարժ, մերթ ողբերգականորեն տխուր տարբեր իրադրություններում, որոնք օգնում են բնութագրելու-ներկայացնելու նրանց աղճատված հոգեկերտվածքը, բացահայտելու բնավորության այն գծերը, որոնք ոչ միայն միջավայրի ազդեցության արդյունք են: Այս տեսանկյունից վարպետորեն է ներկայացված Մորուքավորը՝ վիպական կառուցվածքի առանցքային կերպարներից մեկը, թերևս ամենաընդգծվածը, ով ունի ժամանակին համահունչ մտածողություն, աշխարհընկալման՝ բոլոր ժամանակների «հեղափոխականներին» բնորոշ եղանակները:

Մորուքավորը հիանալի է տիրապետում ամբոխին անհրաժեշտ հունով տանելու բարդ արվեստին և հենց իշխանական պալատում է երևում Մորուքավորի իսկական դեմքը, նրա հրահանգով ու խրախուսանքով է ամբոխը «կտրատում աշխարհի, հատկապես Մոսկվայի հետ կապող բոլոր

հեռախոսավարերը, ջարդում աշխատասենյակի կահ-կարասին, ջրամանները, ջահը, բաժակները, թաղարները, բզկտում էին բազմոցն ու բազկաթոռները...» (57):

Իշխանական պալատից ամբոխը Մորուքավորին դուրս է բերում ձեռքերի վրա՝ «որպես նորընծա արքա», և «ձեռքերը վեր պարզած ցուցարարները, թվում էր, աղոթում էին Աստծուն, այնինչ, ամեն մեկն իր հեռավորությունից ճգնում էր մատներով քսվել նորընծայի փեշերին» (58):

Այս ամենը զավեշտական լինելուց բացի խիստ ողբերգական էր: Հեղինակի հեզմանքն ատելության է փոխվում, երբ արդեն իշխանության գլուխն անցած Մորուքավորը ամբոխին հոգեորսության է մղում՝ թշնամիներ փնտրելով նրանց մեջ, ովքեր հենց շարժման սկզբից «հեղափոխականների» շարքերում չեն եղել», նաև յուրայինների մեջ՝ «Մենք թշնամի չունենք, մեր թշնամին մենք ենք»:

Հրապարակներում իրեն առյուծ ներկայացնող Մորուքավորին Ռ. Հովսեփյանը ներկայացնում է զավեշտալի իրավիճակներում՝ բացահայտելով նրա իսկական էությունը: Առավել զավեշտալի է, որ նախագահի դեմ մահափորձ կատարելու մեջ կասկածվող այգեպանին ու Լոդլոդին «պայտած զինվորական կոշիկների տակ տրորելուց հետո բանտ են նետում» և անմիջապես հեռուստատեսությամբ ներկայացնում նախագահի դեմ ծրագրավորված մահափորձի մանրամասները՝ որպես իրեղեն ապացույց ներկայացնելով թխկենուն «հենած սանդուղքը» և այն դիմակը, որն ահաբեկիչին ցանցառ ու շեկ մագերով այգեպանի կերպարանք էր հաղորդել:

Զավեշտալի թատրոնը շարունակվում է մի քանի օր. նախագահին ցավակցելու, շնորհավորելու, նաև իրենց հավատարմությունն ու նվիրումն արտահայտելու համար նրա զինակիցներն են գալիս նախագահական պալատ, իսկ օտարերկրյա դիվանագետներն իրենց «մայրաքաղաքներից սպասում էին հրահանգավորման, ըստ որի պիտի հարդարեին իրենց հագուստ-կապուստը, դեմքը և, անշուշտ, խոսքը» (105):

Մորուքավորը, նախարարները, Լոդլոդը, բանտապետը, իշխանական բուրգի տարբեր աստիճանին գտնվող նրանց համախոհները, համակիրները պատկերացում անգամ չունեն իսկական հեղափոխության վերաբերյալ ու չեն էլ փորձում հասկանալ, որ ամենակարևորը գաղափարախոսությունն է, որ իրենք չունեն, իդեալի իրականացումը, որն իրենց համար բազմաթիվ անհայտներով հավասարում է: Նրանց ու հասարակության միջև օրեցօր ահագնացող խզումը պայմանավորված է հենց այդ հանգամանքով, նաև նրանով, որ գաղափարագուրկ պայքարում հաղթում է թույլը, պատեհապաշտը, ով կարողանում է քողարկել իր խեղճությունը, դառնալ նենգ, քծնող, դավաճան, դարանակալ ու

քինախնդիր, խուսափել մերձամարտից ու հակառակորդին հարվածել թիկունքից:

Վեպի կերպարներից մեկը՝ Համոն, սղոցելով այգին, վերականգնեց անապատի շունչը, (իսկ ժամանակին Ավետիքի հայրը համոզված էր, որ վերջնականապես սպանել է անապատը), հեղափոխականներն անապատացրին մարդկանց ներաշխարհը, ավերեցին երբեմնի շեն ու ծաղկած երկիրը:

Ինչպես ծիրանենու այգին էր անհնար վերականգնել, այնպես էլ մարդկանց խարխուլված հավատը խոստումներով ու մխիթարանքով: Համոն՝ Ավետիքին, նրանք հիասթափված ամբոխին նույն կերպ էին մխիթարում՝ մինչև անտառի մի ծայրից սղոցելով մյուս ծայրը հասնենք՝ դատարկ շերտերի վրա նոր ծառեր կբուսնեն:

Իսկ Ավետիքի մտասևեռումներում «ճանճերից, բոռերից, մրջյուններից» ծիրանի այգին մաքրելն էր. դրանք են «լողում կտավի լուսավոր պատերը», աղճատում խորհրդանշական գույներն ու երանգները: Հասարակությունն էլ ինքնամաքրման, ուժեղանալու կարիք ունի, որովհետև այն էլ նման է ծառի, իսկ «ծառը որ թուլացավ, որդը ներսից էլ կծնվի»:

Բանտապետը ճշմարիտ կերպով է բնութագրում «անկախ երկրի» բարքերը. բանտարկյալներն ու ազատության մեջ գտնվողները համարյա չեն տարբերվում միմյանցից: Թե՛ «ներսում» և թե՛ «դրսում» գտնվողների համար միայն մի օրենք գոյություն ունի՝ գողականը, որն ամեն մեկին իր տեղն է դնում: Երկու դեպքում էլ ամենագործողը փողի իշխանությունն է, որ լակմուսի թղթի դեր է կատարում: Գողականների և իշխանավորների համար և՛ «ներսում» և՛ «դրսում» ոչ մի արգելք գոյություն չունի: Գողին մերժում են այցելելու մոր գերեզմանին, այն դեպքում, երբ «բանտից ամեն գիշեր մի քանի գող է դուրս գալիս՝ տուն, խանութ թալանելու» (74), իսկ Գողին մերժում ու «դասական, փորձված եղանակով» քնեցնում են, որովհետև նա գող չէ («Բայց դու գող չես, չե՞, իրողությունը չէր հերքել բանտապետը»):

Խորհրդային տարիներին բանտ ընկնելը, հատկապես քաղաքական հողվածով, հեղափոխության առաջին տարիներին դիտվում էր որպես լուրջ առավելություն, և կուսակցություն հիմնելու, պաշտոններ զբաղեցնելու, դեպուտատական, անգամ նախագահական ընտրությունների մասնակցելու լայն հնարավորություններ էր տալիս:

Ռ. Հովսեփյանն ամբողջ հասարակական կյանքն է ներկայացնում որպես աբսուրդի թատրոն, որտեղ դերակատարները համադրում են ողբերգականն ու զավեշտալին, ծիծաղաշարժն ու արցունքաբերը և փաստում, որ արյունն ամենաթանկն է այդ օրերին, ու չի կարելի այն թափել

ցանկացած ստահակի առջև: Վերջիններիս պատճառով է, որ մարդիկ, հոպոպի պես, «ձու են դնում ու փախչում: Չվերը մնում են, իսկ ինքը չկա, ինքը կտրել-անցել է սահմանային գետը...» (122):

Ռ. Հովսեփյանը չի հետևում 21-րդ դարակազմին արևմտյան գրականության մեջ լայն տարածում ստացած ու նաև հայ գրականություն ներմուծված աբսուրդի գրականության ավանդույթներին: Նա պարզապես ռեալիստական մեթոդով ներկայացնում է անկախության առաջին տարիների համապատկերը, որն ըստ էության, տիպիկ աբսուրդային է: Մի թե աբսուրդ չէ, որ մեծ նկարչի արձանի հարևանությամբ նկարիչների, արվեստագետների, փայտագործ ու մետաղագործ վարպետների մի հոծ բազմություն Մարյանի զարմացած հայացքի ներքո օրվա հաց վաստակելու համար առքուվաճառքով է զբաղվում, մի թե աբսուրդ չէ, որ օրը մի քանի անգամ հեռուստացույցով փառաբանում են «հոգատար ու ձեռնբաց» օլիգարխներին, որ բարեգործական ճաշարաններ են բացել ու մի թաս սպուր են բաժանում մտավորականության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներին, և մի թե աբսուրդ չէ, որ Ներքին գործոց նախարարի առանձնատան քանդակագարդ դուռն իր արժեքով գերազանցում է պետական բյուջեն: Եվ ավելի քան աբսուրդ է, որ «երկիր լքողների առաջն առնելու համար մեր նախարարներն ու զինվորական բարձրաստիճան սպաներն ամուր հիմքով տներ կառուցելով Հայրենիքը շենացնելու օրինակ են ցուցադրում: Նաև հավատ ներշնչում զանգվածներին՝ անկախ պետականության ապագայի նկատմամբ: Եթե չունենան այդ հավատը, ինչո՞ւ պիտի ամուր հիմքով տուն կառուցեն» (106):

Տիպական, խիստ բնորոշ գծերով է Ռ. Հովսեփյանը ներկայացնում նախարարներին: Նրանցից շատ քիչ է տարբերվում ընտրություններում նախագահի միացյալ ընդդիմության թեկնածուն՝ նախագահի նախկին ընկերն ու համախոհը: Դժվար չէ ճանաչել այս կերպարների նախատիպերին, որոնց Ռ. Հովսեփյանը դարձնում է գրական ավարտուն կերպարներ՝ գեղարվեստական արժևորման բոլոր չափանիշներով: Ռ. Հովսեփյանը Մորուքավորի, Լողողի, Շերեփուկի, բանտապետի, նախարարների, ոստիկանների, պարոն փեսայի ու նրանց նմանների կերպարներով չէ միայն ամբողջացնում ժամանակի համապատկերը, հայտնաբերում նրա «ներքին ֆունկցիան»: Քաղաքացիական հասարակության կայացմամբ է գրողը պատկերացնում ժողովրդի բարոյահոգեբանական վերափոխման, խարխլված ինքնության վերականգնման գործընթացները ու համոզված է, որ դեռևս կան սթափ մտածողությամբ, սաղրանքներին չենթարկվող անհատներ, և նրանք են իշխանություններին պարտադրում վերանայել իրենց հայացքները: Նրանց պես ուժեղ տղամարդիկ են անհրաժեշտ՝ պատռելու համար երկրի «նորոքյա

տերերի» դիմակը, ցույց տալու, որ «բոլոր հեղափոխություններն էլ վաղաժամ ծննդի պտուղ են, ավելի ճիշտ՝ վիժման, որովհետև հեղափոխությունների գլխին միշտ էլ անհամբեր, եսասեր, փառասեր անհատներ են կանգնել» (82):

Ռ. Հովսեփյանը վեպի հենց առաջին էջերից է պատում ընթացքի մեջ ներքաշում Գոռին՝ Ավետիքի որդուն, որի երակներում հոսում է տոհմի արյունը: Արդարություն փնտրող պապի՝ տեր Ստեփանոսի, հոր՝ աքսորական Ավետիքի ըմբոստ ոգին է նրան ոգեշնչում, ու նա երագում է ապրել իր երկրում, լինել իր հողի, իր տան, ասել է թե՛ իր գլխի տերը: Նա երբեք չի հեռանալու այս երկրից: Արցախում Գոռը կովել է թուրքի դեմ ու չի երկնչել: Արցախից վերադառնալուց հետո հայտնվել է անվտանգության ծառայության աշխատակիցների ուշադրության կենտրոնում ու չի վախեցել, չի ենթարկվել երկրից հեռանալու, գլուխն ազատելու, օտար ավերում ապրելու հորդորներին:

Ճիշտ է, ընդամենը «մի ճզմված հողակտոր է Հայաստանը» և նրա «լեռներից ծնված աղբյուրները մի կարգին, ամբողջական հովիտ չկազմած, թափվում են այլոց ծովերն ու հողերը», ճիշտ է, ««սարի անվանումը քոնն է, սարը քոնը չէ»։ միննույնն է, դու ես այս երկրի տերը և այնտեղ պիտի միայն տիրոջ իրավունքով ապրես:

Պիտի ապրես՝ չվախենալով մահից: Եթե շատ-շատերի համար կյանքի իմաստը միայն ապրելն է, գոյատևելը, եթե նրանք այլ կերպ են մտածում անկախության մասին («Չլինի՞ մեզ հակացուցված է անկախություն կոչվածը... Գուցե ճիշտ էին մեր իշխանավորները, որ պարսից արքաներին խնդրեցին վերջ տալ հայոց թագավորությանը: Գուցե մենք միշտ էլ մեկնումեկի թևի տակ պիտի ապրենք... Ապրելը չի՞ կարևորը» (128-129): Գոռի և նրա նման շատերի համար կարևորը ապրելը չէ, «կարևորը՝ թե ինչպես ես ապրում»:

Գոռի նմաններն են ստիպելու մի օր «իշխանություններին ու կուսակցություններին՝ վերանայելու իրենց հայացքները, վերացնելու «գաղափարական ճահիճը» և նպաստելու, որ «մեր հեռավոր ու մոտ պատմությունը» ձևակերպվի որպես ձեռնարկ կամ դասագիրք:

Ռ. Հովսեփյանի «Օրհանի ծառերի տակ» վեպը անկախության տարիներին գրված լայն կտավի լավագույն ստեղծագործություններից մեկն է թե՛ ձևակառուցվածքային, թե՛ բովանդակային բոլոր առումներով: Այդ վեպում, որտեղ հեղինակը վեր է հանում բազմաթիվ խնդիրներ և դրանց լուծումը պայմանավորում քաղաքացիական ակտիվ հասարակության ձևավորմամբ, ավելի լիարյուն կերպով է տրոփում հայ գրականության մայր երակը, որը սկիզբ է առնում մեր ողբերգական պատմության հեռավոր

խորքերից ու շարունակվում մինչև մեր օրերը՝ հեռավոր ու մոտ անցյալն ու ներկան ներկայացնելով ապագայի տեսլականում:

**Ս. Ա. Ասրյան**

**ԱՆՅՅԱԼՆ ՈՒ ՆԵՐԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆՈՒՄ  
(ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ԾԻՐԱՆԻ ԾԱՌԵՐԻ ՏԱԿ» ՎԵՊԸ)**

**Ամփոփում**

Ռ. Հովսեփյանի «Ծիրանի ծառերի տակ» վեպը անկախության տարիներին գրված լավագույն ստեղծագործություններից մեկն է, որտեղ հեղինակը վեր է հանում բազմաթիվ խնդիրներ և դրանց լուծումը պայմանավորում քաղաքացիական ակտիվ հասարակության ձևավորմամբ:

Կոնկրետ գործողություններով հանդես եկող իրական մարդկանց Ռ. Հովսեփյանը ներկայացնում է որպես գրական կերպարներ, որոնք մարմնավորում են անկախության առաջին տարիներից սկսված ու շարունակվող իրավիճակի աղավաղված համապատկերը:

Վեպի բովանդակությունը սկիզբ է առնում մեր ողբերգական պատմության հեռավոր խորքերից ու շարունակվում մինչև մեր օրերը՝ հայ ժողովրդի անցյալն ու ներկան ներկայացնելով ապագայի տեսլականում:

**С. А. Асрян**

**ПРОШЛОЕ И НАСТОЯЩЕЕ В ВИДЕНИИ БУДУЩЕГО  
(РОМАН РУБЕНА ОВСЕПЯНА «ПОД АБРИКОСОВЫМИ  
ДЕРЕВЬЯМИ»)**

**Резюме**

Роман Рубена Овсепяна «Под абрикосовыми деревьями» является одним из лучших произведений, написанных в годы независимости, в котором автор затрагивает многочисленные задачи и обуславливает их решение формированием активного гражданского общества.

Реальных людей, выступающих конкретными действиями, Р. Овсепян представляет в качестве литературных персонажей, которые олицетворяют искаженную панораму ситуации, сложившейся в первые годы независимости и продолжающейся по сей день.

Содержание романа берет начало из глубин нашей трагической истории и продолжается по наши дни, в видении будущего представляя прошлое и настоящее армянского народа.

S. A. Asryan

**PAST AND PRESENT IN THE VISION OF FUTURE**  
**(Rouben Hovsepyan's novel "Under The Apricot Trees")**

**Summary**

Rouben Hovsepyan's novel "Under the apricot trees" is one of the best novels written in the years of Independence. The author points out a number of problems and sees the solution to them in the formation of active civil society.

Real people with their realistic activities are presented by Rouben Hovsepyan as literary characters who embodied a distorted picture of the situation which started on the first days of Independence and continued till now.

The plot of the novel goes deep into our tragic history showing the past and the present of the Armenian people in the vision of future.

*Խմբագրություն է ուղարկվել 01.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 05.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի  
գիտահետազոտական ինստիտուտ  
[harutyunyanlusya@gmail.com](mailto:harutyunyanlusya@gmail.com)

**ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՈ ԵՎ ՀԱԿՈՒՐ ՊԱՐՈՆՅԱՆ (ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ)**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** Ժան-ժակ Ռուսո, գիտելիք, կարողություն, հմտություն, դաստիարակություն, ուսուցանել, համակողմանի զարգացում, ընտանիք:

**Ключевые слова и выражения:** Жан-Жак Руссо, знание, способность, умение, воспитание, учить, комплексное развитие, семья.

**Key words and expressions:** Jean-Jacques Rousseau, knowledge, ability, skill, upbringing, teach, comprehensive development, family.

21-րդ դարն է. փոխվել են ժամանակները, անմրցունակ ու հաղթող են արդիական տեխնոլոգիաները, բայցևայնպես դաստիարակությունն այնպիսի հասարակական հասկացություն է, առանց որի անպատկերացնելի է հասարակության առաջընթաց զարգացումը: Մենք՝ մահկանացուներս, աշխարհ ենք գալիս սովորելու ընդունակությամբ, և եթե ուսուցիչը կարողանում է ճանաչել իր սանին ու նրա մեջ հայտնաբերել ուժն ու ընդունակությունը, կնշանակի նա արդեն գտել է հաջողության «բանալին»:

Աշխարհի տարբեր ծագերում ծնված ու տարբեր դարաշրջան ներկայացնող երկու մտածողների՝ Ժան-ժակ Ռուսոյի և Հակոբ Պարոնյանի մանկավարժական առնչությունները ուսումնասիրելիս ի հայտ են գալիս մի շարք նմանություններ: Մա հետաքրքիր զուգադիպություն է, թե՞ մանկավարժի պրպտող միտք ու սրամիտ հայացք: Ասվածից պարզ է դառնում, որ հանճարեղ երգիծաբանն իր «Թատրոն. բարեկամ մանկանց» պարբերականը տպագրելիս ծանոթ է եղել մանկավարժության առաջնային տեսություններին:

«Այսօր, իհարկե, անառարկելի է, որ հասկանալի պատճառներով արևմտահայությունը չկարողացավ արնելահայոց պես ստեղծել մանակական հարուստ գրականություն,- նկատում է գրականագետ Ալ. Մակարյանը,- ուր ասենք, միայն «Աղբյուր» և «Հասկեր» ամսագրերի շուրջը համախմբված էին նշանավոր այնպիսի հեղինակներ, ինչպիսիք էին Ղ. Աղայանն ու Հովհ. Թումանյանը, Հովհ. Հովհաննիսյանն ու Ալ. Ծատուրյանը,

Ավ. Ահարոնյանն ու Ավ. Բահահյանը, Վրթ. Փափազյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Խնկոյանը և այլք, բայց և այնպես անժխտելի են նաև արևմտահայ հատվածի բերած պատկառելի նպաստն ընդհանրապես հայ մանկական գրականության զարգացման ընթացքին, մասնավորապես Պարոնյանի «Թատրոն մանկանց»-ի՝ ժամանակին կատարած պատմական առաքելության շահեկանությունը: Այն, որ վերջինիս պարբերական անմիջապես գերել է հայ մանուկներին, և չափազանց սերտ է եղել տեքստ-ընթերցող աղերսը, վկայում էին նրա «գրասեղանին լեռան պես դիզված» նամակները»<sup>1</sup>:

Ե՛վ Պարոնյանի, և՛ Ռուսոյի մանկավարժական հայացքների մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում բարոյական դաստիարակության հարցերը: Ռուսոյի կարծիքով՝ մարդասիրությունը բարոյական դաստիարակության նպատակն է: 19-րդ դարի երկրորդ կեսին Պարոնյանը մոտավորապես նույն գաղափարն էր հայտնում, ինչն իրենից մեկ դար առաջ արժևորել էր Ռուսոն: Պարոնյանը նույնպես առանձնահատուկ տեղ էր տալիս դաստիարակի բարոյական հատկանիշներին: Հիրավի, միայն բարոյական ու մարդկային բարձր հատկանիշներով օժտված մարդուն է հնարավոր վստահել վաղվա կամ ապագայի քաղաքացու ճակատագիրը:

Դաստիարակը մարդ պատրաստելու համար կա՛մ հայր պետք է լինի, կա՛մ ավելին քան ինքը՝ մարդ: Ահա այն գործը, որ դուք հանգիստ սրտով հանձնարարում ու վստահում եք վարձկաններին:

Որքան ավելի ենք մտածում այդ մասին, այնքան նորանոր դժվարություններ ենք նկատում: Անհրաժեշտ է, որ դաստիարակն ինքը դաստիարակված լինի իր սանի համար, որ նրա «ծառաները պատրաստված լինեն իրենց տիրոջ համար», որ երեխային շրջապատողներն իրենք ստացած լինեն այն տպավորությունները, որ հաղորդելու են նրան: Պետք է, որ դաստիարակությունից դաստիարակություն բարձրանալով՝ մարդը հասնի չգիտես մինչև ուր: Ինչպե՞ս կարող է երեխային դաստիարակել մի մարդ, որն ինքը լավ չի դաստիարակված<sup>2</sup>:

Երբ խոսվում է Պարոնյան մանկագրի մասին, առաջին հերթին կարևոր է նկատի ունենալ գերազանցապես «Թատրոն. բարեկամ

---

<sup>1</sup> Մակարյան Ալ., Կրկին Պարոնյանի հետ (նոր ընթերցումներ), Երևան, 2018, էջ 268:

<sup>2</sup> Տե՛ս Ժան-ժակ Ռուսո, Էմիլ կամ Դաստիարակության մասին, Առաջին մաս, Երևան, 1960, էջ 34:

մանկանց<sup>3</sup> երկշաբաթաթերթը, որը նա խմբագրել է 1876 թ. հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 16-ը: Արդարև, հայ իրականության մեջ շուրջ մեկ տարվա կյանք ունեցած այդ պատկերագար դասագիրքը առաջին մանկական տպագրությունն էր:



Անդրադառնալով աշխատանքային դաստիարակության հարցերին՝ Ռուսոն համոզված էր, որ ունևոր թե կարիքավոր, կորովի թե վտիտ, ամեն մի անզբաղ արարած խաբեբա է: Անգործությունն է, որ չարիք է ծնում: Մեծ մանկավարժի կարծիքով՝ հասարակության մեջ չպետք է լինեն դասային արտոնություններ, քանի որ բոլոր մարդիկ ունեն նույն կարիքները:

---

<sup>3</sup> Այն, որ Պարոնյանի պարբերականը հրատարակվում էր ի հակակշիռ ամերիկյան միսիոներների «Ավետաբեր տղայոց»-ի, երևում է նաև արտաքին մի հատկանշից: Երգիծաբանի ընտրած անունը սկզբում եղել է «Թատրոն տղայոց», ինչպես միսիոներներինը կոչվել է «Ավետաբեր տղայոց»: Նա «Թատրոն» պարբերականում տպագրած իր առաջին հայտարարությունների մեջ, որոնցով ընթերցողներին իմացնում էր, թե 1876 թ. հունվարից լույս է ընծայելու նման մի երկշաբաթաթերթ, օգտագործել է «Թատրոն տղայոց» անունը: Հետագայում, երևի մտածելով, որ «տղա» բառը ամերիկյան կրթություն ստացած հայերի կամ հայերենը գրքերից սովորած ամերիկացի միսիոներների թխածն է, պարբերականի առաջին համարից ընտրում է «Թատրոն մանկանց» ձևը: Պարոնյանն արդեն ուներ արտոնություն «Թատրոն» թերթի համար: Նրա հրատարակությունը կարող էր նկատվել նրա հավելվածը կամ մի մասը: Մանրամասն տե՛ս **Ստեփանյան Գ.**, Հակոբ Պարոնյան, Երևան, 1964, էջ 175:

Աշխատանքային դաստիարակությունն առաջնահերթ ու կարևոր էր համարում ոչ միայն մարդկանց նյութական ապահովության նկատառումներով, այլև համոզված էր, որ յուրաքանչյուրը պարտավոր է ապրել ու ճանապարհի հարթել գլխավորապես սեփական աշխատանքով:

Մարդը հավիտենապես բնության զավակն է ու հարազատ արտացոլանքը: Երեխային շրջապատող աշխարհը նախ և առաջ բնության աշխարհն է՝ երևույթների անհատնում հարստությամբ, անսպառ զեղեցկությամբ: Դաստիարակության պլանավորումը սահմանում է աշխատանքային միջոցառումների ցանկալի պարբերականությունն և համակարգվածությունն: Աշխատանքային դաստիարակությունը Ռուսոյի կողմից առանձնահատուկ նշանակություն է ստացել որպես բարոյական դաստիարակության միջոց: Պատահական չէ, որ Ռուսոն իր երևակայական սանին՝ Էմիլին, ընտրել է ազնվականներից և գտնում էր, որ գյուղացի երեխաները աշխատանքով են դաստիարակվում և դաստիարակության կարիք չունեն:

Ռուսոն դեմ էր բարոյախոսության, բարոյական քարոզների, հրամայելու, հնազանդեցնելու, մանավանդ պատժի միջոցներին: Բարոյական դաստիարակության համար, ըստ Ռուսոյի, Էմիլը պետք է շփվի մարդկանց հետ և սոցիալական հարաբերությունների մթնոլորտում ձեռք բերի բարոյական փորձ, մարդասիրություն<sup>4</sup>:

Սակայն դաստիարակն ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով ու ճանապարհներով կարող է բնության համապատասխանող կարելին դարձնել իրական: Ռուսոն պատասխանում է. «Եթե կամենում եք, որ մանուկը պահպանե իւր սկզբնական ձևակերպութիւնը, հենց հենց առաջին վայրկեանից պահպանեցէք նրան. դիտեցէք բնութիւնը և հետևեցէք այն շաղին, որ նա ցոյց է տալիս ձեզ, որովհետև եթե դուք կամենաք նրա հրահանգներն ուղղել, դրանով միայն նրա գործը կկործանէք, նրա ջանքերի հետևանքը կարգիլէք և կթուլացնէք: Եթե մենք արգելք դնենք բոյսի դեպի վեր աճելու բնական յատկութեանը, նա այդ յատկութիւնը չի կորցնի և հենց արգելքը վերացաւ թէ չէ, կրկին դեպի վեր կբարձրանայ: Նոյնը կարելի է ասել և մարդուս բնական յատկութիւնների մասին: Այդ յատկութիւններն

---

<sup>4</sup> Տե՛ս **Հարոյան Լ.**, Բարոյական դաստիարակության մասին Ժան-ժակ Ռուսոյի գաղափարների ժամանակակից արժևորումը (Ժան-ժակ Ռուսոյի ծննդյան 300-ամյակի առթիվ) «Հանրապետական գիտաժողովի նյութեր», Վանաձոր, 2013, էջ 6-7:

երևան են գալիս, երբ մանուկն իրեն շրջապատող իրերի հետ փոխադարձ յարաբերության մեջ է մտնում»<sup>5</sup>:

Գրական երկի թեմատիկ-գաղափարական հիմքը, պատկերները, կառուցվածքը կազմում են այնպիսի անքակտելի միասնություն, որ դրանք իրարից բաժանել ուղղակի անկարելի է: Լինելով իր ժամանակների իրականության արտացոլանքը՝ Ռուսոն իր հռչակավոր «Էմիլ կամ դաստիարակության մասին» աշխատության երկրորդ գլխում մանրամասնորեն անդրադառնում է կնոջ դաստիարակության խնդիրներին: «Առաջին անգամ կյանք մտնող դեռահաս աղջիկները չունեն ուրիշ դաստիարակչուհի իրենց մորից բացի,- գրում է Ժան-ժակ Ռուսոն,- որը շատ անգամ նրանցից ավելի թեթևամիտ լինելով, չի կարող իրերը նրանց ցույց տալ այլ կերպ, քան այնպես, ինչպես ինքն է տեսնում: Խաղաղ ընտանեկան կյանքը սիրելու համար պետք է այն ճանաչել, պետք է մանկությունից զգացած լինել նրա քաղցրությունը: Միայն հայրական տանն ենք զգում սեփական տան քաղցրությունը. այն կինը, որին չի դաստիարակել իր մայրը, երբեք չի ցանկանա դաստիարակել իր երեխաներին: Դժբախտաբար, մեծ քաղաքներում այլևս գոյություն չունի տնային մասնավոր դաստիարակություն: Հասարակությունն այնտեղ այնքան է ընդհանրացել ու խառնվել, որ առանձնանալու անկյուն չի գտնվում, և մարդ, նույնիսկ իր տանը, իրեն զգում է ինչպես հասարակության մեջ: Անընդհատ հարաբերության մեջ լինելով բոլորի հետ, նա այլևս կտրվում է ընտանիքից և հազիվ է ճանաչում իր ծնողներին. նրանց դիտում է որպես օտարների. ընտանեկան բարքերի պարզությունը չքանում է՝ նրանց հմայքը կազմող քաղցր մտերմության հետ»<sup>6</sup>:

Հեռատես Պարոնյանը երեխաների բարոյական դաստիարակության լավագույն մեթոդը համարում էր իրատեսական, դրական օրինակը: Ստեղծագործական խաղից օգտվելիս երեխային հնարավորություն է տրվում վարվելու ճիշտ այնպես, ինչպես վարվում է այն հերոսը, որն իր բարձր որակներով գրավել է նրան: Այսինքն՝ երեխաներին հնարավորություն ընձեռել՝ գործել իրենց բարոյական իդեալի համաձայն:

Նա դրական օրինակը բարոյական նորմերը, մարմնավորում է իրական, զննական պատկերների, վարքի կոնկրետ կենսական հանգամանքների մեջ, որն զգալի չափով հեշտացնում է բարոյական

---

<sup>5</sup> **Ժան-ժակ Ռուսո**, Էմիլ, Գերմաներենից թարգմ. Իսահակ Յարութիինեանց, Թիֆլիս, 1904, էջ 16:

<sup>6</sup> **Ժան-ժակ Ռուսո**, Էմիլ կամ Դաստիարակության մասին, Երկրորդ մաս, Երևան, 1962, էջ 63:

պահանջների ընկալումը սովորողների կողմից: Մեղմությունը, հակիրճությունն ու իմաստի մեծությունը պարոնյանական խոսքի ամենամեծ արժանիքներն են: «Թատրոն. բարեկամ մանկանց»-ի ուշադիր ընթերցողն անպայման կնկատի, որ երկշաբաթաթերթում տեղ գտած և տպագրված նյութերի գաղափարախոսությունը ուղիղ համեմատական է Ժան-ժակ Ռուսոյի մանկավարժական հայացքներին:

Ուսուցման բովանդակության մեջ երգիծաբանը ճիշտ Ռուսոյի պես վճռական տեղը հատկացնում էր բնական գիտություններին, օրինաչափ էր համարում երեխային ուսուցանել միայն այն անհրաժեշտ գիտելիքները, որոնք կապված են կյանքի հետ, ծառայում են մարդու կեցության բարելավմանը: Երեխաներին գիր ու գրականությունից, արհեստներից բացի առավել պակաս չէին գրավում զվարճալիքները խաղը, մարմնավարժական վարժությունները, զբոսանքները: Այդ պատճառով Պարոնյանը խոստանում էր երեխաներին ուսուցանել բազմաթիվ խաղեր, երգեր, պարեր և այլն:

Ռուսոյի պատկերացրած կինը<sup>7</sup> պետք է դաստիարակվի ընտանիքի համար և կնոջ բնական վիճակը ուրիշի կամքին ենթարկվելն է: Իսկ ահա Պարոնյանը առանձնակի վերաբերմունք ուներ կանանց կրթության հարցի նկատմամբ: Նա լավ էր հասկանում, որ ժամանակին կինն անկողնու մակարդակից վեր չէր բարձրանում և բողոքի ու քննադատության սլաքները հաճախ էր ուղղում այդ երևույթի դեմ: Նա աշխատավոր հայ կնոջը դիտում էր հասարակության լիիրավ անդամի դերում և պահանջում կանանց կրթության հարցը չանջատել ընդհանուր կրթալուսավորական համակարգից: Պարոնյանը գտնում էր, որ կանաց կրթությունը պետք է սկսել տղաների հետ միասին, ուսուցումը տանել

---

<sup>7</sup> Կինն ավելի թույլ և ավելի դատարկ հետաքրքրասեր խելք ունի, քան տղամարդը: Բայց ի՞նչ է բխում կանանց բնական թուլությունից: Որքան նրանք ավելի են թույլ, այնքան ավելի կարիք ունեն օգնության: Մի՞ թե նրանց վրա չեն դրված այն պարտականությունները, որոնք մարդկային կյանքի ամբողջ հիմքն են կազմում: Արդյոք կինը չի՞ կործանում կամ պահպանում տունը, նա չի՞ արդյոք կառավարում տնային կյանքի բոլոր մանրունքները, և հետևաբար նրանցից չի՞ կախված այն բոլորը, ինչ որ ընդհանրապես ամենից շատ է վերաբերում մարդկային ցեղին: Հենց դրա շնորհիվ է, որ կինը վճռական ազդեցություն է թողնում ամբողջ աշխարհի թե՛ լավ, թե՛ վատ բարքերի վրա: Տղամարդը, որ հասարակության մեջ հեղինակություն է վայելում, իր սեփական միջոցներով չի կարող իր ընտանիքի համար պատշաճ բարեկեցություն ստեղծել, եթե կինն այդ բանին չօժանդակի: Տե՛ս «Մանկավարժության պատմության քրեստոմատիա», հ. 1, Երևան, 1936, էջ 368:

համատեղ, նույն կրթադաստիարակչական խնդիրներն առաջադրել և՛ տղաների, և՛ աղջիկների համար<sup>8</sup>:

Ռուսոյի մանկավարժական հայացքների հիմքում ընկած են բնական և ազատ դաստիարակության սկզբունքները: Ըստ Ռուսոյի՝ մարդու դաստիարակությունն սկսվում է հենց ծննդյան օրից, և մարդն իր դաստիարակությունն ստանում է բնությունից, իրերից և մարդկանցից. «Երեխան մի անգամ՝ ազատուելով իր բնական փաթաթանքից, երբ ազատ շունչ է քաշում, չպետք է թույլ տալ, որ նրան ուրիշ նոր փաթեթներով կապկպեն, և առաւել ևս սեղմեն: Դէն ձգեցէք գլխանոցները, կապանքներն ու բարուրները. Տուէք նրան լայն և մեծ խանձարուր, որ նրա բոլոր անդամներին ազատ շարժողութեան ասպարեզ տալ, որ ոչ այնքան ծանր լինի, որ նրա շարժողութիւններին արգելք լինի և ոչ էլ այնքան տաք, որ նա ներգործութիւնն այլ ևս չկարողանայ զգալ: Քաղաքներում երեխաներին համարեա թե խեղդում են բազմաթիվ փաթեթներով ու կապանքներով: Դրանց դաստիարակութեան վրայ հսկողները չգիտեն մինչև անգամ, որ սառն օդն ոչ թէ վնասում, այլ ոյժ է տալիս նրանց, իսկ տաք օդը թուլացնում և ջերմ ու մահ է պատճառում: Դրէ՛ք մանկանն ընդարձակ և լավ մազով կամ բրդով լցուած որորանի մէջ, որտեղ կարող լինի ըստ յարմարութեան և անվտանգ շարժուել<sup>9</sup>: Վերոհիշյալ օրինակով նա անթաքայց պարզաբանում է, որ երեխային չպետք է բարուրել: Բացատրում է, որ բնության օրենքն է ազատությունը: Իսկ երեխային զրկել ազատությունից, նշանակում է դեմ գնալ բնությանը:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ առանց գիտելիքների հնարավոր չեն ո՛չ աշխատանքը, ո՛չ մարդկային հարաբերությունները, ոչ էլ քաղաքացիական պարտականությունների կատարումը: Արդիական բարիունչ հնչողության տարբերն ակնհայտ արտացոլվեցին՝ Ռուսո և Պարոնյան զուգահեռ դիտարկումներում: դարերից եկող գաղափարները ունեն արդիական հնչեղություն: Հենց միայն այս երկու հեղինակների մանկավարժական առնչությունների ուսումնասիրությունն արդեն բավարար է գիտակցելու համար, որ «աշխարհի հոգսը բեռ անել» է նշանակում հանձն առնել դաստիարակի գործը: Դաստիարակչական աշխատանքի հեռանկարային և մոտակա պլանավորումը պետք է հաշվի առնել դեռահասի տարիքային, բարոյա-

---

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս **Սարգսյան Ա.**, 2. Պարոնյանի մանկավարժական հայացքներն ու ժառանգությունը, Երևան, 1991, էջ 51:

<sup>9</sup> Տե՛ս **Ժան-ժակ Ռուսո**, Էմիլ, Գերմաներենից թարգմ. Իսահակ Յարութիինեանց, էջ 4:

հոգեբանական զարգացման առանձնահատկությունները: Դաստիարակի կոչումը հասարկության մեջ հարատևելու է ընդմիջտ և սաների ջանքերը միավորելու համար պահանջվում է դաստիարակվողին մոտենալ նրբանկատ, համբերությամբ և մտերմաբար: Այսօր «Թատրոն»-ի վարագույրը բաց է, իսկ Ռուսոյի էմիլը վաղուց հասունացել է:

**Լ. Հարությունյան**

**Ժան-ժակ Ռուսո և Հակոբ Պարոնյան (մանկավարժական առնչություններ)**

**Անփոփում**

Ժան-ժակ Ռուսոյի և Հ. Պարոնյանի մանկավարժական հայացքները ուսումնասիրելիս ի հայտ են գալիս որոշ նմանություններ, թեև նրանց ստեղծագործություններն ընդգրկում են տարբեր դարաշրջաններ: Արդիական հնչողություն ունի նրանց մտահոգությունը դաստիարակության ու դաստիարակողի հարցերի վերաբերյալ:

**Л. Арутюнян**

**Жан-Жак Руссо и Акоп Паронян (педагогические сходства)**

**Резюме**

Исследуя педагогические взгляды Жан-Жака Руссо и Акопа Пароняна, появляются некие общие черты, несмотря на то, что они творили в разные эпохи. Сегодня актуальны их взгляды относительно вопросов воспитания и воспитателя.

L. Harutyunyan

**Jean-Jacques Rousseau and Hakob Paronyan (Pedagogical Connections)**

**Summary**

Studying pedagogical perspectives of Jean-Jacques Rousseau and Hakob Paronyan we come across with some similarities, though their works include different eras. Their concerns about questions connected with upbringing and educator are relevant.

*Խմբագրություն է ուղարկվել 25.03.19*

*Հանձնարարվել է գրախոսության 29.03.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

ԳՈՀԱՐ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի հայցորդ  
[ghazaryan-ani@mail.ru](mailto:ghazaryan-ani@mail.ru)

**ԿԱՐԱՊԵՆՑԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** ազդեցություն, աշխարհայացք, ոճ, ազգային, համամարդկային, գոյապաշտություն, կերպարակերտման հնարք, արձակի տեխնիկա:

**Ключевые слова:** влияние, мировоззрение, стиль, национальный, универсальный, выживание, трюк создания персонажа, техника прозы.

**Key words:** Influence, world outlook, style, national, universal, survival, character creating trick, technique of prose.

Գրական ազդեցությունը մեզանում հաճախ դեռ բացասական երևույթ է ընկալվում, ազդեցության բացահայտումն այս կամ այն գրողի մոտ մի տեսակ կարիսես սովերում է գրական երկի գեղարվեստական արժանիքները, դրանք դարձնում ածանցյալ: Մա, աներկբայորեն պիտի նշել, անտեղյակություն է համաշխարհային գրականության հազարամյա անընդհատ ընթացքից, քանզի անհնար է մատնանշել համաշխարհային գրականության ազդեցությունից զերծ մնացած նշանակալից որևէ ստեղծագործություն: Ամերիկացի ժամանակակից գրականագետ Հարոլդ Բլումն «ինքնածին» տաղանդների վերաբերյալ տեսակետների մասին գրում է. «Դրամատուրգների, բանաստեղծների, արձակագիրների շուրթերից այդօրինակ պնդումները բնական ու հասկանալի են, թեև իրականում ինքնախաբեկանք են: Բայց երբ նման հայտարարություններ են անում գրականագետներն ու քննադատները, այդ պնդումները սխալ են, անհետաքրքիր և հակասում են ինչպես մարդկային, այնպես էլ գեղարվեստական գրականության բնույթին: Գրական ազդեցության ընթացքից դուրս անհնար է պատկերացնել որևէ ուժեղ, կանոնիկ ստեղծագործություն»<sup>1</sup>: Դա է պատճառը, որ երբեմն գրականագետներն

---

<sup>1</sup> Блум Г., Западный канон. Книги и школа всех времен, М.; Новое литературное обозрение, 2017, 16-17 с.

ազդեցությունն անվանում են «հոգևոր ու մտավոր եղբայրակցություն»<sup>2</sup>, ինչպես անվանի գրականագետ Հ. Թամրազյանն անվանում էր ամերիկահայ արձակագիր Հ. Կարապենցի ազդեցությունները, որոնցից շատերը հեղինակն ինքն է հուշել: Պարզ է, որ գրողն ինքն իրեն «ինքնածին» համարելու անհամեստությամբ բնավ չի տառապել: Առաջին հայացքից թվում է, թե նա նույնիսկ կապ չունի իր թվարկած հեղինակների հետ կա, այդ կապն այնքան հեռավոր է, որ ազդեցության մասին խոսելը նույնիսկ անիմաստ է, բայց Հ. Բլումը մի չափազանց կարևոր դիտարկում ունի, որն ավելորդ չէ մեջբերել. «Ցանկացած ուժեղ գրական գործ ստեղծագործաբար աղավաղում և համապատասխան աղավաղումով էլ մեկնում է նախկին տեքստը կամ տեքստերը»<sup>3</sup>, - ասում է նա, և գրականագետի այս խոսքերի հետ պետք է հաշվի նստել:

Համաշխարհային գրական անդաստանից Կարապենցն առանձնացնում է Դոստոևսկու, Չեխովի, Ֆլոբերի, Հեմինգուեյի, Սարտրի, Քամյուի, Բեքթթի և Մարկեսի անունները, որոնցից շատերը, ըստ էության, միմյան հետ ոչ մի առնչություն չունեն՝ օրինակ՝ Դոստոևսկի և Ֆլոբեր, կամ Սարտր և Հեմինգուեյ: Ուրեմն ինչպես են Կարապենցի արձակում համադրվել այդ ազդեցությունները: Խնդիրն այն է, որ այս հեղինակների մի մասից գրողն աշխարհայացքային ազդեցություն է կրել, մյուսից՝ գեղարվեստական արձակի տեխնիկա և վարպետություն է սովորել:

Դոստոևսկու և ֆրանսիական գրականության մեջ նրա հետևորդների՝ Սարտրի ու Քամյուի հետ Կարապենցի հարազատությունը. օրինակ, աշխարհայացքային բնույթ է կրում: Հակառակ Ֆլոբերի արձակի հղկված գրի՝ ոճական վայելչագրության (Ֆլոբերը սեփական ոճն անվանում էր «տաժանակիր ոճ»), Դոստոևսկու ոճը հատկանշվում է թերություններով, կրկնություններով ու անփութություններով: Նրա գաղափարների հետևորդները՝ Սարտրը և Քամյուն, ճիշտ Դոստոևսկու նման անփութ չէին, բայց Ֆլոբերի նման շեշտը ոճական վայելչագրության վրա չէին դնում: Ֆրանսիական գոյապաշտական դպրոցի ներկայացուցիչներն առհասարակ կորևորում էին ոչ այնքան գեղարվեստական ոճը, որքան գրականության գաղափարական բովանդակությունը:

Կարապենցի արձակի հիմնախնդիրները, ըստ էության, բազմաթիվ աղերսներ ունեն Դոստոևսկու և ֆրանսիական գոյապաշտության թեմաների ու մոտիվների հետ: Իսկ հարազատությունը վերջիններիս հետ աշխարհայացքային է: Նախ մահը, իբրև վերջնական ճշմարտություն,

<sup>2</sup> Կարապենց Հ., Երկեր 2 գրով, գ. 1: Պատմվածքներ, Ե., Նաիրի, 1995, էջ 5:

<sup>3</sup> Блум Г., Западный канон, Книги и школа всех времен, 17 с.

այնուհետև մարդկանց փոխադարձ օտարվածությունը, գոյության իմաստի տենդագին որոնումներն ու անհեթեթությունը. այս մոտիվները կարապենցին հարազատ են դարձնում ֆրանսիացի գոյապաշտներին, որոնց հետևորդներն էին Ջարեհ Որբունին ու ֆրանսիագիր Վահե Քաչան, ում օտարագրության երևույթը հավանաբար բացատրվում է ազգային խնդիրներից վեր ելնելու փորձերով:

Հակառակ Սարոյանի հորդորներին, Կարապենցն այդպես էլ չբռնեց օտարագրության և ամերիկյան ճանաչման ուղին՝ ինչպես Լևոն-Ջավեն Սյուրմելյանը: Նա ոչ միայն չէր կարող խզել կապը մայրենի լեզվի հետ, այլև չէր կարող կտրվել ազգային խնդիրներից՝ երևույթ, որ կարելի է անվանել ինքնասօտարան վախ: Այդ վախն էր, որ ֆրանսագիր Արմեն Լյուբենին ստիպում էր մնալ Շահան Շահնուր և հայերեն գրել այն ստեղծագործությունները, որոնցում բացառապես ազգային խնդիրներ էր արձարձում «Նահանջ առանց երգի» և «Հարալեզներուն դավաճանությունը»: Կարապենցն այլ ուղիով է գնում՝ փորձելով համադրել ազգայինն ու համամարդկայինը: Իբրև ԱՄՆ-ի քաղաքացի՝ նրա ստեղծագործություններում կարելի է հանդիպել ամերիկյան սոցիալական իրականության բազմաթիվ իրողությունների նկարագրությունների՝ ամերիկյան քաղաքների կյանք, ուրբանիզացում, մեքենայացում, մաքքարտիզմ, վիետնամական պատերազմ, բայց իբրև հայ արձակագիր նա չէր կարող չպատկերել տարագրության մեջ գտնվող հայի՝ «օտարականի ցավը»<sup>4</sup>: Համամարդկային իրողությունները պատկերելով հանդերձ՝ Կարապենցն այդպես էլ չկարողացավ կտրվել ազգային արմատներից, ամբողջությամբ հեռանալ ազգային խնդիրներից, թեև ակնհայտ է նաև դրանց համամարդկային հնչեղություն հաղորդելու միտումը: Հայ հերոսների հետ գրողն ասպարեզ է բերում նույն հոգեկերտվածքի տեր և օտարականի ցավը նույնությամբ ապրող այլազգի հերոսների՝ ազգային թեման այս դեպքում տանելով համամարդկային ընդհանրացման:

Վաղ շրջանի պատմվածքներում, մասնավորապես «Անծանոթ հոգիներ» շարքի համանուն ու թերևս լավագույն պատմվածքում նույն՝ հայրենիքի ու կարոտի թեման է արձարձվում, և թեև հայրենիքները տարբեր են, սակայն նույն է կարոտի վերապրումը թե՛ ազգությամբ ռուս Վլադիմիրի ու նրա մահացած կնոջ՝ Ժենյայի, թե՛ հայազգի Արմենի հոգում: Հետաքրքրական է, որ այս ստեղծագործության մեջ իրապես զգացվում է ռուսկան գրականության՝ հատկապես Չեխովի և Դոստոևսկու շունչը: Անշուշտ այս կամ այն գրականության ազգային առանձնահատկության

---

<sup>4</sup> Սյուրմելյան Լ.-Ջ., Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, Ե. ՀՀ ԳԱԱ

կարևորագույն չափումներից է կերպարի ազգային խառնվածքը: Ազգային որևէ կերպար կերտելիս այսպես թե այնպես հնարավոր չէ լիովին կտրվել կերպարակերտման հնարքների ազգային ավանդույթից: Կարապենցի պատմվածքի՝ ազգությամբ ռուս հերոս Վլադիմիրը, որ չես հասկանում հարբած է, թե իսկազար իր ողբերգականությամբ, օրինակ, հիշեցնում է Դոստոևսկու հերոսներին: Իսկ ահա իր նովելային ավարտով և հոգեբանական նրբին դիտարկումներով կարապենցի այս, ինչու չէ, նաև այլ պատմվածքներ հիշեցնում են Չեխովի ոճը: Ի դեպ, կարապենցը տալիս է նաև մեկ այլ անվանի հեղինակի՝ 20-րդ դարի երկրորդ կեսի ամերիկացի արձակագիր, ամերիկյան պատմվածքի լավագույն վարպետներից Ռայմոնդ Քարվերի անունը<sup>5</sup>, որից, ինչպես խոստովանում է գրողը, սովորել է «խիտ գրելու առաքինությունը»<sup>6</sup>: Հետաքրքիր է, որ Քարվերն ինքն է խոսում Չեխովի, իսկ ավելի ուշ շրջանի ստեղծագործությունն էրում նաև Դոստոևսկու հետ ունեցած հարազատության մասին: «Չեխովը մի անգամ ասել է, թե ամենևին պարտադիր չէ, որ գրականությունը միայն բացառիկ, անսովոր արարքներ գործող հերոսներ պատկերի: Եվ այս խոսքերը ես մտապահել եմ մեկընդմիջտ»<sup>7</sup>, - խոստովանում է նա:

Այդպիսին են նաև Կարապենցի հերոսները. ո՛չ մի արտասովոր կերպար, այն, ինչ «Արձակի տեխնիկա» գրքում պահանջում էր Լ.-Չ. Սյուրմելյանը՝ գրելով. «Տարօրինակ մարդը միշտ հետաքրքիր է: Դիկկենսի գրեթե բոլոր կերպարները, որոնց լավ մտապահել ենք, արտառոց կամ անհեթեթ իրադրությունների մեջ խճճված աշխույժ, տարօրինակ մարդիկ են: Խճճվածությունն ու շփոթը, որ հաճախ դրանց մի մասն են կազմում, զերազանց իրավիճակ են կերպարը բացահայտելու համար»<sup>8</sup>: Այնինչ Քավերի համար «զլխավորն ուշադրությունն է առօրյա իրականության և սովորական մարդկանց հանդեպ»<sup>9</sup>: Նույնը կարելի է ասել նաև Կարապենցի շատ պատմվածքների մասին: Այն իրավիճակները, որոնցում հանդիպում են հերոսները, հաճախ սովորական, առօրյա իրավիճակներ են: Հայ գրողի կերտած կերպարների մոտ առանձնապես ընդգծված չէ նաև հերոսի խառնվածքը, բացառությամբ «Նոր աշխարհի հին սերմնացանները» շարքի հերոսների, որոնք իրոք արտառոց ու տարօրինակ մարդիկ են, և այդ

<sup>5</sup> \*Քարվերի պատմվածքների մի ժողովածու հայերեն լույս է տեսել Խաչիկ Խաչերի թարգմանությամբ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 15:

<sup>7</sup> Карвер Р., Собор, М., Известия, 1987, с. 6.

<sup>8</sup> Սյուրմելյան Լ.-Չ., Արձակի տեխնիկա. չափ և ինտիմություն, Ե. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2008, էջ 194:

<sup>9</sup> Карвер Р., Собор, с. 6.

կերպարներում արդեն շեշտված է ազգային խառնվածքը: Իսկ ինչ վերաբերում է մյուս հերոսներին, ապա նրանց մոտ չկա խառնվածք, որովհետև բոլորն էլ նույն ապրումները, նույն խոհերն ու զգացմունքներն ունեն: Կարապենցը կարծես մի կարևոր ֆենոմեն է վկայում՝ ամերիկյան իրականության մեջ մարդկային հոգեվիճակների նույնության, միանմանության ֆենոմենը: Հենց այս ֆենոմենն են պատկերում նաև Քարվերի պատմվածքները. Իսկ ահա, «Քարվերի պատմվածքների բովանդակությունը մարդկային փոխադարձ ըմբռնման, օտարման, մենության, կապերի խզման, ձանձրույթի, արտաքին հայացքից տանելի, բայց իրականում աննպատակ իրականության դրաման է: Մեծ իմաստով սրանք մարդկային հավերժական դրամաներ են, սակայն վերջին ժամանակներին ամերիկյան իրականությունն այդ ամենին հատուկ կոլորիտ է հաղորդել, և հազիվ թե մենք հասկանանք կատարվածի էությունը՝ ուշադրություն չդարձնելով սոցիալական ֆոնին, որքան էլ այն մանրամասնորեն չի վերարտադրվում Քարվերի կողմից»<sup>10</sup>:

Կարապենցի պատմվածքները Քարվերի համանուն ստեղծագործություններից տարբերվում են նրանով, որ ամերիկյան դրաման նրանցում արծարծված է ազգային տեսանկյունից, իսկ ամերիկահայ արձակագրի հերոսների դրաման հայրենիքից հեռու գտնվող օտարականի դրաման է առաջին հերթին: Դոստոևսկուն, Մարտրին և Քամյուին նա հարազատ է իր գաղափարներով, սակայն նրա պատմվածքները Քարվերի պատմվածքների նման ամերիկյան, առօրյա, սովորական իրավիճակներում են փաստում օտարման, մարդկային գոյության իմաստագրկության, անհեթեթության ու մահվան գաղափարները: Դոստոևսկու, Մարտրի և Քամյուի ստեղծագործությունները հազեցած են գաղափարակիր հերոսներով, արտառոց, «սահմանային» իրավիճակներով, որոնցում փացահայտվում է մարդկանց փոխադարձ օտարման փաստը: Քարվերի և Կարապենցի պատմվածքների աշխարհն առօրեականության աշխարհն է, որի մեջ մահը սողոսկում է իմաստագրկելու մարդկային կեցությունը:

Ամերիկահայ արձակագրի պատմվածքների լեզուն Քարվերի երկերի լեզվի նման հղկված է: Դրանցում գրեթե բացակայում է սյուժեն ու զեղարվեստական հորինվածքը, դրանք սովորական կենսական դրվագների պարզ պատումներ են, միևնույն ժամանակ թախծոտ և խորքային: Ոչ մի տեսարան, ոչ մի դրվագ կամ մանրամասնություն անկարևոր չէ, ամեն ինչ կանխամտածված է: Եվ սովորական մարդկանց մասին այդ պատմություններն ավարտվում են այնպիսի մի դրվագով, որը

---

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 8:

միաժամանակ կ' սովորական է, կ' մեծ ընդհանրացում է պարունակում: Այս «անսերթնեթ ոճը», իր իսկ խոստովանությամբ, Կարապենցը սովորել է Ուիլյամ Մարոյանից: «Մարոյանից սովորել եմ անմիջականությունն ու անսերթնեթությունը: Տոլստոյից՝ երբեմն տուժելով, ինքնամտորումները, Ջեյմս Ջոյսից՝ գաղափարների հարակցության հոսանքը: Կազան Յակիսն\* ինձ սովորեցրեց դաժանորեն ճշմարտությունը հետապնդելու անհրաժեշտությունն արվեստ մեջ: Շահնուրը՝ օտարականի ցավը: Իսկ ամերիկացի վաղամեռիկ վիպասան Ռայմոնդ Քավերը՝ խիտ գրելու առաքինությունը, այն աստիճան խիտ, որ ավելորդ ախականն ու բառը դառնում է բեռ ընթերցողի մեջքին»<sup>11</sup>: Եվ իրոք, «Քարվերի արձակը երբեմն բնորոշում են գծուձ՝ նկատի ունենալով միևնույն բանը. նրանում ոչ մի ավելորդ բան չկա, յուրաքանչյուր մանրուք հազեցած է իմաստով, բառերն արտաքուստ պարզ են, երկխոսությունը կառուցված է ամենաառօրեական ռեպլիկների փոխանակման վրա և այդուհանդերձ ստեղծվում է կոնտեքստ, որում յուրաքանչյուր բառ ավելին է նշանակում, քան դա հնարավոր է ասել»<sup>12</sup>: Այս բնորոշումները լիովին համապատասխանում են նաև կարապենցի արձակին:

## Գ. Սահակյան

### ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում դիտարկվում են համաշխարհային գրականության ազդեցությունները Հակոբ Կարապենցի արձակի վրա: Անդրադարձել ենք ընդհանրապես գրական ազդեցությունների խնդրին, առանձնացրել այն գրողներին, որոնք ազդեցություն են թողել ամերիկահայ արձակագրի ստեղծագործության վրա, նկատել, որ դրանց մի մասից Կարապենցն աշխարհայացքային ազդեցություն է կրել, իսկ մյուսից արձակի տեխնիկա և ոճական հնարքներ է յուրացրել, մանրամասն անդրադարձել ենք նաև աշխարհայացքային այդ խնդիրներին և ոճական հնարքներին:

---

\* Հղման աղբյուրում հավանաբար անճշտություն կա. հույն գրողի ազգանունը թարգմանվում է Կազանձակիս:

<sup>11</sup> Կարապենց Հ., Երկեր 2 գրքով, գ. 1, էջ էջ

<sup>12</sup> Карвер Р., Собор, с. 8.

Г. Саакян

**Резюме**

В статье рассматривается влияние мировой литературы на прозу Акопа Карапенца. Мы затронули проблему литературных влияний в целом, выделили авторов, которые повлияли на творчество американо-армянского писателя, и заметили, что некоторые из них повлияли на мировоззрение Карапенца, а у других он освоил технику и стилистические приемы. Мы также рассмотрели детали этих мировоззренческих проблем и стилистических приемов.

G. Sahakyan

**Summary**

The article examines the influence of world literature on the prose of Hakob Karapents. We have touched upon the issue of literary influences in general. We have also mentioned the writers who influenced the work of the American-Armenian writer and noticed that some of them had a world-wide influence on Karapents, and from the others, he had mastered the technique and stylistic tricks. We have also covered the details of these world outlook issues and stylistic tricks.

*Խմբագրություն է ուղարկվել 11.03.19*

*Հանձնարարվել է գրախոսության 21.03.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վ. Պարտիզունու անվան  
հայ նոր և նորագույն շրջանի գրականության և նրա  
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ  
[tatev1111@mail.ru](mailto:tatev1111@mail.ru)

**ՀՐԱՉՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԺԵՎՈՐՄԱՄԲ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** պոեզիա, ժամանակ,  
ավանդույթ, նորարարություն, արմատներ, եզերք, թարմ շունչ, գունային  
երանգներ:

**Ключевые слова и выражения:** поэзия, время, традиция, нововведение,  
корни, край, жизненность, цветовые оттенки.

**Key words and expressions:** poetry, time, tradition, innovation, roots, rim,  
new approaches, color shades.

Հր. Հովհաննիսյանի առաջին բանաստեղծությունները տպագրվել են  
1934-1936 թվականներին <<Պիոներ կանչ>> թերթում և <<Մեր պատանի  
ստեղծագործողները>> ժողովածուում: Վերջինիս առաջաբանում Վահրամ  
Ալազանը գրում է. <<Ներկա ժողովածուում ամփոփված են կոնկուրսին  
ներկայացված նյութերից առավել հաջողվածները (Հր. Հովհաննիսյանը շահել  
էր առաջին մրցանակ): Այս նյութերում ուշագրավ են 15-ամյա Հրաչիկ  
Հովհաննիսյանի բանաստեղծությունները, որոնք տոգորված են վարակիչ  
լիրիզմով, ջերմությամբ ու հուզականությամբ: Հրաչիկ Հովհաննիսյանի  
բանաստեղծությունները ուշագրավ են նաև իրենց գունեղ, պատկերավոր  
լեզվով, հարուստ բառապաշարով, սահուն տաղաչափությամբ>><sup>1</sup>:

Բանաստեղծությունների առաջին ժողովածուից  
(<<Բանաստեղծություններ>>) մինչև վերջինը՝ <<Դաժան դրախտավայր>>  
(1993), Հր. Հովհաննիսյանի պոեզիան արժևորել են բազմաթիվ  
գրականագետներ, գրողներ՝ Ս. Աղաբաբյան, Ս. Սարինյան, Հր. Թամրազյան,  
Լ. Հախվերդյան, Ս. Արզումանյան, Ա. Զաքարյան, Գ. Հայրյան, Գ. Մահարի, Ն.  
Զարյան, Ա. Սահինյան, Ս. Մարգարյան, Ս. Կապուտիկյան և այլք՝ տարբեր

---

<sup>1</sup> <<Մեր պատանի ստեղծագործողները>>, Երևան, 1936:

տեսանկյուններից արժևորելով նրա գունային համակարգը, ջերմ քնարականությունը, պատկերաստեղծման յուրահատկությունները:

Հետևելով բանաստեղծի ստեղծագործական շարժնթացին՝ քննադատները նշում են, որ Հր. Հովհաննիսյանը, շարունակելով մեր միջնադարյան և դասական գրականության ավանդույթները, դրանք հարստացրեց նոր գույներով, պատկերաստեղծման յուրահատկություններով ստեղծելով բանաստեղծության իր ինքնատիպ մոդելը: Ընդգծվում է Հր. Հովհաննիսյանի՝ ժամանակի սրված զգացողությունը, ժամանակի տարբեր չափումների միջև կապ ստեղծելու նրա միտումը, քնարական հերոսների ներաշխարհի խորքերը թափանցելու, նրա ուրախությունը, նաև՝ դրամատիկ ապրումները բանաստեղծականացնելու, կենսափորձի առանձին դրվագներից իրականության ավելի խոր ու բազմակողմանի արտացոլման ճանապարհներ գտնելու որոնումները, բառի, տողի՝ որպես բանաստեղծական կառույցի կարևորագույն բաղադրիչների արժևորումը:

Առաջին իսկ բանաստեղծություններից մինչև «Դաժան դրախտավայր» ժողովածուի գործերը Հր. Հովհաննիսյանը պատանեկան, այնուհետև՝ երիտասարդական խանդավառությամբ էր լցնում իր տողերը, ընթերցողին վարակում սիրով, բնության հանդեպ ունեցած իր պաշտամունքով, կյանքը անիմաստ կերպով չվատնելու, ցավերը անթելելու, բայց չմոռանալու տրամադրությամբ.

Ա՛խ, ջահելներ, մի մոայլվեք,  
Մի շփոթվեք իմ խենթ վարքից,  
Թողեք Ձեզ հետ, ամենքիդ հետ  
Այսօր լինեմ սեղանակից:  
Եվ, մոռացած ցավ ու նոպա՝  
Մի անգամ էլ խնդամ ու լամ.  
Մի՞ թե այսպես չեն բաժանվում  
Ծերերն իրենց ջահել կյանքից:

Հր. Հովհաննիսյանի պոեզիային իր «Ժամանակակից հայ բանաստեղծներ» աշխատության Ա հատորում անդրադարձավ Ս. Սողոմոնյանը<sup>2</sup>: Նշենք, փակագծում, որ Ս. Սողոմոնյանը Հր. Հովհաննիսյանի առաջին ժողովածուն համարում է «Իմ կյանքի երգը» (1951), մինչդեռ բանաստեղծի առաջին ժողովածուն՝ «Բանաստեղծություններ» խորագրով,

<sup>2</sup> Սողոմոնյան Ս., Ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, «Հայաստան», 1965:

տպագրվել է 1946-ին Փարիզում: Հանրի Մարմարեանի առաջաբանով տպագրված այդ փոքրիկ ժողովածուի լույս ընծայման դրամատիկ հանգամանքների մասին Հր. Հովհաննիսյանը պատմում է «< Երկու ճակատագիր>> հուշագրության մեջ: Հեղինակի առաջին գիրքը, որը պիտի լույս տեսներ 1936-ին, խմբագրի ձեռքակալման պատճառով նույնպես ձեռքակալվեց. «< Երկրորդ անգամ գիրքս պիտի լույս տեսներ տասը տարի անց 1946 թվականին, և այս անգամ էլ այդ և բազում այլ գրքերի վրա իջավ Համկոմկուսի որոշման ու ՄՄԿԴ քարտուղար Ժդանովի կտրուկ սուրբ: Եվ, ահա, առանձին անգամ գիրքս լույս տեսավ 1948-ին, գրաքննության, ինչպես և զգոն ու զգույշ խմբագրի խորհրդով բզկտված, իմ իսկ ձեռքով փոփոխված տողերով, կրճատված տեքստերով, հանված բանաստեղծություններով: Հետո պարզվեց, որ դա իմ առաջին գիրքը չէր: Առաջին գիրքս լույս էր տեսել 1946-ին, և այն էլ ... Փարիզում, ինչից ես՝ անտեղյակ էի>>»<sup>3</sup>:

Ս. Սողոմոնյանը, որպես Հր. Հովհաննիսյանի «<առաջին>> գրքի դրական կողմեր առանձնացնում է «<անմիջականությունը>>, «<անսեթևեթ ոճը>>, «<պլաստիկ պատկերները>>, թեպետ «<երիտասարդ բանաստեղծը ընթերցողներին առաջին անգամ հանդիպում է հանրածանոթ, արդեն երգված թեմաներով, հայրենիքի սեր, պատերազմ, ռազմաճակատի վերհուշեր, խաղաղություն և այլն, որոնց կողքին հանդիպում են նաև սիրո ու բնությանը նվիրված երգեր, որոնք ջերմացված են մի ուրույն ներքին կրակով>>»<sup>4</sup>:

Հր. Հովհաննիսյանի բանաստեղծությունների այդ «<ներքին կրակը>>, անմիջականությունը, պատկերաստեղծման յուրահատկությունները, անկաշկանդվածությունը, երաժշտականությունը, նկարագրականությունից խուսափելու ընդգծված միտումները, պատումի անբռնագրասիկությունը, բնապատկերի՝ սովորական աչքի համար անտեսանելի գույներն ու երանգները, սովորական ակնաջին անհասանելի «<հարսնաքողով>> ծածկված դեղձենու, պտղավորված խնձորենու բողբոջների պայթյունի ձայներն ու շշուկները տեսնելու և լսելու հովհաննիսյանական սրված զգացողությունն են առանձնացնում Հ. Մալխիսյանը, Ս. Աղաբաբյանը, Ս. Արզումանյանը, Ա. Զաքարյանը, Լ. Հախվերդյանը, Ս. Սարիսյանը, Հր. Թամրազյանը և այլք:

<sup>3</sup> Հեղինակի հավաստմամբ՝ գրքի ամբողջ տպաքանակը, Ֆրանսիայում հայաստանի դեսպանատան աշխատող, ԿԳԲ կցորդ ում Հինայեկյանի կողմից այրվել է և Հայաստան չի հասել: Տե՛ս՝ «<Հուշարձան Հրայցյա Հովհաննիսյանին>> Երևան, «<Արևիկ>>, 2015:

<sup>4</sup> Սողոմոն Սողոմոնյան, Ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, 1965, էջ՝ 264:

Հ. Սալախյանը Հր. Հովհաննիսյանի ժողովածուներում («Իմ կյանքի երգը» և «Երկրորդ հանդիպում») առանձնացնում է Մեծ հայրենական թեմայով գրված բանաստեղծությունները, որոնց մեջ հեղինակը բանաստեղծականացնում է պատերազմական տարիների իր սերնդի կենսապատումի առանձին դրվագները<sup>5</sup>:

Առավել հանգամանալից Հր. Հովհաննիսյանի բնաստեղծություններին անդրադարձել է Ս. Աղաբաբյանը: «Խոստովանության ժամը» հոդվածում անվանի գրականագետը բանաստեղծի «Հայրական երգ» գրքի գործերում տեսնում է «միջանցիկ մի հնչերանգ», «անծայրածիր մի գիծ», որը սկզբնավորում է «Հրաշալի այգեպան», «Վայրի վարդ», «Սուրբ դափնու վրա» ժողովածուներում, հասնում մինչև նոր գիրքը և դառնում «միանգամայն նոր որակ, հասունության որակ»:

Խոստովանության ժամը ոչ թե ժամանակի մի միավոր է, որի ընթացքում բանաստեղծը հոգեկան տուրք է մատուցում ծնողների ու ընկերների հիշատակին, «ոչ միայն օրհնանք է աշխարհի լուսավոր դրվագներին՝ գարուններին, ծաղիկներին, նվագներին, սերերին, այլև մինչև վերջ հոգին բացելու («Հանգիստ սրտով չափելու՝ ինչոր ունեմ ու չունեմ») անկեղծ մտահոգություն:

Գրականագետը ժողովածուն արժևորում է «Նյութի ոչ թե թեմատիկ, այլ գեղարվեստական լուծման» տեսանկյունից, ընդգծում բանաստեղծությունների «անմտադիր, անցուցադրական, ինչ-որ տեղ անգամ միամիտ հուզականությունը»<sup>6</sup>: Անցած օրերն արթնացնում են «դրամադիկական վերապրումներ, որոնք ժողովածուի տիրապետող շաղախն են», իսկ «դրամատիզմը մարդկայնորեն շատ հասկանալի կարոտն է իր անցած ճամփաների, իր գյուղի արևի, իր մանկության մատուներն հանդեպ»<sup>7</sup>:

Հրայա Հովհաննիսյանի ստեղծագործություններին Ս. Աղաբաբյանը ավելի հանգամանալից անդրադառնում է «Հայ գրականության պատմություն» 2-րդ հատորում (Երևան, ՀՀ ԳԱԱ հրտ., 1993):

---

<sup>5</sup> Տե՛ս՝ Ք. Օվանիսյան, «Вторая встреча», стихи на армянском языке, Ер., «Армгосиздат», 1951, և «Мои товарищам по счастью М»; «Советский писатель», 1952, գրքի առաջաբանը:

<sup>6</sup> Հուշարձան Հրայա Հովհաննիսյանին, էջ՝ 249-251:

<sup>7</sup> Քննադատներից ոմանք այդ դրաման տեղադրում են «քաղաքակրթության» և «անադարտ բնության» ցավագին բախման հանգույցներում և հեռու գնացող եզրակացություններ են անում դրանից: Գրականագետը, բնականաբար դա համարում է «չարաչար սխալմունք», բանաստեղծին ճիշտ չհասկանալու հետևանք:

Գրականագետի դիտարկմամբ <<Բանաստեղծությունների մտորումային շերտը կյանքի իմաստի մենախոսական կառուցվածքներով, Հովհաննիսյանի քնարերգության մեջ տեղ բացեց նաև բանաստեղծության ամենաբարդ տեսակի՝ քառյակ – ութնյակների շարքի համար, որոնք տեղ գտան <<Իրիկնային դողանջ>> գրքում>><sup>8</sup>, որտեղ <<Իրիկնային դողանջների՝ ծննդյան նախապատճառը համարելով Պ. Սևակի երազային տեսիլքը՝ Հովհաննիսյանը նրա հիշատակին է նվիրել մորմոքային ութնյակների մի շարք՝ իմաստավորելով նրա գեղարվեստական սխրանքը>>:

Քննադատությունը լայնորեն արձագանքեց <<Հրաշալի այգեպան>> ժողովածուին (1956): Բանաստեղծի երկհատորյակի մասին գրախոսականում անվանի գրականագետ Հր. Թամրազյանը <<Բանաստեղծի ճանապարհը>> հոդվածում (<<Սովետական գրականություն>>, 1972, N 7) ժողովածուի <<գողտրիկ ու զուլալ երգերի մեջ>> տեսնում է մի ներքին վեճ՝ վերացական ու խրթին բանաստեղծական այն ոճի դեմ, որը բարձրանում է փայտե ոտների վրա, սակայն շփոթ է առաջացնում անփորձ ընթերցողների շրջանում>>: Հր. Հովհաննիսյանի << երգի մեջ գծագրվում է իր հողի հետ ամուր կապված նոր ժամանակների մարդը, որը ստեղծման մեջ դրսևորվում է մեծ զգացում ու ներշնչանք: Այդ ավանդը խոր ակունքներ ունի, գալիս է հեռվից, միջնադարյան բանաստեղծությունից, գալիս է Թումանյանից, Վարուժանից և այսօր ահա ծավալվում է արդի բանաստեղծության մեջ: Այդ թեման ներշնչել է Պ. Սևակին, Հ. Սահյանին, Վ. Դավթյանին, և ինչպես ասացինք, հենց սկզբից նաև Հրայրյա Հովհաննիսյանին>><sup>9</sup>:

Հայրենի եզերքի թեման՝ հացի, գինու, բերք ու բարիքի թեման, բանաստեղծին տալիս են բնական ամուր հիմք՝ ավելի լայն հայացքով նայելու աշխարհին:

<<Բանաստեղծի գեղարվեստական>> համակարգում մարդասիրական դավանանքը վերաճել է, մի տեսակ, հոգեկան պահանջի, - գրում է Ս. Արզումանյանը <<Բանաստեղծի դավանանքը>> հոդվածում (<<Սովետական գրականություն>>, 1973, N 9) անդրադառնալով <<Աշուն թագուհին>> և <<Արևոտ կղզու երգը>> շարքերին՝ գրականագետը <<մտահղացմամբ և ընդհանուր կենսափիլիսոփայությամբ այնքան միմյանց մոտ>> այդ շարքում

<sup>8</sup> Աղաբաբյան Ս., Արդի հայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1993, էջ՝ 324:

<sup>9</sup> Տիպաբանական առնչություններ է կարելի տեսնել Դ. Վարուժանի <<Հացին երգը>>, Հր. Հովհաննիսյանի <<Հրաշալի այգեպան>> և Վ. Դավթյանի <<Գինու երգը>> ժողովածուներում, որոնց մեջ <<հայրենի բնաշխարհի բերք ու բարիքի նկարագրության հետ միասին երևում է նաև ոգու ներքին գեղեցկությունների մթնոլորտը>>:

տեսնում է «աշխարհին և մարդուն փիլիսոփա բանաստեղծի հոգու աչքերով նայող, մյուս կողմից, քիչ է ասել՝ բարի ու անքեն, այլև լուսարար ու լուսակաթ գործով ամեն ինչ ընդգրկող, աշխարհի և մարդու իսկական սիրո հետ բանաստեղծի տրամադրությունները»։ Այդ շարքերում , «կարող է պարադոքս թվալ,- Հր. Հովհաննիսյանը ավելի շատ մտահոգություններ, ցավեր ու կարոտներ էր արտահայտում, քան վայելք, ցնծություն կամ բերկրանք։ Անգամ սիրո երգերի մեջ նա ավելի շատ շեշտում է տառապանքը, կսկիծը»<sup>10</sup>։

«Աշնան թագուհին» և «Արևոտ կղզու երգը» շարքերում Գ. Հայրյանն առանձնացնում է «հույզի և խոհի ներդաշնակությունը», «զարմանալի անկեղծությունը», «չպղտորված հոգու գեղեցկությունը», «անմիջականությունը»։ Բանաստեղծը «թափանցում է հոգու ներքին շերտերը, անտեսանելի խորքերը», «բերում է իր գույնը՝ դրանով հարստացնելով մեր պոեզիայի հարուստ երանգապանակը»։

Ե. Պետրոսյանը «Հայրական երգ» գրախոսականում («Գրական թերթ», 1977, N 36) առանձնացնում է «քնարական – էպիկական փաստերի միաձուլումը, նախանձելի սեղմությունը, հղկվածությունը, տաղաչափական արվեստի վարպետությունը, բնապատկերների բազմերանգությունը»։

Լ. Հախվերդյանը «Բանաստեղծն ու իր ընթացքը» հոդվածում անդրադառնում է «Դաժան դրախտավայր» բանաստեղծությունների գրքին (1993), որը բնութագրում է որպես «վերջին տարիների աղետներն ու ավերները տեսած, ազատագրական կռվի գոհերի կսկիծը, ժողովրդի տառապանքը հոգու մեջ քամած բանաստեղծի խոսք», որ միաձուլում է երեք շերտ՝ երկրաշարժ, Արցախի հերոսական դրամա և ժողովրդի նորօրյա տանջալի կեցություն»։ «Երեք շերտ ոչ թե առանձին-առանձին, այլ փոխադարձ ներթափանցումներով, ինչպես ամեն մի հայ մարդ դրանք զգում է միասնաբար, իբրև մեր ժամանակի ողբերգական – հերոսական շեշտ, որ տառապանք է պատճառում, բայց և հուսահատության չի մատնվում»<sup>11</sup>։

Հր. Հովհաննիսյանի պոեզիային անդրադարձել են նաև այլազգի քննադատներ ու գրողներ։

Հր. Հովհաննիսյանի պոեզիան բարձր չափանիշներով է արժևորում Էդուարդաս Մեծելայտիսը։ Բանաստեղծի «կուռ ու չափածո» տողերում Էդ. Մեծելայտիսը տեսնում է «անալիտիկ խորություն, ժողովրդի հոգևոր

<sup>10</sup> Արզումանյան Ս., Բանաստեղծի դավանանք, «Սովետական գրականություն», 1974, էջ՝ 96։

<sup>11</sup> Հախվերդյան Լ., Բանաստեղծն ու իր ընթացքը, «Գրական թերթ», 1993, N 26։

կարիքներին խորամուխ, նրա ճակատագիրը իր ճատակագիրը դարձրած»>> քանաստեղծին:

Ամսագրային մի հոդվածի շրջանակներում, բնականաբար, հնարավոր չէր անդրադառնալ Հրայա Հովհաննիսյանի մոտ 60-ամյա գրական գործունեությունն արժևորող քննադատական բոլոր հոդվածներին, գրչակից ընկերների գնահատականներին:

Պարզապես նշենք, որ Հր. Հովհաննիսյանի պոեզիան արժևորել են նաև Ս. Խանգադյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Մահյանը, Մ. Մարգարյանը, Ա. Սահինյանը, Վ. Պետրոսյանը, Վ. Հակոբյանը և այլք:

### **Տաթևիկ Պողոսյան** **Հրայա Հովհաննիսյանի պոեզիան քննադատության արժևորմամբ** **Ամփոփում**

Հրայա Հովհաննիսյանի պոեզիան միշտ էլ եղել է քննադատության սևեռուն ուշադրության կենտրոնում: Նրա ստեղծագործություններին տասնամյակների ընթացքում անդրադարձել են տարբեր սերունդների քննադատներ՝ արժևորելով բնաստեղծի վաստակը, ընդգծելով նրա բնաստեղծությունների քնարականությունը, էպիկական շունչը, ժամանակի սրված զգացողությունը:

Սույն հոդվածում փորձ է արվում համակարգել, ի մի բերել քննադատության դիտարկումները, որոնք կարևոր են Հրայա Հովհաննիսյանի պոեզիան որպես համակարգ ներկայացնելու, նրա բնաստեղծական աշխարհը գրականագիտական մտքի արդի զարգացումների համապատկերում ներկայացնելու համար:

### **Татевик Погосян** **Поэзия Грачья Оганисяна с оценением критики** **Резюме**

Поэзия Грачья Оганисяна всегда была в центре пристального внимания критики. Его произведениям в течение десятилетий возвращались критики разных поколений, оценивая заслугу поэта, подчеркивая лиричность его поэзии, эпический вздох, обостренное чувство времени.

В сей статье делается попытка систематизировать, обобщать наблюдения критики, которые важны для представления поэзии Грачья Оганисяна как структуру, чтобы его поэтический мир представить в панораме современных развитий литературоведческой мысли.

**Tatevik Poghosyan**

**The criticism of Hrachya Hovhannisyan's poetry as value**

**Summary**

Hrachya Hovhannisyan's poetry has always been in the center of attention by coming in for a criticism. Critics of all generations have touched upon his works estimating the poet's merit, emphasizing the lyricism, epic touch and the keen sensation of time of his poems.

In this article we try to arrange and sum up the observations of criticism that are essential to present Hrachya Hovhannisyan's poetry as an approach, and to present his world of poetry in the modern developing framework of literary mind.

*Խմբագրություն է ուղարկվել 16.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 19.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

ՕՖԵԼԻՅԱ ԴԱՆԱՔՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ  
[ofeli-araevna@rambler.ru](mailto:ofeli-araevna@rambler.ru)

**Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՆԱՄԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԻՑ»  
ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԸ**

**Բանալի բառեր.** փոքր արձակ, կայարան, հիշողություն, մանկության օրեր, նամակ:

**Ключевые слова:** маленькая проза, станция, дни детства, письмо, память.

**Key words:** little prose, station, days of childhood, letter, memory.

Վ. Պետրոսյանի փոքր արձակը, որը նրա բազմաժանր ստեղծագործության ծանրակշիռ մասն է կազմում, դեռևս կարոտ է համակարգված ուսումնասիրության, որովհետև պատմվածքներում է, որ հեղինակն արծարծում է թեմաներ, որոնք հետագայում ավելի ընդարձակվեցին լայն կտավի ստեղծագործություններում՝ ավելի լայն շրջանակներում ու բազմակողմանիորեն արտացոլելով իրականությունը:

Բազմազան են Վ.Պետրոսյանի պատմվածքների ընդգրկումների շրջանակները՝ մանկության տարիների անմոռանալի հուշեր, անցյալի՝ որպես անհատականության ձևավորման խնդիրներ, քաղաքաբնակ երիտասարդության կենսապատումի առանձին դրվագների գեղարվեստականացում, մարդկային հարաբերությունների, բարոյականության արմատավորված նորմաների ձևախեղումներ: Ժողովածուից ժողովածու <<աստիճանաբար ավելանում է պատմվածքների կենսական երակը՝ իր բոլոր դրական հետևանքներով... Պատմվածքից պատմվածք հեղինակն ավելի է հմտանում մարդու ներաշխարհի նուրբ դրսևորումների արտացոլման մեջ>><sup>1</sup>:

<<Նամակներ մանկության կայարաններից>> պատմվածաշարը տպագրված է <<Վերջին ուսուցիչը>> հանրահայտ ստեղծագործության խորագրով հրատարակված ժողովածուում՝ <<Մպրած և չապրած

---

<sup>1</sup> Աղաջանյան Ս., Հայկական պատմվածքը 1960-70-ական թթ., Եր., ՀՀ ԳԱԱ, <<Գիտություն>> հրատ., 2014, էջ 35

տարիներ» վիպակի, «Հայկական էսքիզներ» ամբողջ շարքի և ինը այլ պատմվածքների հետ միասին:

Հատկանշական է, որ ժողովածուում ընդգրկված ստեղծագործություններն ընտրված չեն պատահականորեն. դրանք թեմատիկ-գաղափարական առանցքի շուրջ խմբավորված ստեղծագործություններ են և թեմատիկ առումով շարունակում և լրացնում են միմյանց, շոշափում հասարակական հնչեղություն ունեցող և լուծման կարոտ խնդիրներ:

Իր, ասել է թե՛ իր սերնդի մանկության օրերի, մտահոգությունների, հոգսերի, կորուստների, ապրած և չապրած օրերի, տարիների մասին գեղարվեստական հուշապատումներ են շարքում ընդգրկված պատմվածքները. միմյանց հակադրող, միմյանց լրացնող համառոտ պատմություններ, որոնցից շատերը ծնված են ցավով: Պատմվածաշարում հարազատների, մտերիմների, ընկեր-բարեկամների կորստի ցավն է թեև թանձրացել:

Մանկության օրերի հիշողությունների թեման 1960-ականների իրականություն եկած գրողներից շատերի նախասիրած թեմաներից մեկն է: Թեմային տարբեր մոտեցումներով անդրադարձել են Ռ. Հովսեփյանը, Մ. Գալշոյանը, Ն. Ադայանը, Գ. Ջանիկյանը, որոնց համար ընդհանուրը մանկությանը որպես «երկար, հրաշալի օր», «հիշողության մեջ անջնջելիորեն դրոշմված», «որբության որոգայթներում խճճված» եզրույթներ ներկայացնելն է:

Տառապալից մանկության պատմություն են ներկայացնում 60-ականների գրողները՝ պատերազմ, որդեկորույս մայրեր, հայրական քնքշանքին ու խստությանը կարոտ երեխաներ, հացի կորցրած քարտեր, այս ամենով հանդերձ՝ նաև անցած օրերի կարոտ, որ զարմանալի կարող է թվալ այդ տարիների դժվարությունները չտեսածներից շատերին:

Ռ. Հովսեփյանի «Երկար, հրաշալի օր», Հովհաննես Մելքոնյանի «Հեծանիվ», Գ. Ջանիկյանի «Ուղևորություն դեպի մանկություն» և այլ ստեղծագործություններում նույնպես արժարժվում են Վ. Պետրոսյանի կապակցությամբ նշված թեմաները, և հետաքրքիրն այն է, որ բոլորի մոտ էլ առաջնային է համարվում թեմայի շրջանակներում ժամանակի հրատապ, պրոբլեմային, լուծում պահանջող խնդիրների վերհանումը:

«Ներկա օրվա համար կորուսյալ մի աշխարհ է անցյալի կյանքը՝ մանկության հիշողություններով, հարազատների, ծանոթների աստիճանաբար խամրող դիմաստվերներով, հողին հանձնած թանկագին աճյուններով, անցած օրերի գոյությունը հաստատող դեպքերով և պատմություններով: Այդ կորուսյալ աշխարհի կանչը թանկ է մարդու

համար: Այդ կանչի արձագանքն է Վ.Պետրոսյանի «Նամակներ մանկության կայարաններից» պատմվածքների շարքը»<sup>2</sup>:

Ո՛վ է պատմվածաշարի գլխավոր հերոսը. հեղինակը, հիշողությունները՝ կապված մանկության հետ, թե՛ հենց ինքը՝ մանկությունը, որը խնամքով պահվել է «տարիների գորոցում»՝ ժամանակ առ ժամանակ ներկայանալով նոր շնչով. «Մարդու առաջին տարվա գնացքը մի վագոն է: Մարդը, ուրեմն աշխարհ է դուրս գալիս մի վագոնով: Երբ լրանում է մի տարին, և նա մտնում է երկուսի մեջ, ճանապարհին նա թողնում է այդ առաջին տարվա վագոնը, նստում ուրիշ մի վագոն, որ մի քիչ ավելի մեծ է: Այդպես կամաց-կամաց մարդու կյանքի գնացքը բարձրանում է սարն ի վեր՝ ճանապարհի ծաղիկների ու փշերի մեջ թողնելով իր տարիները: Ամեն կայարանում մեկը»<sup>3</sup>: Քանի-քանի վագոններ են թողնվել՝ հետ վերադառնալու խոստումով, մնացել կայարաններում. «Ասում են, թե ապրած տարիների խարույկից մարդ պետք է կրակները վերցնի, այլ ոչ թե մոխիրը... Տարիների մոխիրների տակից ես փորձեցի արթնացնել իմ մանկության կրակները»<sup>4</sup>: Իսկ այդ կրակներն «այրել են»՝ հեղինակի ձեռքերը՝ հիշեցնելով անցյալի դեպքերն ու դեմքերը, սերերը, ընկերներին, բաժանումները և, ի վերջո, մանկության հոտը:

Վիպակի պատմվածքները կամ, ինչպես հեղինակն է վերնագրել, նամակները ոչ ծավալուն, երկու-երեք էջի հասնող պատմություններ են՝ համեմված մանկության տպավորիչ դրվագներով ու կարոտով: Իհարկե, ավելի դյուրին է կյանքի մի որևէ պահ, իրողություն շարադրել քսաներեսուն էջում, բայց այստեղ է ընդգծվում Վ.Պետրոսյանի վարպետությունը. հակիրճ, բայց՝ բովանդակալից, հակիրճ, բայց՝ հյութեղ, պարզ, բայց ոչ պարզունակ: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ գրեթե բոլոր պատմվածքները նույն սկզբունքով են ավարտվում. տարիների հեռվից հեղինակը պատմում է՝ ինչպես դասավորվեցին հերոսների ճակատագրերը. «Իսկ մորաքրոջս պատմության վե՛րջը: Նազելի մորաքրոյրս, իհարկե, չբաժանվեց իմ Դոն-Վոնամ փեսայից, խռովվելը տևեց մի ամսից քիչ պակաս: Հաշտվեցին...»<sup>5</sup>: Կամ՝ շարքի մյուս պատմվածքը՝ «Մանուկի սիրո պատմությունը».  
«Տարիներ հետո ես

<sup>2</sup> Գասպարյան Դ., Ժամանակակից հայ արձակը, Եր. 1981, էջ 71

<sup>3</sup> Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր. 1980, էջ 109

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 110

<sup>5</sup> Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր. 1980, էջ 136

հանդիպեցի մեր դասղեկին՝ ընկեր Արուսին, խոսեցինք դպրոցից, և նա մտաբերեց մեր փախուստը. «Դուք սքանչելի տղաներ էիք, -ասաց նա, - դուք լավ արիք, որ մենակ չթողեցիք Մանուկին>>>><sup>6</sup>:

«Նամակներ մանկության կայարաններից» վիպակ-պատմվածաշարում Վ.Պետրոսյանն իր հերոսներին ներկայացնում է ժամանակի տարբեր «կայարաններում», անցյալ-ներկա ժամանակային չափումների տարբեր հանգույցներում: Եվ ինչու՞ կայարաններից: Թերևս կայարաններում է, որ միշտ լինում են հանդիպումներ, բաժանումներ, և Վ.Պետրոսյանը նրբորեն ուրվագծել է իր հերոսների հանդիպումներն ու բաժանումներն իրենց մանկության հետ և մանկությունից:

Պատմվածաշարը սկսվում է «Աքլորաքարը» պատմվածքով: Այս սկզբի ընտրությունն էլ պատահական չի արված. հեղինակը ընթերցողին է ներկայացնում իր ծննդավայրը, այն ակունքները, այն հողը որտեղից սնվել են իր արմատները, որտեղից գալիս են իր հերոսները. «Աքլորաքարը մի մեծ ժայռ է, որ հիմա էլ Քասախ գետի ափին է, նրա գլխից հիմա էլ տղաներն իրենց գցում են ջրի մեջ, և ներքև ընկնելու պահին՝ անպայման ծղրտում են, ինչպես այն ժամանակ>><sup>7</sup>:

Շարքը հարուստ է այնպիսի հարազատ կերպարներով, ինչպիսիք են հայրերի, մայրերի, որդիների կերպարները, որոնց հանդիպում ենք հեղինակի մյուս գործերում ևս: Ասվածի լավագույն օրինակն է «Մեր հայրերը» պատմվածքը: Հերոսը բոլորի նման ուզում է խոսել, պատմել ընկերոջը իր հոր մասին, ում ընդհանրապես չի տեսել, և ում ինքը հագիվ է հիշում: Պատերազմի դաշտում հայրերին կորցրած, նրանց միայն պատից կախված նկարներով ճանաչող, հայրական հոգատարություն չտեսած սերնդի կենսապատումի մի էջ է սա: Հոր թեման արծարծվում է նաև Վ.Պետրոսյանի «Կեսգիշերային գրույց», «Նամակ նախկին հարևանիս» պատմվածքներում, որոնք գաղտնի հիշողություններ են կյանքի տարբեր «կայարաններում ու կիսակայարաններում» ինքն իրեն որոնող, ինքն իրեն ճանաչել ցանկացող, կյանքի կայաններում, անցյալի հուշերը բերող սերնդի հիշողությունները, ցավի ու տառապանքի մրմունջները: «Հայրիկ, դու չհասցրիր տեսնել, թե ես ինչպես եմ գրում «ա» տառը: Խմենք հայրիկ: Քո կենացը»<sup>8</sup>: Չրույցը շարունակվում է նաև «Նամակ նախկին հարևանիս» պատմվածքում:

---

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 145

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 111

<sup>8</sup> Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր. 1980, էջ 11

Պատմվածաշարի ամենանուրբ և զգացական պատմվածքը թերևս <<Մեր մայրերը>> պատմվածքն է, որտեղ ոչ միայն մոր կերպարն է ուրվագծված, այլև՝ հայ կնոջ տեսակը: Վ.Պետրոսյանը կարողացել է ստեղծել մոր հավաքական կերպար.ամենամայրը, ում հանդիպում ենք հեղինակի <<Մոր տունը>>, <<Օր և կյանք>> և այլ պատմվածքներում ու վիպակներում: Հերոսի մի անզգույշ խոսքից քանդվում են մոր սրտի հազար թելով կապված կապանքները, և տեսնում ենք՝մոր փափուկ սրտի տակ որքան չսպիացած վերքեր կան.<<Մամ, դու հորս սիրահարվել, նո՛ր ես առել...Մայրս տխուր-գարմացած նայում է ինձ: Մայրս տասնհինգ-տասնվեց տարեկան է եղել, երբ նրան ամուսնացրել են հորս հետ, իսկ երեսուներկու տարեկանում արդեն կորցրել է նրան...Սիրահարվե՛լ է նա...Ինչ անզգույշ հարց էր>><sup>9</sup>:

Վ.Պետրոսյանը շարքում անդրադարձել է նաև ժամանկի ամենացավոտ թեմաներից մեկին՝պատերազմին,երբ շատ ու շատ չապրած մանկություններ մնացին պատմության էջերում.<<Իմ ամենավերջին խաղալիքը>>,<<Մի տխուր օր, երբ աշխարհում պատերազմ էր>>: Վերջին պատմվածքում փոքրիկ տղաներն ակամա չարացել էին իրենց ընկերոջ Վահիկի հանդեպ, քանի որ Վահիկի ընտանիքն ապրում էր բարվոք կյանքով, և որը <<չէր ներվում>> այդ փոքրիկ տղաների կողմից.<<Վահիկը մեր դպրոցի ամենախելոք աշակերտն էր, ամենակուշտը և ամենաընդունակը>><sup>10</sup>: Վահիկի <<մեղավորություն>>, իհարկե, ապացուցվեց, բայց շատ տարիներ հետո, երբ հերոսներն արդեն գիտակից տարքում էին և <<արդեն մինչև կյանքի հատակն էին հասկանում այդ տխրությունը>><sup>11</sup>:

Շարքում տեղ են գտել նաև <<Իմ ուսուցչուհին>>, <<Տատս>>, <<Մանուկի սիրո պատմությունը>>, <<Մեր թթենին>>, <<Իմ մանկության առաջին սերերը>> պատմվածքները, որոնք առաջադրած հարցերով և լուծումներով ամբողջացնում են պատմվածաշարը:

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 135

<sup>10</sup> Պետրոսյան Վ., Ընտիր երկեր, 2 հ., հ. 1, Եր. 1983, էջ 262

<sup>11</sup> Պետրոսյան Վ., Վերջին ուսուցիչը, Եր.1980, էջ 150

**Օ. ԴԱԼԱԲՅԱՆ**

**Վ. Պետրոսյանի «Նամակներ մանկության կայարաններից»  
պատմվածաշարը  
Անփոփում**

Հոդվածը նվիրված է Վ.Պետրոսյանի «Նամակներ մանկության կայարաններից» վիպակ-պատմվածաշարին, որը դեռևս ուսումնասիրված չէր: Շարքում ընդգրկված պատմվածքները թեմատիկ առումով միմյանց լրացնող, միմյանց շարունակող ստեղծագործություններ են, որոնք շոշափում են հասարակական հնչեղություն ունեցող և լուծման կարոտ խնդիրներ:

**Օ. ДАЛАКЯН**

**Письма с детских станций В.Петросяна  
Резюме**

Статья посвящена роману В.Петросяна «Письма с детских станций», который еще не изучен. Истории, включенные в серию, дополняют друг друга, продолжая друг с другом, касаясь вопросов общественного голоса и стремления к решениям.

**O. Dalakyan**

**Letters from Childhood Stations by V.Petrosyan  
Summary**

The article is devoted to V. Petrosyan's novel-storyline "Letters from Childhood Stations", which has not been studied yet. The stories included in the series, are thematically complementary, continuing each other, touching on the issues having public voice and longing for solutions.

*Խմբագրություն է ուղարկվել 16.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 19.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՔՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան  
ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետ  
[hasmikhakobyan1@gmail.com](mailto:hasmikhakobyan1@gmail.com)

**ԳԱԼՇՈՑԱՆԱԿԱՆ ԳԵՂԱԶԵՎՈՒՄՆԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԳՐԱԿԱՆ  
ՁԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՏՈՒՄ**

**Բանալի բառեր և արտահայտություններ.** 20-րդ դարավերջ, գրական զարգացումներ, Եղեռն, մեծ և փոքր արձակ, կարոտ, իրականի և հավանականի հայեցակետ, կոմպոզիցիոն առանձնահատկություններ, հոգեվերլուծություն:

**Ключевые слова и выражения:** конец 20-го века, литературное развитие, Геноцид, большая и малая проза, тоска, реальность и вероятность, композиционные особенности, психоанализ.

**Key words and expressions:** the end of the 20th century, literary developments, Genocide, large and small prose, longing, reality and probability, compositional peculiarities, psychoanalysis.

Հայ ժողովրդի անցած դժվարին ուղին մշտապես եղել է հայ գրողների ուշադրության կենտրոնում՝ վերածվելով բազմաժանր գրական բարձրարժեք ժառանգության:

Գաղտնիք չէ, որ ԽՍՀՄ-ում գրականությունը ծրագրավորված քաղաքականություն էր: Խիստ գրաքննադատության ճնշման ներքո անազատ գրողը, որը մտահոգված էր ազգի խնդիրներով, բայց չունեի ազատ արտահայտվելու հնարավորություն, փորձում էր թաքնված կերպով վեր հանել ազգային, գաղափարական, քաղաքական խնդիրներ:

Գրական դաշտում առավել զգայուն և նուրբ թեմա էր և շարունակում է մնալ Եղեռնի թեման, որը սկսվել էր դեռ արհավիրքի հետ և շարունակվում էր՝ ստանալով տարբեր երանգավորումներ:

Այս առումով հետաքրքրական և լայն ուսումնասիրության է արժանի Մ. Գալշոյանի գրական ժառանգությունը, որը հարուստ ու բազմաժանր է՝ վեպ-վիպակներից, պատմվածքներից մինչև ակնարկներ, էսսեներ և հրապարակախոսական հոդվածներ:

Նրա ստեղծագործություններում մշտապես զուգորդվում են ներկա-անցյալ պատկերները՝ որպես ապագայի կանխատեսում: Մ. Գալշոյանի արձակը, շնորհիվ ժամանակների հետաքրքիր զուգորդման, առաջադրում է

որքան անցյալի, նույնքան էլ մերօրյա խնդիրներ: Հիշողությունների անսպառ շղթան զուգորդվում է «երկրի քաղցր կարոտի» հետ, որով հնարավոր է դառնում ժողովրդի անցյալը, պատմությունը կապել նրա այսօրվա ճակատագրին, գնահատել իր տեղը այդ ճակատագրում: Դրանով հերոսների մասին եղած պատմությունները վերաճում են ժողովրդի կյանքի մի ամբողջ դարաշրջանի պատմության:

Գալշոյանի ստեղծագործություններն ավելի խորքային ընկալելու համար նախ պետք է ամբողջովին բացահայտել երկից երկ փոխանցվող ստեղծագործության ներքին ընթացքը, ներքին թեման, որի բանալին տալիս են նրա ակնարկներն ու հոդվածները:

«Ավանգարդ» թերթում և «Գարուն» ամսագրում աշխատած տարիներին, լրագրական հոդվածներին զուգընթաց, Գալշոյանը գրում է իր առաջին գործը «**Չորի Միրոն**» վիպակը, որը նրան հասուն գրողի համարում է բերում:

Վիպակը և, առհասարակ, Գալշոյանի բոլոր ստեղծագործությունները չունեն սյուժետային հարուստ նկարագրություններ: Առաջատարը խոհերն են, հերոսների ներքին ապրումներն ու մտածմունքները բացահայտող տեսարանները, որոնք այս դեպքում տեղի են ունենում հիմնականում ճանապարհին: «Ճանապարհը» գրականության մեջ և արվեստում մեծ տարածում գտած մետաֆոր է, որի հիմքերը տանում են չինական գրականություն, մասնավորապես՝ դաոիզմի գաղափարաբանություն և կոնֆուցիականություն:

Եվ ինչպես Թումանյանի Համբոն է Գիքորին ճանապարհին խրատում, այնպես էլ Գալշոյանի Միրոն է պատերազմ գնացող Հարութին խրատ-խորհուրդներ տալիս: Միրոյի խրատ-հորդորները վերաբերում են աշխարհի խաղաղությանը, հայրենիքի պաշտպանությանը, մարդկային արժանապատվությանը և այլ հարցերի: Խորհուրդներին զուգահեռ արթնացող հուշերն աստիճանաբար բացում են կարոտի անհատակ ողբերգությունը: Պատկերվում է Միրոյի կյանքի ողիսականը:

Բայց ինչն է հետաքրքիր. որդուն պատերազմ ուղարկող հոր խոսքերում չկա ատելության կամ վրեժխնդրության կոչ, հորդոր՝ չնայած նրա անցած դաժան ու արյունալի ճանապարհին, մշտապես ուղեկցող կոտորածի, սովի ու ահասարսուռ տեսարանների հիշողություններին:

Միրոն կարևորում է մարդուն, մարդկանց հոգիների հարազատության և միայնակ չզգալու գաղափարը: Մարդն իրեն երբեմն բազմաթիվ մարդկանց շրջապատում մերժված ու լքված է զգում, հոգեպես միայնակ ու անապահով, ստիպված միայնակ է հաղթահարում իրեն բաժին հասած դժվարությունները: Նա կաղապարվում է իր հոգեբերի ու սեփական անկարողության շրջանակներում՝ կորցնելով ապրելու և արարելու

մարդկային բնական պահանջն ու մոտիվացիան, առաջնորդիչ ուժը: «Մարդու ու աշխարհի կողմից մերժված մարդու միակ բարեկամը բնությունն է մնում<sup>1</sup>»: Բայց բավական է հայտնվի մի հարազատ հոգի, և աշխարհը վերստին կիմաստավորվի, կյանքը կվերագտնի նախկին պայծառ գույները: Միրոյի համար այդ հարազատ հոգին մի դեպքում խութեցի հարսն էր՝ Նարեն, մյուս դեպքում՝ Սառան: Միրոն կյանքի հավերժությունը տեսնում էր դրա շարունակականության մեջ: Դա էր պատճառը, որ սիրելի որդուն պատերազմում կորցնելուց հետո նա որոշակի մեկուսացումից հետո որոշում է կրկին «օջախ կազմել»՝ գերդաստանի մեղքն իր «շեփ ու շլինքին» գերեզման չտանելու, տոհմի շառավիղը շարունակելու և, ի վերջո, միայնակ չմեռնելու համար: Անցյալը հավերժացնելու ձգտումը և ժառանգորդության մտահոգությունը խոր արմատներ ունի և հասնում է մինչև մեր ազգային էպոսի ակունքները: Մեծ Մհերը Սասնա տունը կանգուն պահելու համար չէ՞ր, որ զգաց սեփական սխալը և իր մահվան գնով ապահովեց սերունդների կապը:

Միրոյի երրորդ Հարությունը ընտրում է քաղաքային միջավայրն ու համապատասխան մասնագիտություն: Դա Միրոյի համար իսկական ողբերգություն էր: Արդյոք Հարությը հասկանում էր այս բանը: Իհարկե, հասկանում էր, բայց թելադրողը ժամանակն էր ու ժամանակի պահանջը, որի հետ ժամանակակից անհատը չէր կարող հաշվի չնստել, որքան էլ որ դա անընդունելի լիներ ավագ սերնդի համար:

Գալշոյանը չի շեղվում իրականությունից, այլ ցույց է տալիս կյանքի բնականոն ընթացքը, փաստում, որ նորի հզոր շունչը միշտ էլ հանդես է եկել հինի գուգահեռ, հինի, ավանդականի թանձր նստվածքի հետ, որից էլ ծնվում են հակասությունները:

Գալշոյանը, այնուամենայնիվ, լավատես էր: Վիպակի վերջնամասում կա մի սիմվոլիկ պատկեր, որի միջոցով Գալշոյանը ցանկանում է հաստատել այն միտքը, որ նոր սերունդը երբեք չի հրաժարվելու մեր ժողովրդի դարավոր ցավի բեռը կրելուց: Հարութի ներսում խմորվում է ցանկալի նպատակների և լուսավոր երազների մի ամբողջ ծրագիր, որ մշտապես եղել է Միրոյի և հազարավոր միրոների գիշերային տեսիլների փայփայած առարկան: «Մարինե,- ասում է Հարությը,- երկու ամիս հետո կավարտեն: Կաշխատենք միասին և միասին հաշվիչ մեքենա կպատրաստենք, որ Ջոնի ձորից հավաքի Ձորի Միրոյի Խանդութ կնոջ ճիչը,

---

<sup>1</sup> Գալշոյան Մ., Ձորի Միրոն: Վեպ, պատմվածքներ.- Եր.: Սովետ. Գրող, 1983, էջ 60: Հետագա մեջբերումները այս ժողովածուից կրեւրվեն տեքստում՝ էջը նշելով փակագծերում:

երկրի կնճռոտ ճամփաներից՝ Չորի Միրոյի թափառիկ ոտնահետքերը, մեկ-մեկ հավաքի աշխարհի բոլոր պայթյունները, բոլոր ճիչերը...» (էջ 90):

Պատումի եղանակը ոչ միայն ստեղծում է այս կամ այն ժանրի ձևը, այլև ցույց տալիս գրողի օբյեկտիվության կամ սուբյեկտիվության աստիճանը: «Պատմողական մեթոդի հիմնական խնդիրը,- գրում են Ռ. Ուելլեքը և Օս. Ուորրենը,- հեղինակի վերաբերմունքն է իր ստեղծագործության նկատմամբ<sup>2</sup>»:

Տարածության և ժամանակի խնդիրը դիտարկվում է մի քանի տեսանկյուններից՝ որպես ֆիզիկական տարածություն և ժամանակ, որպես փիլիսոփայական հասկացություն և որպես գեղարվեստական-պատկերավոր մտածողության կառուցվածքային-իմաստակիր միավոր արվեստի այս կամ այն համակարգում: Տարածաժամանակային չափումների միասնությունը առաջին անգամ հոգեբան Ուիլսոնսկու հոգեբանության մեջ բնորոշվեց քրոնոտոպ եզրույթով, իսկ հետագայում գրականագետ Բախտինի շնորհիվ լայն տարածում գտավ գրականագիտության մեջ:

Գրական-գեղարվեստական քրոնոտոպում տեղի է ունենում տարածական և ժամանակային նախանշանների միահյուսում՝ իմաստավորված և որոշարկված ամբողջության մեջ: Ժամանակն այստեղ խտանում է, ամրանում, դառնում է գեղարվեստորեն տեսանելի, իսկ տարածությունն առավել լարվում է, ներձգվում է ժամանակի, սյուժեի, պատմության շարժման մեջ: Ժամանակի նշանները բացահայտվում են տարածության մեջ, իսկ տարածությունը իմաստավորվում և չափվում է ժամանակով<sup>3</sup>:

Գալշոյանի արձակին առհասարակ բնորոշ են տարածաժամանակային հետաքրքիր տարատեսակություններ, տեղի, ժամանակի, դրանց օգնությամբ նաև կերպարի, սյուժեի քրոնոտոպային փոխներթափանցումներ, ետևառաջություններ, անհամատեղելի թվացող կառույցների ներդաշնակ համակցումներ:

Այդպիսի առանձնահատկություններով է հարուստ նաև «Բովտուն» վեպը:

«**Բովտուն**» վեպը 1973 թ. արժանացել է Հայաստանի գրողների միության գրական առաջին կարգի մրցանակի, սակայն, այնուամենայնիվ,

---

<sup>2</sup> Ուելլեք Ռ., Ուորրեն Օս., Գրականության տեսություն, Եր., 2008, էջ 330:

<sup>3</sup> Տե՛ս Գրականության տեսության արդի խնդիրներ: Ուսումնական ձեռնարկ. // Գեղարվեստական ժամանակի և տարածության (քրոնոտոպի) խնդիրը գրականության մեջ Ա. Բեքմեզյան // -Եր.: ԵՊՀ հրատ., 2016, 330 էջ, 154-180 էջեր:

գրաքննադատները (Հր. Թամրազյան և այլք) վեպն ամբողջությամբ և լիարժեք չեն մեկնաբանել ու գնահատել՝ այն ներկայացնելով որպես աշխատանքային թեմայով գրված երկ<sup>4</sup>:

Վեպում ներկայացնելով մարդու վերաբնակեցման ճանապարհին առաջացած խնդիրներն ու նրբությունները՝ Գալշոյանը ցույց է տալիս մարդու կապը սեփական ծննդավայրի հող ու ջրին: «Մարդ ծննդավայր չկորցնի, կորցրեց, հաշվե, է՛հ, անարմատ ծառ է. փոթորիկ ուր ուզեց, էնտեղ կքշի<sup>5</sup>»:

Վեպը հետաքրքրական է հատկապես կոմպոզիցիոն միջոցների ամբողջության մեջ քննելիս:

Վեպի կառուցվածքային վերլուծությունը սկսելու ամենից տրամաբանական ուղին թերևս վերնագիրն է, որը բանալի է, ճանապարհ դեպի այն աշխարհը, ուր գործում են տվյալ ստեղծագործության ժամանակը, տարածությունը, կերպարներն ու այն ամենը, ինչը կապվում է պատումի հյուսվածքի հետ: Եվ այսպես. «Բովտուն», ասել է թե մարդկային ցավերով ու բազմատեսակ կրքերով բովված, թրծված մի վայր, որտեղ ապրող մարդկանց կյանքը նման ու միևնույն ժամանակ տարբեր է յուրաքանչյուրի իրականության ընկալման և արտահայտման տեսանկյունից:

Բայց «բովը» նաև ուրիշ իմաստ ունի՝ փորձություն: Եթե մենք այս տեսակետից նայենք վեպի սյուժեին, կտեսնենք, որ նա ավելի խոր իմաստ է պարունակում: Մի պահ մենք նույնիսկ կմոռանանք, որ դեպքերը կատարվում են մեր օրերում և կթվա, թե մեր առջև փոված է նախաստեղծ մի անապատ, որտեղ մարդիկ նախնադարյան առաջին գործիքներով քարը հող են դարձնում, քարի վրա հաց աճեցնում, այսինքն՝ զցում են առաջին քաղաքակրթության հիմքերը: Ահա այս անձոռնի քարի տակ մի կտոր հաց է ընկած, պետք է ջարդել քարը և խլել այդ հացը: Եվ հենց որ մենք հասնում ենք այդ երկրորդ, ավելի խոր սյուժետային մակարդակին, աննկատ փոխվում է նաև պատումի ընթացքը՝ ձեռք բերելով, «աստվածաշնչյան» դանդաղ ռիթմայնություն. «Տնամերձերից քար են կտրել՝ պարսպել տնամերձերը: Տնամերձերից քար են կտրել թափել պարսպից դուրս: Տնամերձերից քար են կտրել...» (էջ 14):

---

<sup>4</sup> Գրիգորյան Վ., Մուշեղ Գալշոյան. ստեղծագործությունը. Եր.: 1998, էջ 65:

<sup>5</sup> Գալշոյան Մ., Բովտուն: Վեպ, էսսեներ, ակնարկներ, հոդվածներ, Եր., 1982, էջ 48: Հետագա մեջբերումները սույն ժողովածուից կրեքվեն տեքստում՝ էջը նշելով փակագծերում:

Քննելով Մ. Գալշոյանի «Բովտուն» վեպը՝ նկատում ենք, որ կոմպոզիցիոն ձևերից կիրառվել են երկխոսությունը, մենախոսությունը, հուշ-վերհուշը, կոմպոզիցիոն միջոցներից՝ կրկնությունները, տարածաժամանակային անցումները, դետալայնություն, բնանկարը, դիմանկարը և գույների ու բույրերի գեղագիտությունը:

Այսպիսի բազմազանությունը ստեղծագործությունը կոմպոզիցիոն առումով դարձնում է բազմապլան, բազմաշերտ և պոլիֆոնիկ կամ բազմաձայն:

Բազմաշերտ ու բազմաձայն է նաև Գալշոյանի փոքր արձակը, որտեղ էլ հատկապես դրսևորվել է հեղինակի ստեղծագործական ինքնատիպությունը:

Գալշոյանի պատմվածքներն ամփոփվել են *«Մարութա սարի ամպեր»* ընդհանուր ժողովածուի մեջ և լույս տեսել 1981 թվականին՝ հեղինակի մահից մեկ տարի անց: Ժողովածուն ներկայի և անցյալի իմաստավորման ուրույն գեղարվեստական արտահայտություն է: Այն գաղափարական նպատակասլացությամբ, գեղարվեստական մտածողության ինքնատիպությամբ հայ գրականության լավագույն շարքերից է, որտեղ Գալշոյանը վերստեղծում է մի աշխարհ, որը որքան իրական, նույնքան էլ առասպելական է՝ արտահայտման եղանակի կերպարային գեղարվեստական մտածողությամբ:

Ոգու վավերագրությունը *«Մարութա սարի ամպեր»* ժողովածուի գլխավոր արժանիքներից մեկն է: Նույն սկզբունքով է գրված և Կոմիտասի կյանքի ու գործի առանձին դրվագներն արտացոլող *«Օիրանի ծառ»* (1969) փոքրիկ պատմվածաշարը:

Հեղինակը, որը չի ապրել երգրում, չի տեսել այնտեղի բնությունն ու կյանքը, չի ապրել այնտեղի առօրյայով ու կենցաղով, այդ ամենը տեսնում և նկարագրում է իր գաղթական հարազատների աչքերով ու սրտով, սակայն գրողական մեծ երևակայության, վարպետության և լրագրողական-հետազոտական աշխատանքների շնորհիվ:

Պատմվածքների հերոսներից շատերին տեսնում ենք նաև Գալշոյանի ակնարկներում: Առհասարակ մի փոքր դժվար է որոշ գործեր բնորոշել ժանրային առումով. պատմվածքներից մի քանիսը (*«Քեռի Թորոսը»*, *«Օովասարի Օհանը»* և այլն), ասես, մի յուրահատուկ կառույց են, որոնք բնորոշ են ակնարկային ժանրին. պատմվածքի ընդհանուր բովանդակության մեջ հուշը պատմվում է ոչ թե պարզ սյուժեի, այլ մի շարք սյուժեների համադրման միջոցով, որոնք տեքստում «ձուլվում են» հերոսի մտքի «ուղղությանը»: Հուշագրության ձևն այս դեպքում բովանդակության ընկալումից ազգային կյանքի արտացոլման ճանապարհով վերաճում է կեցության խոր եզրերը ընդգրկող փիլիսոփայության:

Գալշոյանի հերոսներին հատուկ են անկանխատեսելի և առաջին հայացքից անհեթեթ թվացող, ծուռ արարքները, որոնք հասկանալի են դառնում նրանց կյանքի մանրամասներին ծանոթանալուց հետո:

*Հոգեվերլուծությունը* հաստատում է, որ վաղ ձևավորվող կյանքի փորձը բերում է ներքին աշխարհների կազմավորմանը: Այսինքն՝ անձի ներքնաշխարհի ձևավորումը տեղի է ունենում շատ վաղ մանկության շրջանում, որն արդեն իրենից ներկայացնում է ողջ կյանքի ընթացքի կառուցվածքավորված հիմքը՝ հոգեկան իրականությունը: Մանկության շրջանում ձևավորված գիտակցությունը և ներքնաշխարհը պարբերաբար փոփոխվում է տազնապից խուսափելու նպատակով<sup>6</sup>:

Հոգեկանի գաղտնարաններում թաքնված ու մոռացված ապրումները, կրքերն ու զգացմունքները պատեհ առիթով կարող են «արթնանալ» եւ «ներխուժել» բանականության տիրույթներ՝ առաջացնելով մարդու նյարդային համակարգի բնականոն գործունեության արմատական խախտումներ:

Միայն հոգեվերլուծությամբ կարելի է մեկնաբանել, թե ինչ<sup>7</sup> է իսելագարվում Օովասարի Օհանը, ինչ<sup>8</sup> է անլուրջ ու թեթևամիտ սպայի խոսքերից խորը վիրավորված դաշտապահ Մոսին դառնում հաշմանդամ, քեռի Թորոսը կտրում կոկորդը, ինչ<sup>9</sup> է Տիգրանն ակամա դառնում մեղապարտ, ծերունի Մամփրեն որոշում սովորել հայոց տառերը, ծերունիներին տասարդական կործանող ապրում սիրո տառապանքը...

Մ. Գալշոյանի պատմվածքներն առանձնանում են հոգեբանական համոզությամբ, ինչի շնորհիվ ապահովվում է գեղարվեստական հաջողվածությունը մի շարք գործերի, որոնք ունեն *նովելային* ընդգծված բնույթ («Ներսեն», «Խուրեցի Ափրեն», «Թաթոն», «Մեղապարտը»):

Գալշոյանին խորթ էին եղեռնի ահասարսուռ, արյունալի տեսարանների նկարագրությունները. նա հոգու մեկնիչ էր: Սակայն որքան էլ հեղինակը խուսափի կոտորածի արյունալի տեսարաններից, այնուամենայնիվ նրա գրեթե բոլոր գործերում ներկա է *զենքը*՝ որպես հզորության և պաշտպանվածության խորհրդանիշ: Մի խորհրդանիշ, որի բացակայության պատճառով էլ մարդիկ հայտնվեցին ողբերգական իրավիճակում՝ դառնալով բնավեր հավք: Եթե նրանք թշնամուն դիմավորելիս զենք ունենային...

Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված է Գալշոյանի և նրա կերտած հերոսների առանձնահատուկ հարգանքն ու վերաբերմունքը զենքի

---

<sup>6</sup> Ֆրոյդ Զ., Հոգեվերլուծության ներածություն, Եր., «Զանգակ-97», 2002 (թարգմ. և վերջաբանը Ալբերտ Նալչաջյանի), էջ 360:

նկատմամբ: Ձենքի նկատմամբ հարգանքն է ստիպում Բազե Առաքելին զենքը ձեռքում պահել, ինչի պատճառով էլ պատահական արձակված փամփուշը սպանում է հերոսին («Պատրանք»): Հատկանշական և խորհրդավոր է այն փաստը, որ նույն ճակատագրին է արժանացել նաև ինքը՝ Գալշոյանը:

«Մեղապարտք» պատմվածքում Հակեն ևս մեծ ակնածանքով էր վերաբերվում պահակության համար Տիգրանին վստահված հրացանին՝ ընդգծելով դրա առկայության կարևորությունը «կոտորումի ժամանակ»:

Բնության հարազատության, նկարագրությունների, մարդ-բնություն կոնցեպցիայի առումով Գալշոյանի ստեղծագործությունները մեծ առնչություններ ունեն **Հրանտ Մաթևոսյանի** ստեղծագործությունների հետ: Մաթևոսյանի ստեղծագործական որոնումները հանգում են կեցության փիլիսոփայական ու բարոյական հիմքերին, աշխարհի էպիկական ամբողջականությանը, դրանց ընկալմանը անհատի կողմից: Երկու հեղինակներն էլ շատ լավ գգում են բնությունը, կենցաղը, գրում են հնարագետ ու հյութեղ: Նրանց առավելությունը կենցաղի ամենախասարակ փաստերի և երևույթների մեջ նոր պատմության զարկերակն ու շունչը տեսնելն է, երեկվա մարդու մեջ նոր, ժամանակակից մարդուն դիտարկելը:

Գյուղի, հողի թեմային անդրադարձել է նաև **Վարդգես Պետրոսյանը** («Մենավոր ընկուզենին»), ում համար ևս այս թեման ժողովրդի կյանքի հրատապ հասարակական և բարոյական խնդիրների հնչողություն ունի: Գյուղի խորհրդանիշն է մենավոր ընկուզենին, որն ունի ամուր ու խորն արմատներ: Ժամանակների անքակտելի կապի մեջ է հեղինակը տեսնում հայրենի բարձր արժեքների պահպանման մեջ:

Բնության հետ Մ. Գալշոյանի հերոսի կապն այնքան ամուր է, որ նա մեծ ցավով է ընդունում հող ու ջրից, բնությունից մարդու աստիճանական հեռանալը: Ռադիոընդունիչը, հեծանիվը, մեքենան ժխտող հանդապահ **Մոսեն («Նաշտասպահը»)** Թումանյանի Օհաննես բիձու նման («Երկաթուղու շինությունը») ներքին պայքարի մեջ է ժամանակակից տեխնիկայի միջոցների, օրեցօր փոփոխվող արտաքին աշխարհի փոփոխությունների հետ՝ համարելով, որ այդպիսով խախտվում է բնության ներդաշնակությունը: Մոսին դժգոհ է նաև ժամանակակից դասավանդման մեթոդներից, որոնք բնության գրկում մոտիկից քար ու թուփ ուսումնասիրելու, հայրենի եզերքի բոլոր անկյունները գործնականում ճանաչելու փոխարեն նախատեսում են դասն անցկացնել բնությունից ու բնականից կտրված դասասենյակում, բարդ ու խրթին լեզվով գրվածք դասագրքերի առաջ:

Իսահակյանի Մաադիի նման իր վերջին գարունն ապրող, բնությամբ ու աստղերով հիացող Թորոսը, ով իր ձեռքով շենացրել էր շուրջբոլորը, ընկուզենի տնկել, կրկին ապավինում է բնությանը. (**«Քեռի Թորոս»**):

«Հիվանդ մարդկանց վերջին, ամենավերջին հույսը էլի բնությունն է...», (էջ 37) - Քեռի Թորոսի այս խոսքերը հարազատ են ոչ միայն Գալշոյանի ստեղծագործությունների բոլոր հերոսներին, այլև հենց իրեն՝ հեղինակին:

Բացի հնի ու նորի, ներկայի և անցյալի պատկերային հարաբերություններից, Գալշոյանի պատմվածքները հարուստ են նաև **հավանականի և իրագործվածի պատկերային հարաբերություններով**:

Հավանականի և իրագործվածի փիլիսոփայական հարաբերության քննությունը ենթադրում է գրական ստեղծագործության կառուցվածքի խոր վերլուծություն: Այս դեպքում անհրաժեշտ է առաջնորդվել փիլիսոփայական և կառուցվածքաբանական մեթոդներով, հասնել վերացարկման որոշակի մակարդակի և դուրս բերել պատկերային հարաբերությունների ընդհանրական մոդելներ:

**Հավանականի և իրագործվածի** փիլիսոփայական համապատկերում ուշագրավ է հատկապես **«Աղորիքը»** պատմվածքը: Այստեղ պատկերգործողությունները պատկանում են երկու հարթությունների. դրանցից շատերը ծնունդ են կերպարի ցանկության կամ ենթադրության: Արդյունքում ձևավորվում են երկու հարթություններին պատկանող պատկերներ:

Բոլոր այն պատկեր գործողությունները, որոնք ծնունդ են ցանկության և ենթադրության, համապատասխանում են կյանքի բնական օրինաչափություններին և չեն համընկնում իրագործված գործողությունների հետ, պատկանում են հավանականի հարթությանը: Հավանականի ոլորտը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրագործվածից որոշակիորեն տարբերվող, կյանքի բնական օրինաչափություններին համապատասխան, տվյալ երկում հիշատակվող, բայց չիրագործված գործողությունների համագումար: Այդ պատկերները կարևորագույն նշանակություն ունեն գրական ստեղծագործության կառուցվածքում:

Ըստ հոգեբանական հիմքի հավանականի հարթության պատկերները բաժանվում են երկու խմբի՝ ենթադրելի հավանական և ցանկալի հավանական: Այստեղ մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, թե հավանականի հարթության պատկերներն ինչ հոգեվիճակի ծնունդ են<sup>7</sup>:

---

<sup>7</sup> Տե՛ս՝ Մանուչարյան Կ., Հավանականի և իրագործվածի փիլիսոփայական հայեցակերպերը գրական երկի կառուցվածքում, Լեզու, խոսք, իրականություն,

Պատերազմի վերջին տարին (1945) Խալեին երկու մեծ ուրախություն է բերում՝ խաղաղություն և առատ հունձք:

Ուրախությունն ընդհատվում է ցանկալի հավանական պատկերներով.

«Աղջիկն ու հարսը... Հարսը... - Հե՛յ գիդի. լիներ ու որդիներից մեկը, կովի դաշտում կորած որդիներից մեկը... մեկը, գոնե Սարհատը, որ ջահել կնոջն ու մատղաշներին թողած կռիվ գնաց ու չկա, լիներ ու վերադառնար... Խալեն թե բախտ ունի. թե կորած որդիներից մեկն ու մեկը պիտի հայտնվի, այդ մեկը թող լինի Սարհատը... Սարհատը գա, Խալեն անարատ ու արդար այս ցորենից տաք հաց կբաժանի գյուղով մեկ, գինի կբերի, ուրախություն կանի, այս արդար ու անարատ ցորենից...» (էջ 106):

Ցանկալի հավանական պատկերները շարունակվում են ենթադրելի հավանական պատկերներով. «-Ուշ է՝ կրիմ-լցնիմ մեջ ամբարին ու էրթամ գործի,- Խալեն հա շտապեցնում էր իրեն ու հա պտտվում շեղջի բուրբը. ցորենի կույտից բաժանվել չէր կարող»: Հաջորդում են անցյալում իրագործված մղձավանջային հիշողությունների տեսարանները. ցորենի առատ շեղջ էրգրում էլ էր ունեցել, սակայն թուրք հարկահանները ամբողջը տարել էին:

Ապրած դժվարին կյանքի փորձը Խալեին ստիպում է վատ նախագագցում ունենալ. հնարավոր չէ երկու երնեկ միաժամանակ: Սա ողբերգություն է, տառապած մարդու հոգեբանության ճշգրիտ արտացոլում: Առատ բերքի ուրախությունը թունավորվում է հավանական փորձանքի սպասումով:

Պատմվածքում նկատում ենք նաև հավանականի հարթության այնպիսի պատկեր, որ կրում է ն՝ ենթադրելիի, ն՝ ցանկալիի տարրեր. «Հարսնուկ բոբիկ... հարսնուկ բոբիկ ու չիփլախ: -Եթե ոչ մեկին ոչ մի մազ չգնի, հարսին, ճիտքը ծուռ մնացած հարսին Խալեն ոտից գլուխ հագցնելու է: ...Հա փորձում էր մինչև վերջ իր աշխօրի ու հասանելիք բերքի հաշիվը անել, բայց ոչինչ չէր ստացվում: Իսկ որ ահագին ցորեն ու գարի է ստանալու՝ հաստատ է ու հաստատ: Երկուսուկես կոտ հաշվապահի հորը պարտք է՝ կտա, ձմռան աղունը կառանձնացնի, մնացածը կտանի շուկա: Իսկ ամբարը... Չէ՛, ամբարին ձեռք չի տա, մինչև գարուն մաբարի բերանը չի բացի: -Ազնոն բոբիկ ու չիփլախ: -Ազնոն հասած աղջիկ է. Ազնոյին նմանապես պետք է կարգին հագցնել, ինչ հարսի համար գնեց, նույնը՝ աղջկան» (էջ 110):

Ցանկալի հավանականի և ենթադրելի հավանականի այս շրջան շարունակվում է մինչև այն պահը, երբ Խալեն ցնցվում է ականջին հասած «հեղե՛ դ» բացականչությունից: Մկսվում են կատաղի հեղեղի դեմ Խալեի ինքնամոռաց պայքարի պատկերները: Յորենի պաշարը ոչնչացնել սպառնացող հեղեղի դեմ կովել-հաղթելուց հետո Խալեն ուրախանում է. «Ու բարին էն է, որ փորձանքն երկնքից էր ու մարդուց չէր» (էջ 114):

Եվ միայն պատմվածքի վերջում է պարզ դառնում, որ հեղեղը ընդամենը Խալեի երևակայության ծնունդն է եղել:

«Եվ երկնքում գոնե աղավնաթն ամպ չկար...» (էջ 115):

Նման ավարտը պատմվածքին հաղորդում է նովելային բնույթ:

Գրողական վարպետության շնորհիվ Գալշոյանը կարողանում է պատմվածքի փոքր տարածքում մի անհատի ճակատագրի ու ողբերգության միջոցով ներկայացնել մի ողջ ժողովրդի ճակատագիր ու ողբերգություն՝ ժամանակային և բովանդակային լայն ընդգրկմամբ:

Մ. Գալշոյանի *«Մարութա սարի ամպերը» բովանդակային, գաղափարական և կառուցվածքային բազմաշերտություն ունեցող* մի ամբողջություն է, ուր պատմվածքից պատմվածք գծագրվում է հեղինակի վարպետությունը:

Գալշոյանը ոչ միայն բարձրաձայնում, ներկայացնում է ժողովրդի ցավը, այլ նաև փորձում գտնել դրա պատճառները: Պատճառների մասին է խորհում նաև Գալշոյանի «մեղապարտ» հերոսը՝ Հակեն (*«Մեղապարտը»*). «...ինչո՞ւ եղավ... ինչո՞ւ եղավ... Չէ՞ որ եղածը մի մարդու գլխին, մի գերդաստանի գլխին եկած փորձանք չէր, այլ ժողովրդի ողբերություն» (էջ 361):

*Գալշոյանի խոսքը* համեմված է ամենաանսպասելի, պատկերավոր և հետաքրքիր փոխաբերություններով: Դրանց միջոցով հեղինակը ստեղծում է պատկերների մի ուրույն աշխարհ, որն իրավամբ կարելի է կոչել գալշոյանական աշխարհ, իր նմանը չունեցող, անկրկնելի և անհամեմատելի աշխարհ:

Գալշոյանի նպատակը պատմությունը վերակենդանացնելը չէր. նրա նպատակը վերաիմաստավորված պատմությունը ապագայի համար միջոց դարձնելն էր:

## Հ. Հակոբյան

### Գալշոյանական գեղաձևումների առանձնահատկությունները ժամանակի գրական զարգացումների համատեքստում

#### Ամփոփում

Հոդվածում ներկայացված է Մ. Գալշոյանի մեծ և փոքր արձակը՝ որպես ազգային ինքնագիտակցության զարթոնքի, պատմական

հիշողության արդիական հնչողության արտահայտություն: Քննության են առնված Գալշոյանի ստեղծագործությունների գաղափարական, գեղագիտական, թեմատիկ, կառուցվածքային և կոմպոզիցիոն առանձնահատկությունները:

**А. Акопян**

**Особенности галшоянских дескрипторов в контексте литературного  
развития времени**

**Резюме**

В статье представлены большая и маленькая проза М. Галшояна - как выражение современного звучания исторической памяти, как пробуждения национального самосознания. Рассмотрены идеологические, эстетические, тематические, структурные и композиционные особенности произведений Галшояна.

**H. Hakobyan**

**The peculiarities of the Galshoyan descriptors in the context of literary  
developments of time**

**Summary**

The article presents the large and small prose of M. Galshoyan as an expression of the modern sound of historical memory as the awakening of national self-consciousness. The ideological, aesthetic, thematic, structural and compositional features of Galshoyan's works are considered.

*Խմբագրություն է ուղարկվել 11.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 15.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

---

---

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ԾՈՎԻՆԱՐ ՇԱՀԻՐՅԱՆ**

Խաչատուր Արուսյանի անվան ՀՊՄՀ  
օտար լեզուների դասավանդման  
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,  
մանկավարժական գիտությունների թեկնածու  
**[tsovinarshahiryan@mail.ru](mailto:tsovinarshahiryan@mail.ru)**

**ԳՈՀԱՐ ԱՄԱԼՅԱՆ**

Խաչատուր Արուսյանի անվան ՀՊՄՀ  
օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի  
ամբիոնի մագիստրոս  
**[amalyangohar@gmail.com](mailto:amalyangohar@gmail.com)**

**ԱՆԳԼԵՐԵՆ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր.** արդյունավետ ընթերցանություն, լեզվական ծրագիր, մանրագնին, ճանաչողական ընթերցանություն, ընկալողական/վերարտադրողական կարողություններ:

**Ключевые слова:** эффективное чтение, языковая программа, детальное, ознакомительное чтение, навыки восприятия и воспроизведения.

**Key words:** effective reading, language curriculum, reading for detail, extensive reading, receptive/productive skills.

Reading, through which we can access worlds of ideas and feelings, as well as the knowledge of the ages and visions of the future, is at once the most extensively researched and the most enigmatic of the language skills. Reading has been investigated from numerous perspectives – by linguists, psychologists, educators and second language researchers. It also plays a critical role in applied linguistics research and in the day-to-day professional life of the language teacher. Effective reading is essential for success in acquiring a second language. After all, reading is the basis of instruction in all aspects of language learning: using textbooks for language courses, writing, revising, developing vocabulary, acquiring grammar, editing, and using computer-assisted language learning programs. Reading instruction, therefore, is an essential component of every second language curriculum.

Reading is a complex type of speech activity connected with a written form of speech. It is the process of looking at a series of written symbols and getting

meaning from them. When we read, we use our eyes to receive written symbols i.e. letters, punctuation marks and spaces and we use our brain to convert them into words, sentences and paragraphs that communicate something to us. It is a receptive skill - through it we receive information. But the complex process of reading also requires the skill of speaking, so that we can pronounce the words that we read. In this sense, reading is also a productive skill in that we are both receiving information and transmitting it.

Reading comprehension is viewed as a complex process which requires active and intentional cognitive effort on the part of the reader. Comprehension is influenced by the reader's purpose, by the type and nature of the text, and by prior knowledge. Reading comprehension is one of the pillars of the act of reading and a process that occurs before and after a person reads a particular piece of writing. It's a multifaceted activity that calls on the reader's thinking and problem-solving skills. Reading comprehension is very important as without it, reading doesn't provide the reader with any information, also with the ability to comprehend what they read, people continue to develop socially, emotionally and intellectually. **Vocabulary knowledge and text comprehension are two important elements which make up the process of reading.** The reader must be able to comprehend the vocabulary used in the writing in order to understand a text. Learners need to continually be taught new words. While being able to understand each distinct word in a text, the learner also must be able to put words together to develop a conception of what it is trying to say. This is the text comprehension. Text comprehension is much more complex. In order to develop reading comprehension readers use many different text comprehension strategies such as answering and generating questions, summarizing and being aware of and using a text's structure to aid comprehension, monitoring for understanding.

Reading is a skill that will empower everyone who learns it. They will be able to benefit from the store of knowledge in printed materials and, ultimately, to contribute to that knowledge. Good teaching enables students to learn to read and read to learn.

The following strategies can help learners with reading. They can be used as *pre-reading*, *while-reading*, and *post-reading* strategies<sup>1</sup>.

- Reading the topic or heading of the passage.

---

<sup>1</sup> Mark Pennington, (2008). *Teaching Reading Strategies*, Pennington Publishing, USA, pp. 313-316.

- Looking at the illustrations and pictures given in the texts.
- Reading the every first sentence of each paragraph in texts.
- Applying the knowledge of the texts they read in their daily activities.
- Skipping the words they do not know the meaning in the texts and keep reading.
- Using skimming and scanning to extract both relevant ideas and main ideas.
- Changing the predictions slightly in order for the better comprehension.

There are different ways to foster reading comprehension:


***Preparing for the reading*** - It is very important that a learner plan ahead and find a quiet and relaxing place to sit before reading as the quiet environment is essential. The teacher picks a word, phrase or picture about a key concept in the text or topic. Next, the teacher begins a discussion with the class around the subject in order that pupils see other ideas related to the idea being studied. The teacher builds background information by activating appropriate prior knowledge through the vocabulary, the form of presentation and self-questioning in order to check what is known of the topic. The teacher may ask the pupils to look at the text and ask questions that may elicit relevant thoughts and memories related to those items. The teacher sets the purpose of reading by asking questions about what the reader wants to know. ***Semantic mapping*** - The main purpose of creating a map is to visually display the meaning-based connections between a word or phrase and to help students identify important ideas and how these ideas fit together. Semantic maps help students, especially struggling students and those with disabilities, to identify, understand, and recall the meaning of words they read in the text. A semantic word map allows students to conceptually explore their knowledge of a new word by mapping it with other related words or phrases similar in meaning to the new word. Semantic mapping remains essential to identify key attributes distinguishing one word from another. But semantic maps provide the additional benefit of helping students visualize how word meanings can be categorized<sup>2</sup>.

There are three components to a semantic map:

---

<sup>2</sup> KembaA.N'Namdi, (2005). *Teaching Reading at the Primary School Level*, UNESCO, France, pp. 51-52.

1. Core question or concept: this is a key word or phrase that is the main focus of the map.
2. Strands: subordinate ideas that help explain or clarify the main concept. These can be generated by the students.
3. Supports: details, inferences and generalization that are related to each strand. Supports clarify the strands and distinguish one strand from another.



Reading varies according to the purpose of reading, nature of reading material and speed of reading required. According to the communicative needs types of reading are the followings: **intensive and extensive reading, prediction, scanning** (search reading), **skimming** (surveying), and **study reading**. The first distinction that can be made is whether the reading is **oral** or **silent**. Oral reading is the act of reading aloud, often used to develop or test reading skills<sup>3</sup>.

Within the category of silent reading, one encounters intensive and extensive reading. During **intensive reading** we take a text, study it line by line, referring at every moment to our dictionary and our grammar, comparing, analyzing, translating and retaining every expression that it contains. It "calls attention to grammatical forms, discourse markers, and other surface structure details for the purpose of understanding literal meaning, implications, rhetorical relationships.

Intensive reading focuses on comprehension of a particular text with no thought being given to whether the features studied in this text will be useful when reading other texts<sup>4</sup>.

---

<sup>3</sup> Brown, H., D., (2001). *Teaching by Principles: An Interactive Approach to Language Pedagogy* (second edition). New York: Longman, p. 254.

<sup>4</sup> Long, M., H., and Richards, J., C., (1987). *Methodology in TESOL: a Book of Readings*, Rowley, Mass.: Newbury house, p. 87.

Such intensive reading usually involves translation and thus comprehension of the text. So, one goal of intensive reading may be comprehension of the text.

**Extensive reading** is carried out to achieve a general understanding of a text. The aims of extensive reading are to build reader confidence and enjoyment

Advantages of extensive reading are that students may develop a "reading habit", gain more confidence in reading, expand sight vocabulary, increase reading comprehension and so on. It is common for both approaches to reading to be used in the same class. For example, where extensive reading is encouraged, the teacher may have all the students read the same text so they can discuss the topic together or learn a specific skill such as writing an outline<sup>5</sup>.

Another type of reading which is analyzed is **prediction**. Prediction means making intelligent guesses about what a book, a section or chapter of a book contains.

This judgment is based on one's assessment of a small sample of the book. This skill is particularly important when choosing what to read. Prediction works better when we know a lot about the subject in question. This is because it is easier for us to make predictions when we can relate the samples of new text to our existing knowledge. On the other hand, when our knowledge of the subject is limited, we will have to stretch our predictive ability in order to predict well.

Making predictions activates students' prior knowledge about the text and helps them make connections between new information and what they already know. By making predictions about the text before, during, and after reading, students use what they already know—as well as what they suppose might happen—to make connections to the text. [14]

**Scanning** or **search reading** is one of the reading skills the reader requires to locate information quickly. To locate specifically required information the reader doesn't need to read the entire text closely. He/she should use the technique of scanning, that is, glancing rapidly through or running his/her eyes over a text rapidly to locate specific information. Such information could be a date, name, a country in a map, a word in a dictionary, or encyclopedia, addresses, topic, or subject matter. Scanning is also known as search reading. The index of the textbook is a useful place for information retrieval through scanning. Most information can be found in an index. However, the important thing here is to

---

<sup>5</sup> Richards, J. C., Bamford J., (1998). *Extensive Reading in the Second Language Classroom*. Cambridge Language Education, pp. 7-8.

find the information as quickly as possible. With practice, the reader becomes faster at scanning by narrowing the area he scans. When scanning, we only try to locate specific information and often we don't even follow the linearity of the passage to do so. We simply let our eyes wander over the text until we find what we are looking for, whether it is a name, a date, or a less specific piece of information. When skimming, we go through the reading material quickly in order to get the gist of it, to know how it is organized, or to get an idea of the tone or the intention of the writer. **Skimming** is also known as **surveying**. It means reading to obtain a general idea of the content of the material. Skimming benefits from good sampling, that is, knowing where to look. This reading skill does not require that you read everything and so depends on good prediction skills. When we want to buy a book from a bookstore or borrow a book from the library, we will need to sample portions of it to get an overall impression of its content; except where it is a book we are very familiar with. This survey is useful so we can discover as quickly as possible its organization, the topics covered, its level of difficulty, any special features, how up-to-date it is, as well as other publication details. The table of a book is a good place to begin the survey<sup>6</sup>.

While skimming students should look for:

**Key Words** - While skimming readers' goal is to grasp the most amount of information about a certain topic in a very quick time and without reading every single word. Hence, they have to look for key words that tell them the main idea of each line they are reading. Although each sentence contains many words, there are keywords. The idea here is that readers will be able to know what is being portrayed in the text by reading only the key words. The key words are primarily the nouns and the verbs of each sentence. For example, if they are reading "**Exercise can help reduce the risks of heart disease**", they can understand the overall meaning of the sentence by only reading the words **exercise, reduce, risks** and **heart disease**. Below are more examples of skimming for key words.

- The **stock market** is **headed** for a **record**.
- **Denver** was **spared** another round of **heavy snow**.
- The **storm stretched** nearly from **Canada to Mexico**.
- Gently **apply** the **medicine** to the area at the **top** of the **lips**.

---

<sup>6</sup> Grellet, F., (2006). *Developing Reading Skills*, Cambridge Language Teaching Library, Cambridge University Press, p. 19

➤ The *process* of *killing* off *bacteria* to *provide territory* for *infections*.

**Topic Sentences** - At times there are sentences within a paragraph that basically summarize everything that readers should have gathered from their reading. For example, in most newspapers the first sentence is usually a topic sentence because it gives them an image of what they are about to read. The rest of the newspaper focuses on the idea presented in the first sentence but with more details.

As a result, many people decide to skim the newspaper by looking at the first sentence of each article and reading those articles whose topic sentence sounds most interesting. Topic sentences are found usually in the first paragraph or the last one depending on what learners are reading. For example, if students are reading a book on physics, a topic sentence might come near the end of the topic because the author is working his way up to reveal that topic sentence<sup>7</sup>.

Each year, new and better technology starts to emerge in the healthcare sector. *We have created many successful heart scanners that enable your patients to see exactly what is harming them.* Many of which saves lives and enables more people to enjoy the many features that life has to offer. Although many companies emerge and die during their lifespan, our company has been running for more than 150 years. Buy a common stock in our company and you will benefit from our prosperity and annual dividends. We will continue to create technology for people worldwide.

There are other strategies of skimming an article. First, learners can skim only the middle section of the article since it usually contains the most important concepts. Second, learners can use a ruler as a pointer for skimming. Third, they can use a method called Zigzag skimming.

**Middle-Section Skimming** - In their nature, paragraphs are arranged so that the most of the important key words fall in the middle area of the lines. Due to this fact, one way to skim a page is to concentrate on the middle section of each line. Learners' aim is to look for key words that will help them get a better understanding of the material.

---

<sup>7</sup> Anne G. Phillips, Peter Elias Sotiriou, (1982). *Steps to Reading Proficiency: Preview Skimming, Rapid Reading, Skimming and Scanning, Critical and Study Reading*, Wadsworth, p. 56.



**Ruler Skimming** - Another way to skim is to use a ruler as a pointer while skimming. In order to do this, learners need to place their ruler under each line that they are skimming while moving their ruler downward in a very smooth pace while skimming. Once again, their goal when using a pointer is to follow it while looking for key words.

**Zigzag Skimming** - The other method of skimming entails using zigzag hand motion while concentrating on the entire page rather than only the middle section. This method is optimum for studying because it allows learners to focus on the overall range of the article. Some people might also prefer to skip lines while using the zigzag hand movement.



In EFL reading comprehension, efficient reading comprehension requires the ability to relate the textual material to one’s own knowledge. Considering the importance of reading process, the teacher should improve the teaching of reading comprehension. Reading skills are very crucial in the development of second

language competence. Second language reading competence needs to be developed consciously.

The study of the theoretical material and the analysis of reading comprehension give us an opportunity to come to the following conclusion.

Reading is considered a linear process by which readers decode a text word by word, linking the words into phrases and then sentences. It is a complex activity that involves both perception and thought. It consists of two related processes: word recognition and comprehension. Reading comprehension is the ability to read the text, process it and understand its meaning. It is a matter of making sense of written language rather than decoding print sound. We draw on our own intelligence and experience to understand a text. It is the best way to improve our understanding of the language. And understanding is the first step to grasping the language.

Reading will open windows to the world, enrich our knowledge of the world, of cultures in other countries and of history and finally it is the main source of language materials.

*We can conclude that good readers:*

- Read extensively
- Integrate information in the text with existing knowledge
- Have a flexible reading style, depending on what they are reading
- Are motivated

The reading process needs continuous practice, development, and refinement.

**Ts. Shahiryan, G. Amalyan**

### **The Development of Types of Reading in English in Basic Schools of**

**Armenia**

#### **Summary**

This article is devoted to the types of reading and the importance of their usage during the educational process in the classes of Armenian schools. The article presents several types of reading: skimming, scanning, reading for detail etc. Readers use different strategies and ways of perception to develop one or another type of reading. Each type of reading serves a different purpose. Knowledge of each type of reading involves different ways of perception, strategies and serves different purposes.

Մ. Էդ. Շահիրյան, Գ. Ամալյան

**ԱՆԳԼԵՐԵՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀՀ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ  
Ամփոփում**

Սույն հոդվածը նվիրված է անգլերենի ընթերցանության տեսակներին և դասապրոցեսի ընթացքում դրանց կիրառման կարևորությանը հայկական դպրոցների բարձր դասարաններում: Հոդվածում ներկայացված են ընթերցանության մի քանի տեսակներ՝ դիտման, որոնողական, մանրազնին ընթերցանություն և այլն: Ընթերցման յուրաքանչյուր տեսակին տիրապետելը ներառում է ընկալման տարբեր ձևեր, ռազմավարություններ և ծառայում է տարբեր նպատակների:

Ц. Эд. Шаирян, Г. Амалян

**Развитие видов чтения английского языка в старших классах основной  
школы в РА  
Резюме**

Данная статья посвящена видам чтения и важности их использования во время учебного процесса в старших классах армянских основных школ. В статье представляются несколько видов чтения: просмотровое чтение (определение основной темы/идеи текста), поисковое чтение (поиск конкретной информации в тексте), детальное чтение (понимание текста не только на уровне содержания, но и смысла) и т.д. Читатели используют различные стратегии и способы восприятия для развития того или иного вида чтения. Каждый вид чтения служит различным целям.

*Խմբագրություն է ուղարկվել 22.03.19*

*Հանձնարարվել է գրախոսության 29.03.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

ԼՈՒՄԻՆԵ ՉԱԼԱԲՅԱՆ, ԱՍՏՂԻԿ ՂԱՓԱՆՑՅԱՆ  
Արագածոտնի մարզի ք. Աշտարակի  
Ն. Աշտարակեցու անվան թիվ 1 հիմնական դպրոց  
[astxikkapancyan@mail.ru](mailto:astxikkapancyan@mail.ru)

### ՀԱՍՏԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԴ ՆԱԽԱՂԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Բանալի բառեր.** նախադասություն, բարդ, համաձայնություն, բաղադրիչներ, միավորներ, կապակցում, հարաբերություն, քերականական հատկանիշներ, շարահարություն, ժամանակներ, գործողություն, համադասություն, ստորադասություն, հարաբերյալներ:

**Ключевые слова:** ключевые слова: предложение, сложное, согласование, компоненты, единицы /соединение/, отоношение, грамматические признаки, синтаксис, времена, действие, подчиненное, сочиненное, управляющее слово.

**Key words:** sentence, compound, sequence, components, units, connectors, intercourse, grammatical, features, syntax, tense forms, activities, coordination, subordination, relative clauses.

Համաձայնությունը նախադասության անդամների, միավորների, բարդ նախադասության բաղադրիչների կապակցման եղանակ է: Բնորոշվում է նրանով, որ կապակցվող եզրերից, անդամներից մեկն ընդունում է մյուսի քերականական հատկանիշներից մեկը կամ մի քանիսը (դեմք, թիվ, հոլով):

Ժամանակակից հայերենի համաձայնությունը քննել են մի շարք լեզվաբաններ: Ըստ Մանուկ Աբեղյանի՝ համաձայնությունը հիմնվում է բառերի ներունակության տրամաբանական հարաբերության վրա, այսինքն լրացումը և լրացյալը թվով, դեմքով, հոլովով դրվում են միակերպ:

Հայերենում ենթական և ստորոգյալը համաձայնում են դեմքով և թվով (Դու քաղցր ես, իմ հո՞ղ հայրենի: Դու պիտի երգես, երգես անդադար):

Եթե ենթական արտահայտված է անձնական դերանունով, ստորոգյալը համաձայնում է անձնական դերանվան դեմքին:

Եթե նախադասության մեջ կան բազմակի ենթականեր, և դրանք տարբեր դեմքի են, ապա ստորոգյալը համաձայնում է ըստ խոսողների դիմային-հաղորդակցական գերադասության, այսինքն՝ դեմքով ամենամոտին. առաջին դեմքի ենթակայի առկայության դեպքում ստորոգյալը դրվում է առաջին դեմքով (ես, դու և նա պայմանավորվեցինք): իսկ եթե առաջին դեմքը բացակայում է, երկրորդ և երրորդ դեմքերի

ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է երկրորդ դեմքի հետ (դու և քույրդ մասնակցելու եք մրցումներին):

Բարդ նախադասության մեջ համաձայնության հարցում կարևոր են գլխավոր անդամների համաձայնության ճիշտ դրսևորումները, որոնցից բխում են մյուս անդամների իմաստային և քերականական ճիշտ համաձայնությունները:

Մեր քննության նյութը բարդ նախադասության մեջ համաձայնության առկայության հարցն է, ինչը լեզվաբանության մեջ դեռևս հստակեցված չէ: Դժվար է բնորոշում տալ՝ կա՞ արդյոք բարդ նախադասության մեջ համաձայնություն, թե՞ ոչ: Քննության ենթարկելու դեպքում պետք է նշել, որ բարդ համադասական նախադասություններում բաղադրիչ նախադասությունների բայ – ստորոգյալների միջև երբեմն առկա է եղանակաժամանակային համաձայնություն, իսկ բարդ ստորադասական նախադասություններում կարևորվում է հարաբերյալների ու հարաբերականների դերը:

Գ. Գարեգինյանը նշում է, որ բարդ համադասական նախադասություններում օգտագործվում են բացարձակ ժամանակներ, այսինքն՝ այնպիսի ժամանակներ, որոնք հարաբերության մեջ են մտնում խոսքի պահի հետ և ոչ թե նույն նախադասության որևէ բաղադրիչի ստորոգյալով արտահայտված գործողության ժամանակի հետ: Օրինակ՝ Հյուսիսը գարնացան, և լռության մի շունչ տիրեց հյուրասրահում:

Աբեղյանը համադասական կապակցությունը բաժանում է մի քանի խմբի՝ ա. շարահարությանը, բ. ցուցական բառերով, գ. համադասական շաղկապներով և շաղկապական բառերով: Նա շարահարությանը կապակցության մի տեսակ է համարում մի քանի ստորոգյալ և մեկ ընդհանուր ենթակա ունեցող նախադասությունը:<sup>3</sup> Այդպիսի նախադասություններում ստորոգյալները նույն եղանակով և նույն ժամանակով դրվելու դեպքում առաջացնում են լիակատար համաձայնություն: Մեծ մասամբ միավորյալ նախադասության մեջ կարելի է համաձայնության որոշ տարբեր նկատել: Ինչ վերաբերվում է համադասական կապակցության մեջ ցուցական դերանունների կատարած դերին, ապա սրանք դրվում են հաջորդող բաղադրիչի նախադասության կազմում և արտահայտում են նախորդ նախադասության կամ նրա որևէ անդամի արտահայտած գաղափարը ընդհանուր կերպով: Եթե արտահայտում է որևէ անդամի արտահայտած իմաստը, ապա տեղի է ունենում մասնակի համաձայնություն, այսինքն՝ ցուցական դերանունը թվով համաձայնում է այն անդամի թվին, որի իմաստն արտահայտում է: Օր.՝ Քո խոսքերն ու արցունքներն ինձ վրա այլևս ազդեցություն չեն գործում. դրանց ես չեմ հավատում:

Սովորաբար բարդ համադասական նախադասությունների բաղադրիչ նախադասություններով արտահայտվող իրողությունները ներկայացվում են կա՛մ նույն ժամանակամիջոցում կատարվող, կա՛մ էլ հաջորդաբար կատարվող գործողություններ: Մեծ մասամբ կրկնադիր համադասական շաղկապներով (և՛... և, թե՛ ... թե և այլն): Օր.՝ Ե՛վ պահանջում ես, և՛ չես համբերում:

Միավորիչ հարաբերություն արտահայտող բարդ համադասական նախադասություններում բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են հետևյալ ժամանակային փոխհարաբերության մեջ. ա. թվարկում և միաժամանակություն արտահայտող, բ. թվարկում և գործողությունների հաջորդականություն արտահայտող: Երկուսի դեպքում էլ բաղադրիչների ստորոգյալների միջև կարող է տեղի ունենալ եղանակաժամանակային համաձայնություն: Ըստ Գարեգինյանի՝ բաղադրիչների ստորոգյալները հանդես են գալիս նույն ժամանակների հինականում նույն ժամանակաձևով. մեծ մասամբ սահմանականի անկատար անցյալով և ներկայով, երբեմն էլ անցյալ կատարյալով, նաև՝ այլ ժամանակաձևերով, իսկ երկրորդ դեպքում՝ մեծ մասամբ սահմանականի անցյալ կատարյալով և պատմական ներկայով:<sup>4</sup> Նկատելի է, որ պատմական ներկայով արտահայտվելու դեպքում ստորոգյալները դրվում են նույն ժամանակաձևով: Օր.՝ Մարգարեանին իր քսան քաջերով կռվում է արաբների դեմ և հաղթում նրանց:

Հակադրական հարաբերություն արտահայտող բարդ համադասական նախադասությունների բաղադրիչների ստորոգյալների միջև եղանակաժամանակային համաձայնություն կարող է կ՛ լինել, կ՛ չլինել: Օր.՝ Նա ոչ թե լռում է, այլ արհամարհում: Նա ոչ թե լռելու է, այլ արհամարհելու է:

Կայուն չէ նաև մեկնական և հարակցական հարաբերություն արտահայտող նախադասությունների բաղադրիչների ստորոգյալների համաձայնությունը: Ինչ վերաբերում է տրոհական բարդ համադասական նախադասություններին, ապա եղանակաժամանակային համաձայնություն է տեղի ունենում այն կառույցներում, որոնցում թվարկվում են փաստեր ու իրողություններ, որոնք փոփոխակի հաջորդականությամբ փոխարինում են իրար: Օր.՝ Մեկ ինձ էր նայում, մեկ նրան էր նայում: Հեռվից լավոր կանչը մեկ լսվում էր, մեկ՝ ընդհատվում:

Մեծ մասամբ բաղադրիչ նախադասությունների բայ – ստորոգյալ համաձայնում են եղանակով և ժամանակով հետևյալ դեպքերում. ա. թվարկում են նույն ենթակայի կողմից կատարվող գործողություններ, բ. արտահայտում են պատմական իրադարձություններ, փաստեր, իրողություններ:

Ինչ վերաբերում է համաձայնությանը բարդ ստորադասական նախադասության մեջ, ապա, ինչպես նշել ենք, այստեղ կարևորվում է հարաբերյալների ու հարաբերականների դերը, որովհետև ստորադասական շաղկապները համաձայնության դրսևորմանը չեն առնչվում: հարաբերյալները կապակցման օժանդակ միջոցներ են, որոնք գերադաս նախադասության կազմում հանդես են գալիս իբրև ձևական անդամ և որին հարաբերում, որի վերացարկված բովանդակությունը որոշակի է դառնում ստորադաս նախադասությամբ: Հարաբերյալ են դառնում ցուցական դերանունների երրորդ շարքը՝ այն, այնչափ, այնքան և այլն, և անձնական դերանուններից երրորդ դեմքը՝ նա, նրանք, ինքը, իրենք: Այս դերանուններից հոլովվողները կարող են գլխավոր նախադասության կազմում հանդես գալ և՛ ուղղական, և՛ թեք հոլովներով, սրանք գլխավոր նախադասության կազմում պահում են իրենց խոսքիմասային իմաստը:

Գարեգինյանը նշում է, որ հարաբերյալի երկրորդականի միջև երևան է գալիս յուրահատուկ շարահյուսական կապ, երբ բացահայտվողը (հարաբերյալը) և բացահայտողը (երկրորդականը) համաձայնում են միմյանց հետ, ինչպես իրենց խոսքիմասային արժեքով, այնպես էլ շարահյուսական պաշտոնով: Հարաբերյալները տարբերվում են ստորադասական շաղկապներից նրանով, որ շարահյուսական պաշտոն են կատարում: Որոշիչ երկրորդական նախադասությունները երկրորդականին կապակցող ամենաընդհանրական դերանունը որ – ն է , որը կարող է համաձայնել հարաբերյալի հետ թվով, երբեմն էլ՝ հոլովով և հոգով (նրանով, որով ..., այն գիրքը, որը ...): Ով, ինչ, որ հարաբերականները թվով համաձայնում են գլխավոր նախադասության այն անդամին, որին փոխարինում է: Օր.՝ Ուզ կարող է բուժել հոգին, որ տանջվում է խղճի խայթից: Դեռ կան մարդիկ, որոնք մարդկային, անկեղծ և ազնիվ են մնում իրենց էությամբ:

Թվային անհամաձայնություն է տեղի ունենում այն դեպքում, երբ եզակի հարաբերյալին լրացնում է հոգնակի հարաբերական: Օր.՝ Հիշում եմ հանկարծ կապույտ աչքեր ծովի, որոնք վաղուց խամրած՝ սպասում են սիրո լույսին: Նման դեպքերը շեղումներ են գրական լեզվի ընդունած օրինաչափությունից և ընդունելի չեն:

Հարաբերական ենթական երկրորդականը գլխավորին կապակցվում է ով, որ, ինչ, ինչ-որ, ով որ դերանուններով, որոնք թվով համաձայնում են հարաբերյալին: Ով-ը հարաբերյալի բացակայության դեպքում համաձայնում է ստորոգյալին: Օր.՝ Ով որ ուժ ունի կովելու և թաքնվում կամ ձեռքը ետ է քաշում, նա մատնիչ է: Եկան՝ ովքեր պարտավոր էին գալ:

Ինչ վերաբերում է նշույթավոր կապակցությամբ ժամանակի պարագա երկրորդականով բարդ նախադասություններին, ապա այստեղ գլխավորը և երկրորդականը ունեն որոշակի փոխապայմանավորվածություն, մասնավորապես, երկրորդականը գլխավորի արտահայտած գործողության ժամանակը նշում է կամ նույն ժամանակամիջոցում կատարվող, կամ էլ նրան նախորդող կամ հաջորդող որևէ այլ գործողության հարաբերությամբ: Ըստ այդմ՝ բաղադրիչների միջև տարբերվում են համաժամանակյա և տարաժամանակյա փոխհարաբերություններ: Վերջիններս համաձայնության առումով կարևություն չեն ներկայացնում, իսկ առաջինում գլխավորի և երկրորդականի արտահայտած գործողությունները համընկնում են լրիվ կամ մասնակի կերպով: Լիակատար համապատասխանության դեպքում բաղադրիչների բայ – ստորոգյալները դրվում են նույն եղանակի նույն ժամանակով, մեծ մասամբ՝ սահմանականի անկատար անցյալով և ներկայով:

Ինչպես տեսնում ենք, ճիշտ, գրագետ և գեղեցիկ խոսք կառուցելու համար անհրաժեշտ է տիրապետել նախադասություն կազմելու արվեստին: Կառուցված նախադասությունը և՛ կառուցվածքային, և՛ իմաստային, և՛ շարահյուսական, և՛ նպատակային, ինչու չէ, հուզական առումներով պետք է ճիշտ կառուցված լինի:

Հատկապես բարդ նախադասություններով մեր միտքն արտահայտելու դեպքում լեզվական որոշ խնդիրների առաջ ենք կանգնում և խուսափում՝ խոսքը կառուցելով ավելի հեշտ և պարզ կառուցվածք ունեցող նախադասություններով:

Մենք դիտարկեցինք համաձայնության դրսևորումները բարդ նախադասության մեջ և կարելի է ասել, որ բարդ համադասական նախադասության կազմում միանգամայն ընդունելի է բաղադրիչ նախադասությունների բայ – ստորոգյալների միջև դրսևորվող եղանակա-ժամանակային համաձայնությունը: Իսկ բարդ ստորադասական նախադասություններում կարևորվում է հիմնականում հարաբերյալների և հարաբերականների դերը, որոնք մեծ մասամբ թվով համաձայնում են: Մակայն սա ևս կայուն օրինաչափություն համարել չենք կարող: Եղանակաժամանակային ձևերի համաձայնության մասին հարկ է նշել, որ պայմանավորված բաղադրիչ նախադասություններից մեկի եղանակով և ժամանակով, մյուսի ստորոգյալը ևս դրվում է նույն եղանակով և ժամանակով:

Բարդ նախադասության մեջ համաձայնության քննությունը ցույց է տալիս, որ երբեմն այն կայուն է, իսկ երբեմն էլ պայմանավորված է խոսքաշարով:

Գրականություն

- 1.Մ. Աբեղյան, Երկեր, հատոր 2, Երևան, 1974, էջ 408
- 2.Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1954, էջ 19
- 3.Մ. Աբեղյան, Երկեր, հատոր 2, Երևան, 1974, էջ 538 - 540
- 4.Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1954, էջ 41
- 5.Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1954, էջ 97

**Լ. Չալաբյան, Ա. Ղափանցյան**

**Համաձայնությունը բարդ նախադասության մեջ  
Ամփոփում**

Մենք դիտարկեցինք համաձայնության դրսևորումները բարդ նախադասության մեջ և կարելի է ասել, որ բարդ համադասական նախադասության կազմում միանգամայն ընդունելի է բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների միջև դրսևորվող եղանակաժամանակային համաձայնությունը: Բսկ բարդ ստորադասական նախադասություններում կարևորվում է հիմնականում հարաբերյալների և հարաբերականների դերը, որոնք մեծ մասամբ թվով համաձայնում են: Սակայն սա ևս կայուն օրինաչափություն համարել չենք կարող: Եղանակաժամանակային ձևերի համաձայնության մասին հարկ է նշել, որ պայմանավորված բաղադրիչ նախադասություններից մեկի եղանակով և ժամանակով, մյուսի ստորոգյալը ևս դրվում է նույն եղանակով և ժամանակով:

Բարդ նախադասության մեջ համաձայնության քննությունը ցույց է տալիս, որ երբեմն այն կայուն է, իսկ երբեմն էլ պայմանավորված է խոսքաշարով:

**Л. Чалабян, А.Капанця**

**Основная школа N1 имени Н.Аштракеци г.Аштрака**

**Согласование в сложном предложении**

**Резюме**

Как видите, для построения правильной, грамотной и красивой речи необходимо овладеть искусству составления предложения. Составленное

предложение и по структурному, и по смысловому, и по синтаксическому, и по целевому смыслу, и почему бы и нет, и эмоционально должно быть составлено правильно.

Мы становимся перед речевыми проблемами при выражении наших мыслей, особенно когда они выражаются в сложных предложениях, и избегая их - выражаем речь предложениями, имеющими более легкую и простую структуру.

Мы рассмотрели форму согласования в сложных предложениях, и можно сказать, что в состав сложносочиненных предложений вполне приемлемо личное согласование между глаголом-сказуемым, проявляющим в компонентных предложениях. А в сложноподчиненных предложениях в основном важна роль управляющего слова и сравнений, которые в большинстве согласуются. Хотя и это мы не можем считать закономерностью. При согласования личных форм нужно отметить, что по варианту и времени одного из обусловленных компонентов предложений, сказуемое другого также ставится в той же форме и времени. В сложных предложениях рассмотрение согласования показывает, что иногда оно устойчиво, а иногда обусловлено предложением.

**L. Chalabyan, A. Ghapantsyan**  
**Ashtarak basic school N1 after Nerses Ashtaraketsy**

### **The sequences in compound sentences**

#### **Summary**

In order to form a correct, iterate an eloquent speech it's necessary to master the art of building a sentence. The sentence should be correctly constructed in terms of structure, meaning, syntax, purpose and why not in emotional coloring.

When we try to express our ideas with compound sentence we come across some linguistic difficulties and we can solve this problem by making up easier and simpler sentences while forming our speech. We have observed how the sequence of tenses are displayed in compound sentences and we can say that the sequence of mood and time between the verb-predicates within the simple sentences as part of a sentence is quite acceptable. Whereas, in complex sentences the role of relative clauses is more important. But this, of course, cannot be considered as a stable pattern. As for the sequence of mood and time it's important to notice that it

depends on the mood and time of the predicate of one of the simple sentences within the compound sentence.

The observation of sequences in a compound sentence shows that sometimes that pattern can be stable in other cases it may depend on the way the speech is formed.

*Խմբագրություն է ուղարկվել 11.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 18.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

---

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր,  
պատմական գիտությունների դոկտոր  
**rafiknahapetyan@mail.ru**

**XV-XVII ԴԴ. ԵՎՐՈՊԱՅԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ**

**Բանալի բառեր.** Եվրոպացի ճանապարհորդներ, ուղևորություն, ուղեգրություն, հայ առևտրականներ, Երևանի բերդ, Թավրիզ, մետաքս, Շահ Թահմասպ:

**Ключевые слова:** европейские путешественники, путешествие, путевые заметки, армянские торговцы, Ереванская крепость, Ташелк, Шах Тахмасп.

**Key words:** european travelers, traveling, notes, Armenian traders, Castle of Yerevan, Tavriz, silk, Shah Tahmasp.

XV-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների՝ Հայաստանի և հայերի մասին թողած ուղեգրական ակնարկները լիարժեքորեն ներառված չեն հայ պատմագիտական գրականության մեջ, մինչդեռ դրանք անմիջական աղբյուրներ ունեն մեր պատմական իրականության հետ, միանգամայն արժանի են հատուկ ուսումնասիրության, առանձին-առանձին թարգմանվելու և ներկայացվելու հայ գիտական հանրությանը, ինչպես դա արված է աղբյուրագրական<sup>1</sup> և վրացական<sup>2</sup> պատմագիտության մեջ, կամ ինչպես ավելի լայն առումով ներկայացված են Կովկասը<sup>3</sup> և Արևելքը<sup>4</sup>: Այդ շրջանի եվրոպացի ուղեգրողները ունեն կարևոր, երբեմն էլ բացառիկ արժեքավոր նյութեր, որոնք վերաբերում են նաև հայոց տնտեսամշակութային ազգագրական բնութագրին:

Սույն հոդվածում կներկայացնենք XV- XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների՝ Հայաստանի և հայերի վերաբերյալ ազգագրական

---

<sup>1</sup> Տե՛ս «Путешественники об Азербайджане», т. 1 (составил **Ямпольский З.**), Баку, 1961:

<sup>2</sup> Տե՛ս **Орловская Н.**, Грузия в литературах Западной Европы XIII-XVIII веков, Тбилиси, 1965:

<sup>3</sup> Տե՛ս **Поппевктов М.**, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, Тбилиси, 1935:

<sup>4</sup> Տե՛ս **Бартольд В.В.**, История изучения Востока в Европе и России, Л., 1926:

տեղեկությունները: Նրանք, լինելով առևտրական տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ, հիմնականում առաջնորդվել են իրենց երկրների քաղաքական շահերով. շրջել են Արևելքի երկրներում, այդ թվում Հայաստանում՝ հումքի աղբյուրներ և վաճառահանման շուկաներ փնտրելու նպատակով, գրի են առել պատմական, աշխարհագրական, դիվանագիտական, առևտրական գործունեության, կրոնադավանաբանական, ինչպես նաև ազգագրական վկայություններ, որոնք ունեն աղբյուրագիտական մեծ արժեք: Ահա թե ինչու Եվրոպացի հեղինակների ուղեգրություններն արժանի են հատուկ ուսումնասիրության: Իհարկե, մեկ հոդվածով անհնար է բոլոր հեղինակներին անդրադառնալ հանգամանորեն: Ուստի ներկայացնում ենք XV-XII դարերի եվրոպացի ճանապարհորդներից մի մասին: Նշենք, որ այս շրջանի մասին արժեքավոր ուսումնասիրություն է հրատարակել Հովհ. Հակոբյանը<sup>5</sup>:

XV դարի 70-ական թթ. օսմանյան բանակում ծառայող վենետիկցի Ջիովանի Մարիա Անջիոլելլոն ուշագրավ վկայություններ է թողել հայկական պատմական տեղավայրերի և հայ բնակչության վերաբերյալ: Այսպես, թուրքական բանակի մատակարարման համար նրանց հպատակ ժողովուրդները, մասնավորապես քրիստոնյա բնակչությունը պարտավոր էր հարկ եղած միջոցին պահանջված չափի ցորեն, գարի և այլ մթերքներ հանձնել, պարտավոր էր նաև բավականաչափ մթերք և անասնակեր տալ բանակի բեռները փոխադրող մարդկանց և կենդանիների համար, հակառակ պարագային համայնքը ենթակա էր պատժի ու դատաստանի (259-268): Անջիոլելլոյի հավաստմամբ՝ աքքնջիները (թուրքական ավարառու զորաջոկատներ – Ռ. Ն) գերեվարում էին տեղական (Երզնկայի) բնակչությանը, հարցուփորձի միջոցով նրանցից քաղում անհրաժեշտ տեղեկություններ տեղանքի, թշնամու (պարսկական.- Ռ.Ն.) առաջապահ ուժերի մասին: Թուրքերը Երզնկայում թալանում են հայ բնակչությանը, եկեղեցին, այրում գրադարանը, սպանում եկեղեցու հոգևոր հովվին, որը նշանավոր փիլիսոփա էր. « ... երբ մեծ **թուրքը** (սուլթանը) լսեց այս մասին, զայրացավ, որովհետև ինչպես ասի, այդ մարդը մեծ փիլիսոփա էր» (265): Նրանց հասցրած տառապանքները այնքան շատ էին, որ տեղացիները հարկադրված «իրենց տավարով ու ինչքերով փախան անմատչելի լեռնային տեղանքները» (նույն տեղում): Այդպիսի ասպատակություններից մեկի

<sup>5</sup> **Հակոբյան Հովհ.** Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ – ԺԶ դար (1253-1582), Երևան, 1932 (այս գրքից հղումների էջերն այսուհետև կտրվեն տեքստում՝ փակագծերի մեջ):

ժամանակ «Երզնկայի հայ բնակչությունը դիմել էր փախուստի» դեպի Եփրատ գետի մյուս ափը:

Անջիոլեյլոն Երզնկա քաղաքը համարում է «Մի գեղեցիկ քաղաք, Փոքր Հայաստանի մի մասը», որտեղից 8 օր հեռավորությամբ հասնում են Մալաթիա(265): Մինչ Երզնկան ներկայացնելը ճանապարհորդը նկարագրում է Սվազ (Մեբաստիա) քաղաքը և նրա մոտով անցնող Լալիս (Հալիս) գետը, նրա ափերը միացնող հսկա կամուրջը:

Ուղեգրության հեղինակը հիշատակում է Աղթամար կղզու Ս.Խաչ եկեղեցու, այն սպասարկող հարյուր վանականների և այն կառավարող մեկ պատրիարքի, կղզու վեց հարյուր տուն հայ քրիստոնյաների մասին (271):

Խարբերդ քաղաքի մասին էլ գրում է. «Այս վայրը լավ է պաշտպանված մարդկանցով և ուներ առատ մթերք» (281):

Ուղեգրության հեղինակը երկու անգամ հիշատակում է Ղարաբաղը (Garabas), ուր «անսահման մի դաշտ կա, և ուր գետեղված է մի ամրոց Կանար (Canar) անունով՝ նրան պատկանող շատ գյուղերով: Այստեղ գործում են մետաքս, որ կոչվում է Կանարյան՝ վայրի անունով» (281): Այս շրջանը, ըստ նրա, շատ հարուստ է: Հիշատակում է նաև Գյուլիստան (Gulustan) բերդը՝ «Մի մեծ և լավ ամրացված բերդ ...» (282):

Հովհ. Հակոբյանի գրքում բերված է նաև «Մի վաճառականի ճանապարհորդությունը Պարսկաստանում» (1511-1520) խորագրով անանուն վաճառականի ուղեգրության հայերեն թարգմանությունը, որտեղ պարունակվում են XV դ. վերջերի և XVI դարի սկզբների՝ հայերին և հայկական բնակավայրերին վերաբերող ուշագրավ տեղեկություններ: Անանուն վաճառականի թողած «Ուղեգրությունը» ներառում է Արևելքի ժողովուրդների կենցաղի, սովորույթների և այցելած քաղաքների մասին նյութեր, որոնք հավաքել է ութ տարի, ութ ամիս (286-287): Իրան ուղևորվել է Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններով՝ Դիարբեքիր – Մերդին ուղեգծով, և գրառել տնտեսական ու ժողովրդագրական բնույթի ուշագրավ վկայություններ: Մանրամասն նկարագրում է Դիարբեքիրի քրիստոնեական եկեղեցիները, դրանց կառուցողական արվեստը:

Ըստ նրա վկայությունների՝ քաղաքում բազմաթիվ են կրոնական հավատքները. «Այստեղ կան բազմաթիվ կրոնական համայնքների մարդիկ, թվով ավելի մեծ, քան մահմեդականները, քրիստոնյա համայնքներն են հույն, հայ և հրեա: Յուրաքանչյուր կրոնն ունի իր առանձին եկեղեցին, իր սեփական արարողությամբ» (293):

Այնուհետև նկարագրում է Մերդին քաղաքի գեղեցկությունը. « ... փառավոր քաղաքը մի նետաձիգ հեռավորության (արձակված նետի հեռավորության չափ) գտնվող բարձր լեռան վրա հզոր ու բարձր պարսպով, քաղաքում ավելի շատ քրիստոնյա հայեր և հրեաներ են ապրում, քան

մահմեդականներ» (293): Քաղաքը գրավում է նրան նաև իր աշխատասեր ու գործունյա մարդկանցով. «Հիրավի (Մերդին քաղաքի) բնակիչները շատ արժանավոր և լավ մարդիկ են: Այստեղ հայ առևտրականները շատ են, կանայք շատ գեղեցիկ ... : Քաղաքը լի է փորված այրերով՝ սենյակներ, պալատ բարձր սանդուղքներով, որոնցով նրանց բնակիչները գետն են իջնում ջուր վերցնելու համար» (նույն տեղում): Ճանապարհորդի ուշադրության ծիրում հայտնված բարեկեցիկ համայնքներից է Դիարբեքիր նահանգի քաղաքներից մեկը՝ Հըսնքեֆը, որի մասին էլ գրում է, թե «... այնտեղ բնակվում են բազմաթիվ քրիստոնյա բնակչություն՝ շատ հարուստ առևտրական մի համայնք» (294-295):

Անանուն ճանապարհորդը հիշատակում է նաև իր այցելած Սդերդ քաղաքը, նշելով, որ այստեղ «ընկույզն ու շագանակը աճում են մեծ քանակությամբ, նույնպես ներկի ստացման համար՝ գոլթոր» (296):

Շատ ուշագրավ են նրա տեղեկությունները Բիթլիսի, Վանի, Ոստանի, Դատվանի, Արճեշի և հարավ-արևմտյան Հայաստանի այլ քաղաքների ու գավառների մասին:

Բիթլիս քաղաքի նկարագրությունից երևում է, որ քաղաքը տեղակայված էր աշխարհագրական բարձր գոտում՝ խստաշունչ կլիմայով, ինչը լրացուցիչ դժվարություններ էր ստեղծում բնակչության համար. «Քաղաքը շատ մեծ չէ և ոչ էլ պարսպապատ, բայց իր կենտրոնում, բլրի վրա ունի մի ամբողջ մեծ և լավ կառուցված: Քաղաքը զետեղված է բարձր լեռների միջև, մի հովտում, այնպես որ ծածկված լինելով՝ ոչ ոք այն չի կարող հեռվից տեսնել: Եվ այդ ամբողջ շրջանը ձյան յուրատեսակ ամբար է, ձյունն ու ձմեռը այստեղ այնքան երկար է տևում, որ տարվա մեջ միայն երեք կամ չորս ամիս է ձյունից ազատվում, որի պատճառով երկրագործ հայ բնակչությունը հացահատիկ չեն կարող ցանել ապրիլի 15-ից կամ 20-ից առաջ» (297):

Հեղինակը խիստ բացասաբար է արտահայտվում տեղացի քուրդ բնակչության վերաբերյալ՝ գրելով, որ. «բնակչության մեծ մասը քուրդ են, անարգ մի ցեղ», որի պատճառով քաղաքում «բարիքներ քիչ են արտադրվում» և «շատ վաճառականներ, որ հիմնականում հայեր են, մեկնում են այս քաղաքից առևտուր անելու Հալեբում, Թավրիզում, Բուրսայում, որովհետև այստեղ ոչինչ չկա գնելու և ոչ էլ որևէ ապրանք մանրավաճառի համար» (298): Նշում է, որ այստեղ հայ քրիստոնյաների թիվը ևս քիչ չէ, բայց նրանք նույնպես բացասական գնահատականի են արժանանում:

Բիթլիսից Դատվան անցնելիս հեղինակը հանգամանալի նկարագրում է Վանա լիճը և նրա շրջակայքը: «Երեք հարյուր մղոն երկարությամբ, հարյուր հիսուն մղոն լայնությամբ է, շատ գետակներ է թափվում

նրա մեջ, իսկ շրջապատի երկիրը՝ շատ բարեբեր է, շուրջը խիտ բնակեցված գյուղերով, բնակիչները՝ հիմնականում հայեր են» (299): Ծովի շուրջը կան յոթ փառավոր ամրոցներ՝ բնակված քրդերով և հայերով: Ծովի արևելյան կողմի ամրոցներ ասելով նկատի ունի Դատվանը, Ոստանը, Վանը և Բերկրին, իսկ արևմտյան կողմի երեք ամրոցներն են՝ Արճեշը, Արծկեն (հեղինակն այն անվանում է Ալջավազ) և Խլաթը: Դատվանը, ըստ ուղեգրողի, հարմար նավահանգիստ է, անցյալում ծառայել է որպես ձմեռանոց, իսկ շրջակա բարձունքը՝ ամառանոց: Ապա մատնանշում է Դատվանի և Ոստանի միջև «ծովում մի մեծ կղզի, ցամաքից երկու մղոն հեռավորության վրա, որն ամբողջությամբ կարծր ժայռ է, վրան՝ փոքր քաղաք՝ երկու մղոն շրջագծով, շատ բազմամարդ բնակչությամբ՝ բացառապես հայերով բնակված, առանց ոչ մի մահմեդականի: Քաղաքը կոչվում է Արմենիկ: Քաղաքն ունի շատ եկեղեցիներ՝ բոլոր հայ քրիստոնյաների պաշտամունքի համար, որոնցից ամենամեծը Ս. Հովհաննեսն է» (300): Եկեղեցին ունի մի զանգակատուն՝ շինված աշտարակի նման, այնքան բարձր, որ նայում է ամբողջ քաղաքի վրա, իսկ դրանց մեջ կա այնքան մեծ մեկը, որ երբ հնչում է զանգը, ձայնը լսվում է ցամաքից ամեն կողմ: Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց, հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով: Այստեղ հողերը խնամքով են մշակված, ամենուրեք գեղեցիկ պարտեզներ են՝ ամեն տեսակ մրգատու ծառերով: Այս շրջանը հաճելի և առողջ կլիմա ունի, ստացվում է մեծ քանակությամբ սպիտակ մեղր, ուղարկվում է Թավրիզ վաճառվելու: Այստեղից Թավրիզ վաճառքի են հանվում նաև օձանելիք և պանիր (301):

Ուղեգրողը Ոստանից մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ հիշատակում է Վանի բերդը՝ քարաժայռ մի լեռան վրա՝ մի մղոնից ավելի շրջագծով, ստորոտում՝ Վան քաղաքն է: Այն, ըստ ուղեգրողի, հիմնականում հայաբնակ է (302):

Արժեքավոր տեղեկություններ են պարունակվում նաև Թավրիզ քաղաքի վերաբերյալ վկայություններում. «Թավրիզ քաղաքում բնակվում են զգալի թվով հայ քրիստոնյաներ, մեծ մասը առևտրական գործունեությամբ և արհեստագործությամբ զբաղվողներ: Այստեղ տղամարդիկ ավելի բարձրահասակ են, քան իր երկրում եվրոպացին, շատ հանդուգն բնավորություն ունեն, պնդակազմ են: Կանայք տղամարդկանց համեմատությամբ կարճ են և ձյան պես սպիտակ» (313):

Ուշագրավ են տեղեկությունները Թավրիզում գործող հարկային քաղաքականության մասին: Նրա հավաստմամբ՝ այնտեղ հայ վաճառականներից գանձում էին ապրանքի գնի 10 տոկոսի հարկ, իսկ մահմեդականներից՝ 5 տոկոս (314): Քաղաքում հարկվում էին անզամ

«պոռնիկները, որոնք հաճախում են հանրային վայրեր, պարտավորված են վճարել ըստ իրենց գեղեցկության, որքան գեղեցիկ լինեն նրանք, այնքան ավելի պիտի վճարեն» (նույն տեղում):

Հաջորդ հիշատակությունները Գյուլիստան և Ալանջախանա բերդերի մասին են: Ալանջախանա բերդը հավանաբար նույն Երնջակն է: Ուղեգրողը նշում է, որ Ալանջախանա ամրոցին մերձ ուղղափառ քրիստոնյաներով բնակված տասներկու գյուղեր կային: Քրիստոնյաններն այս գյուղերում կրոնական արարողությունը կատարում էին հայերեն: Այս գյուղերի եկեղեցիներում պահպանվել են իտալերեն շատ ձեռագրեր, որոնցից երկուսը հանձնվել է հեղինակին. մեկը վերաբերել է աստղաբաշխությանը, մյուսը քերականության կանոններ են: Հովի. Հակոբյանը ամրոցը և նրա շրջակա 12 գյուղերը հիշատակում է Նախիջևանի գավառում (324, ծնթ. 2): Նշված ամրոցը և շրջակա գյուղերը պատկանում էին հայերին: Հայ բնակչությունը հմուտ ծիրանագույն ներկ պատրաստողներ էին: Ուղեգրողի խոսքով, սրանց պատրիարքը (կրոնական առաջնորդը) ամեն տարի երկու մարդ էր ուղարկում պապին՝ խունկի մատուցումով:

XVI դարի 70-ական թթ. մեզ հետաքրքրող աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Պարսկաստանում Վենետիկի Հանրապետության դեսպան Վիչենցո Դ'Ալեսանդրիի գործունեությունը: Իրանում երկար ժամանակ ապրելու ու շահական պալատի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ շփվելու շնորհիվ նա արժեքավոր վկայություններ է հաղորդում ոչ միայն Իրանի և Արևելյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքի, այլև Բիթլիսի, Վանի, Ոստանի, Բերկրիի, Արճեշի և պատմական Հայաստանի հարավային այլ քաղաքների ու հայ բնակչության մասին: Հարավային Հայաստանի այդ տարածքները նա անվանում է Փոքր Հայաստան: Պատմական Հայաստանի գերակշռող մյուս մասն անվանում է «Մեծ Հայաստան»: Հայերով բնակվող գյուղերի մասին գրում է. «Առատություն կա հացահատիկի և այլ բերքերի վերաբերյալ, որ դաշտերը գեղեցիկ են, լավ մշակված, գյուղական շրջաններում սովոր են ջուրը առուններով տանել դաշտերը ջրելու համար. Շաբաթը մեկ տեղում, հաջորդ շաբաթում՝ մի այլ տեղ և այս եղանակով բավականաչափ ջուր են մատակարարում հացահատիկի և որթատունկերի դաշտերին ու այգիներին: Այս տեղերի բնակչությունը մեծ քանակությամբ պահում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ, մասնավորապես ոչխար և այն էլ այնպիսի մեծությամբ, որ ինքը տեսել է Թավրիզի շուկայում, որոնց դմակը կշռում է տասը բիստի՝ ինը ֆունտ» (331): Ի դեպ, նա նշում է նաև, որ Պարսկաստան շատ ոչխար էր արտահանվում Հայաստանից. «... ոչ մի ժողովուրդ աշխարհում ոչխարի միս ավելի չի ուտում, քան

պարսիկները. Սովորության համաձայն ուտում են չորս անգամ, խմելու ջրի առատությունը նպաստում է նրանց մարսողությանը» (345):

Ըստ ԴՄԱլեսանդրիի հավաստումների՝ «իր այցելած քաղաքներում և ավաններում շատ զարդարանք չեն գործածում. ամեն ոք տանը քնում է գետնի վրա, և նրանք, որոնք մի քիչ դիրք ունեն, գործածում են ներքնակ կարպետի վրա, ուրիշները՝ պարզ փսիաթի (խսիր)» (341-345), կահավորման մի անպաճույճ ձև, որը բնորոշ էր նաև XIX դ. վերջի և XX դ. սկզբների գյուղական հայ բնակչությանը<sup>6</sup>:

«Պարսկաստանում,- նշում է նա,- ոչ այլ պետությունների նման իր եկամուտը չի ստանում մաքսերից, որովհետև նրանք գոյություն չունեն այս թագավորության մեջ, բայց նա ստանում է երկրի արտադրության վեցերորդ մասը, հացահատիկներից և այլ բերքերից, որթատունկերից և արոտներից հազար արշին (1 արշինը հավասար է 071 մետրի), հողից տարեվճար վաթսուներկու հատ ոսկի, որ անում է ավելի քան չորս ոսկի *սեկուլին*» (349): Այնուհետև ավելի է մանրամասնում իր տեղեկությունը, թե «արշինը չափ է, և սովորական արտը տասը արշին է, այնպես, որ մի արտի համար վճարվում է կես դուկատ և տները վճարում են իրենց վարձի հինգ տոկոսը: Քրիստոնյաները (նկատի ունի հիմնականում հայերին. – Ռ.Ն.) մի կարգ շրջաններում վճարում են հինգ, ուրիշ շրջաններում յոթ և ութ դուկատ յուրաքանչյուր տան համար» (նույն տեղում):

Սահմանված էր նաև անասունների համար տուրքի չափերը. 40 ոչխարի հոտի համար տարեկան արքունիքին վճարելու էին 15 բիստի կամ 3 դուկատ, 1 կովի համար՝ երկու դուկատի հավասար գումար, բայց արու կենդանիների՝ խոյի, ցուլի համար ազատվում էին տուրքեր վճարելուց: Մրանք են կազմում թագավորի եկամուտը: Ըստ դեսպանի տեղեկագրի՝ թագավորի եկամուտը տարեկան կազմում է երեք միլիոն ոսկի (նույն տեղում):

Դեսպանը դառնորեն գրում է Թահմասպ շահի անգուսպ հարկային քաղաքականության մասին, հատկապես քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ: Այսպես, օրինակ՝ շահը անսպասելի պահանջում է ապահարկ կացության մեջ գտնվող Ջուլֆայի հայ վաճառականներից վճարել ինչպես ներկա, այնպես էլ նախորդ տարիների համար հարկեր ու տուրքեր, որն էլ պատճառ է դառնում «այդ խեղճ քրիստոնյաների կործանմանը»: Այդ նոր

---

<sup>6</sup> Տե՛ս *Նահապետյան Ռ.*, Գերդաստանական տունը և կենցաղը Աղձնիքի Ազնվացձոր գավառում. - «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1, էջ 235-243, *նույնի՝* Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (Պատմաազգագրական ուսումնասիրություն), Երևան, 2004, էջ 86-108:

հարկային պահանջները նրանց ներկայացնելու համար շահը Ջուլֆա է ուղարկում արքունական պալատի տնտես, հարկահան Սուլթան Հայդար Միրզային: Վերջինս նրանցից գանձում է քսանհինգ բեռ կտորեղեն և շատ ավելի, քանզի շահ Թահմասպը սովորություն ուներ օրական հիսուն անգամ փոխել իր հագի զգեստները, որոնք ապա տասն անգամ բարձր գներով պարտավորեցնում էր գնել հարուստներին: Շահը վաճառքի էր հանում նաև իր գործածած գոհարեղենը և կնքում այլ առևտրական գործարքներ (340):

Դեսպանի տեղեկագիր-զեկուցագրում ակնարկ կա նաև պարսկական երկրի կաշառակեր թագավորների մասին, որոնք պետությունից աշխատավարձ չէին ստանում և արտոնված էին կաշառք վերցնել: Նրանց գործողությունների նկատմամբ չի եղել վերահսկողություն, երկրի թագավորը դատական գործերի խնդրում ոչ խորհում էր և ոչ էլ մտահոգվում: Հենց սրանով է պայմանավորված եղել, որ ամբողջ շահական պետության մեջ ճանապարհներն անապահով էին, և նույնիսկ իրենց տներում մարդը վտանգի տակ էր, քանզի գրեթե բոլոր դատավորները կաշառակեր էին (337-338):

Իտալացի դեսպանի վկայությամբ պարսկա-թուրքական երկարատև (1512-1639 թթ.) պատերազմների պատճառով ավերված էին երկու պետությունների միջև սահման կազմող հայկական քաղաքներն ու գյուղերը, այդ թվում նաև Կարսը, ըստ որում՝ շահ Թահմասպը քանդել է տվել սահմանի երկայնքով, 6 օրվա հեռավորությամբ բոլոր ամրոցները, որպեսզի թուրքերը դրանք գրավելու շահագրգռություն չունենան (352):

Անգլիացի Անթոնի Ջենկինսընի «Ուղեգրությունը» (1557-1572 թթ.) նույնպես կարևոր սկզբնաղբյուր է Հայաստանի և հայերի պատմատնտեսական և կենցաղա-մշակութային կյանքի վերաբերյալ: Այս ուղեգրողը պարսկա-թուրքական պատերազմները բնորոշում էր որպես մի պայքար, որն ուղղված էր առևտրական ուղիների և առևտրի գլխավոր առարկայի՝ հում մետաքսին տիրանալու համար:

Անգլիական առևտրական կապիտալի՝ Արևելքի առևտրական նոր ուղիների որոնման նախակարապետը կարելի է համարել Անթոնի Ջենկինսընին: Վերջինս Եղիսաբեթ թագուհու դեսպանն էր և Լոնդոնի Մոսկովյան ընկերության գործակատար: Նրա ուղեգրությունում դեպի Արևելք, հատկապես դեպի Պարսկաստան կատարած ուղևորությունների ընթացքում գրառված զգալի տեղեկություններ են հաղորդվում նաև պարսկական գերիշխանության տակ գտնվող Հայաստանի տնտեսական և քաղաքական կացության վերաբերյալ:

Ջենկինսընը ներկայացնում է *Արաշ* անվամբ քաղաքը, բայց սխալմամբ վրացական սահմանի վրա հիշատակելով, քանի որ դա նույն Շիրվանն է: Հեղինակը Շամախի քաղաքի հարևանությամբ գտնվող Արաշը

ներկայացրել է որպես հայերով բնակեցված քաղաք, բարգավաճ առևտրական կենտրոն, որտեղ մշակվում է ամենամեծ առատությամբ մետաքս, և դրանց գնումների համար աշխույժ առևտուր էին անում թուրքերը և այլ օտարականներ: Այստեղ նույնպես կարելի է ձեռք բերել զանազան ապրանքներ՝ կոշտ ու նուրբ **գլթոր**, բամբակ, բուրդ, պաղլեղ (շիբ), հում մետաքս՝ այդ երկրի բնական արտադրանք:

Շամախի քաղաքից ոչ շատ հեռու հիշատակում է Գյուլիստան ամրոցը, դրանից ոչ շատ հեռու՝ մի կուսանոց (նկատի ունի Կուսանաց անապատը – Ռ. Ն.) (372): Գյուլիստանից ոչ շատ հեռու գտնվում է նաև XVII դարում հիմնված Ս. Ամենափրկիչ վանքը: Այս տեղավայրերը պատմական Արցախն են, քանզի վաճառականի նկարագրությունները հիմնովին համընկնում են դրան: Հովհ. Հակոբյանի կարծիքով, Արաշը հայկական Արցախի հին անվան աղավաղված ձևն է (375, ծնթ. 1): Եվրոպացի ճանապարհորդների բարեհաջող վերադարձի ճանապարհը դեպի Վրաստան, ապա Ռուսաստան և Անգլիա կազմակերպում են Արաշ քաղաքի «մի կարգ հայ վաճառականները» (391):

Անգլիական առևտրական ընկերություններին հետաքրքրել է պարսկական պետությունից հետևյալ ապրանքների ներմուծումը. 1. հում մետաքս, 2. պղպեղ, 3. կոճապղպեղ, 4. մշկընկույզ, 5. ծծումբ, 6. պաղլեղ, 7. բրինձ, 8. գլթոր, 9. մեխակ, գեղձ (փայտ) աղեղի համար (406):

Պարսկաստանից Անգլիա հասցվող ապրանքների մեջ կարևորվում էին նաև ամեն տեսակ համեմունքները, դեղորայքը, մարգարիտն ու թանկագին քարերը, նմանապես զանազան տեսակի գորգերը, որոնց առևտրում աչքի ընկնող տեղ էին գրավում հայերը: Իսկ Պարսկաստանում անգլիական ամեն տեսակի կտորեղենի մեծ պահանջարկ կար՝ վառ գույներով՝ որդան կարմիր՝ բոտրագույն, կանաչավուն, մանիշակագույն՝ նուրբ կարմիրն առավել չափով ու մի քիչ սև՝ կանանց հագուստի համար: Առավել մեծ էր պահանջարկը Լոնդոնի կերպասների, **կամլոտ** տիպի՝ մետաքսի և բրդի խառնուրդ և վառ գույնի՝ կանաչ, ծիրանագույն և նուրբ կարմիր թավիշ, ոսկյա կերպասի, դիպակ և բեհեզ [մետաքս, ոսկե թելերով հյուսված – Ռ. Ն.] կտորեղենների նկատմամբ (408-409): Առևտրական գործարքներում, ինչպես ասված է անգլիացի գործարար Արթըր Էդվըրդսի նամակում, որ գրված է 1566 թ. օգոստոսին Շամախի քաղաքում՝ ուղղված Լոնդոնի Մոսկովյան առևտրական ընկերությանը, մեծ է տեղացի հայերի, մասնավորաբար նաև Հալեպ քաղաքի հայ առևտրականների մասնակցությունը անգլիական և վենետիկցիների առևտրին: «Ըստ տեղեկության, - ասվում է նամակում, - հայերը և ինչպես ես էլ նկատում եմ, Հալեպից ամեն տարի բերում են չորս-հինգ և վեց հազար կտոր կրքսեններ և կերպասներ: ... հայերի մի գյուղից տարեկան 400 ու 500 ջորի բեռ մետաքս

են փոխադրում Հալեբ, և այնտեղից բերում են (Պարսկաստան) 800 կամ մի հազար ջորի բեռ *կրքսեներ* և Վենետիկի կերպասներ» (411-412): Այդ նամակում նաև ասված է, որ հայ առևտրականներին պատվիրվում է անգլիացի վաճառական գործարք կատարողների կողմից՝ Հնդկաստանից հայթայթել նաև «ամեն տեսակ համեմունքներ, պղպեղ, մշկընկույզ, (հնդրնկույզ՝ արևադարձային մշտադալար ծառի պտուղներ իբրև համեմունք – Ռ. Ն.), կինամոն (դարչին)» (413): 1568 թ. անգլիական առևտրական գործակալների նամակներում և ուղեգրություններում աներկբա խոսվում է հայ առևտրականների մենաշնորհի, Վենետիկի առևտրական գործակալության հետ նրանց համագործակցության և նրանց դեմ մրցակցային պայքար կազմակերպելու և անհաջողությունների մատնվելու մասին:

Անգլիացի վաճառական Ջոն Նյուբերին (1521-1582 թթ.), այցելելով Պարսկաստան, լինում է նաև Արևելյան Հայաստանում, Երևանում: Թավրիզի հայկական եկեղեցում ներկա է լինում սաղմոսի և պատարագի արարողակարգին: Պատարագի սկզբում, ըստ նրա, մարդիկ համբուրում են իրար, իսկ պատարագից հետո համբուրում են Սուրբ գիրքը և վայելում սուրբ նշխարը, աղբատներին բաժանում են ապուր և հաց (452): Նա թողել է Թավրիզի հայերի չորեքշաբթի և ուրբաթ օրերին պաս պահելու վերաբերյալ նկարագրություն:

Վաճառականը նշում է նաև «Հայաստանի Երզնկա և Էրզրում քաղաքների հայության լավ ապրանքների՝ մետաքս, սաթին՝ աթլաս կոչված կտորի մեծ պահանջարկի մասին: Արաքս գետի ափին գտնվող Ջուլֆա [Ջուղա] քաղաքի մասին խոսելիս, հիշատակում է, որ քաղաքի բնակչության մեծ մասը հայեր են, երեք հազար տուն կա, յոթ եկեղեցի: Ըստ նրա տեղեկությունների՝ Ջուլֆան կարևոր առևտրական կենտրոն էր, որտեղ զարգացած էր հայ խոջայական կապիտալը (մինչև Շահ Աբասի իրականացրած 1603թ. բռնագաղթը – Ռ.Ն.): Հայտնի է, որ Շահ Աբասը խլեց հայ բնակչության ունեցվածքը, արդյունաբերությունը, թուրքերին քաղաքը՝ հանձնեց ավերված և դատարկված, քանդեց Արաքս գետի քարե կամուրջը՝ փակելով վերադարձի հնարավորությունը: Մինչև բռնագաղթը՝ Ջուլֆան ուներ 2 հազար տուն, 10 հազար բնակիչ: Այստեղ տները քարաշեն էին, հակառակ այդուսաշեն պարսկական քաղաքների:

Վաճառականի հաջորդ կանգառը Նախիջևանն է եղել, որը ըստ նրա հաղորդման՝ «մեծ քանակությամբ կենսամթերք ուներ, մասնավորապես խաղող, հատկապես աչքի էր ընկնում կտորեղենի, մետաքսի արտադրությամբ» (454): Այստեղից նա հասնում է Մասիս լեռան ստորոտը, նշում, որ այս սուրբ լեռան ստորոտում կա հայերի մի եկեղեցի [ս. Հակոբ – Ռ. Ն.], նշում է նաև, որ երկու Մասիսներից մեծի վրա է հանգրվանել Նոյյան

տապանը, ապա հասնում են Երևան և գիշերում Էջմիածնում, որտեղ կանգուն էին քրիստոնեական հինգ եկեղեցիներ: Ըստ նրա՝ Նախիջևանի և Երևանի միջև մի տեղ կա, որ գետնից աղ են հանում [Կողբի աղահանքն է – Ռ. Ն.] (455): Նախիջևանից դուրս գալու 14-րդ օրը վաճառականը հասնում է Դազգվան (Կաղզվան)՝ նշելով, որ քաղաքից դուրս կա մի հայկական եկեղեցի [խոսքը Կամրջավոր վանքի մասին է – Ռ.Ն.], ապա, հայկական գյուղերով անցնելով, հասնում է կենսամթերքներով հարուստ Էրզրում: Շատ արժեքավոր տեղեկություն է հաղորդում Կաղզվանից Էրզրում հասնող ճանապարհի վրա գտնվող գյուղերի հայ կանանց զգեստի վերաբերյալ. «Հագնում են *գաակինս* մարդոց նման, իրենց գլխին կրում են մի բարձր կլոր գլխարկ, կողքից կախված արծաթյա դրամներով, նրա ու իրենց կզակի շուրջ միայն սպիտակ լաթ ունեն, որի շուրջ արծաթ կոճակներ շարված են, և նմանապես իրենց գլխի վրա կրում են կարմիր մետաքսի ծոպավոր մի կտոր, որ կախված է նրանց ետևից, երկու կամ երեք հարդա գետնի վրա, և իրենց վզի շուրջ կրում են արծաթե մանյակ, և որին ամրացված են հինգ կամ վեց շատ լայն արծաթե կտորներ, և ոմանք ավելի: Կանայք մեծ մասամբ թուխ են, ունեն լեցուն երես, փոքր ոտք, մեծ սրունք, մեծ ձեռք ու բազուկ, շրթունքները փոքր չէ» (457): Ապա խոսում է շրջակա հայկական գյուղերի զինու առատության մասին, որը շատ էժան է վաճառվում (նույն տեղում):

Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեն, խոսելով XVII դ. Թոխատի մասին, որի բնակիչները ճանապարհորդի պնդմամբ հիմնականում հայեր էին, գրում է. «Հատկապես նկատելին Թոխատում այն է, որ այս քաղաքը Արևելք տանող խոշոր տարանցիկ կայաններից մեկն է: Այստեղ անվերջ քարավաններ են գալիս Պարսկաստանից, Դիարբեքիից, Բաղդադից, Կոստանդնուպոլսից, Չոլուսիայից, Սինոպից և այլ վայրերից»<sup>7</sup>: Որպես տարանցիկ առևտրի կենտրոն Էրզրումը ամեննին չէր զիջում Թոխատին: «Էրզրումում, - գրում է Տավերնիեն, - կան շատ քարավանատներ: Այս քաղաքը, ինչպես և Թոխատը, Թուրքիայի մեծ տարանցիկ կայաններից մեկն է»<sup>8</sup>: Նա արձանագրում է Թուրքիայում քարավանային առևտրի անապահովության խնդիրը: Տավերնիեն բառացիորեն գրում էր. «Ամբողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են զինված, մեծ խմբերով ու ճանապարհների թաքստոցներում սպասում վաճառականներին՝ ոչ միայն կողոպտելու նպատակով, այլև նրանց, հաճախ զրկում են կյանքից»<sup>9</sup>:

<sup>7</sup> Tavernier J.B., Les six voyages, Paris, 1679, p. 11-12:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 2:

XVII դարի մեկ այլ ճանապարհորդ՝ իտալացի Դելլա Վալլեն, գրում է Շահ Աբասի՝ հայերի բռնագաղթի իրագործման դաժան մեթոդների, Հայաստան երկրի հայաթափման մասին. «Ինչպիսի դժբախտությունների տեղիք տվեց այդ ողբերգական տեղահանումը, ինչպիսի սպանությունների, ինչքան մարդիկ մահացան սովից, ինչպիսի սպանություններ, հափշտակումներ, աղջիկների ու կանանց բռնաբարումներ, ինչքան երեխաներ հուսահատության պատճառով խեղդվեցին կամ ջրահեղձ արվեցին իրենց հարազատ հայրերի աչքի առաջ, այլ սպանվեցին պարսիկ կառավարիչների կողմից կամ խլվեցին իրենց մոր կրծքից ու նետվեցին փողոցներն ու ճամփաները՝ դառնալու համար գազանների սնունդ կամ տրորվեցին բանակի ձիերի և ուղտերի ոտքերի տակ մի ամբողջ օր: Հայրերի իրենց երեխաներից, ամուսինների՝ իրենց կանանցից, եղբայրների՝ իրենք քույրերից, ինչպիսի դժոխային բաժանում, որոնք ուղարկվեցին Պարսկաստանի հեռավոր նահանգները՝ հույս չունենալով այլևս իրար գտնելու: Կազմվեցին տղամարդկանց ու կանանց ճամբարներ, որոնց զգալի մասը էժան գնով վաճառվեց, ինչպես 10 անասուններ»<sup>10</sup>:

XVII դարում Հայաստանով անցած նշանավոր ճանապարհորդներից ֆրանսիացի Ժան Շարդենը 1664 թ. հոր հանձնարարությամբ ուղևորվում է Հնդկաստան՝ ադամանդներ գնելու և այնտեղից էլ 1666 թ. մեկնում է Պարսկաստան: Այդ ուղևորությունները անցնում էին Հայաստանով, այստեղից էլ նրա՝ հայերի և Հայաստանի մասին հաղորդումների բացառիկ հարազատ ու կարևոր լինելու հանգամանքը: Հայաստանի մասին Շարդենը գրում է. «Սուրբ գրքում Հայաստանն ամենուր անվանվում է Արարատ, Արարատի երկիր: Այն Ասիայի ամենագեղեցիկ և արգավանդ երկրներից մեկն է: Յոթ մեծ գետեր ոռոգում են այն, որի համար է, ինչպես ինձ է թվում, որ Հին Կտակարանի մեկնիչներից շատերը Հայաստանը մատնացույց են անում որպես այն երկիրը, ուր սկզբնապես եղել է երկրային դրախտը: Հայաստանը նշանավոր է նաև այնտեղ տեղի ունեցած կարևոր իրադարձություններով: Չկա մի երկիր, որտեղ տեղի ունեցած լինեին այնպիսի արյունահեղ իրադարձություններ և այդքան մեծ թվով, ինչպես այնտեղ»<sup>11</sup>:

Ժ. Շարդենը նշում է նաև, որ հայկական «որդան կարմիր» ներկը միայն Հայաստանում է պատրաստվում: Հայկական այդ ներկը, ըստ ճանապարհորդի՝ հայտնի է եղել ամբողջ միջնադարում: Այն ստանում էին Արարատյան դաշտում և Կարնո գավառում<sup>12</sup>: Անդրադառնում է նաև հայ

<sup>10</sup> «Voyages de Pietro della Valle», t.III, Rouen, 1645, p. 398:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 243:

<sup>12</sup> Տե՛ս «Բազմավեպ», 1890, № 4, էջ 276:

վաճառականների գործունեությանը՝ նշելով, որ նրանց ապրանքները դեպի Եվրոպա տեղափոխողները հաճախ հոլանդացիներն էին<sup>13</sup>:

Ուշագրավ նկարագրություն է թողել պարսից տիրապետության շրջանում Երևանի առօրյա կյանքի մասին, ցավով նշելով, որ քաղաքի գրեթե ամբողջ անցուղարձը ենթարկված էր մահմեդական օրենքներին: Երևանի միջնադարյան շուկայի դասական նկարագրությամբ Շարդենը տեղեկացնում է, որ այն ընդարձակ տարածություն է զբաղեցնում և ծառայում է նաև զբոսանքի, մրցախաղերի, ըմբշամարտի, ձիարշավների և ընդհանրապես մարդկանց և ձիերի վարժությունների համար<sup>14</sup>: Աչքի են ընկնում նաև արևելյան տիպի իջևանները (քարավանատները) Երևանում, որոնք, ինչպես նշում է ճանապարհորդը, բավական շատ են:

Մյուս հաղորդումներից կարևոր է հիշատակել Ս.Էջմիածնի նկարագրությունը, որը արժեքավոր տեղեկություններ է պարունակում Մայր Աթոռի վիճակի, ինչպես նաև այն մասին, թե այդ ժամանակ ինչ սրբություններ էին կենտրոնացված այնտեղ: Ըստ նրա հաղորդման՝ եկեղեցու խորաններում պահված են բազմաթիվ գեղեցիկ և շատ հարուստ զարդեր, ոսկյա անոթներ, կանթեղներ, արծաթյա աշտանակներ և այլ պարագաներ<sup>15</sup>, որոնց գոյությունը այդքան հեռավոր անցյալում անչափ կարևոր են թերևս ազգագրական թանգարանի սկզբնավորման պատմության տեսակետից:

Այսպիսով, արձանագրենք, որ XV-XVII դարերի եվրոպացի ճանապարհորդների, ուղեգրողների վկայությունները կարևոր սկզբնաղբյուրներ են տվյալ ժամանակաշրջանի Հայաստանի և հայերի մասին: Դրանք պարունակում են հայոց պատմության, ազգագրության մի շարք հարցերի վերաբերյալ նոր տեղեկություններ, նոր մեկնաբանություններ, ուստի կարևորվում են վերոնշյալ նյութերը թարգմանելն ու հետազոտելը, ինչը զգալի ներդրում կլինի տվյալ ժամանակաշրջանն ուսումնասիրող պատմագիտության մեջ:

---

<sup>13</sup> Տե՛ս «Путешествие Шардена по Кавказу в 1672-1673 гг.», էջ 243:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 252-283:

Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

**XV-XVII ԴԴ. ԵՎՐՈՊԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ  
Ամփոփում**

Պատմական Հայաստանի և հայերի մասին կարևոր սկզբնաղբյուրների շարքում ուրույն տեղ ունեն օտարերկրյա, մասնավորապես եվրոպացի ճանապարհորդների, ուղեգրողների վկայությունները:

Հոդվածում ներկայացվում են XV-XVII եվրոպացի ճանապարհորդների (իտալացիներ՝ Ջիովանի Մարիա Անջիոլելլո (XV դ. 70-ականներ), Վիչենցո Դ'Ալեսանդրի (XVI դ. 70-ականներ), անգլիացիներ՝ Անթոնի Ջենկինսոն (1557-1572), Մաստր Ջեֆրեյ Դուգետ (1568-1574), Ջոն Նյուրեր (1521-1582), ֆրանսիացիներ՝ Ժ. Բ. Տավերնիե (XVII դ. սկզբներ), Ժան Շարդեն (XVII դ. 60-70-ականներ)) ուղեգրությունները: Նրանք, լինելով առևտրական տարբեր ընկերությունների ներկայացուցիչներ, նպատակ են ունեցել իրենց երկրների կապիտալի համար որոնել հումքի ձեռք բերման աղբյուրներ և վաճառահանման շուկաներ: Ըստ այդմ՝ նրանց ուղին անցել է Մերձավոր և Միջին Արևելքի երկրներով, եղել են նաև Հայաստանում, որտեղ խաչվում էր միջնադարյան տարանցիկ առևտրի ուղիների մեծ մասը, գրառել իրենց տեսածը՝ թողնելով պատմաազգագրական բնույթի արժեքավոր նկարագրություններ:

Հետևաբար, հաշվի առնելով, որ այդ ուղեգրությունները պարունակում են հայոց պատմության, ազգագրության մի շարք հարցերի վերաբերյալ նոր տեղեկություններ, նոր մեկնաբանություններ, կարևորվում են վերոնշյալ նյութերը թարգմանելն ու հետազոտելը, ինչը մեծ ծառայություն կլինի ինչպես ոլորտի մասնագետների, այնպես էլ գիտական հանրության համար:

XV-XVII



*Հանձնարարվել է գրախոսության 20.03.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**GERÁLY ZOLTÁN**

Pázmány Péter Katolikus Egyetem (PPCU)

[Faculty of Humanities and Social Sciences](#)

Postgraduate student

**Email: [zoligeraly@gmail.com](mailto:zoligeraly@gmail.com)**

## **REPRESENTATION OF REGIONAL HISTORICAL REMEMBRANCE AND POLITICS OF HISTORY IN TERMS OF TOURISM RELATED SOURCES**

**Keywords:** Nagorno-Karabakh, historical narratives, historical memory, tourism related history, politics of history, Transcaucasia, historical travel guides.

**Ключевые слова:** Нагорный Карабах; историческое повествование; историческая память; история, связанная с туризмом; историческая политика; Закавказье; исторические путеводители;

**Բանալի բառեր.** Լեռնային Ղարաբաղ, պատմական պատումներ, պատմական հիշողություն, տուրիզմի պատմություն, պատմության քաղաքականություն, Անդրկովկաս, պատմական ճամփորդական ուղեցույցներ:

The following paper and analysis is upon the complexity of representation of local history, the recreated picture of the past, politics of history, used historical narratives, and its effect on the information channels available to foreigners regarding the history of the region. Moreover we will try to analyze the tendencies from the eyes of a visitor, namely a tourist who is coming to the region with the willingness to know more about the culture, history and people inhabiting the area. Since earliest times of history, self-representation played significant role, since this was the most powerful platform where the state could communicate about itself, to an external other state, or person. This need affected the spheres from formal diplomatic ways until propaganda. From the 19<sup>th</sup> century, in which time empires have started to transform their image and tools, and smaller regions became so called 'nation states', also a hybrid form of 'national' statehood emerged. These creations have all their specific status to obtain the criteria of a usual state. As well as their national ornaments like flag and coat of arms are were created, their history also had to be built up. In the following, we will go through

the exciting way of historical creations in the soviet and post – soviet regions of Transcaucasia – (Southern Caucasus), not exactly trying to give the right answer to a regional appearance, but rather to map the several ways how different regions, once belonging to a huge empire in the 20th century, namely the Soviet Union, trying to path their route of history.

In geographical measures, our way is covering the region, which in the scholarly language often characterized as a borderland, situated in the post – soviet atmosphere: Nagorno Karabakh. This region today attain a ‘self-proclaimed’ republic between Armenia and Azerbaijan, which both states also legally were created in the 20<sup>th</sup> century. The ‘self-created’ phenomenon itself brings a serious question, as this paradox leads to the expression: ‘non-recognized’. Upon this terminology we must ask the question, who must recognize a state, and give it all ‘legalities’ to be accepted to the framework of the so-called ‘international community’?<sup>1</sup> Easiest way to reach a clear standing point underlining this statement, is making a quick backup to the history of colonization, when some states who though themselves to be a columnarian members of the internationally ‘recognized states’, used their own armed force, cultural and economic influence, to size various states and groups operating as sovereign systems based on different principles. Based on these historical tendencies, calling these formations, as well as Nagorno Karabakh a ‘non recognized state’ is just a tool of stigmatizing, but not a real case what can be seriously accepted in historical terminology.

In case of the Post – Soviet regions of the world, the historical approach is vivid up until nowadays, state’s and formation’s historical remembrance, historical narratives, or historical canon often formed in bloodshed, and in irregular ways, resulting sharp changes within short periods of time. These quick changes let us to look into the forge of this canonization process, measuring tourism related sources. Because of this in the following analysis we are not searching the answers to draw up the ‘true history’ of Nagorno Karabakh – Artsakh, and select information upon their true or false content measured by our days paradigms, but we undertake the questions how the narrative was formed, and created historical remembrance in the region.

#### Methodology and research

As the methodological part of the research we would like to rely on a more interdisciplinary approach rather than the traditional tools of historical research. For this firstly we are involving the on the spot data collections, relying on

---

<sup>1</sup> Legalities and formalization, which are created by the state or states who gives recognition.

personal visits in Nagorno Karabakh in the years of 2016;2017;2018. On the spot data collection in the case of Nagorno Karabakh especially important, as nowadays tendencies in 2018, during the last decade brought a renaissance of tourism in these areas.<sup>23</sup> For that reason we will try to draw a sketch with the help of local providers of historical knowledge such as museums, monuments, and printed materials. While creating a framework, where these new tendencies can be collided with the precious ones, aka. from the Soviet regime. To involve and rely on tourism related sources, can be understood from the international historical trends has just started to deal with this field. This methodology of cognition, its importance, also was emphasized by *John H. Falk*. So that, we will be able to measure, compare and evaluate these collected sources, with sources from libraries. Also this methodology is based upon the concept of mapping more visible and tangible sources, and extract information, how historical canon, imagination and reflection of identity is changed over time in the named regions, within the duality of history and tourism.

So that they main trends approaching the examination of tourism related sources can be understood from the following volumes. *John H. Falk – Identity and the museum visitor experience* is dealing directly with the cognition of the visitors visiting an area, or a region.<sup>4</sup> *Claire Lindsay – Magazines, tourism and nation – building in Mexico* is directly examining the process how tourism and the historical field of the science is involved in nation building, what also in the case of Nagorno Karabakh is extremely important aim.<sup>5</sup> Thirdly we should mention the emergence of other fields to be analysed within this framework, namely the dark tourism, presented in a large volume: *Philip R Stone; Rudi Hartmann; A V Seaton; Richard Sharpley; Leanne White* editors presented *The Palgrave handbook of dark*

---

<sup>2</sup> As we know briefly, the tourism in these areas dropped after the dissolution of the Soviet Union in a drastic way, due to warfare and unstable situation. However with time, the regions became more peaceful in their best way, so that tourist could arrive again in bigger numbers. It's reflected also in the supply, what these states offer for the visitors. In the case of Nagorno Karabakh, we can just quickly mention the Tigranakert fortress, and the Local Shushi museum of History, which are promoted and well established. In later chapters we will examine both in details.

<sup>3</sup> [http://web.worldbank.org/archive/website00983A/WEB/OTHER/780A475B.HTM?OpenDocument Is. 2019.02.14.](http://web.worldbank.org/archive/website00983A/WEB/OTHER/780A475B.HTM?OpenDocument%20Is.2019.02.14)

<sup>4</sup> John H. Falk. *Identity and the Museum Visitor Experience*. Routledge. London – New York. 2009.

<sup>5</sup> Claire Lindsay. *Magazines, tourism, and nation – building in Mexico*. Palgrave – Macmillan. London. 2019.

*tourism studies*.<sup>6</sup> Rooted upon these historical publications, we can make a try and put Nagorno Karabakh under this investigation.

We would like to follow the path of *John H. Falk*, who raised topics and questions about how history – visitors – cognition are connected, and afterwards about the emergence of new historical approaches formed in the visitors. As we see now, it is a complex and complicated field, where history plays the main role, and as museums has changed the image and working schemes in the past decades, we have the chance now to analyze and compare. These changes occurred largely in order to fulfill the need for knowledge, as well as opening and restoring sites of historical significance making the environment attractive for seekers of knowledge.<sup>7</sup> The visitors receiving an extract about historical fields what they are not expert of. The changes of the visitors identity and motivations also significant during a visit not just to a museum, but to geographical regions of their interest.<sup>8</sup> Newer historical approaches can be implemented and on this channel, propagated to the outer world. Falk brings some essentials here also: explorers – “*are individuals who say they are visiting the museum because of curiosity or a general interest in discovering more about the topic of subject of the institution.*”<sup>9</sup> As visitors of the yet unknown region, during their journey their leisure time is dedicated to fulfil their need to know more about a subject. In addition, if we employ this idea on the tourism activities in Nagorno Karabakh, during the last two decades, when the area is categorized into the not recommended, dangerous place to visit, recognition of the importance is inevitable. Upon this seriousness, the informal channels toward tourist, even more valuable. After all, this groups of ‘explorers’ as Falk categorizes them, are not experts and necessarily “well educated” members of the society, but persons whose interests are wide spread and has the need of new experiences and knowledge.<sup>10</sup>

Connecting Nagorno Karabakh to the idea of dark tourism also a close idea. The extremity of the after war scene, was significant during the 1990’, but it appeared just party in the tourism related sources. Even until nowadays the

---

<sup>6</sup> Philip R Stone; Rudi Hartmann; A V Seaton; Richard Sharpley; Leanne White ed. *The Palgrave handbook of dark tourism studies*. Palgrave Macmillan. London. 2018. other publications emphasizing this theme: *Dark Tourism and Place Identity*. ed.: Leanne White & Elspeth Frew. Routledge. 2013.; *The Dark Side of Travel: Theory and Practice of Dark Tourism*. ed.: Richard Sharpley & Philip R. Stone. Channel View Publications. Bristol – Buffalo – Toronto. 2009.

<sup>7</sup> John H. Falk. p. 182.

<sup>8</sup> John H. Falk. pp.186 – 187.

<sup>9</sup> John H. Falk. p. 190.

<sup>10</sup> John H Falk. p.190.

presented narrative became a more peaceful vision, starting from the book of *Boris Bratov*<sup>11</sup> still shows tanks and war related memories in 1998, the newest volumes like *Yuriy P. Suprunenko's*<sup>12</sup> even not enlarging the war situation, and the history of the wars. The shift moves toward the representation of cultural values, tradition and architectural heritage.

Our hypothesis relies on the following idea: tourism belongs to one of the most effective ways where information can be provided about history, local histories and self-representation. As from the beginning of the 21<sup>st</sup> century, large masses of people started to visit directly historical places, we cannot neglect it as a factor of historical cognition.<sup>13</sup> Community based tourism on the other hand means, touristic activities toward not highly developed, and well established regions of the world. In the areas of non-recognized states, the efforts to show their local histories, key points of their identity, their ceremonies, remembrance, historical canon, are coming with a more powerful way of representation. Form this after all we can trace back a full analysis on historical narrative and historical representation of Nagorno Karabakh.

Leaflets and guidebooks promoting tourism about Nagorno Karabakh

Leaflets in short, between 20-50 pages were especially popular in Karabakh to publish in several languages. During the soviet period it was mainly presented in Russian, Armenian and Azerbaijani language, after the after the war of 1991-94 it changed to mainly Russian and English, while nowadays more and more publications are consisting Russian, Armenian and English as well. They are giving more detailed information about history and cultural elements, with more detailed orientation of the selection of historical events and historical monuments wanted to be showed for tourists, visitors.

The most influential person during the soviet and after war years is Mkrtchyan Shagen Makichevich<sup>14</sup> who played great role conducting the historical remembrance in publications, and developing the displayed content toward visitors. His biography was also changed during the shifting of the narratives. This can be traces back in several printed materials, like the *Encyclopedia of Artsakh-Karabakh*<sup>15</sup> and *Architectural monuments of Nagorno Karabakh* from 1988.<sup>16</sup> His

---

<sup>11</sup> . . . : . . . : . 1998.

<sup>12</sup> . . . . ( . . . ) . . . : . . . 2017.

<sup>13</sup> <http://web.worldbank.org/archive/website00983A/WEB/OTHER/780A475B.HTM?OpenDocumentIs.2019.02.14>.

<sup>14</sup> In Russian transliteration:

<sup>15</sup> . . . . - . . . : . . . . 2005.

works from the soviet period, including books where he is delicately speaking about the eternal brotherhood between the nations inhabiting Karabakh, especially the friendship of Azerbaijani and Armenian inhabitants as it can be read in the following quote from the leaflet from 1970: “*The brotherhood and friendship of Azerbaijani and Armenian people can be found as an evidence of the inhabitants of Hadrut.*”<sup>17</sup> In 2005, these books were left out from the biography in the above mentioned encyclopaedia of Artsakh, and writings in favour of the Armenian approach are picked into the canon.

In his first guidebook from 1969, he represents some of the most controversial figures of the territory. One of the most exciting figure is Bogdan Khnunyan, who was commemorated as the most notable ‘professional revolutionist’ in the region, also appeared on an exhibition in 2018 in Obdorsk , still remembered clearly, emphasizing his ‘professional revolutionist’ attitude.<sup>18</sup> In Karabakh, during the Soviet era upon this narrative of ‘professional revolutionist’ there were many of them remembered, and displayed on exhibition. However after the dissolution, these revolutionaries were excluded from the narrative, just the ones connected to the Second World War remained in their position, such as Nelson Stepanyan.<sup>19</sup> The poet Molla Panah Vagif is commemorated. His figure became controversial and especially exploited over the fight of historical representation. Yet in the guidebook of V. M. Sysoev from 1930, he was not mentioned, however there is a detailed information package about Shushi.<sup>20</sup> Also in a large guidebook written in 1934 for tourist visiting the Transcaucasian region this figure was not mentioned, only Nagorno Karabakh received a chapter with a detailed route.<sup>21</sup> Molla Panah Vagif’s figure then appears again, in an Azerbaijani guidebook from 1990, where he is stated to be an Azerbaijani poet and

---

<sup>16</sup> . . . - : . 1988.

<sup>17</sup> . . . - ( ). : . 1970. – In the original text: „ .” p 29.

<sup>18</sup> [https://mvk.yanao.ru/vist/detail.php?ELEMENT\\_ID=447](https://mvk.yanao.ru/vist/detail.php?ELEMENT_ID=447) Is. 2019. 02. 14.

<sup>19</sup> A. . ( ). - . 1992. pp. 105 – 110.

<sup>20</sup> . . . : . 1930.

<sup>21</sup> : . , , , , . 1934.

statesmen.<sup>22</sup> During 1998, when his historical memory is totally distorted from the previous one, Boris Baratov commemorated him as a nomad Turkish, with his actions against Nagorno Karabakh, who was involved in murder, and about his destroyed mausoleum simply writes: *“after 200 years of the death of Vagif, this monument is was erected, but now it is not a mausoleum anymore but a monument of a previous era.”*<sup>23</sup>

Regarding the period after the war and the dissolution of the Soviet Union, a more Armenian narrative started to be promoted. Several printed materials were presented in order to emphasize this new canon, now mentioning the imagines or wanted ancient roots to the visitors like Urartu<sup>24</sup>, the Hellenistic world and the most powerful, the Christianity in the region from the early middle ages.<sup>25</sup> This new narrative is up until nowadays are forming, here we can mention the archeological excavation of Tigranakert, as well as the opening of the Tigranakert museum in the newly built castle shaped building on the site. These leaflets and guides however still made a distinction between the Republic of Armenia, and the Republic of Nagorno Karabakh. While, ending our short analysis, the tendencies today are going toward to create a common cultural space with Armenian and with its culture. We can find its evidence in a guidebook from 2017 written by Suprunenko Y. Pavlovich.<sup>26</sup> This guidebook also interesting from the point, that it is a special historical guide to Armenia, where Nagorno Karabakh is even not too much emphasized as a separate region, but put into a cultural and historical frame where all is connected with the Armenian historical past and culture. In terms, the author did not make structural borders in the book, Nagorno Karabakh did not receive separate chapter. Its historical narrative is told as organic part of the all Armenian historical past, figures and events are emphasized under this notion in this guidebook.

To conclude, we can mention, that the narratives formed during the soviet period are not disappeared, but in large volumes transferred into the narratives of nowadays. Historical remembrance was enlarged, and Armenian considered historical events were added, from the times of the first world war, and the Karabakh war, as

<sup>22</sup> - á - - - )" : " . 1990. ( -

<sup>23</sup> . 1998. p. 27.

<sup>24</sup> The topic of Urartu and its contribution to the historical narrative of Armenia and Nagorno Karabakh is emphasized in the following book: [Ashkharbek Kalantar & Mirjo Salvini](#). Materials on Armenian and Urartian History. Recherches et publications, Calouste Gulbekian Foundation 2003.

<sup>25</sup> These publications are the following: . 1998; - : 2001; - : . 1998.

<sup>26</sup> , . ( . ) . : . 2017.

well as the second world war's traditions are kept up. This motions however not stopped and not slowed down, for this reason in the following years it will be necessary to review it again with historical tools.

**REPRESENTATION OF REGIONAL HISTORICAL REMEMBRANCE  
AND POLITICS OF HISTORY IN TERMS OF TOURISM RELATED  
SOURCES**

**Summary**

The following paper takes an analysis on the changes of the historical narrative in Nagorno Karabakh, comparing several period of it, using only tourism related publications as sources. Three periods are emphasised, and analysed together to get a wider knowledge about the inner connections how the historical narrative and historical memory was formed during the era of the Soviet Union, the Post -Soviet years, and the time slot leading up until nowadays. During the emphasis we tried to find the ones who were involved in the creation of the historical narrative from the scientific side, as well to find the key figures, historical events and built up scenes playing role in the historical narrative. Within these changes, we can receive a new side and viewpoint evaluating the historical narratives of Nagorno Karabakh.

**Գերայ Զոլտան**

Պետեր Պազմանի կաթոլիկ համալսարան  
Հումանիտար և սոցիալական գիտությունների ֆակուլտետ  
Ասպիրանտ

Էլ. հասցե [zoligeraly@gmail.com](mailto:zoligeraly@gmail.com)

**Տարածաշրջանային պատմական հիշողության ներկայացումը և  
պատմության քաղաքականությունը տուրիզմին առնչվող աղբյուրների  
դիտանկյունից**

**Ամփոփում**

Վաղ ժամանակներից պետությունների կողմից սեփական պատմության ներկայացումը կարևոր դեր է խաղացել, քանի որ այդպիսով պետությունը կարող էր մեկ այլ օտար պետությանը կամ անձին հաղորդել տեղեկություն իր մասին: Այս հարցը հատկապես կարևորվում է միջազգայինորեն չճանաչված պետությունների համար, որոնք հաճախ աշխարհին արդյունավետ ներկայանալու, սեփական պատմությունն ու մշակույթը մատուցելու ոչ բավարար հնարավորությունների են տիրապետում:

Հոդվածում քննարկվում է տեղական պատմության, պատմության քաղաքականության, պատմական հիշողության, ինչպես նաև պատմական

պատմումների փոփոխությունների հարցերը և դրանք օտարերկրացիներին ներկայացնելու ձևերն ու եղանակները: Նշված խնդիրը հեղինակը ներկայացնում է օտարերկրացիների համար նախատեսված տարածարջանի պատմությանն առնչվող տեղեկատվության աղբյուրների վերլուծության հիման վրա: Մասնավորապես հեղինակը Արցախ կատարած այցերի ընթացքում հավաքած նյութի հիման վրա կատարում է սեփական դիտարկումները՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղում հրատարակված տուրիզմին առնչվող գրքույկներն և տեղեկագրքերը: Հոդվածում հատկապես կարևոր տեղ է հատկացվում թեմային առնչվող տեսական գրականության վերլուծությանը, որի հենքի վրա էլ ներկայացնում է Լեռնային Ղարաբաղում պատմական պատումների փոփոխությունները: Քննարկվող նյութը հիմնականում վերաբերում է երեք ժամանակաշրջանների՝ Խորհրդային Միության ժամանակաշրջան, հետխորհրդային և ներկա շրջաններ:

**Герай Золтан**

Католический университет имени Питера Пазманя  
Факультет гуманитарных и социальных наук  
Аспирант

**Literature in English:**

Alex Marshall. The Caucasus Under Soviet Rule. Taylor & Francis. 2010.  
 Andrew Foxall. Ethnic Relations in Post- Soviet Russia. Routledge. London – New York. 2015.  
 Arnaud Lechevalier & Jan Wielgohs. Borders and Border Regions in Europe: Changes, Challenges and Chances. Trascript Verlag. 2013.  
[Ashkharbek Kalantar & Mirjo Salvini](#). Materials on Armenian and Urartian History. Recherches et publications, Calouste Gulbekian Foundation 2003.  
 Claire Lindsay. Magazines, tourism, and nation – building in Mexico. Palgrave – Macmillan. London. 2019  
 Edmund Herzig & Marina Kurkchian ed. The Armenians. Past, present in the making of national identity. Routledge Curzon. 2005.  
 John H. Falk. Identity and the Museum Visitor Experience. Routledge. London – New York. 2009.  
 Kevork Osknian. Fear Weakness and Power in the Post – Soviet South Caucasus. Palgrave Macmillan. 2013.  
 Leanne White & Elspeth Frew ed. Dark Tourism and Place Identity. Routledge. 2013.  
 Philip R Stone; Rudi Hartmann; A V Seaton; Richard Sharpley; Leanne White ed. The Palgrave handbook of dark tourism studies. Palgrave Macmillan. London. 2018  
 Richard Sharpley & Philip R. Stone ed. The Dark Side of Travel: Theory and Practice of Dark Tourism. Channel View Publications. Bristol – Buffalo – Toronto. 2009.  
 Ronald Grigor Suny. The Revenge of the Past – Nationalism, Revolution and the Collapse of The Soviet Union. Stanford University Press, California. 1993.  
 Victor A. Shnirelman. The Value of the Past: Myths, Identity and Politics in Transcaucasia. National Museum of Ethnology. Osaka. 2001.

**Literature in Russian**

. 1998.  
 A. . ( ). - .  
 1992.  
 . 1998.  
 . . : . . : . 1997.  
 . . : - . :  
 . 1991.  
 . . , 1981.  
 . -  
 . : . .  
 1988.

( ). : . 1970.

( ). : . 1969.

: . 1998.

. 2001.

. 1934.

)" ". 1990. , . . .

: . 2005.

: . 2017.

. ( ).

. 1930.

**Internet Resources:**

- [https://mvk.yanao.ru/vist/detail.php?ELEMENT\\_ID=447](https://mvk.yanao.ru/vist/detail.php?ELEMENT_ID=447) ls. 2019. 02. 14.
- <http://web.worldbank.org/archive/website00983A/WEB/OTHER/780A475B.HTM?OpenDocument> ls. 2019.02.14.

*Խմբագրություն է ուղարկվել 19.04.19*  
*Հանձնարարվել է գրախոսության 23.04.19*  
*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ  
գեղարվեստական կրթության ֆակուլտետ  
[avetisyan.gagik.93@mail.ru](mailto:avetisyan.gagik.93@mail.ru)

**ՄԻՐ ԲԱՇԻՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

**Բանալի բառեր.** Արցախ, Պաշտպանության բանակ, Պաշտպանական շրջաններ, 5-րդ բրիգադ, Մարտակերտ, ռազմական գործողություն, Միր Բաշիր, Թարթառի ջրանցք, հակահարձակում, զինադադար:

**Ключевые слова:** Арцах, армия обороны, оборонительные районы, 5-ая бригада, Мардакерт, военная операция, Мир-Башир, канал Тартара, контрнаступление, перемирие.

**Key words:** Artsakh, Defence army, Defence regions, 5th brigade, Mardakert, military operation, Mir-Bashir, Tartar canale, caunterattack,ceasfire.

Արցախյան ազատագրական պատերազմի ողջ ընթացքում՝ մինչև 1994 թվականի գարունը, հայկական զինված ուժերին հաջողվեց ադրբեջանական հրոսակներից մաքրել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուն տարածքի զգալի մասն ու վերացնել հակառակորդի խոշոր կրակակետերը հարակից շրջաններում՝ ստեղծելով անվտանգության հուսալի գոտի: Ադրբեջանական զորքի վերջին խոշոր հենակետը մնաց Միր Բաշիրը (Թարթառ)<sup>1</sup> քաղաքը, որտեղից շարունակվում էին հրետակոծվել սահմանակից Մարտակերտի շրջանի հայկական բնակավայրերը: Հարկ է նշել, որ նորագույն շրջանի հայոց պատմության ամենաբախտորոշ ժամանակահատվածներում այդ բնակավայրը միշտ էլ եղել է թուրք-թաթարների հիմնական ռազմական հենակետերից մեկը, որտեղից պարբերաբար հարձակումներ են գործվել Արցախի հյուսիսային բնակավայրերի ուղղությամբ<sup>2</sup>:

Եվ ահա, Օմարի լեռնանցքի ազատագրման և Հորադիզի հատվածում իրավիճակի կայունացումից հետո՝ 1994 թվականի մարտի

---

<sup>1</sup> Միր Բաշիր (Թարթառ)-քաղաք Ադրբեջանական Հանրապետությունում: 1980-ական թվականներին տասներկու հազար բնակիչներից մոտ երկու հազարը հայեր էին:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.386, թ.112:

վերջին նպատակահարմար ռազմաքաղաքական իրավիճակ առաջացավ նաև Միր Բաշիրում տեղակայված ադրբեջանական կրակակետերի վնասագերծման և շրջանի ազատագրման համար: Արցախի Պաշտպանության բանակի (ՊԲ) հրամանատարության համոզմամբ՝ դրանց ոչնչացումը և հաջողության պարագայում գորքերի հետագա առաջխաղացումը վերջնականապես կլուծեր արցախյան հակամարտությունն ի նպաստ հայության:

Այդ օրերին Մաղավուզում տեղակայված 5-րդ մոտոհրաձգային բրիգադի (այսուհետ՝ 5-րդ բրիգադ) մարտիկներին այցելած ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանը հատուկ կոչով դիմեց զինվորներին՝ մարգարեաբար նախանշելով դեպքերի հետագա ընթացքը. «Ես համոզված եմ, որ այս փուլում եկել է մեր՝ ամուր, հստակ, կտրուկ հակահարված տալու պահը: Եվ հակահարվածից հետո, կարծում եմ, թշնամին հեշտ պայմանով արդեն կհամաձայնի խաղաղության, հաշտության գալ»<sup>3</sup>:

ՀՀ պետնախարարը համոզված էր, որ գալիք ռազմերթը վերջինն է լինելու արցախյան պատերազմում, որին անպատճառ կհաջորդի երկարատև խաղաղությունը: Վիճակը նետված էր...

Այս համատեքստում Արցախի ՊԲ գորքերի տեղաշարժը և կենտրոնացումը իրականացվեց 1994 թվականի մարտի վերջից: Արցախի ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանի արձակած հրամանի համաձայն՝ գլխավոր հարվածի ուղղությունում կենտրոնացվեցին բանակի կենտրոնական ենթակայության և գնդային հրետանու ստորաբաժանումները<sup>4</sup>: Արցախի ՊԲ կողմից ներգրավված էին՝ 2-րդ (Մարտունու), 3-րդ (Բերդավանի) 4-րդ (Ասկերանի), 5-րդ (Մարտակերտի), 7-րդ (Շուշիի), 8-րդ (Կենտրոնական) պաշտպանական շրջանների (ՊՇ) մարտիկները, 6-րդ (Շահումյանի) ՊՇ-ի հատուկ նշանակության ջոկատը (Եղնիկներ) և 5-րդ բրիգադը:

Արցախի ինքնապաշտպանական ուժերին ու կամավորականներին հրահանգավորվեց ռազմական գործողությունների արդյունքում զբաղեցնել հետևյալ մարտագծերը՝ Եղակիր – նիշ 831.2 – նիշ 530.9 – գ. Չայլու – Բարանբաթ – Թարթառ գետի հուն – Գյուլիստան – Իլիխիչլար – Շուրաաբադ – Նամիրլի – նիշ 171.8 – 177.4 – Մեյսուլան գյուղի արևելյան

---

<sup>3</sup> **Հակոբյան Հ.**, Հաղթանակի բրիգադը, Ե., 2003, էջ 4–6:

<sup>4</sup> **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի գորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2010, էջ 85:

ծայրամաս<sup>5</sup>: Հրետանին ու «Գրադ» համակարգի հիմնական մասը տեղակայվեց՝ Ներքին Հռոաթադ-Մոխրաթադ-Մեծ Շեն-Հակոբ Կամարի գծով:

Միաժամանակ 1994 թվականի գարնան սկզբին ադրբեջանական բանակում առավել քան երբևէ առկա էր շատ ցածր բարոյահոգեբանական վիճակ՝ կապված անընդմեջ պարտություններից, նահանջներից, մեծաքանակ մարդկային և նյութական կորուստներից, փախստականների մեծ հոսքից, որն իր հերթին առաջացրել էր հաղթանակի հանդեպ հավատի իսպառ բացակայություն: Երկարատև ձգձգվող ու մշուշոտ ապագա խոստացող այս պատերազմը ոչ միայն բարոյապես, այլև ֆիզիկապես էր հոգնեցրել զինվորներին: Քաղաքագետ Էլմար Հուսեյնովը նշում էր, որ իրենց բանակը դարձել է տկլոր և քաղցած մարդկանց բազմություն, որոնց պատել է խուճապը<sup>6</sup>:

Մարտակերտի շրջանի մերձսահմանային գոտում ադրբեջանական կողմից տեղակայված էին երկրորդ և երրորդ օպերատիվ ուղղությունները: Ռազմական գործողությունների նախօրյակին դրանք համալրվեցին Նախիջևանից բերված երկու գումարտակներով և վարձկան մոջահեդներով: Զորքերի ընդհանուր թվակազմն այս շրջանում գերազանցում էր 12 000-ը: Ադրբեջանական զորքը պաշտպանական բնագիծ էր բռնել Մատաղիս-Լևոնարիս-Թարթառի ջրանցքի արևելյան ափ Սալախի-Քենգերի-Չավահիրլի-Չեմենլի-Չանշիշալյա-Աֆատլի ուղղություններով:

Ապրիլի 7-ին ադրբեջանական զորքերը՝ հրետանային հուժկու նախապատրաստությունից հետո, նախահարձակ եղան Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելյան հատվածի ողջ երկայնքով, սակայն արցախյան ինքնապաշտպանական ուժերը կասեցրեցին հակառակորդի առաջխաղացումն ու անցան հակազրոհի: Այս լայնամասշտաբ հակահարձակման շրջանակներում հայ ազատամարտիկները նախ ազատագրեցին Արեգասարը, ապա վնասազերծելով Լևոնարիսին ու Մատաղիսին հարակից «Բերդ-4» և «Բերդ-5» բարձունքները՝ մտան Լևոնարիս<sup>7</sup>:

---

<sup>5</sup> **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի Պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008, էջ 449:

<sup>6</sup> **Հակոբյան Հ.**, Ձորավարը, գ.2, Ե., 2013, էջ 75:

<sup>7</sup> **Հասրաթյան Ս.**, Պաշտպանության բանակի Պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, 2008, էջ 318:

Շարունակելով զարգացնել հաջողությունը ՊԲ ուժերը երեք ուղղություններով գրոհեցին ադրբեջանական դիրքերի վրա: Կենտրոնում Մարտակերտի ՊՇ–ի գումարտակները լրիվ կատարելով իրենց տրված հանձնարարությունը հասան Լևոնարխից ու Չայլուից ներքև ընկած տարածքներն ու սեպի պես խրվեցին թշնամու դիրքերի մեջ: Թևերից զուգահեռ գործող գնդերին հակառակորդը կատաղի դիմադրություն ցույց տվեց՝ արկերի տարափ տեղալով հայ ազատամարտիկների ուղղությամբ: Մի քանի անգամ օդ բարձրացան ադրբեջանական ռազմական «Կորբա» տիպի ուղղաթիռները: Մա դժվարություն առաջացրեց ձախ թևում գործող 5–րդ բրիգադի առաջխաղացման համար, որը Թալիշի մոտակայքում մի քանի բարձունքներ գրավելուց հետո կանգ առավ: Բարդ կացություն էր նաև աջ թևում, հատկապես՝ Շուշիի ՊՇ–ի մարտիկների զբաղեցրած հատվածում: Ռազմական բախումների արդյունքում, մինչ ապրիլի 13–ն Արցախի ՊԲ ուժերը ռազմաճակատի գիծը դեպի հակառակորդի դիրքերը խորացրեցին՝ Մարտակերտի ուղղությամբ՝ 1–9 կմ, Ասկերանի՝ 1 կմ, Բերդաշենի՝ 4 կմ, Փափուավենդի՝ 1–5 կմ երկարությամբ<sup>8</sup>:

Ապրիլի 14–ին հրետանային նախապատրաստությունից հետո 5–րդ բրիգադի ուժերը Մեխակ Մեխակյանի գլխավորությամբ ազատագրեցին Թալիշը, ապա զարգացնելով հաջողությունը հակառակորդի մնացորդներից մաքրեցին հարակից տարածքներն ու առաջանալով ընդհուպ մոտեցան համառ դիմադրություն ցույց տվող ադրբեջանական Թափկարակոյունլու գյուղին:

Տասնօրյա համառ մարտերի արդյունքում, սակայն հայկական կողմի գլխավոր թիրախ հանդիսացող Միր Բաշիրը չազատագրվեց: Արցախի ՊԲ հրամանատարն անդրադառնալով այս խնդրին նկատեց. «Որոշ հաջողություններ ունենալուց հետո, սակայն, ազատամարտիկները հոգեբանորեն պատրաստ չէին զարգացնելու գրոհը և չկատարեցին առաջադրանքը: Նույն ուղղությունում գործող 71–րդ առանձին և 77–րդ առանձին մոտոհրաձգային գումարտակները նույնպես, նման պատճառով, չեն կարողացել ավարտել գրոհները»<sup>9</sup>: Չկարողանալով ճակատային հարվածներով ճեղքել հակառակորդի դիմադրությունը, ՊԲ հրամանատարությունը որոշեց հիմնական հարվածը ուղղել Միր Բաշիրից հարավ՝ Ադդամի և Մարտակերտի շրջանների վարչատարածքային

---

<sup>8</sup> **Հասարթյան Մ.**, Ղարաբաղյան պատերազմ, Ե., 2001, էջ 175:

<sup>9</sup> **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս.**, Հաղթանակներն ինչպես եղել են. ազգականչ 44, Ե., 2008, էջ 162:

բաժանման հատվածում, որի շրջանակներում Ասկերանի ՊՇ-ի մարտիկները գրոհեցին Ջավահիրլի-Սալահլի-Քենգեռլի բնակավայրերի ուղղությամբ: Հայկական ուժերի առաջխաղացման արդյունքում Միր Բաշիր ու Նավթալան քաղաքները հայտնվեցին կամավորների միջին հեռահարության հրետանու կրակի հասանելիության գոտում<sup>10</sup>: 8-րդ (Կենտրոնական) և 4-րդ (Ասկերանի) ՊՇ-ների մարտիկների աջակցությամբ ապրիլի 20-21-ի ընթացքում ազատագրվեցին Իլիխիչլար ու Թաղիբեյլի գյուղերը:

Հաջորդ օրը, հրետանային նախապատրաստությունից հետո, հայ ազատամարտիկները վերահսկողություն հաստատեցին Բաշ Քարվենդ, Շուրաաբադ, Շլիսյար, Օրթա Քարվենդ, Ջավահիրլի բնակավայրերի նկատմամբ և ապրիլի 27-ին դուրս եկան Ադդամ-Բարդա մայրուղի: Նույն ժամանակահատվածում կամավորականները լռեցրեցին հակառակորդի կրակակետերը Շոթլանլու, ՈՒմուղլու, Մումա հատվածներում, որի արդյունքում մոտեցան Սեյսուլան, Հացավան և Կարմիրավան բնակավայրերին՝ Միր Բաշիր քաղաքից ընդամենը 10 կմ հեռավորությամբ:

Ապրիլի 26-ին Մարտունու ՊՇ-ի մարտիկները՝ հրասայլային ստորաբաժանման աջակցությամբ ազատագրեցին Սեյսուլանը: Շրջանցելով առաջնային գիծը կամավորականները մտան նաև Կարմիրավան: Այս խոշոր բնակավայրի անկումից հետո ադրբեջանցիների հիմնական հանձնարարությունը եղավ պահել Միրաշելլի-Թագաքենդ գիծը, որպեսզի հայկական զինուժին թույլ չտրվի առաջանալ Ադդամ-Բարդա մայրուղով և դուրս գալ Դյորթոյլի խաչմերուկը: Այդ նպատակով ադրբեջանական 190-րդ բրիգադում եղած ուժերից և պահեստագործից կազմավորվեց հարվածային զորախումբ, որի գրոհի արդյունքում հայկական կողմը ռազմաճակատի տվյալ հատվածում անցավ պաշտպանության, իսկ մարտիկների բոլոր փորձերը մոտենալ Լենինավան բնակավայրին ձախողվեցին: Մարդկային ծանր կորուստները հայկական զինվորական հրամանատարությանը ստիպեցին առժամանակ տվյալ հատվածում դադարեցնել հարձակողական մարտերը: Նման իրավիճակ էր ստեղծվել նաև Մարտակերտի ՊՇ-ի հատվածում: Շփման գիծն անցնում էր Թարթառի ջրանցքով: Ինքնապաշտպանական ուժերի մի քանի հարձակումները դեպի Չայլու հակառակորդի կողմից Հասանդայայում տեղակայված հրետանային մահաբեր կրակի պատճառով կասեցվեցին:

Փաստացի՝ ճակատային հարվածներով զրավել Միր Բաշիրը չհաջողվեց: Այնուհանդերձ, հայկական զինված ուժերի գրանցած

<sup>10</sup> Օհանյան Ս., Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը, Ե., 2012, էջ 180:

ընդհանուր հաջողությունները մեծ խուճապ առաջացրեցին մերձոագմաճակատային մի շարք աղբբեջանական բնակավայրերում:

Ապրիլի վերջին արդեն շուրջ 50 հազար աղբբեջանցիներ լքեցին Միր Բաշիրն ու հարակից բնակավայրերը: Այդ դեպքերի մասին «Ռոյթերս» գործակալությունը հաղորդում էր հետևյալը. «Տասնյակ հազարավոր աղբբեջանցիներ լքում են Բարդայի շրջանը, որը մոտ է Լեռնային Ղարաբաղին»<sup>11</sup>: Ըստ արևմտյան մեկնաբանների հայկական զինվորական հրամանատարության իրական նպատակը Եվլախի գրավումն էր, որի շնորհիվ կվերահսկվեր Վրաստան տանող կենսական մայրուղին ու երկաթգիծը, Աղբբեջանից Բաթումի նավահանգիստ տանող նավթամուղը<sup>12</sup>:

Եվ իսկապես, Բաքվում արդեն լուրջ մտավախություն ունեին, որ կերկնվեր 1993 թվականի ամառվա սցենարը և հայկական ուժերն այս անգամ էլ կհասնեն Քուր գետին: Իսկ դա իր հերթին հարցականի տակ կդնեը Աղբբեջանի, որպես պետության գոյության հարցն ընդհանրապես: Հ. Ալիևի խորհրդական Վ. Գուլիզադեն, հետագայում խոստովանել էր. «1994 թվականի ապրիլ-մայիսին Բաքուն միայն այն մասին էր մտածում, թե ինչպես պահի Թարթառն ու Բարդան, որ թույլ չտա հայերին դուրս գալ Քուր գետ...»<sup>13</sup>:

Մայիսի 2-ին Աղբբեջանական Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Ռասուլ Գուլիևի ղեկավարությամբ Բարդայում նիստ էր գումարվել պաշտպանության նախարարության բարձրագույն սպայական անձնակազմի, մերձոագմաճակատային շրջանների ղեկավար մարմինների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ: Հանգամանորեն լսելով ներկաների ելույթներն ու սթափ գնահատելով ստեղծված իրավիճակը, նիստից հետո, Ռ. Գուլիևը հանգել էր կրակն անհապաղ դադարեցնելու եզրակացության կարևորությանը:

Հայկական ղեկավար մարմինները ևս լավ հասկանում էին, որ աղբբեջանական զինված կազմավորումներն ի վիճակի չեն երկար դիմադրելու: Մի շարք վերլուծաբաններ կանխատեսում էին Աղբբեջանի մոտալուտ կապիտուլացիան: Այդ օրերին Արցախի ՊԲ քաղբաժնի պետի տեղակալ Սերժ Առուշանյանը նշում էր. «Մարտի դաշտը լքում են գումարտակներով, իսկ մեր զինվորը գիտակցաբար է կռվում, մենք

---

<sup>11</sup> «ՀՀ», Ե., 1994, N 85 (949):

<sup>12</sup> Նույնը:

<sup>13</sup> **Հակոբյան Հ.**, Ձորավարը, գ.2, Ե., 2013, էջ 72:

նահանջելու տեղ չունենք: Մենք Ադրբեջանին պետք է պարտադրենք խաղաղությունը»<sup>14</sup>: ՈՒ պարտադրեցին:

Թեև Միք Բաշիրն ու հարակից տարածքները չազատագրվեցին, բայց հայկական զինված ուժերի հուժկու գրոհային հարվածները կազմաքանդեցին ադրբեջանական բանակը, որի արդյունքում պաշտոնական Բաքուն դիմեց ԵԱՀԽ միջնորդական առաքելությանն ու մասնավորապես Ռուսաստանի ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովին՝ արցախյան հիմնահարցի կարգավորումը բացառապես բանակցությունների դաշտ տեղափոխելու խնդրանքով: Կրեմլի բանագնացի Երևան այցից հետո հայկական կողմը ևս պատրաստակամություն հայտնեց նստելու բանակցային սեղանի շուրջ:

Մայիսի 4-5-ին Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում հավաքված ԱՊՀ Միջխորհրդարանական խորհրդաժողովի ներկայացուցիչների միջնորդությամբ, Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքյանի, Ադրբեջանի Գերագույն խորհրդի փոխխոսնակ Աֆիյաթդին Ջալիլովի և Արցախի ԳԽ նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբոյրյանի միջև հաստատվեց պաշտոնական մի փաստաթուղթ, որն արցախյան հակամարտության կարգավորման պատմության մեջ մտավ «Բիշքեկյան արձանագրություն» անվամբ<sup>15</sup>: Ըստ այդմ հակամարտող կողմերը պատրաստակամություն հայտնեցին լիովին դադարեցնել ռազմական գործողություններն ու հարցը լուծել միայն խաղաղ, բանակցային ճանապարհով:

Համաձայն այդ փաստաթղթի՝ ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի, Ադրբեջանի պաշտպանության նախարար Մուհամմեդռաֆի Մամեդովի և Արցախի պաշտպանության բանակի հրամանատար Մամվել Բաբայանի կողմից առանձին-առանձին հաստատվեց համապատասխան զինադադարի արձանագրությունը, որն ուժի մեջ մտավ 1994 թվականի մայիսի 12-ից<sup>16</sup>:

---

<sup>14</sup> «Երկիր», Ե., 1994, N 86 (673), էջ 1:

<sup>15</sup> **Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Ս .**, նշվ. աշխ., էջ 171 – 172:

<sup>16</sup> Նույնը, էջ 173–174:

**Գ. Ավետիսյան**

**ՄԻՐ ԲԱՇԻՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ**  
**Ամփոփում**

Գագիկ Ավետիսյանի «Միր Բաշիրի ռազմական գործողությունը» հոդվածում ներկայացված է դարաբաղյան պատերազմի 1994 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ծավալված մարտերի ընթացքը: Այս ռազմական գործողությունը դարձավ դարաբաղյան հակամարտությունում պատերազմի և զինադադարի միջև առկա վերջին եզրագիծը:

Հոդվածում նկարագրված է Միր Բաշիրի ռազմագործողության բուն ընթացքը, Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի ծավալած ինքնապաշտպանական ու ազատագրական վերջին մարտերը, որոնք հող նախապատրաստեցին զինադադարի հաստատման գործում: Հարկ է նշել, որ այդ մարտերի արդյունքում թեև հայկական զինված ուժերին հաջողվեց ադրբեջանական զինված կազմավորումներից ազատագրել Մատաղիս, Թալիշ, Լևոնարիս, Ջրաբերդ և մի քանի այլ բնակավայրեր, բայց բուն Միր Բաշիր քաղաքն այդպես էլ չգրավվեց:

Միր Բաշիրի ռազմական գործողության արդյունքում երկուստեք մեծաքանակ մարդկային, ինչու չէ նաև նյութական կորուստներն ու կազմաքանդ եղած բանակով Ադրբեջան որպես պետության հետագա գոյության կասկածը, ստիպեցին ԵԱՀԽ Մինսկի խմբի համանախագահ երկրների ու առաջին հերթին Ռուսաստանի ներկայացուցիչներին անհապաղ գործուն քայլեր ձեռնարկել՝ ռազմական գործողությունների դադարեցման ուղղությամբ: Արդյունքում՝ եռակողմ հաստատված զինադադարի փաստաթուղթն ուժի մեջ մտավ 1994 թվականի մայիսի 12-ին:

**Г. Аветисян**

**МИР-БАШИРСКАЯ ВОЕННАЯ ОПЕРАЦИЯ**

**Резюме**

В статье описывается ход операции близ города Мир-Башир (Тертер), последние оборонительные и освободительные военные действия армии обороны Нагорного Карабаха, что и подготовило почву для подписания режима прекращения огня. Следует заметить, что хотя вследствие этих сражений армянскими вооруженным силам все-таки удалось освободить Матагис, Талыш, Левонарх, Джраберд, и еще несколько населенных пунктов

от азербайджанских вооруженных организаций, но сам город Мир-Башир так и не был захвачен.

В результате Мир-Баширской операции большие человеческие и материальные потери с обеих сторон, так же как и сомнения в дальнейшем существовании Азербайджана, как государства с разложенной армией, вынудили сопредседателям минской группы ОБСЕ и в первую очередь представителям России предпринять действенные меры по прекращению военных действий. В результате трехсторонний документ о перемирии вступил в силу с 12-ого мая 1994 года.

**G. Avetisyan**

### **MILITARY OPERATION OF MIR-BASHIR**

#### **Summary**

The article describes the real military operations of Mir-Bashir (Terter), the last battles of self-defence and amencipation of the Defense Army of the Nagorno-Karabakh Republic, which prepared favourable conditions for establishing an armistice. It should be noted, that although during the battles the Armenian armed forces managed to set free from the Azerbaijani armed organizations Mataghis, Talish, Levonarkh, Djraberd, and some other inhabited localities, the main city of Mir Bashir was not set free.

In the result of the military operations of Mir-Bashir, the large number of human loses and why not the material losses of both sides, the suspicion of the future existence of Azerbaijan as a state with its destroyed army made OSCE Minsk Group co-chairing countries, and first of all the representatives of Russia take immediate actions to stop the military operations. As a consequence the trilateral approved armistice document came into force on May 12, 1994.

*Խմբագրություն է ուղարկվել 26.12.18*

*Հանձնարարվել է գրախոսության 10.01.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

**ԱՆԱՀԻՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

«Ս. Փարաջանովի թանգարան» ՊՈԱԿ,  
Ցուցադրության կազմակերպման և  
հանրահռչակման բաժնի վարիչ  
[anahitam@mail.ru](mailto:anahitam@mail.ru)

**Ս. ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԷՔՍԿՈՒՐՍԱՎԱՐՆԵՐԻ  
ԻՄՊՐՈՎԻԶԱՆՏԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՎԵՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ  
ԿՈՂՄԻՑ**

**Բանալի բառեր.** իմպրովիզացիա (հանկարծաստեղծում), կոլաժ, մեկնաբանություններ, ընկալում, տպավորություններ:

**Ключевые слова:** Импровизация, коллаж, комментарии, восприятие, впечатления.

**Key words:** Improvisation, collage, comments, perception, impressions.

Մենք ապրում ենք մի դարաշրջանում, որտեղ իմպրովիզացիան ամբողջ մշակույթի համար դարձել է շարժիչ ուժի բանալի: Այն սկզբնավորվել է 20-րդ դարում, դեմ գնալով կարծրատիպերին, դարձել ազատության կոչ արվեստի բոլոր ճյուղերի համար:<sup>1</sup>

Իմպրովիզացիան համապատաստից ստեղծագործելն է, որը, հիմնականում, արել են երաժշտության մեջ, թատերական ներկայացումների ժամանակ, արվեստի ստեղծագործությունները ներկայացնելիս և մեկնաբանելիս:<sup>2</sup>

Վերջինս էլ մեր հետազոտության թեմաներից է, որի համար հիանալի օրինակ է 20-րդ դարի աշխարհահռչակ կինոբեմադրիչ Մերգեյ Փարաջանովի պլաստիկ արվեստը: Ում «Նոան գույնից» (Մայաթ-Նովա) հետո շուրջ 15 տարի թույլ չեն տվել ֆիլմ նկարահանել, իսկ նա օժտված լինելով ստեղծագործելու անսպառ էներգիայով, գտնում է մի ճանապարհ ինքնարտահայտվելու՝ կոլաժներ, ասամբլաժներ, ինստալացիաներ, տիկնիկներ, գլխարկներ ստեղծելով: Փարաջանովի պլաստիկ արվեստն իր

---

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս [www.middlebury.edu/~harris](http://www.middlebury.edu/~harris):

<sup>2</sup> Նույն տեղում:

բարձր ճաշակով բազմազանությամբ, գունեղ ու հարուստ նյութով և սրամտությամբ մինչ օրս էլ գիտականորեն ուսումնասիրված և մեկնաբանված չէ, ավելին ինքն էլ հատուկ բացատրություններ, մեկնաբանություններ չէր անում՝ ասելով, որ յուրաքնչյուրն ազատ է սեփական պատկերացմամբ ընկալելու և հասկանալու այն:

Որպեսզի հասկանանք այն իմպրովիզացիաները, որոնք արվում են նրա պլաստիկ արվեստի մեկնաբանումների ժամանակ, նախ անդրադառնանք Փարաջանովին: Նա հենց մեծ իմպրովիզատոր էր և՛ իր ֆիլմերը նկարահանելիս, և՛ իր պլաստիկ արվեստը ստեղծելիս, և՛ իր աշխատանքները ներկայացնելիս ու մեկնաբանելիս, և՛ առօրեա կյանքում: Նրա Թբիլիսիի բնակարանը, որտեղ, կարելի է ասել, ցուցադրվում էին իր գործերը, ինքնին թանգարան էր, ուր հաճախ նա համպատրաստից տեղափոխություններ, փոփոխություններ էր անում, կախված նրանից, թե ովքեր էին այդ պահին նրա հյուր-այցելուները: Համպատրաստից ստեղծելը, հորինելը կամ արդեն ստեղծվածը տարբեր անվանումներով անվանելը և մեկնաբանելը նրա, որպես նկարչի, ստեղծագործական սկիզբն էր:

Որպես նկարիչ, նա հանրությանը ներկայացավ իր 1985 թ. Թբիլիսի, 1988 և 1989 թթ. Երևանի ցուցահանդեսներով, որոնք նրա ոգևորող կեցվածքով և ակտիվ իմպրովիզներով ավելի շատ հիշեցնում էին տոնակատարությունների բեմադրություն, քան թե ցուցահանդեսների: Այցելուներն ակամա դառնում էին այդ պահին նրա կողմից հորինված ինչ-որ բեմադրության հանդիսատես կամ մասնակից: Օրինակ, կանայք դառնում էին կենդանի մանեկեններ, ովքեր կրում էին նրա կողմից ձևավորած գլխարկները, որոնք պատրաստված էին ի հիշատակ վրացուհի դերասանուհի Նատո Վաչնաձեի չխաղացած դերերի: Յուրաքանչյուրում Փարաջանովն էր նրանց ուղղորդում, թե որտեղ կանգնեն կամ նստեն և ինչպիսի կեցվածք ընդունեն՝ ստեղծելով իր համպատրաստի կոմպոզիցիան և կոտրելով այն կարծրատիպերը, թե թանգարաններն ու ցուցահանդեսները միայն դիտելու համար են: Այս ավանդույթը շարունակել է նաև Մերգեյ Փարաջանովի թանգարանի տնօրենը: Նա ոչ միայն իմպրովիզներ էր անում, այլ նաև լուսանկարում էր, սակայն տարիների ընթացքում հասկանալով, որ ձեռքերի հետ շփումից կվնասվեն գլխարկները, դադարեցրեց, և հետևյալ լուծմամբ ցուցադրեց(նկ.1):<sup>3</sup>

---

<sup>3</sup> Լ. Աբրահամյան, «Բաց տեքստերը թանգարանային ցուցադրությունում», էջ 4-7, 2012 թ.:



Նկ. 1

Նա հաճախ համպատրաստից փոփոխում էր իր աշխատանքները կամ նրանց անվանումները: Իր 1988թ. երևանյան ցուցահանդեսից առաջ դիմում է Լևոն Աբրահամյանին (իրեն օգնող կամավորների թիմից), որ նա օգնի գործերի անվանումները գրելու հարցում, որի ընթացքում վերջինս ակնատես է լինում, թե ինչպես է Փարաջանովը փոխում անվանումները: Օր.՝ 18-րդ դարի ուկրաինացի փիլիսոփա «Սկովորոդայի» խճանկարը փոխակերպում է 20-րդ դարի հայ պոետ «Չարենց» անվանումով, չնայած աշխատանքի հետևում մինչ օրս պահպանված է հին անվանումը:<sup>4</sup>

Փոխված անվանումով գործերից է «փիղը», որը Թբիլիսիի ցուցահանդեսին վերնագրել էր «Հնդկաստանը ողջունում է Կորային», իսկ Երևանի ցուցահանդեսին՝ «Մանկությանս ճամպուուկը փոխակերպված փղի»: Առաջին անվանումը պահի ազդեցությամբ էր տվել, քանի որ իր ընկեր կինոգետ Կորա Ծերեթելին նոր էր վերադարձել Հնդկաստանից, իսկ երկրորդն արդեն կապված է նրա արվեստում գործերի ձևափոխության դերի հետ:<sup>5</sup>

Ի տարբերություն Փարաջանովի, թանգարանի տնօրենը «Վրացուհու խորհրդանիշը», աշխատանքի անվանումը, որը կանացի կոշիկ է՝ դրված թռչնի վանդակում, փոխել է «Արևելյան կնոջ ճակատագիրը» անվանումով՝ ավելի քաղաքակիրթ ձևով ներկայացնելու նպատակով, քանի որ այցելուն կարող էր սխալ հասկանալ:<sup>6</sup>

---

<sup>4</sup> Լ. Աբրահամյան, «Բաց տեքստերը թանգարանային ցուցադրությունում», էջ 4-7, 2012 թ.:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Հարցազրույց Լ. Աբրահամյանի հետ, 12.05.2016 թ.:

Անվանումները փոխելու մյուս պատճառները գործերը փոխակերպելու արդյունքում էին լինում: Դրանք հիմնականում ինստալացիաներ էին, որոնք թույլ էին տալիս այնպիսի փոխակերպումներ, որոնց արդյունքում չէին վնասվում նրանց բաղադրիչները: Փարաջանովը, հատկապես, սիրում էր իմպրովիզներ անել իր alter ego տղամարդ մանեկենի հետ: 1983-1984 թթ. նրա Թբիլիսիի տանն այն դրված էր մեկ այլ կին մանեկենի կողքին՝ անվանելով կոմպոզիցիան «Իմ ընտանիքը», իսկ 1985 թ. ինքնանկար մանեկենը միայնակ էր կանգնած՝ այցելուների ուշադրությունը գրավելով գլխին դրված վանդակով, որի մեջ կենդանի թռչուններ էր դրել, հատկապես ուշագրավ էր, երբ Փարաջանովը նրանց կերակրում էր: 1988 թ. ցուցահանդեսին այն իր ձեռքերին գրկել էր շղարշով ծածկված մեկ այլ մանեկենի՝ ներկայացնելով ռուս հայտնի կինոբեմադրիչ Անդրեյ Տարկովսկուն, ով այդ ժամանակ նոր էր մահացել, իսկ այժմ այդ կոմպոզիցիայի հերոսները, որոնց նա անվանել էր «Պիետոս»՝ առանձին կանգնած են թանգարանի երկու հարկերում:<sup>7</sup>

Իմպրովիզացիաները, կարծես ոչ կանխամտածված, բայց այսօր էլ շարունակվում են Ս. Փարաջանովի թանգարանում: Թանգարանը բացվել է 1991 թ. Երևանում, մահից մեկ տարի հետո, որի ցուցադրությունը հիմնված է նրա երեք ցուցահանդեսների վրա: Հետևաբար թանգարանի աշխատակիցներն էքսկուրսիոն տեքստը կազմել են նրա կենսագրական տվյալների, բերանացի փոխանցված պատմությունների, ընտանիքի անդամների և ընկերների հուշերի վրա, որն էլ իր ձևով բաց տեքստ է: Այստեղ էքսկուրսավարն ազատ է նյութն ընտրելիս, ներկայացնելիս, ինչպես նաև որոշ իմպրովիզներ մեկնաբանելիս, ինչն էլ հիմնականում կախված է այցելուի բնույթից:

Թանգարանում ցուցադրվող աշխատանքները, ինչպես արդեն նշել էինք, գիտականորեն ուսումնասիրված և բացատրված չեն, իսկ հաճախ լինում են գիտակ այցելուներ և այնպիսի հարցեր են տալիս, որոնց մասին, պատահում է, որ էքսկուրսավարը տեղյակ չի լինում. նրա կենսագրության և աշխատանքների պատմության հետ միասին, որոնք արտացոլում են սովետական առօրեականությունը, առանձին անհատներին և իրադարձությունները, անհրաժեշտ է տիրապետել նաև այդ ժամանակաշրջանին ամբողջությամբ, սովետական կինեմատոգրաֆիայի պատմությանը, մշակույթին, արվեստին: Այս բոլորը իմանալու համար տարիներ են պետք, իսկ սկսնակ էքսկուրսավարը չի կարող տիրապետել

---

<sup>7</sup> Լ. Աբրահամյան, «Բաց տեքստերը թանգարանային ցուցադրությունում», էջ 4-7, 2012 թ.:

այդ ամբողջ տեղեկատվությանը, և էքսկուրսիան չտապալելու համար նա դիմում է իմպրովիզների:

Երբ այցելուները կարողանում են հասկանալ Փարաջանովի գեղեցիկ արվեստ ստեղծելու սկզբունքը, զգացմունքները, հումորը, սարկազմը, հեզնանքը (իրոնիա), այցելուների և էքսկուրսավարի միջև կոտրվում է սառույցը, և բացատրությունը ավելի շատ մտերմիկ զրույցի է վերածվում: Երբեմն այցելուն ինքն է իմպրովիզ անում, իսկ էքսկուրսավարը զարգացնում ու հարստացնում է այն և ավելացնում իր խոսքին:

Որպես էքսկուրսավար, մեջբերեմ նաև իմ փորձը: Երբ ինձ հարցնում էին որևէ աշխատանքի մասին, որը չուներ մեկնաբանություն կամ այս կամ այն իրը, դետալը ինչ նպատակով է օգտագործել տվյալ աշխատանքում, ես դիմում էի իմպրովիզի: Այժմ պատկերն այլ է, ես համապատաստից հորինում եմ՝ ելնելով նրանից, թե ինչպես եմ ես այն ընկալում և հասկանում, որոնցից մի քանիսն էլ դարձել են իմ էքսկուրսիոն տեքստի մի մասը: Պատահել է, որ իմ կողմից հորինվածն այդքան էլ չի համապատասխանել աշխատանքին:



Նկ.2

Օրինակ «Ընտրություններ խամաճիկների մոտ» (նկ.2) աշխատանքը երկար ժամանակ ես բացատրում էի այնպես ինչպես ես էի ընկալում: Նախապես իմանալով, որ նրան երկրորդ անգամ բանտարկել են կաշառք տալու համար ես ասոցացնում էի կաշառակերության թեմայի հետ, բացատրելով, որ ինքը փոխաբերական իմաստով ցույց է տալիս սովետական կաշառակերությունը՝ օգտագործելով ամերիկյան ոճը, քանի որ աշխատանքում կա դոլլար, Ջորջ Վաշինգտոնի նկարը և խամաճիկներ, սակայն այս հետազոտությունը կատարելիս պարզեցի, որ ընդամենը կանխազգացել է, թե ընտրություններից առաջ ինչեր են տեղի ունենում, մարդիկ գումարի դիմաց տալիս են իրենց ձայնը, ինչն էլ բոլոր ժամանակներում արդիական է:

Հետազոտության ընթացքում պարզվեց, որ աշխատանքների վերաբերյալ իմպրովիզները շատ են, և մեկ հոդվածով հնարավոր չէր ներկայացնել բոլորը, ուստի ընտրեցի ամենալավ օրինակները:



Նկ.3

«Խորհրդավոր ընթրիք» (նկ.3) կոլաժ. Լեոնարդո դա Վինչիի Խորհրդավոր ընթրիքը կրկնօրինակ նկարին ավելացրել է իր հերոսների՝ Խրուշչովի, Ստալինի և Ալ Կապոնեի նկարները, ավելացրել է նաև իր սրտի էլեկտրասրտագրությունը, քանի որ ասում էր, որ իմ գործերը դրանք իմ սրտի էլեկտրասրտագրություններն են: Մեղանին ավելացրել է հարստությունը խորհրդանշող ֆաբերժեի ձվերը, սիրտ, այսինքն դա մեզանից է կախված, թե մենք որն ենք ընտրում՝ խիղճը, թե հարստությունը: Իր կողմից ավելացրած հերոսներին էլ դրել է երևի նրա համար, որ ցույց տա, թե մարդիկ հաճախ ստիպված են իրար դավաճանում՝ ելնելով իրենց բռնակալ ղեկավարներից: Վերևում կա նաև մի մատնահետք՝ երբ հայերենում «մատ» բառին ավելացնում ենք «ել» վերջավորությունը ստանում ենք «մատնել» բայը, որը հոմանիշ է դավաճանել բառին:<sup>8</sup> Սակայն պետք է նշենք, որ Փարաջանովն այդչափ լավ չգիտեր հայերեն, որպեսզի մատնահետքն այդպիսի իմաստով մտցներ աշխատանքում, ուստի գործ ունենք զուտ մեկնաբանության հետ՝ այս անգամ իմաստային առումներով, ինչը Փարաբաջանովը կհավաներ: Մատնահետքը կարող ենք նաև որպես բռնաճնշում մեկնաբանել, քանի որ հանցավորներին ձերբակալելիս վերցնում են նրանց մատնահետքերը: Նմանատիպ մեկնաբանություն է արել Լ. Աբրահամյանը նրա Միլվեստրով կոլաժի վերաբերյալ.

<sup>8</sup> Մեկնաբանությունը վերցված է Ա. Միքայելյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 05.03.2016 թ.:

Միլվեստրովը ունի տրիպտիխ «Դրամա» դաշնամուրի համար, որի առաջին մասը, գրված է ջութակի և դաշնամուրի համար, վերջանում է հետևյալ ձևով. ջութակահարը ջութակը դնում է դաշնամուրի վրա, վերցնում լուցկու տուփը, վառում լուցկին և բարձր փչում այն: Կոլաժում մենք տեսնում ենք Միլվեստրովին, ով ձախ ձեռքը բռնել է այնպես, ինչպես ջութակահարներն են բռնում, իսկ ձեռքերի միջև լուսարձակի մանրապատկեր է, որն էլ հանդիսանում է վառվող լուցկու այլաբանությունը(նկ.4):<sup>9</sup>



Նկ.4

Ինչ վերաբերում է երեք հերոսներին, չնայած նրան, որ թանգարանի տնօրենն, իր բազմաթիվ փնտրտուքներից հետո, եկել է այն եզրահանգմանը, որ Խրուշչովի և Ստալինի հետ ավելացրել է Ալ Կապոնեի նկարը, Լ. Աբրահամյանն այն կարծիքին է, որ դա Ֆելիսին է. նախ Փարաջանովը հազիվ թե Ալ Կապոնեի նկարն ունենար և երկրորդ՝ նա չէր նստեցնի առաքյալների հետ և բացի դա բռնակալներին ընթրողներից դուրս դաշտում է պատկերել:<sup>10</sup>

Փարաջանովն այս աշխատանքը ստեղծել է, երբ հոգեպես ծանր վիճակում է եղել, երբ իրեն դավաճանել են, ցավ են պատճառել, ինչը նրա հետ հաճախ էր պատահում: Սեդանի վրա ավելացված ոսկյա ձվերը խորհրդանշում են կաշառք, իսկ սիրտը՝ զոհ: Կարևոր չէ Խրուշչովի, Ստալինի, Ալ Կապոնեի ժամանակների զոհն է, թե ներկայիս: Հուդային

<sup>9</sup> Չ. Սարգսյան, Լ. Աբրահամյան, «Փարաջանով գեղադիտակ» Գծանկարներ, կոլաժներ, ասամբլեաժներ, Ս. Փարաջանովի թանգարան, Երևան, 2008 թ.:

<sup>10</sup> Հարցազրույց Լ. Աբրահամյանի հետ, 16.07.2016 թ.:

կապել է ժամանակակից ժամացույց, որից էլ ենթադրվում է, որ դավաճանությունը շարունակական է:<sup>11</sup>

Խրուչչովն է, Ստալինը և Ալ Կապոնեն, իսկ ներքևում իր սրտի կարդիոգրաման, սեղանին սիրտ է դրել, որը Քրիստոսի սիրտն է և բաց բոլորի համար, այսինքն նա գիտեր, որ իրեն դավաճանելու են, սակայն ոչինչ չարեց: Այս երեք կերպարներին դրել է, որպեսզի ցույց տա, որ սովորական մարդիկ կարիք չունեն իրար դավաճանելու, այլ նրանց ստիպում են բռնակալները, իշխանավորները, հանցավորները, իսկ մատնահետքը՝ ամեն ինչ պարզ է, ոչինչ չկա թաքցնելու:<sup>12</sup>

Լեոնարդո դա Վինչիի նկարի կրկնօրինակի վրա Փարաջանովը ավելացրել է երեք հերոսների՝ ակնարկելով, որ երկրում վատ մթնոլորտը, դավաճանությունը, մատնությունը, որոնք հաճախ շատանում էին բռնակալների մեղքով: Մատնահետք է դրել ասելու համար, որ երկնքում բոլորի գործերից տեղյակ են, ամեն ինչ գիտեն:<sup>13</sup>

1973 թ.՝ ռեժիմի տարիներին, իրեն թույլ է տվել այդպիսի ազատություն՝ այս մարդկանց հավաքելով մի սեղանի շուրջ: Ինչպես Բելա Ախմադովինան էր ասում նրա մահից հետո՝ մահացավ ամենաազատ մարդը ամենաանազատ երկրում:<sup>14</sup>

---

<sup>11</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Դալայանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի էքսկուրսավար), 20.02.2016 թ.:

<sup>12</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Թամազյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 29.02.2016 թ.:

<sup>13</sup> Մեկնաբանությունը վերցված է Խ. Կոբեյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի ցուցադրման և հանրահոշակաման բաժնի վարիչ), 03.02.2016 թ.:

<sup>14</sup> Մեկնաբանությունը վերցված է Կ. Մարտիրոսյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 01.03.2016 թ.:



Նկ.5

«Տարկովսկու գիշերահավքը» (նկ.5) թոչունը Տարկովսկու գլխին խոսում է այն մասին, որ նա հնարավորություն ուներ իրականացնելու իր մտքերը, նրա վզից նաև մեղալիտն է կախված, այսինքն ունի փառք, փող, բայց աչքերում կարոտ է, քանի որ ապրում էր իր հայրենիքից հեռու:<sup>15</sup>

Կուլաժում երկու հայտնի կինոբեմադրիչներ են, որոնցից մեկը գտնվում է փառքի գագաթնակետին, իսկ մյուսին թույլ չէին տալիս ֆիլմ նկարել, դրա համար Տարկովսկու վզին մեղալ է կախել, իսկ իրեն մերկ ու ձեռքերը շղթայված է պատկերել: Սակայն մեղալիտնը շատ մեծ է, այսինքն ոչ բոլոր մարդիկ կարող են պատվով մնալ փառքի գագաթնակետին, որովհետև տարբեր ուժեր փորձում են խոչընդոտել:<sup>16</sup>

Տարկովսկին հյուրընկալվել էր Փարաջանովի տանը և այդ երկու ընկերներին լուսանկարել են, որի վրա նա կուլաժ է արել, իսկ Տարկովսկու մահից հետո ձևափոխել է՝ ավելացնելով կավե թոչունը, լամպը և անվանել «Տարկովսկու գիշերահավքը», որտեղ կարող ենք երկու հանճարների ճակատագրերը տեսնել: Տարկովսկու գլխին դրել է գիշերահավքը, որը շնորհ (մուսա) է տալիս ստեղծագործելու և վզից կախել է ոսկյա մեղալիտն՝ ցույց տալու համար, որ նա ազատ է, կարողանում է նկարահանել ֆիլմեր, որոնք ինքն է ցանկանում, նրա ֆիլմերը ցուցադրվում են

<sup>15</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Դալայանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի էքսկուրսավար), 09.04.2016 թ.:

<sup>16</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Թամազյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 25.03.2016 թ.:

կինոփառատոններին, իսկ իրեն մերկ է պատկերել՝ ձեռքերը ոսկյա շղթայով շղթայված, այսինքն ինքը ոչինչ չունի և թույլ չեն տալիս ֆիլմ նկարել:<sup>17</sup>

Կոլաժի առաջին տարբերակում նկարի առաջ վառվում էր նավթավառն, որի մոտ էր թռչել եկել անտեսանելի թռչունը: Այդ ծավալային թռչունը ձայնակցում էր երկու ուրիշ թռչունների հետ՝ սոսնձված լուսանկարին, որոնք դիտվում էին որպես ֆոն հիմնական թռչնի առաջնային պլանում: Սակայն 1987 թ. ստեղծված կոլաժում Փարաջանովին և Տարկովսկուն այցելած այդ առեղծվածաին թռչունները այլ իմաստներով էին հասկացվում: Թռչունը Տարկովսկու գլխին էր նստած, իսկ Փարաջանովի, շղթայով շղթայված, ձեռքերին: Տարկովսկու վզին ոսկյա մեղալիոնով շղթա է կախված: Միանգամից պարզ է դառնում, որ առեղծվածային թռչունները ճակատագրերի նախալրաբերներն են, որոնք հեքիաթներում գտնում են իրենց երջանիկ աստղի տակ ծնված ընտրյալին: Փայտյա գիշերային թռչունը հիմա վատ լրաբեր է, նա կարծես թե նոր է թռել իր հաջողակ ընտրյալի գլխից: Այսպես Փարաջանովի մոտ մեկը փոխակերպվում է մյուսի, քանի որ թռչունների թռիչքից ստեղծվում է նրա կոմպոզիցիան: Փայտե թռչունն անհետանում է ցուցահանդեսից հետո և հնարավոր չի լինում վերականգնել, սակայն անվանումը մնում է գիշերային թռչուն: Հնարավոր է, որ թռչունը կատարել էր իր չար դերը, կանխագուշակել էր ևս մեկ մահ, և մեզ մնում է երկու վաղամեռիկ կինոբեմադրիչների ճակատագիրն այնպիսի ձևով, ինչպիսին տեսել է Փարաջանովը, երբ վշտով խմբագրել է իր տանն արված լուսանկարը:<sup>18</sup>



Ակ.6

«Հայ ժողովուրդ» (նկ.6) աշխատանքը նվիրել է հայ ժողովրդին և բոլոր պատկերները տեղի են ունեցել 20-րդ դարում: Սա ցեղասպանությունն է,

<sup>17</sup> Մեկնաբանությունը վերցված է Ա. Միքայելյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 05.03.2016 թ.:

<sup>18</sup> Լ. Աբրահամյան «Այցելություն կինոբեմադրչի թանգարան՝ վերածված տոնակատարության», հոդված, Երևան, Թանգարանագիտական հանդես, 2011 թ.:

իսկ Տիրամայրի ու Քրիստոսի պատկերներից հասկանում ենք, որ նա մեծ ուշադրություն է դարձրել քրիստոնեությանը: Ստորև ժողովուրդն է՝ փշալարով բաժանված Արարատ սարից, այսինքն իրենց հայրենիքից: Այժմ պատկերացնենք, որ այս վերնաշապիկն Արևելյան և Արևմտյան Հայաստանն է: Փոքր Արարատի հատվածն է, քանի որ փոքր մասն է մնացել հայերին, ապա դա Արևելյան Հայաստանն է, որի վերևում պատկերված զինվորներից հասկանում ենք իշխանափոխություն, ներքևում Հայոց Կաթողիկոսն է, որի նստավայրը գրեթե միշտ էջմիածնում է եղել, որը կրկին Արևելյան Հայաստանում է, իսկ Արևմտյան մասում ցեղասպանություն է տեղի ունեցել, ներքևում փրկված հայ ժողովուրդն է, կողքերին պահապան հրեշտակ և մկրատով կտրված փշալար, այսինքն ուզում է, որ այդ մարդիկ վերադառնան իրենց տները: Հատկանշական են սարերի վրայի կենդանիները՝ մի մասում գայլերն են, մյուսում՝ եղնիկներ: Վերնաշապիկի արևելյան մասը խորհրդանշող հատվածն ամբողջությամբ զարդարված է, որից էլ ենթադրում ենք, որ կյանքը շարունակվում է, իսկ արևմտյան մասում կա միայն ժամացույց, որից կախված են «հույս», «հավատ», «սեր» խորհրդանիշները և մի «բանալի», որն էլ հայ ժողովրդի միասնության բանալին է: Հետևում կա պատկերված կտրված ձեռք: Ասում էին, որ միջնադարում պատվիրում էին վարպետներին, որպեսզի նրանք արվեստի գործեր անեին, իսկ եթե պատվիրատուին շատ էր դուր գալիս նա կտրում էր հեղինակի ձեռքը, որ նա նման երկրորդը չանի: Փարաջանովն էլ խոստում է տալիս, որ ուրիշի համար նմանը չի անելու: Թևատակի քրտինքը խորհրդանշում է Սովետական Միության աշխատավորությունը, որտեղ գովերգվում էր աշխատասիրությունը:<sup>19</sup>

Սա Հայոց ցեղասպանությունն է, Արարատ սարը, հայոց եկեղեցին, որտեղ տեսնում ենք լաց, արյուն, նկարել է նաև կակտուս, որը խորհրդանշում է մեր ցավը, որը միշտ մեր սրտերում է:<sup>20</sup>

Ինչպես Փարաջանովն էր ասում, յուրաքանչյուր կուլած դա խտացված ֆիլմ է, և այս վերնաշապիկի վրա խտացված նկարագրող էլ է մեր պատմությունը: Վերնաշապիկը բաժանել է երկու մասերի՝ արևելյան և արևմտյան: Արևմտյան մասում նկարագրողված այս պատկերը կարող ենք ցեղասպանության հետ համադրել, այնուհետև Տիրամոր պատկերն է, որին հաջորդում է Արարատ սարը, որի վրա արդեն գայլերն են վիստում:

---

<sup>19</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Թամազյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 25.02.2016 թ.:

<sup>20</sup> Մեկնաբանությունը վերցված է Ն. Դալայանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի էքսկուրսավար), 16.03.2016 թ.:

Փշալարը և մկրատը նրա արվեստում խորհրդանշում է ազատությունը, իսկ այստեղ սահման է, ժողովրդի և Արարատ սարի միջև, այսինքն փրկված մարդկանց և նրանց հայրենիքի միջև արդեն կա սահման: Արևելյան մասում ռուսական զինվորներն են, իսկ հետևում հայկական եկեղեցին, որը հետին պլան է մղվում սովետական կարգերի ժամանակ, Քրիստոսի պատկերն է և Հայոց Կաթողիկոսը: Այս հատվածը ամբողջությամբ զարդարված է, ինչն էլ վկայում է, որ կյանքը իր բնականոն հունով ընթանում է, իսկ արևմտյան մասի այս հատվածում ոչինչ չկա, միայն մի ժամացույց:<sup>21</sup>



Նկ.7

«Հիշողությունն սև խավիարի մասին» (նկ.7), որը սարկազմային բնույթի եռաչափ կոլաժ է: Սև խավիարը Սովետական Միությունում դեղիկատես էր համարվում, բայց միշտ դեֆիցիտ էր լինում: Աշխատանքը միայն քորոցներից է արել, ցանկանալով ցույց տալ, որ ձկից միայն փշերն էին մնում:

Միննուն կոլաժը մեկնաբանվում է նաև այնպես, որ մարդիկ խավիար ուտելուց հետո պահում էին տուփը, որպեսզի հետո հարևաններին և բարեկամներին ցույց տային, որ իրենք խավիար են կերել, որովհետև այն



շատ թանկ էր:<sup>22</sup>

Նկ.8

<sup>21</sup> Մեկնաբանությունը վերցված է Ա. Միքայելյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի գիտաշխատող), 28.04.2016 թ.:

<sup>22</sup> Մեկնաբանությունը վերցված է Խ. Կորբելյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի ցուցադրման և հանրահոշակաման բաժնի վարիչ), 14.02.2016 թ.:

«Հայ կինոյի ապագան» գործում Փարաջանովն իրեն թագադրել է՝ գլխին փակցնելով եկեղեցու գմբեթ (նկ.8): Նման ձևով ցույց է տալիս, որ իրենից հետո վերածնվում է հայ կինոն:<sup>23</sup>

Այս բոլոր իմպրովիզները միտված են նրա արվեստն ավելի հասկանալի և ընկալելի դարձնելուն, քանի որ այն բարդ է, և եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Փարաջանովը շատ քչերի վերաբերյալ է բացատրություններ տվել, ապա սովորական մարդուն, գրեթե անհնար կլինի հասկանալ այն: Այստեղից էլ հետևություն, որ էքսկուրսավարները, դիմելով իմպրովիզների, փորձում են այցելուներին օգնել և տալ բանալի՝ Փարաջանովի արվեստին մոտենալու, հասկանալու, և ինչու չէ՝ էքսկուրսիոն տեքստը հետաքրքիր և հարուստ դարձնելու համար:

Հետազոտության երկրորդ մասը վերաբերում է ընկալումներին, և դրանք պարզելու համար ուսումնասիրել ենք այն ծրագրերը, որոնք կազմակերպվել և իրականացվել են նրա արվեստի ընկալման և ներշնչման արդյունքում, ինչպես նաև իր ցուցահանդեսների և թանգարանի սպավորությունների գրքերի գրառումները:

Հաշվի առնելով, որ 2014 թ. Ս. Փարաջանովի հոբելյանական տարին էր, Ազգային ժողովը հանդես եկավ հետաքրքիր առաջարկությամբ: Թանգարանի հետ համատեղ կազմակերպվեց Երևանից և Հայաստանի տարբեր մարզերից շնորհալի երեխաների այցելություն թանգարան, որից հետո երեխաներին առաջարկվեց, ներշնչվելով Փարաջանովի արվեստով, ստեղծել գեղարվեստական աշխատանքներ: Մի քանի ամիս անց թանգարանը և Ազգային ժողովը համատեղ կազմակերպեցին այդ շնորհալի երեխաների աշխատանքների ցուցահանդեսը, որտեղ հաղթող ճանաչվեց հեռավոր գյուղից մի երեխա, ով ապակուց պատկերել էր Փարաջանովի դիմանկարը: (նկ.9)

---

<sup>23</sup> Մեկնաբանությունը վերցված է Խ. Կոբեյանի էքսկուրսիայից (Ս. Փարաջանովի թանգարանի ցուցադրման և հանրահռչակման բաժնի վարիչ), 29.02.2016 թ.:



Նկ.9

Հետաքրքիր և յուրօրինակ էին ընկալել և մեկնաբանել Փարաջանովի արվեստը Հայկանուշ Դանիելյանի արվեստի դպրոցի սաները, որոնց աշխատանքները ցուցադրվեցին թանգարանում: Թանգարանում էքսկուրսիա լսելուց հետո նրանց մոտ միտք էր ծնվել գլխարկների շարք անել, սակայն ընթացքում հասկացել էին, որ ուղղակի գլխարկները ցուցադրել այդքան էլ հետաքրքիր չի լինի և մտածում են կոմպոզիցիա ստեղծել: Ներկայացված աշխատանքներն իմաստային և առարկայական առումով հավաքական էին. կոլաժներից վերցրած միտք, դետալներ՝ համադրված «Նոան գոյնը» ֆիլմի որևէ կադրի հետ: Յուրաքանչյուր երեխա վերցել էր այն աշխատանքները կամ դրանցում եղած դետալները, որոնք ինքն էր նախընտրել և օգտագործել իր աշխատանքում ինչպես ինքն էր ընկալել: Այս ցուցահանդեսում ամենաառաջնային բաներից էր նաև այն, որ իրենք էին մարմնավորում իրենց ստեղծած աշխատանքը:<sup>24</sup>

16-ամյա Ռոզայի հետ հարցազրույցից պարզ դարձավ, որ նա ճամպուրուկը և իր կերպարը ստեղծել էր ոգեշնչվելով Փարաջանովի շոգեքարշ աշխատանքով՝ ընկալելով որպես ճանապարհ և ճամփորդ իմաստներով:<sup>25</sup> (նկ.10)

---

<sup>24</sup> Հարցազրույց Ռոզաննա Սմբատյանի հետ, կերպարվեստի ուսուցիչ, 11.05.16 թ.:

<sup>25</sup> Հարցազրույց Ռոզայի հետ, 11.05.2016 թ.:



Նկ.10

13 տարեկան Գոհարը աշխատանքում Փարաջանովի ազատ մտածելակերպն է ցուցադրել, նույնիսկ բանտարկված նա ազատ էր:<sup>26</sup> (նկ.11)



Նկ.11

13 տարեկան Միլենան թանգարանում հասկացել էր, որ Փարաջանովի սիրելի միրգը նուրն էր և դա նրան դուր էր եկել, քանի որ ինքը այն ընկալել էր որպես գեղեցկության խորհրդանիշ և համադրելով «Նոան գույնը» ֆիլմից Սոֆիկոյի կերպարի հետ՝ ստեղծել էր իր կերպար-աշխատանքը:<sup>27</sup> (նկ.12)

---

<sup>26</sup> Հարցազրույց Գոհարի հետ, 11.05.2016 թ.:

<sup>27</sup> Հարցազրույց Միլենայի հետ, 11.05.2016 թ.:



Նկ.12

13 տարեկան Սոնան իր աշխատանքը անվանել էր մտքերի արտացոլանք՝ բացատրելով, որ Փարաջանովի գործերը խոսում են նրա մտքերի, տրամադրության, հոգեվիճակի մասին<sup>28</sup>: (նկ.13)



Նկ.13

Այսօր էլ թանգարանը համագործակցում է Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հետ, որտեղ կենտրոնի սաներն են հանդես գալիս ստեղծագործողի դերում: Թանգարանի աշխատակիցներն ընտրում են թեմաները և նախապատրաստում կոլաժներ պատրաստելու համար համապատասխան նյութերը: Նախապես էքսկուրսավարները նրանց մի

---

<sup>28</sup> Հարցազրույց Սոնայի հետ, 11.05.2016 թ.:

փոքր տեղեկություն են տալիս Փարաջանովի, նրա աշխատանքների և թանգարանի մասին, այնուհետև թանգարանի բակում նրանք բաժանվում են խմբերի և կոլաժներ են անում: Աշխատանքներն ավարտելուց հետո յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է իրենց կոլաժը, այդ մեկնաբանություններից էլ պարզ է դառնում, թե ինչպես են ընկալել նրա արվեստը:

Մինչև 1988 թ. մարդիկ նրան գիտեին որպես կինոբեմադրիչ, սակայն նրա, իրար հաջորդող ցուցահանդեսներից հետո, պատկերը փոխվեց, և նրան ճանաչեցին նաև որպես նկարիչ: Ցուցահանդեսների, հետագայում էլ թանգարանի տպավորությունների գրքերը ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ նրա գործերը մարդկանց համար մի նոր աշխարհի բացահայտում էին, որտեղ նրանք ազատ էին հասկանալու, ընկալելու և զգալու հարցում:

Այցելուների մի մասի համար մանկությունն էր հիշեցնում. «Ձեր ցուցահանդեսը դա մանկություն վերադառնալու ակնթարթ է, մանկական իլուզիա»<sup>29</sup>, «Սյուրռեալիզմ, ռետրո, նոստալգիա, շատ զգացողություններ, որոնք արտահայտված չեն շատերի կողմից»<sup>30</sup>, իսկ մյուսները հայտնվում էին հեքիաթում կամ մասնակցում տոնահանդեսի. «Ձեր հեքիաթը դիտելիս սկամա մոռանում եմ շունչ առնել»<sup>31</sup>, «Գույների և երևակայության ինչպիսի տոնահանդես»<sup>32</sup>, «Այս տանն ամեն ինչ ապրելու ցանկություն է առաջացնում՝ գեղեցկություն, բանաստեղծություն, երևակայություն...»<sup>33</sup> գրել է դերասանուհի Ֆ. Արդանը:

Նրանցից շատերը սովորում էին տեսնել և զգալ գեղեցիկը, որը իրենց շրջապատող հասարակ և անպիտան իրերի մեջ էր կամ ազատվում էին կարծրացած կապանքներից. «Արվեստը ինչ-որ գերբնական բան չէ, այն մեզ շրջապատող ամեն ինչի մեջ է, միայն պետք է այն տեսնել «լեզու» տալ: Ձեր արվեստով կարողացաք սովորեցնել այլ աչքերով նայելու ինձ շրջապատող

---

<sup>29</sup> Տե՛ս Ս. Փարաջանովի 1988 թ. Ժողովրդական արվեստի թանգարանում կազմակերպված ցուցահանդեսի տպավորությունների մատյան (առաջին), էջ 40, 1988 թ.:

<sup>30</sup> Նույն տեղում (մատյան երրորդ), էջ 15, 1988 թ.:

<sup>31</sup> Նույն տեղում (մատյան երրորդ), էջ 21; 1988 թ.:

<sup>32</sup> Նույն տեղում (մատյան երրորդ), էջ 10; 1988 թ.:

<sup>33</sup> Ս. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (երկրորդ), էջ 13, 2011 թ.:

ամեն ինչին»<sup>34</sup>, «Այս աշխատանքները դիտելիս իմ մոտ արթնանում է գեղեցիկի նկատմամբ ուշադրության զգացմունք»<sup>35</sup>, «Ձեր գործերը նման են թարմ օդի, երբ առավոտյան բաց պատուհանից ներս են խուժում: Դրանցում քանդված են մարդկության նախասահմանած արգելքները»<sup>36</sup>, «Ձեր արվեստը իմ բոլոր կապանքները քանդեց, կեցցե՛ս»<sup>37</sup>, «Մեզ շատ դուր եկավ Ձեր հիանալի ցուցահանդեսը, զարմանում ես, թե ինչպես կարելի է այդպիսի պարզ ու հասարակ իրերից ստեղծել այդքան հիասքանչ ու գեղեցիկ կոմպոզիցիաներ»<sup>38</sup>, «Ահավոր է... Այդքան պարզության մեջ այդքան բարդություն: Միայն հանճարը կարող էր հասարակ, կենցաղային իրերից կերտել այդպիսի վսեմ արվեստ»<sup>39</sup>:

Շատերի համար նա հանճարի, խենթի, գծի էր նման. «Աներևակայելի էր տեսնել և զգալ այսպիսի մեծ նկարչի ստեղծագործությունները... Ես երջանիկ եմ»<sup>40</sup> գրել է կինոբեմադրիչ Է. Կուստուրիցան, «Դուք կամ հանճար եք կամ զիժ»<sup>41</sup>, «Հանճարի նուրբ լիրիկան և զարմանալի խենթությունը մեկտեղ»<sup>42</sup>, «Մեծատաղանդ ինչե՛րա»<sup>43</sup>, «Սատանայի կամակատար»<sup>44</sup>, մյուսներն էլ մեկնաբանում էին հետևալ բառերով. «Թթու թան չի ամեն մարդու բան չի»<sup>45</sup>, «Աներևակայելի գաղափարների գալակտիկա»<sup>46</sup>, «Չփորձեցի էլ Ձեզ հասկանալ: Ես իմը հասկացա: Կարևորը դա է»<sup>47</sup>:

---

<sup>34</sup> Մ.Փարաջանովի 1988 թ. Ժողովրդական արվեստի թանգարանում կազմակերպված ցուցահանդեսի տպավորությունների մատյան (երրորդ), էջ 58, 1988 թ.:

<sup>35</sup> Նույն տեղում (մատյան չորրորդ), էջ 94, 1988 թ.:

<sup>36</sup> Մ.Փարաջանովի 1988 թ. Ժողովրդական արվեստի թանգարանում կազմակերպված ցուցահանդեսի տպավորությունների (մատյան առաջին), էջ 13, 1988 թ.:

<sup>37</sup> Նույն տեղում (մատյան երկրորդ), էջ 10, 1988 թ.:

<sup>38</sup> Նույն տեղում (մատյան երրորդ), էջ 35, 1988 թ.:

<sup>39</sup> Նույն տեղում (մատյան երրորդ), էջ 61. 1988 թ.:

<sup>40</sup> Մ. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (երկրորդ), էջ 8, 2010 թ.:

<sup>41</sup> Մ.Փարաջանովի 1988 թ. Ժողովրդական արվեստի թանգարանում կազմակերպված ցուցահանդեսի տպավորությունների (մատյան առաջին), էջ 29, 1988 թ.:

<sup>42</sup> Նույն տեղում (մատյան երկրորդ), էջ 33, 1988 թ.:

<sup>43</sup> Նույն տեղում (մատյան առաջին), էջ 30, 1988 թ.:

<sup>44</sup> Նույն տեղում (մատյան առաջին), էջ 5, 1988 թ.:

<sup>45</sup> Նույն տեղում (մատյան երկրորդ), էջ 58, 1988 թ.:

<sup>46</sup> Նույն տեղում (մատյան երկրորդ), էջ 126, 1988 թ.:

<sup>47</sup> Նույն տեղում (մատյան չորրորդ), էջ 93, 1988 թ.:

Այցելուներից ոմանք էլ մեկնաբանում են ինտերնացիոնալ, գաղտնիքներով ու առեղծվածներով լի աշխարհ, որտեղ շատերը խոստանում են կրկին վերադառնալ. «Ճշմարիտ արվեստն ինտերնացիոնալ է, Փարաջանովի արվեստը կրկնակի ինտերնացիոնալ է, որովհետև այն ճշմարիտ է»<sup>48</sup>, «Այցելելով այս գեղեցիկ թանգարան՝ ես ստացա մեծ բավականություն նրա խորը փիլիսոփայական աշխատանքներից, որոնք լցված են հանելուկներով ու գաղտնիքներով, ինչպես նաև զանազան իրերի նրա տեսողությունից, ապրումներից և էությունից»<sup>49</sup>, «Սա նոր, մեծ հրաշք է: Այս տունը, նոր երևանյան սրբավայր է, մեծ ինստալյացիա, գեղեցկության տոն՝ սրամտության և ճաշակի: Այս տունը հիմնվել է դժվարին տարիներին որպես հուշարձան դաժան ճակատագրով հանճարին և ժառանգության հաջորդ սերունդներին: Աշխարհում այդպիսի հարմար և ոգեշնչող տեղեր քիչ կան: Հաջողություն և խինդ այդ տանը, թույլ տվեք նորից այցելել Ձեզ»<sup>50</sup>, գրել է Մ. Պիտտրովսկին, «Այս հիասքանչ աշխարհը Փարաջանովը հավաքել է հայելու բեկորներից, հին տիկնիկներից, ճամպրուկներից՝ տալով նրանց կյանք»<sup>51</sup>, «Գերազանց ուխտագնացություն, եզակի մեծության արտիստի մոտ: Կուռք կիսոռեժիսոր, ում հետ անձնապես ծանոթանալու հաճույք չեմ ունեցել, և որը հորս կողմից իմ ազգակիցն էր»<sup>52</sup>, գրառել է աշխարհահռչակ շանսոնյե Շ. Ազնավուրը, «Ես բառեր չեմ գտնում, որպեսզի արտահայտեմ իմ հիացմունքը հանճարեղ Փարաջանովի արվեստի առաջ: Շատ-շատ ժամանակ է հարկավոր թափանցելու այդ կյանքի և ստեղծագործությունների մեջ, օհ որքան գեղեցիկ և առեղծվածային միաժամանակ: Երջանիկ եմ, որ այցելեցի այս բարձր արվեստի օջախը»<sup>53</sup>, «Հրաշալի է: Ես կվերադառնամ շատ շուտով: Հաջողություն»<sup>54</sup>, որը գրառել է դերասանուհի Կ. Կարդինալեն, «Մենք նորից կվերադառնանք այս տուն՝ բերելով մեզ հետ մեր ընկերներին, քանի որ հարկավոր է իմանալ Փարաջանովին»<sup>55</sup>, «Հաճույքի մեծ պաշարով թողնում ենք թանգարանը

<sup>48</sup> Մ. Փարաջանովի թանգարանի տպավորությունների գրքից, էջ 12, 2005 թ.:

<sup>49</sup> Մ. Փարաջանովի թանգարանի տպավորությունների գրքից, էջ 11, 2005 թ.:

<sup>50</sup> Մ. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (առաջին), էջ 119, 2006 թ.:

<sup>51</sup> Մ. Փարաջանովի թանգարանի տպավորությունների գրքից, էջ 56, 2012 թ.:

<sup>52</sup> Մ. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (առաջին), էջ 72, 2001 թ.:

<sup>53</sup> Մ. Փարաջանովի թանգարանի տպավորությունների գրքից, էջ 13, 2006 թ.:

<sup>54</sup> Մ. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (երկրորդ), էջ 9, 2010 թ.:

<sup>55</sup> Մ. Փարաջանովի թանգարանի տպավորությունների գրքից, էջ 62, 2013 թ.:

նորից վերադառնալու բաղձանքով»<sup>56</sup>, «Ամպայման կրկին կայցելենք՝ մի փոքր գեղեցիկ ապրել կարողանալու համար»<sup>57</sup>, «Հիանալի թանգարան, ցանկանում ես ամիսը մեկ անգամ այցելել այն»<sup>58</sup>, Ժ. Դեպարդիեն «Իմ հիացմունքը: Մինչ նոր հանդիպում»<sup>59</sup>:

Ուսումնասիրելով իմպրովիզացիան և ընկալումը Փարաջանովի արվեստում՝ պարզ է դառնում, որ նրա կողմից արված իմպրովիզացիաները նոր կյանք են ստանում թանգարանի ցուցադրությունում, էքսկուրսավարների բացատրություններում, այցելուների ինտերակտիվ ստեղծագործություններում և ընկալումներում:

#### **Ա.Միքայելյան**

### **Ս. Փարաջանովի թանգարանի էքսկուրսավարիների իմպրովիզները և նրա արվեստի ընկալումն այցելուների կողմից**

#### **Ամփոփում**

Իմպրովիզացիան այսօր դարձել է հասարակության ստեղծարար ազատության շարժիչ ուժը, որը սկզբնավորվել է 20-րդ դարում և դեմ գնալով կարծրատիպերին, դարձել ազատության կոչ մշակույթի և արվեստի բոլոր ճյուղերի համար: Այն բնորոշում է համպատրաստից ստեղծագործելու երևույթը, որը, հիմնականում բնորոշ է երաժշտությանը, թատերարվեստին, դրանց ներկայացման ու մեկնաբանման ձևերին: Սույն հոդվածի համար օրինակ է հանդիսացել 20-րդ դարի աշխարհահռչակ կինոբեմադրիչ Սերգեյ Փարաջանովի պլաստիկ արվեստը: Ուսումնասիրելով իմպրովիզացիան և ընկալումը Փարաջանովի արվեստում՝ պարզ է դառնում, որ նրա կողմից արված իմպրովիզացիաները նոր կյանք են ստանում թանգարանի ցուցադրությունում, էքսկուրսավարների բացատրություններում, այցելուների ինտերակտիվ ստեղծագործություններում և ընկալումներում:

---

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 43, 2011 թ.:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 54, 2012 թ.:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 15, 2006 թ.:

<sup>59</sup> Ս. Փարաջանովի թանգարանի հատուկ հյուրերի տպավորությունների գրքից (Երկրորդ), էջ 12, 2011 թ.:

Последняя является предметом нашего исследования, великолепным примером которого является пластическое искусство всемирно известного режиссера 20-го века Сергея Параджанова. Можно констатировать, что импровизация в искусстве Параджанова получает вторую жизнь на выставках, в интерактивных композициях и представлениях посетителей и, конечно, в интерпретациях и пояснениях музейных гидов.

**A. Mikayelyan**

**The Improvisations of the Guides of Sergey Parajanov Museum and  
the Perception of His  
Art by the Visitors  
Summary**

We live in an era where improvisation has become a moving force for the whole cultural world. Improvisation was originated in the 20<sup>th</sup> century breaking all the stereotypes and becoming a call of freedom for all the branches of art. Improvisation is the creative activity of immediate composition which, basically, was used in music, theatrical performances and while presenting and performing works of art.

The latter is the subject of our research, a splendid example of which is the plastic art of the 20<sup>th</sup> century worldwide famous filmmaker Sergey Parajanov. We can state that the improvisation in Parajanov's art get their second life in the exhibitions, in interactive compositions and perceptions of the visitors and of course in the interpretations and explanations of the museum guides.

*Խմբագրություն է ուղարկվել 19.04.19*

*Հանձնարարվել է գրախոսության 23.04.19*

*Տպագրության է հանձնարարվել 29.04.19*

---

---

**ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՄԱՐԳՈՒՇ ՄԻՐՈՒՄՅԱՆ,  
ՀՈՒՓՄԻՄԵ ԹՈՐՈՍՅԱՆ**

Եվրոպական լեզուների լեզվաբանական եզրույթների  
պատճենումներ ռուսերենում և հայերենում **3**

**ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ**

Գեղարվեստական վավերագրության բնագրերի բառային  
խմբերն ըստ գործածության ոլորտների **13**

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ**

Հովհ. Թումանյանի հայրենասիրական  
բանաստեղծությունները ժամանակի հոլովույթում **24**

**ՄԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ**

Անցյալն ու ներկան ապագայի տեսլականում  
(Ռուբեն Հովսեփյանի «Օիրանի ծառերի տակ» վեպը) **36**

**ԼՈՒՍՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Ժան-ժակ Ռուսո և Հակոբ Պարոնյան (մանկավարժական  
առնչություններ) **54**

**ԳՈՀԱՐ ՍԱՀԱԿՅԱՆ**

Կարապենցը և համաշխարհային գրական ազդեցությունները **63**

**ՏԱԹԵՎԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ**

Հրայրա Հովհաննիսյանի պոեզիան քննադատության  
արժևորմամբ **70**

**ՕՖԵԼՅԱ ԴԱԼԱՔՅԱՆ**

Վ. Պետրոսյանի «Լամակներ մանկության կայարաններից»  
պատմվածաշարը 78

**ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈՔՅԱՆ**

Գալշոյանական գեղաձևումների առանձնահատկությունները  
ժամանակի գրական զարգացումների համատեքստում 84

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ**

**ԾՈՎԻՆԱՐ ՇԱՀԻՐՅԱՆ, ԳՈՀԱՐ ԱՄԱԼՅԱՆ**

Անգլերեն ընթերցանության տեսակների զարգացումը ՀՀ  
հիմնական դպրոցների բարձր դասարաններում 96

**ԼՈՒՄԻՆԵ ՉԱԼԱՔՅԱՆ, ԱՍՏԴԻԿ ՂԱՓԱՆՅՅԱՆ**

Համաձայնությունը բարդ նախադասության մեջ 106

**ՊՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՌԱՏԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

XV-XVII դդ. եվրոպացի ճանապարհորդների ազգագրական  
վկայությունները Հայաստանի և հայերի մասին 114

**GERÁLY ZOLTÁN**

Representation of Regional Historical Remembrance and Politics of  
History in Terms of Tourism Related Sources 129

**ԳԱԳԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Միր Բաշիրի ռազմական գործողությունը 140

**ԱՆԱՀԻՏ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

Ս. Փարաշանովի թանգարանի էքսկուրսավարների  
իմպրովիզները և նրա արվեստի ընկալումն այցելուների  
կողմից 149